ԱԿՍԵԼ ԲԱԿՈՒՆՑ

ԷԴԻԹ ՊՐԻՆՏ
հրատարակչություն

ՀՏԴ 891.981 Բակունց
ԳՄԴ 84Հ
Բ 228

Կազմեց և խմբագրեց Նուէր Վիրաբեանը

Բակունց Ակսել

Բ 228 [Ստեղծագործութիւնների ժողովածոյ]/ Ակսել Բակունց.– Եր.: Էդիթ Պրինտ, 2011.–208 էջ.– (Իմ գրադարանը)

Ակսել Բակունցի այս ժողովածոն լոյս է տեսել «Իմ գրադարանը» մատենաշարով: Ներառում է հեղինակի՝ ՀՀ հանրակրթական դպրոցի և բուհական ընդունելութեան քննութիւնների ծրագրերով նախատեսուած ստեղծագործութիւններ և լրացուցիչ ընթերցանութեան նիւթեր:

Գիրքը հասցէագրուած է ոչ միայն մեր դպրոցականներին, այլև աշխարհասփիւռ հայ պատանիներին ու պարմանուհիներին, ինչպէս նաև մեծահասակ ընթերցողներին, բոլոր նրանց, ովքեր չեն կորցրել իրենց հետաքրքրութիւնը հայ բազմադարեան գրականութեան նկատմամբ:

ՀՏԴ 891.981 Բակունց
ԳՄԴ 84Հ

ISBN 978–9939–52–825–0

© «Էդիթ Պրինտ» հրատարակչութիւն, 2011
© «Համազգային» հրատարակչութիւն, 2014

ՆԱԽԱԲԱՆ

«Ակսել Բակունցը հայ գեղարուեստական արձակի ամենապա-ղանդաւոր ներկայացուցիչն է: Նրա ստեղծագործութիւնների վրայ... անհատական կնիք է դրուած. այնքան թարմ ենև ինքնուրոյն... Նա ապրում է, զգում է հողը, տարերքը, եղբայրական մի բարութեամբ է համակուած դէպի բոյսերը, թռչուններն ու կենդանիները:

Յատկապէս ինձ շատ սիրելի է Ակսելի աշխարհազգացումը... Գեղեցիկ են շատ «Սպիտակ ձին», «Ծիրանի փողը», «Միրհաւը», «Սև ցեղերի սերմնացանը», իսկ ամենագեղեցիկը «Բրուտի տղան» է: Այնպէս նորբ են հիւսուած այս պատկերները... այնպէս նորբ, կարծես հեքիաթ են, կարծես երազ ես տեսնում, այնպէս կախարդօրէն սուզուում են իրար մէջ անցեալն ու ներկան, որ հուշը դառնում է ներկայ և իրական, ներկան դառնում է երազ»,- իր կրտսեր գրչակից ընկերոջ գրական արուեստի մասին գրել է Աւետիք Իսահակեանը:

Յաւօք, Բակունցն ապրել է ստեղծագործական կարճատև կեանք՝ 1923-1937 թթ., որի ընթացքում հասցրել է գրել ու հրատարակել պատմուածքների չորս ժողովածոյ՝ «Մթնաձոր», «Սպիտակ ձին», «Սև ցեղերի սերմնացանը», «Անձրևը», ինչպէս նաև՝ «Հովնաթան Մարչ» և «Կեօրես» վիպակները, հատուածներ «Կարմրաքար», «Որդի որուման», «Խաչատուր Աբովեան» վէպերից:

Բակունցի ակնարկներում ու պատմուածքներում պատկերուած են նրա հայրենի եզերքն ու մարդիկ: Լեզուն գեղեցիկ է, բանաստեղ-ծական ու գունագեղ, ինչպէս հայրենի Գորիսի կանանց նորբ մատներով հիւսուած գորգերի անկրկնելի զարդանախշերն ու հայ բազմադարեան ճարտարապետութեան քանդակազարդ, ասես, անձեռակերտ, «ասեղնագործ» խոյակները:

ԲԱԿՈՒՆՑ ԱԿՍԵԼ

(1899–1937)

Ծնուել է Գորիսում: Նախնական կրթութիւնն ստացել է ծննդավայրի ծխական դպրոցում. ապա ուսումը շարունակել է Էջմիածնի Գևորգեան ճեմարանում, սովորելմինչև 1935 թուականը, երբ պատերազմի պատճառով փակուել է այն: 1915–1916 թթ. որպէս ուսուցիչ աշխատել է Զանգեզուրի շրջանի Լոր գիւղում: 1917 թ. աւարտել է ճեմարանը: Հաջորդ տարուանից ծառայել է բանակում. եղել էրզրումում, Կարսում: Միաառժամանակ Երևանում որպէս սրբագրիչ աշխատելուց յետոյ մեկնել է Ուկրաինա, 1920–1923 թթ. սովորել Խարկովի գիւղատնտեսական ինստիտուտում: Վերադառնալով Հայաստան՝ աշխատել է որպէս գիւղատնտես: Գրական առաջին փորձերը կատարել է Առաջին համաշխարհային պատերազմից առաջ: 1911 թ. «Աղբիւր» մանկական հանդէսում տպագրել է «Ցիմար մարդը» հեքիաթը, սակայն դրանից յետոյ գրեթէ չի զբաղուել գրականութեամբ: Նրա գրական գործունէութեան սկիզբը համարուում է 1924 թուականը, երբ Թբիլիսիի «Մարտակոչ» օրաթերթում հրատարակել է. «Գաւառական ակնարկները»: Այնուհետև տպագրել է մի շարք պատմուածքներ, որոնք, ամփոփելով մի հատորի մէջ, լոյս է ընծայել Երևանում, 1927 թ՝ «Մթնաձոր» խորագրով: Դրան յաջորդել են նոր ժողովածուներ՝ «Հովնաթան Մարչ» (1927), «Պատմուածքներ» (1923), «Սպիտակ ձին», (Մոսկուա, 1929), «Սև ցելերի սերմնացանը» (1934), «Խոնարհ աղջիկը» (ռուսերէն, Մոսկուա, 1935), «Եօթ պատմուածք» (ռուսերէն, Թբիլիսի, 1934), «Անձրև» (Երևան, 1935), «Եղբայրութեան ընկուզենիներ» (1936), «Քեռի Դաւօն» (1936) և այլն: Խ. Աբովեանի կեանքը պատկերող վէպ է գրել, սակայն չի աւարտել. անաւարտ է մնացել նաև նրա «Կարմրաքար» վէպը: 1932 թ. լոյս է ընծայել «Խաչատուր Աբովեանի անյայտ բացակայումը» գրքոյկը՝ փորձելով նոր մեկնաբանութիւն տալ մեծ գրողի ողբերգական վախճանին: Գրել է երկու սցենար՝ «Սև թևերի տակ» և «Զանգեզուր»: Կատարել է թարգմանութիւններ, որոնցից ուշագրաւ են Ն. Գոգոլի «Տարաս Բուլբան», Ջ. Սուիֆթի «Գուլիւերի ճանապարհորդութիւնը»: Նրա ստեղծագործութիւնները բազմիցս վերահրատարակուել են:

ՄԹՆԱՁՈՐ

Մթնաձոր տանող միակ արահետն առաջին ձիւնի հետ փակուում է, մինչև գարուն ոչ մի մարդ ոտք չի դնում անտառներում: Սակայն Մթնաձորում այժմ էլ թաւուտ անտառներ կան, ուր ոչ ոք չի եղել: Ծառերն ընկնում են, փտում, ընկած ծառերի տեղ նորն է ծլում, արջերը պար են խաղում, սուլում են չոբանի պէս, ոռնում են գայլերը, դունչը լուսնեակին մեկնած, վարազները ժանիքով փորում են սև հողը, աշունքուա փտած կաղիններ ժողովում:

Մի ուրոյն աշխարհ է Մթնաձորը, քիչ է ասել կուսական ու վայրի: Թուում է, թէ այդ մոռցուած մի անկիւն է այն օրերից, երբ դեռ մարդը չկար, և բրածոյ դինոզաւրը նոյնքան ազատ էր զգում իրեն, ինչպէս արջը մեր օրերում: Գուցէ այդպէս է եղել աշխարհն այն ժամանակ, երբ քարածուխի հսկայ շերտերն են գոյացել և շերտերի վրայ պահել վաղուց անհետացած բոյսերի ու սողունների հետքեր:

Հիմա էլ Մթնաձորում մուգ կանաչ մաշկով խլեզներ կան, մարդու երես չտեսած, մարդուց երկիւղ չունեցող: Պառկում են քարերի վրայ, արևի տակ. ժամերով կարող էք նայել, թէ ինչպէս է զարկում փորի մաշկը թոյլ երակի պէս, կարող էք բռնել նրանց: Խլեզները Մթնաձորում մարդուց չեն փախչում:

Բարձր են Մթնաձորի սարերը. դրանից է, որ ամռան երկար օրերին էլ արևը մի քանի ժամ է լոյս տալիս Մթնաձորի անտառներին: Եվ երբ հեռաւոր հարթավայրերում արևը նոր է թեքուում դէպի արևմուտք, Մթնաձորում ստուերները թանձրանում են, սաղարթի տակ անթափանց խաւար է լինում, արջերը որսի են դուրս գալիս, վարազներն իջնում

են ջուր խմելու, իր որջի առաջ զիլ ոռնում է գայլը, ոռնոցը հազարբերան արձագանքով զրնգում է Մթնաձորում:

Գիշեր է դառնում, և գիշերուա հետ որսի են ելնում Մթնաձորի բնիկները: Արջը տանձ է ուտում, իրար թաթով են տալիս, թաւալգլոր են լինում չոր տերևների վրայ, դարան մտնում, հէնց որ զգում են վայրի խոզերի մօտենալը: Արջը գիտէ վարազի ժանիքի թափը, նախայարձակ չի լինում: Եթէ տկար մի խոզ յետ մնայ միւսներից, արջը թաթի մի հարուածով ձեղքում է փափուկ վիզը, մի երկու պատառ լափում, լէշը ծածկում չոր ցախով ու տերևներով, քար դնում վրան, փնթփնթալով հեռանում, մինչև լէշը հոտի:

Եթե յանկարծ վարազները լսեն յետ մնացած խոզի ճիչը... Սրածայր թրերի պէս շողշողում են ժանիքները, անշնորհք շարժումներով արջին մնում է բարձրանալ կաղնու վրայ: Կատաղի ձիերի պէս վարազները վրնջում են, ժանիքներով ակօսում կաղնու տակ, զարկում ծառի բնին: Մթնաձորի ծերունի անտառապահը մի գարունքի տեսել է վարազի կմախքը, ժանիքը մինչև արմատը խրուած ծառի բնում, ծառի ճիւղի արանքում արջի սատկած քոթոթին:

Վայրի վարազի պէս էր անտառապահ Պանինը: Մի հրէշ էր նա, անտառապէտի տարազով, կոկարդով[1] գլխարկը գլխին: Անտառում յանկարծ կ'երևար, փայտահատի կողքին կը կանգներ, կը նայեր, թէ ինչպէս նա արագ կացնահար է անում ծառը: Մէկ էլ, թաքստոցից դուրս կը գար, կը մռնչար այնպէս, որ արջերն էլ էին քնից զարթնում և որջերում մռռում: Լեղապատառ փայտահատին մնում էր կամ փախչել, կամ օձի պէս ծռմռատել Պանինի մտրակի հարուածների տակ:

Պանինը որսորդ էր: Վեց շուն ուներ, մէկը միւսից

[1] կոկարդ – գդականիշ, թիթեղեայ նշան, որ զինուորականները և պաշտօնեաները կրում են գլխարկի վրայ

կատաղի: Շների հետ որսի էր գնում Մթնաձորի խորքերը: Ձմռան լուսնեակ գիշերներին, երբ վախից ոչ ոք չէր մօտենում Մթնաձորին, Պանինի շներն անտառի բացատում արջի հետ էին կռիւ կենում կամ հալածում էին խրտնած պախրային: Պանինը վազում էր շների հետևից, հրճուանքից ճչում: Գիշերուա որսը նրա համար հարազատ տարերք էր:

Առաւօտը բացուում էր, ձիւնի վրայ արեան շիթեր էին երևում, այստեղ-այնտեղ խառնիխուռն հետքեր, խեղդուած գայլի դիակ, կոտրատած ճղներ: Մի փչակի մօտ նստում էր Պանինը, մինչև շները որսի միսն ուտեն:

Նա սպանած և ոչ մի կենդանու ձեռք չէր տալիս և շներին կշտացնելուց յետոյ վերադառնում էր տուն: Եթէ ճանապարհին տեսնէր մէկին գողացած փայտը շալակին, Պանինի շները պիտի յարձակուեին նրա վրայ, հալածէին, մինչև քափ-քրտինքի մէջ կորած, արիւնլուայ մարդը կարողանար մի տեղ պատսպարան[2] գտնել:

Այսպէս էր Պանինը: Նրա սարսափը հեռուներում էր տարածուած, նրա մասին բերնէբերան պատմութիւններ էին անում: Ոչ ոք չգիտէր ոչ նրա ազգութիւնը, ոչ հաւատն ու ծագումը: Ասում էին, որ նախկին սպայ է, մարդ էր սպանել, նստել էր բանտում, յետոյ անտառ գնացել: Հիւսիսի անտառներից մէկում նա իր կնոջն էր սպանել որսի մի գիշեր, աւելի ճիշտ՝ շներին հրամայել էր գզգզել կնոջը:

Այդպէս էին պատմում անտառապահ Պանինի մասին:

* * *

Գիւղում Աւին լաւ որսորդի համբաւ ունէր: Տան ապրուստի մի մասը նա Մթնաձորի խորքերից էր հոգում: Բացուտներում

[2] պատսպարան – օթևան, ապաստարան, հովանի

միրհաւ[3] էր որսում, արտերի մօտ կաքաւ ու լոր, թակարդ էր լարում աղուէսի համար, երբեմն էլ Մթնաձորի խորքերն էր գնում, ժամերով նստում քարի քամակին, մինչ և վարազները ջրի գնային:

Աւին նշանը ճիշտ էր բռնում, բերդանի[4] գնդակը վարազի ճարպոտ կողքին մեծ վէրք էր բացում: Վարազը թաւալգլոր էր լինում, ցաւից ժանիքներով հողը փորում, արմատներ պոկում, յետոյ խռռոցով գետին ընկնում:

Եվ եթէ Պանինից երկիւղ չէր անում կամ տեղեակ էր լինում, որ անտառապահը Մթնաձորում չի, չոր ցախերից էլ մի շալակ էր անում, ծածուկ մի տեղ պահում՝ գիշերով տուն տանելու համար:

Այդ օրն էլ նա որսի էր գնացել: Թարմ հետքեր կային ձիւնի վրայ: Աւին մի հետքով գնացև հէնց որ բլրակի գլուխը բարձրացաւ, տեսաւ երկու աղուէս: Մինչև կրակելն աղուէսները փախան: Այդ Աւու համար վատ նշան էր, որսը յաջող չպիտի լիներ: Մի քիչ էլ ման եկաւ, պախրայի հետք տեսաւ, փնտրեց ու չգտաւ: Եվ որովհետև այդ օրը Պանինը անտառ չպիտի գար (նա լսել էր, որ անտառապահը հիւանդ է), Աւին գերադաս համարեց մի շալակ ցախ տանել տուն:

Իրիկնադէմ էր արդէն, երբ Աւին շալակի ցախը դրեց քարին, նստեց մի կոճղի՝ մի քիչ շունչ առնելու:

Որսի մի շուն երևաց, հոտոտեց Աւուն, անցաւ: Աւու շունչը փորն ընկաւ: Երևաց երկրորդ շունը, երրորդը, շների հետևից էլ Պանինը: Ասես գետնի տակից բուսաւ:

Մէկի դէմքը քաթան էր, միւսինը՝ կարմիր ճակնդեղ: Պանինը թքոտեց, որպէս Մթնաձորի արջ: Եվ երբ բարձրացրեց

---

[3] միրհաւ – հաւերի դասին պատկանող խոշոր դեղնակարմիր փետուրներով թռչուն, փասիան

[4] բերդան – միալից հրացան

կնուտը[5], Աւին էլ մէջքը ծռեց, գլուխը ձեռների մէջ առաւ: Աւուն թուաց, թէ Պանինի ձեռքը քարացաւ, կնուտը սառեց ձմռան իրիկնապահի ցուրտ օդում: Պանինը կնուտը յետ քաշեց, և երբ Աւին գլուխը բարձրացրեց, նրան թուաց, թէ Մթնաձորում մի սատանայ է քրքջում:

Երկընտրանքը տարօրինակ թուաց Աւուն: Կամ քսան ռուբլի տուգանք՝ անտառից փայտ գողանալու համար, կամ էլ Մթնաձորի մի արջ սպանել: Եվ երբ Պանինը մի անգամ էլ կրկնեց իր առաջարկը, շրթունքները յետ տարաւ ու խուլ ծիծաղեց, Աւին տեղից վեր թռաւ, ցախը թողեց և եկած ճամփով յետ գնաց դէպի Մթնաձոր: Անտառի և ոչ մի արջ Պանինի տուգանքի գինը չուներ:

Աւին նայեց բերդանի պատրոնսներին, չուխայի փեշերը հաւաքեց գօտու տակ, փափախը պինդ կոխեց գլխին: Նա ձիւնի վրայով նոյնքան թեթև էր քայլում, ինչքան արջը չոր տերևների վրայ:

Մի անգամ յետ նայեց Աւին անցած ճամփին. ոչ Պանինը երևաց, ոչ էլ շները: Լուսնեակը մեծ ձիւնագնդի չափ լոյս էր տալիս, արտացոլում էր լուսնի լոյսը ձիւնի բիւրեղների մէջ: Աւին պարզ տեսնում էր ծառի բները, եկած ճամփան, ընկած հաստաբուն գերանները:

Իջաւ ձորը, լսեց, թէ ինչպէս սառոյցի տակ խոխոջում է ջուրը: Ջրի ձայնը նրան յիշեցրեց եռման կաթսան, տունը, վառած օջախը: Տանը երևի սպասում են արդէն:

Հետևից ճիւղի կոտրուելու ձայն լսեց: Թուաց, թէ ձիւնի ծանրոցից մի ճիւղ ջարդուեց: Վեր բարձրանալիս Աւին զգաց, որ մէկը հետևում է իրեն: Յետ նայեց, մի մարդաբոյ արջ էր կանգնել մի քիչ հեռու, ճիւղն ուսին, չոբանի մահակի պէս:

Աւին բերդանը մեկնեց, և երբ արջը թքոտելով դէն

[5] կնուտ (ռուս.) – խարազան, մտրակ

գցեց ուսի փայտը, չորքոտանի դարձաւ, բերդանը որոտաց, կրակոցի ձայնին ձորերն արձագանք տուին, ծառի ճիւղերից ձիւն թափուեց: Արջը ոռնաց: Բերդանի ծուխի միջից Աւին տեսաւ, թէ ինչպէս արջը մի ոստիւն արեց, թաթերը բերդանի փողին մեկնեց:

Մթնաձորում սկսուեց անհաւասար մի կռիւ՝ մարդու և գազանի մէջ: Արջը թաթովն էր տալիս, աշխատում գետնով տալ մարդուն: Աւին մի ձեռքով պաշտպանուում էր նրա հարուածներից, միւսով փորձում բերդանի փողը արջի երախի մէջ կոխել, կրակել մի անգամ էլ:

Ծառս էր լինում արջը հետևի ոտների վրայ, ձիւն շաղ տալիս, ընկնում, բարձրանում: Յանկարծ արջը բերդանի փողը բերանն առաւ, սկսեց կրծոտել: Աւու ձեռքը սահեց բերդանի վրայով, մատը բնազդաբար սեղմեց կեռ երկաթին, բերդանը մի անգամ էլ որոտաց: Արջը ոռնաց առաջուանից էլ պինդ, մէջքի վրայ ընկաւ, գլորուեց, որպէս կտրած գերան: Սառոյցին որ հասաւ, կանգնեց ոտքի, փորձեց վեր բարձրանալ:

Աւին երրորդ անգամ կրակեց, բերդանի գնդակը խրուեց ձիւնի մէջ, վզզաց, ինչպէս շիկացած խոփը դարբնոցի ջրաքարում: Երրորդ կրակոցը նրա բերդանի վերջին ճիչն էր: Աւին մինչև վերջն էլ չիմացաւ, թէ ինչու չորրորդ փամփուշտը բերդանը ներս չառաւ:

Արջը ոռնոցով մի ոստիւն էլ արեց: Աւին շատ մօտ զգաց վիրաւոր գազանի տաք շունչը, ծռուեց, և երբ արջը թաղուեց ձիւնի մէջ, Աւին յետ վազեց, ձիւնի մէջ ընկնելով, վեր բարձրանալով: Արջը հետևում էր նրան: Աւին վազում էր, թռչում գերանների վրայով, ծառի ճղները ճանգռում էին դէմքը սուր մագիլների պէս, սայթաքում էր, նորից բարձրանում: Նրան այնպէս էր թւում, թէ Մթնաձորի բոլոր գազաններն են վազում իր հետևից:

Ծառի մի ճիւղը փշերը խրեց փափախի մորթուն, փափախն ընկաւ: Հէնց այդ վայրկեանին նա մի ծանր հարուած զգաց մէջքին, բրդոտ մի թաթ ճանկերը խրեց ծոծրակի մորթու մէջ: Լսուեց մի կրակոց, բայց Աւին ոչինչ չզգաց:

Պանինը սատանայի պէս քրքջում էր, ոտքն արջի դիակի վրայ:

* * *

Աւին հիմա էլ ողջ է:

Զարհուրանքով կարելի է նայել նրան, երբ փողոցի անցուդարձ անողներից պահուած, մի անկիւնում քաշուած, սրա-նրա համար տրեխ է գործում:

Աւու հագին չուխայ է, տրեխներ, սովորական մարմին, առողջ ձեռքեր, որոնք շատ վարժ կաշին են ծակոտում, կաշուի թելերից հանգոյցներ անում: Եվ սովորական մարմնի վրայ գլխի տեղ մարդկային գանգ, ամբողջովին կլպուած, առանց մազի, առանց մորթու:

Արջը թաթի մի հարուածով ծոծրակի փափուկ մսի մէջ է խրել սուր ճանկերը և վիրաւոր արջի ամբողջ զայրոյթով իրան քաշել գանգի մորթին, մորթու հետ էլ գլխի մազերը, ունքերը, աչքերն ու քիթը:

Աւին շրթունքներ չունի: Ոսկորների բաց ճեղքից երևում են ատամները, բաց է քթի խոռոչը, և երբ Աւին համրի պէս խօսում է, շունչը քթի խոռոչովն էլ է դուրս գալիս: Աչքերի խոռոչներում չորացած մսի կտորներ կան, ծառի վրայ կիսաչոր, մաշկը ծալ-ծալ եղած ծիրանի պէս:

Նրա գանգի վրայ ողջ են մնացել միայն ականջները: Նայում ես և չես կարողանում որոշել՝ ծեր է Աւին, թէ դեռ երիտասարդ, որտեղից է գալիս նրա ձայնը, գուցէ մարդ չէ, այլ խրտուիլակ, գուցէ չուխայի տակ կմախք էև ոչ միս ու

մարմին:

Սակայն նրա ձեռքերին միս կայ և մաշկ, մատները վարժ շարժումներ են անում, և երբ Մթնաձորի անունն են տալիս, երևում է, որ ատամներն աւելի է դուրս գցում, կոկորդից անընդհատ ձայներ է հանում:

Ու չգիտես՝ զայրանում է, թէ ժպտում հին որսորդը...

ԽՈՆԱՐՀ ԱՂՋԻԿԸ

Գարնանային առաւօտը խոստանում էր պայծառ և արևոտ օր: Կուշտ կերած մեր ձիերը արագ քայլերով բարձրանում էին քարոտ արահետը և ամէն քայլափոխին փնչում: Քրտինքից խոնաւացել էր ձիերի մուգ-կապոյտ վիզը:

Արահետն օձապտոյտ ոլորուում էր: Ինչքան հեռանում էինք գիւղից, այնքան աւելի խտանում էր անտառը, հանդիպում էինք հաստաբուն ծառերի, որոնց ճիւղերն իրար էին խառնուել և կախուել արահետի վրայ: Ցաճախ էինք կռանում թամբից, գրկում ձիու վիզը, որպէսզի կախ ընկած ճիւղերը չքերծէին մեր դէմքը և փշերը չծակծկէին:

Լուռ էինք: Ես մտրակի ծայրով զարկում էի ծառերի տերևներին, պոկում տերևները կամ թափահարում ծառի կախ ընկած ճիւղերը, և գիշերուա ցօղը անձրևի նման թափւում էր ձիու վրայ, ինձ վրայ:

Ընկերս կամաց սուլում էր մի երգ և ձիու քայլերի համեմատ թամբի վրայ օրօրւում:

– Այս կածանով տասներկու տարի առաջ գնացի Զորագիւղ, – ասաց ընկերս: Թւում էր, թէ ինքն իրէն էր խօսում:

Նայեցի նրան: Ժպտում էր. կարծես միտն էր ընկել մի երջանիկ դէպք, որին ականատես են եղել արահետը և հին անտառը:

Ես հարցրի, թէ ո՞ր քամին էր նրան շպրտել հեռու ձորերում ընկած այն գիւղը:

– Հէնց այդ օրը բանտից նոր էի դուրս եկել: Տասնեօթը–տասնութ տարեկան երիտասարդ էի: Այնքան եռանդ ունէի աշխատելուն այնպիսի կորով... Եթէ մնացած լինէր այդ երիտասարդութիւնը:

Արահետը վերջացաւ և անտառի խորքում խառնուեց աւելի լայն ու փափուկ ճանապարհի, որ գալիս էր գետերի հովիտներից: Ձիերը կանգ առան, խորը շնչեցին և ապա շարունակեցին քայլերը:

– Գիտես, երբեմն մարդու յիշողութեան մէջ մի դէմք այնպէս է մեխւում, որ տասնեակ տարիներ յետոյ էլ յիշում ես նոյնքան պայծառ, ասես երեկ ես տեսել: Մարդ մոռանում է անունը, տեղն ու տարին, թէ երբ է տեսել այդ գլուխը, աչքերը. մոռանում է մանրամասնութիւնները, սակայն մնում են միայն գլուխը, աչքերը, կարծես մինչև մահ–գերեզման անջնջելի պիտի մնայ այդ առաջին տպաւորութիւնը:

Նա ինձ չթողեց, որ հարցնէի այդ դէպքի և նրա անջնջելի տպաւորութեան մասին, որ այդ րոպեին լոյս էր տալիս նրա յիշողութեան մէջ, ինչպէս արևի ոսկէ շողը՝ ծառերի մթնում:

– Շատ պարզ յիշում եմ այն օրերը, երբ որոշեցի Ձորագիւղ գնալ: Հարկաւոր էր քաղաքից հեռանալ, միաժամանակ չերևալ այնտեղ: Եվ սիրով ընդունեցի բարեկամիս առաջարկը՝ ուսուցիչ լինել այդ հեռու գիւղում: Երկու միտք ինձ ոգևորում էր: Նախ, որ ոչ մի աչք չի հետևի, հետքերս չի փնտրի, և երկրորդ՝ գիւղում պիտի աշխատէի:

Երբ որ դպրոցների տեսուչն ինձ պատմեց Ձորագիւղի մասին, թէ տեղն անառիկ է, օդը լաւ, կողքին մթին անտառներ կան, որտեղ առատ է որսը, ես իսկոյն համաձայնեցի: Կարծեմ, նոյն օրն էլ ճանապարհ ընկայ:

...Ձմռան սկիզբն էր, ձիւնը նոր էր եկել: Գիշերը հասանք հէնց այս արահետին և բաժանուեցինք անտառի գլխաւոր ճանապարհից: Լուսնեակի տակ ձիւնը շափաղ էր տալիս, ասես սպիտակ մարմար էր, որի մէջ արտացոլում էին ծառերի սև բները: Ձորագիւղցի ձիապանը արահետի գլխից մատը մեկնեց ներքևի ձորը.

– Հրէն է՛, մեր գիւղը:

Ձիւնի սպիտակութեան վրայ վերևից ես նշմարեցի փոքրիկ սև կէտեր: Գիւղի տներն էին, խոտերի և աթարի դէզերը: Մի տան պատուհանից ճրագի սպիտակ լոյս էր երևում, կարծես այդ մթին ստուերների մէջ մոլորուել էր մի մանրիկ աստղ: Մի քիչ իջանք լանջով, և լսելի եղաւ շան զրնգան հաչոցը, որ անտառում արձագանք էր տալիս, ինչպէս կացնի զարկերը:

– Էն մեր Բողարի ձայնն է, – ասաց ձիապանը: Ձին էլ կարծես հասկացաւ, որ գիւղը մօտ է, որ Բողարն է հաչում, և քայլերն արագացրեց:

Իսկ ինձ թւում էր, թէ գնում եմ շատ հեռու երկիր, որի մասին հեքեաթի պէս պատմում էր աշխարհագրութեան դասատուն: Մանուկները յաճախ ցնորում են հեռաւոր երկրների մասին, ուր կարմրամորթ մարդիկ են ապրում, ծառերի վրայ՝ գոյնզգոյն փետուրներով թռչուններ: Եվ երբ նրանք տնից հեռանում են, նրանց թւում է, թէ շատ մօտ է ցնորքի այդ աշխարհը:

Ես էլ այդպէս էի մտածում, թէև արդէն պատանի էի: Երևի անտառն էր այդպէս տրամադրում, ձմեռային գիշերուա վեհութիւնը, քարաժայռերի անձև կերպարանքը և այն անորոշ ձայները, որ գալիս էին ձորերից ու անտառից: Գուցէ և յոգնածութիւնն էր մշուշել իմ գիտակցութիւնը: Չեմ յիշում. միայն գիտեմ, որ առաջին անգամ Ձորագիւղ գալը դարձաւ իմ կեանքի լաւ գիշերներից մէկը:

Ձիապանն ինձ տարաւ իրենց տունը: Ինչպէ՞ս անուշ մրափեցի թոնրի մօտ, քուրսու վրայ: Բաւական ուշ աչքս կիսաբաց արի և նայեցի երդիկին: Ձմռան գիշերից մի քիչ դեռ կար: Ես նորից փաթաթուեցի վերմակի մէջ, ոտքերս կախեցի տաք մոխրի վրայ, և քնի ու երազի սահմանում օրօրուեց գիշերւա անիրական աշխարհը:

Ամաչեցի, երբ աչքերս բաց արի: Վաղուց զարթնել էին միւսները և սպասում էին ինձ, որպէսզի թոնիրը վառէն:

Դուրս եկայ. բակից տեսայ գիւղը, գիշերուա մեր ճանապարհը: Հաւաբնի մօտ Բողարը հաչեց ինձ վրայ: Նրա հաչոցն այլևս ահաւոր արձագանք չուներ, և ոչ էլ կախուած ժայռերն էին տձև: Ձիւնի վրայ, կտուրների կարասների վրայ շողում էր ձմեռուայ նարնջագոյն արևը. երդիկներից ծուխ էր բարձրանում:

Ինձ նոյն օրն էլ տեղաւորեցին մի տան մէջ, որտեղ և պիտի ապրէի: Տան տերը՝ Օհան ապերը, նահապետական բարքով մարդ էր: Հիմա մեր գիւղերում նրա նման մարդիկ այլևս չկան: Ձմեռը նստում էր բուխարու մօտ, չոր փայտը դարսում կողքին: Փայտերը մէկ-մէկ գցում էր կրակի մէջ և պատմութիւններ անում շահի ժամանակից, անցած գնացած օրերից, որսից և անտառից: Իսկ եթէ ոչ ոք չէր լսում նրան, մենակութիւնից թէ ձանձրոյթից, բուխարու առաջ բաց էր անում շարականի գիրքը:

Տանը չորս հոգի էինք: Ես, Օհան ապերը, նրա պառաւ կինը և տասը տարեկան Աշոտը, որ հավատարիմ ընկերս էր, երբ գնում էինք դպրոց, որովհետև շները դեռ ինձ վարժ չէին, հաչում էին կտուրներից և հետևի ոտքերով ձիւն մաղում ինձ վրայ:

Դպրոցը գիւղի ծայրին էր, բլրակի վրայ: Հին գերեզմանատունը դպրոցի բակն էր: Մի ընդարձակ սենեակ

էր, փայտէ հասարակ նստարանների երկու շարք, դիմացի պատից՝ գրատախտակը: Անսուաղ պատերին ուրիշ ոչ մի զարդ չկար: Պատուհաններին ապակու տեղ խմորով փակցրել էին իւղած թուղթ:

Միակ ժամացոյցն ինձ մօտ էր: Մի օր էլ բլրակը բարձրանալիս ոտքս սայթաքեց, ընկայ սառոյցի վրայ, գրպանիս մէջ ժամացոյցը փշրուեց և մինչև տարուա վերջը մնացի առանց ժամացոյցի: Արև օրերին ստուերով էինք ժամ որոշում, թխպած ժամանակ՝ երբ յոգնէինք:

Երկու շաբաթ յետոյ քառասունի չափ իմ աշակերտներին անունով էի կանչում, շատերի տունը գիտէի, ոմանց ծնողներին ճանաչում էի: Ժիր երեխաներ էին, բոց աչքերով, և այնքան արագ ընտելացանք իրար:

Օրապահի զանգին ես իջնում էի տան սանդուղքով, բլրակի գլխին չհասած տեսնում էի դպրոցի առաջ խմբուած երեխաներին: Խմբով էլ ներս էինք մտնում:

Դասերից յետոյ ես համարեա միշտ տանն էի: Օհան ապերը գնում էր գոմը, տաւարին ապուռ[6] տալու: Աշոտը մարագից քթոցով դարման էր կրում, պառաւը վառում էր օջախը կամ լուանում ընթրիքի ձաւարը: Օհան ապօր չոր ցախերը դարսում էի բուխարիկում, պառկում կրակի առաջ և նայում, թէ ինչպէս են մոխրանում փայտի կտորները, ինչպէս կրակի լէզուակները կայծերը թռցնում էին երդիկով:

Մութն ընկնելուց գալիս էին Աշոտն ու Օհան ապերը, տրեխները հանում և նստում կրակի մօտ: Եվ մինչև պառաւը ձաւարի ճաշը եփեր, Օհան ապերը սկսում էր մի հին պատմութիւն, որի վերջը լսելու համար ես և Աշոտը երբեմն խանգարում էինք նրա քունը:

– Հա, որտեղ մնացի, – արթնանում էր և, մինչև մենք

[6] ապուռ – անասնակեր

յիշեցնէինք, գանգատուում էր.

– Պառաւել եմ, քունս շուտ է տանում: – Եվ շարունակում էր կիսատ պատմութիւնը:

* * *

Ես ուշադիր լսում էի ընկերոջս, և թէպէտ ծառերը դարձեալ ճիւղերը կախել էին ճանապարհի վրայ, բայց այլևս մտրակով չէի պոկում նրանց տերևները: Արևը բաւական բարձրացել էր, ցօղի կաթիլները գոլորշիացել էին:

– Ձորագիւղում մի որսորդ կայ, վիզը ծուռ Անտոն են ասում: Հիմա էլ մնում է, թէպէտ բաւական ծեր է: Նրա աչքերը լաւ չեն տեսնում, դրա համար էլ որսի չի գնում:

Նրա մասին Օհան ապերը շատ էր պատմում: Անտոնը մի անգամ անտառում արջի հետ է կռիվ կացել, արջը ջարդել է նրա հրացանը, կռացել է, որ գերանը վերցնի Անտոնին խփելու, բայց նա սպանել է արջին: Օհան ամին պատմում էր, թէ ինչպէս է նա բնում աղուեսին բռնել:

– Իրէն որ տեսնես, կը զարմանաս: Լաղար, բոյը կարճ, վիզն էլ ծուռ: Կ'ասես, որ բամփես գլխին, տափին կը փակչի, – ասում էր Օհան ապերը նրա մասին:

Ես մտքումս դրել էի նրա հետ որսի գնալ, թէև մինչև այդ որս քիչ էի արել: Պառաւը խոստացաւ խնդրել հարևանի կայծքարով հրացանը:

Հէնց յաջորդ կիրակի, առաւօտ կանուխ, երբ երդիկներից դեռ նոր էր բարձրանում ծուխը, ես և Անտոնը բռնեցինք անտառի ճանապարհը: Այդ օրը ես չորս անգամ կրակեցի: Կրակոցից ծառի ճղներից ձիւն թափուեց, բայց իմ վառօդը չխանձեց ոչ մի աղուէսի մորթի:

Անտոնը սիրտ էր տալիս, թէ առաջին անգամ այդ էլ շատ է: Բայց ես տեսնում էի նրա ծաղկատար դէմքի խորամանկ

ժպիտը: Ինքը մի ծեր աղուէս սպանեցև երկու մոշահաւ: Ծեր աղուէսն այնքան չարչարեց մեզ:

Անտոնը կրակեց, մուխի մէջ ես տեսայ, թէ ինչպէս աղուէսը գլորուեց: Վրայ վազեցինք, աղուէսն ատամները կրճտացրեց, պոչը կոխեց հետևի ոտքերի արանքը և փախաւ: Ձիւնի վրայ մնացին նրա հետքերը և արեան շիթեր: Մի քանի տեղ ուժասպառ ընկել էր, արիւնն աւելի շատ էր հոսել, և ձիւնի վրայ թափուել էին մորթու մազերը:

Աղուէսին փնտրելու ժամանակ Անտոնը մի մոշահաւ էլ սպանեց: Միասին վազեցինք դէպի այն կողմը և փոսի մէջ տեսանք ծեր աղուէսին, որ կծկուել, կուչ էր եկել և դունչը մօտեցրել էր վէրքին: Նրա կախ ընկած լեզուն արնոտ էր: Երևում էր, որ լիզել էր վէրքի արիւնը: Անտոնն աղուէսին ուսովը գցեց, ես մոշահաւերը վերցրի, և մենք վերադարձանք:

Գիւղին չհասած, անտառի բացատում, չոր ճիւղերի կոտրատելու ձայն լսեցի: Ինձ թուաց, թէ պախրան եղջիւրներով ծառի ճիւղերը դէն է հրում, որպէսզի չոր տերևներ հանի ձիւնի տակից: Յետ նայեցի:

Ութ–տասը տարեկան մի տղայ ցախ էր դարսում ձիւնի վրայ մեկնած պարանին: Մի քիչ հեռու կանգնել էր մի աղջիկ՝ պարանի չափ բարակ ճիւղը ձեռքին: Նրանք մեզ աւելի վաղ էին տեսելև կանգնած նայում էին:

Ահա այդ դէմքն է, որ մեխուել է յիշողութեանս մէջ, թէև այն օրից անցել է տասներկու տարի և այն էլ ինչ տարիներ:

Ընկերս լռեց. ես նրա դէմքին տեսայ երանութեան նոյն ժպիտը, ինչպէս առաջին անգամ, երբ մենք դեռ բարձրանում էինք արահետով: Ասես աչքի առաջ, ձիւնոտ անտառում տեսնում էր աղջկան՝ ձեռքին չոր ցախը:

– Տեսայ ու կանգնեցի, – դանդաղ շարունակեց նա, –և թէպէտ Անտոնն ասաց, թէ ում աղջիկն է, ասաց, որ ցախի են

եկել, բայց ես նրան չէի լսում: Յիշում եմ, որ մի անգամ էլ, երբ բացուտն անցանք և իջնում էինք գիւղի կալերի վրայ, յետ նայեցի: Չգիտեմ, աղջիկը ժպտաց թէ չէ, բայց ինձ այդպէս թուաց: Գլուխը խոնարհեց ու փշրեց ձեռքի բարակ ճիւղը:

Մեր տան պատշգամբից ես տեսայ աղջկանը՝ ցախը շալակին: Մեր հետքերով նրանք իջան կալերի վրայ: Մոխրագոյն շորեր ուներ, գլխին՝ տանը գործած բրդէ շալ: Ես պատշգամբից նայում էի այն կողմը, իսկ Օհան ապերը ինձ հարցնում էր մոշահաւի մասին, Աշոտը նրանց փետուրներն էր պոկում, ես կցկտուր պատասխան էի տալիս և աչքի տակով հետևում, թէ ո՛ր տունը պիտի մտնի ցախով աղջիկը:

Որքան մեծ եղաւ իմ ուրախութիւնը, երբ միւս օրն իմացայ, որ նրա փոքր քոյրը սովորում է դպրոցում:

Հէնց այդ օրից էլ գլխին կարմիր շոր կապած աղջիկը, որ մինչ այդ իմ քառասուն աշակերտներից մէկն էր, բոլորից ջոկուեց և իմ աչքում դարձաւ այն կէտը, որի շուրջը պտտւում էր իմ ներքին աշխարհը:

Ուզում էի իմանալ աղջկայ անունը: Ես յօրինեցի մի դաս, երբ աշակերտները պատմում էին իրենց ընտանիքի անդամների մասին: Եվ որովհետև նրանք երկու քոյր էին, դժուար չէր իմանալ, որ անտառում տեսած աղջկա անունը Խոնարհ էր: Միւս աշակերտներն էլ մատ բարձրացրին, իրենց տան մասին պատմելու և զարմացան, երբ ես գրատախտակի վրայ գրեցի գումարման նոր վարժութիւն:

Խոնարհ, Խոնարհ... Նայում էի գրատախտակի թուերին, աչքերիս առաջ բրդէ շալով աղջկայ գլուխը, ոտքերը ձիւնի մէջ և ձիւնի ճերմակութեան վրայ օձի պէս սև պարանը:

Այդ դէմքը մերթ սուզւում էր անդունդը, որը սովորական էր դառնում, յիշում էի, որ անտառում մի ծեր աղուէս ենք սպանել, երկու մոշահաւ: Մէկ էլ դէմքը մօտենում էր, կանգնում էր

աչքիս առաջ, և ես ձգնում էի իմանալու՝ ժպտաց աղջիկը, երբ յետ նայեցի, թէ միայն ինձ թուաց:

Անտոնի հետ մի անգամ էլ որսի գնացի: Բացուտին երբ հասանք, ես մօտեցայ այն գերանին, որի մօտ կանգնել էր աղջիկը: Որսորդն իմ հետևից կանչեց, թէ ճանապարհն աջ է ծռուում: Գերանի մօտ ձիւնը ծածկել էր աղջկայ հետքերը: Ոչինչ չէր երևում: Միայն ծառի տակ ընկած էր մի չոր շիւղ: Կռացայ վերցրի:

Վերադարձին եկանք գիւղի ծուռ ու մուռ փողոցներով, որպէսզի անցնենք նրանց տան առաջով: Այդ թաղի շները հաչոցով ինձ վրայ վազեցին: Բայցև այնպէս կիսաբաց դռնից նրան տեսայ բակում՝ գրկին մի խուրձ խոտ: Ինձ տեսաւ, դէմքն իսկոյն միւս կողմը դարձրեց, տուն մտաւ: Ես նկատեցի, թէ ինչպէս կարմրեց նրա դէմքը:

Այդ օրն այնքան ուրախ էի: Օհան ապերն էլ նկատեց իմ ուրախութիւնը և ծիծաղելով ասաց, թէ վիզը ծուռ Անտոնի հետ անտառում երևի մի օյին ենք սարքել: Ընթրիքից յետոյ բուխարու մօտ երբ նա ննջեց, ես արագ թերթեցի նրա շարականի գիրքը, բրդէ թելը ուրիշ թերթի արանքում դրի, որպէսզի առաւօտեան Օհան ապերը զարմանայ, թէ երբ կիսեց շարականի հաստ գիրքը, կարդայ ու կասկածով նայի մէկ ինձ, մէկ՝ Աշոտին:

Ձմեռուայ ընթացքում Խոնարհին երկու անգամ տեսայ: Մի ամիս հիւանդ էր և առողջացաւ բարեկենդանի տօներից առաջ: Ես շատ անգամ էի նրա մասին հարցնում նրա քրոջից: Եվ ամէն անգամ տարբեր պատրուակով, հեռուից հեռու, շատ անգամ իբրև թէ պատահաբար, մէջ բերելով ուրիշ խօսք:

Դժուար էր միշտ պատրուակ գտնելը: Յիշում եմ, երեք օր տեղեկութիւն չունէի, քաշուում էի հարցնել: Յանկարծ փոքրիկ աղջիկը գնար և տանն ասէր... Չորրորդ օրը սովորականից

շուտ եկայ դպրոց: Քոյրը դեռ չէր եկել: Կանգնել էի մուտքի դռան մօտ: Աշակերտները վառարանի կողքին տաքանում էին: Աչքս բլրակին էր: Յանկարծ երևաց քոյրը, ինձ տեսաւ և կարծեց, թէ յանդիմանելու եմ ուշանալու համար: Աղջիկը քայլերն արագացրեց և ինձ երբ հասաւ՝ շնչակտուր ասաց.

– Խոնարհն արդէն վեր է կացել...

Յետոյ ես իմացայ, որ նա դեռ չորս օր պառկել է: Աղջիկը սուտ էր ասել:

Բարեկենդանի մի օր Խոնարհին տեսայ: Մեր դիմացի կտրան աղջիկները խաղում էին, իրար ձիւնով տալիս և երգեր ասում: Շատերի ձեռքին խնձոր կար: Նրանք նոր շորերով էին՝ կարմիր, կապոյտ, կանաչ: Նրանց մէջ էր Խոնարհը. նրա հագին երկար զոլերով կարմիր չիթ էր: Ձեռքերը պահել էր գոգնոցի տակ, կանգնել կտուրի ծայրին և նայում էր աւելի փոքրահասակ աղջիկներին, որոնք զուարթ ծիծաղով իրար հրմշտկում էին և վազվզում կտուրների վրայ:

Պատշգամբից ես նրան գունատ տեսայ և մի քիչ նիհար: Նոր շորերի մէջ նա երևաց աւելի բարձրահասակ, մէջքը բարակ: Կապոյտ գոգնոցի թելերը մէջքին հանգոյց էր արել: Պատահմամբ նայեց պատշգամբի կողմը, տեսաւ ինձ, հեռացաւ կտուրից և խառնուեց աղջիկների խմբին:

Նորից տեսայ Խոնարհի սպիտակ դէմքը, նրա մանրիկ աչքերը: Կարմիր շորերով այդ աղջիկը ինձ թուաց որպէս մի բարձրահասակ երեխայ՝ գլխին նոյն բրդէ շալը, ինչ որ առաջ: Տուն մտայ նրան չխանգարելու համար, որովհետև միւս աղջիկները քչփչացին, փոքրահասակներից մի քանիսը, որոնք դպրոցում սովորում էին, գոգնոցով իրենց դէմքը ծածկեցինև պահուեցին ինձանից:

* * *

Անտառն արդէն վերջացելև սկսել էր լեռնային փարթամ մարգագետինը, որի հատուկտոր թփերը ապացոյց էին, թէ ժամանակին մարգագետնի սևահողում աճել է կաղնին:

Կանաչների միջով հոսում էր գետակը, որի ակունքները անտառի մթին ձորերի աղբիւրներն էին: Դրա համար էլ գետակի երեսին, կանաչ խոտերի հետ լողում էին և չոր տերևներ:

Ձիերը յոգնել էին: Լեռնային կանաչը գրաւիչ էր եւ մեզ, եւ յոգնած ձիերի համար:

– Իջնենք, ձիերը թող հանգստանան, – ասաց ընկերս: Ձիերը լեզուով դուրս հրեցին սանձի երկաթները և ագահութեամբ պոկեցին խոտը: Մենք պառկեցինք գետակի ափին, խոտի վրայ:

– Օհան ապերը գրքեր շատ ուներ, հին գրքեր: Մի կիրակի պատշգամբում նստած կարդում էի նրա հին գրքերից մէկը, կարծեմ Յուստինեանոս թագաւորի մասին: Ձիւնը դեռ չէր հալուել, բայց արևի ջերմութիւնն արդէն զգացնում էր, որ գարունը հեռու չէ: Այդպիսի օրերին կատուն էլ հեռանում էր թոնիրի տաք քարից և աչքերը փակած փռուում արևի տակ:

Մէկը բարձրանում էր սանդուղքով: Գլուխս վեր հանեցի: Գիրքը ձեռքիս դողաց: Կողքիս կանգնել էր Խոնարհը և մատներով խաղում էր գոգնոցի եզրի հետ: Երբեք նա ինձ այդքան մօտ չէր կանգնել: Դրանից էր, որ գրքի տառերը շաղուեցին, և գիրքը դողաց:

– Հայրս խնդրում է ճաշին գաս մեր տունը:

Ինքս էլ չիմացայ, թէ ինչու պատճառ բռնեցի գիրքը, ասեցի, որ չեմ կարող գալ: Խոնարհը ձեռքի արագ շարժումով գիրքս ծալեց, և ես դեռ ուշքի չեկած, բակից կրկնեց հօր խնդիրը:

Չգնացի, բայց գիրքն էլ բաց չարի: Անելիքս չգիտէի:

Փորձեցի տետրակներն ուղղել, չկարողացայ: Օհան ապերը եկաւ, և մինչև իրիկուն միասին էինք: Այդ օրը ես նրա հետ գոմը գնացի՝ կովերին խոտ ու դարման տալու:

Չգիտեմ, ամէն տարի Զորագիւղում գարունն այնքան սիրո՞ւն է, ինչպէս այն տարին: Քարերն էլ էին շնչում գարնան բոյրը: Անտառի հազարաւոր լորենիների հոտը գիշեր–ցերեկ գիւղի վրան էր: Երբ դասերից յետոյ պառկում էի անտառում, լորենիների տակ, գլուխս պտտւում էր:

Զորակներում հիմա էլ կան այգիներ: Գարնանը ուռել և հասել էին խնձորենու բողբոջները: Հարկաւոր էր մի շաբաթ տաք եղանակ, որպէսզի բացւեին խնձորենու ծաղիկների կարմիր թերթերը և ձորակները բուրէին: Հեռուից ծաղկած ծառերի սպիտակ ճիւղերը երևում էին ձիւնով ծածկուած, ասես գարունը ձիւն էր թափել ծառերի վրայ, գունաւոր և հոտաւետ փաթիլներով ձիւն:

Գիւղի փողոցներից արևը գոլորշիացնում էր աղբաջուրը, կովերը ջրի գնալիս շլանում էին արևի լոյսից, մնչում էին արջառները, հոտոտում, դէսուդէն վազում և ոտքերով փորում թաց գետինը: Եվ ինչ դժկամութեամբ էին նրանք ներս մտնում գոմի ցածր դռնակներից:

Գարնան արև օրերը յիշեցնում էին ինձ, որ շուտով մայիս է: Դպրոցն արձակելուց յետոյ նոյն ճանապարհով պիտի վերադառնամ և էլ երբե՛ք, երբե՛ք չպիտի տեսնեմ Զորագիւղը:

Նրանց տունը չգնալու համար փոշմանել էի: Մի օր էլ փողոցում մայրը յանդիմանեց, որ հրաւերը չեմ ընդունել: Ես ուզում էի, որ մէկ էլ կանչէր, թէկուզ մի թեթև ակնարկ անէր:

Այն ժամանակ սովորութիւն կար տարեվերջին դպրոցում կազմակերպելու հանդէս: Ես էլ էի պատրաստւում, և աշակերտները սովորում էին երգ ու ոտանաւոր: Յետոյ մեծահասակ աշակերտները տախտակներ բերին, տներից

հաւաքեցին գորգ ու կարպետ և սարքեցին բեմ: Աշակերտներին պատուիրել էի, որ շատ մարդու կանչեն: Եվ ամէն անգամ աչքս նրա քրոջ կողմն էր:

Կիրակին եկաւ: Գուցէ և ոչ մի տարի այդ օրն այնքան բազմութիւն չէր հաւաքուել գիւղի դպրոցում: Բաց պատուհաններով գարունը այգիներից բերում էր ծառերի բոյրը, դպրոցի կտուրի տակ սարեակները բնից բոյն էին թռնում աշխոյժ ճռուողիւնով: Նրանք էլ էին զուգուել, և այնպէս փայլում էին սարեակների սև փետուրները:

Բազմութեան մէջ ես միայն մի գլուխ էի տեսնում, այս անգամ առանց շալի, մազերը կիսած և խնամքով սանրած: Եվ ի՜նչ բարակ էին նրա շրթունքները:

Ընդմիջումից յետոյ հանդէսի երկրորդ մասը պիտի սկսուեր մի բանաստեղծութեամբ, որ արտասանելու էր նրա քոյրը: Կարպետը շարժուեց, բեմի ետևում երևաց Խոնարհը, իր գլխի սանրով կոկեց քրոջ մազերը:

Մանկան զիլ ձայնով և համարձակ փոքրիկ աղջիկը ինչ-որ բան էր ասում: Բազմութիւնը լուռ լսում էր: Չէի լսում ես: Կողքիս Խոնարհն էր: Նրա աչքերում ուրախութեան ժպիտ կար: Աչքերը փայլում էին՝ սարեակի փետուրների նման սև: Ձեռքը բռնեցի:

– Խոնարհս... – Ձայնս դողաց:

– Թո՛ղ, – ասաց ու ձեռքը մեկնեց քրոջը, որ աւարտել էր արտասանութիւնը, և որի դէմքը անսովոր հաճոյքից կարմիր էր: Դահլիճում ծափահարում էին. ոմանք զանազան ձայներով, նոյնիսկ ձեռնափայտի շարժումով իրենց գոհունակութիւնն էին յայտնում:

Քիչ յետոյ հանդէսը վերջացաւ: Ինձ թուաց, թէ հանդէսը տխուր անցաւ, և պղտորուեց գարնան օրը: Ականջիս տակ նրա խօսքն էր՝ թո՛ղ: Ձեռքիս էի նայումեւ ուզում էի ստուգել՝

բռնել եմ արդեօք նրա ձեռքը: Ինչու այդքան ջերմ էին նրա մատները:

Հանդէսից յետոյ Խոնարհին մի քանի անգամ տեսայ: Պատահմամբ իմացայ նրանց այգու ճանապարհը: Դասերից յետոյ գնում էի ձորակը, պառկում Օհան ապօր այգու կապոյտ քարին, որից վերև ցանկապատի կողքով նա պիտի վերադառնար իրենց այգուց: Ոչ մի խօսք չէի կարող նրան ասել, թէկուզ մի քանի անգամ տեսայ ցանկապատի հետև: Հայրը գնում էր առաջից՝ չոր ցախի կապը մէջքին, աղջիկը՝ նրա հետևից, ջրամանն ու հացի շորը թևի տակ: Հետս գիրք էի առնում, բայց չէի թերթում ոչ մի էջ, որովհետև ամէն մի ոտնաձայնի նայում էի ճանապարհին:

Մի անգամ միայն ցանկապատի հետևից ինձ նայեց և ժպտաց: Թուաց, թէ հացի շորը դիտմամբ վեր գցեց, որ կռանայ և մի քիչ աւելի կանգնի: Գուցէ այդպէս չէր, գուցէ իրօք շորը սահեց, ընկաւ: Հիմա էլ պարզ տեսնում եմ նրա դէմքը ցանկապատի փշերի արանքից: Նոյն աչքերն էին, ինչպէս բարեկենդանի օրը կտուրի վրայ: Նրա աչքերի մէջ մանկական արտայայտութիւն կար, թէև տասնհինգ տարեկան էր, և ամուր կոճկած զգեստի տակ երևում էր հասուն կուրծքը:

Ընկերս լռեց: Ձեռքով տրորեց ճակատն ու աչքերը, ասես ուզում էր հեռացնի այն դէմքը, որ հին տարիներից ժպտում էր այդքան պայծառ:

Գարնան ջինջ երկնքի վրայով սահում էր մի սպիտակ ամպ, ասես արար աշխարհին հպարտութեամբ ցոյց էր տալիս, որ անհաս բարձունքում լողանում է արևի շողերի մէջ:

– Եկաւ և վերջին օրը: Դպրոցն արդէն արձակել էի. աշակերտներին բաժանել էի հին տետրակները, վերադառնալու պատրաստութիւն էի տեսնում: Օհան ապերը առաւօտը շարական չէր կարդում: Վաղ լուսաբացին նա

գնում էր այգի կամ վարուցանքի հոգսի հետևից էր:

Հրաժեշտը դժուար էր: Տանն ընտելացել էին ինձ, ես դառել էի մտերիմ մարդ եւ Օհան ապօր, եւ Աշոտի, եւ պառաւ նանի համար: Բակում ձիապանը բարձում էր իրերս, նանին պահուսակի մէջ դարսում էր գաթայ և ճանապարհի պաշարը:

Խոնարհին մի քանի օր չէի տեսել: Ինձ թւում էր, թէ ես նրան էլ չեմ տեսնելու: Եվ մի անգամ էլ տեսնելու պահանջը ինձ ստիպեց արագ-արագ անցնել գիւղի փողոցներով, մի վայրկեան կանգ առնել նրանց տան առաջև բաց դռնով նայել բակին:

Խոնարհին բակում չտեսայ: Փողոցում մարդ չկար, բոլորն աշխատանքի էին, արտերում սկսուել էր քաղհանը, այս ու այն սարալանջից լսւում էր հորովելի ձայնը: Մի տեղ աշունքուա մուգ-կանաչ արտերն էին, մի տեղ գարնան սև ցելը:

Օհան ապերը մի քանի խրատներ կարդաց: Երբ նա կռացաւ ու ճակատս համբուրեց, ես նրա բարի աչքերում արցունքներ տեսայ: Նանին ձիապանին պատուիրում էր ինձ լաւ տանելև զգոյշ մնալ, որ պահուսակը չընկնի, միևնոյն ժամանակ գոգնոցով սրբում էր թափուող արցունքը:

Անցանք փոքրիկ ձորակը, աղբիւրը և ուռենու հաստ նովը[7], ուր ձմեռը կովերը ջուր էին խմում: Ահա և Օհան ապօր այգու դռնակը: Արագ բարձրացայ ձորակով, դռնակը բաց արի, մօտեցայ այգու կապոյտ քարին. ցանկապատի հետևը մարդ չկար: Այգում խաղաղութիւն էր, ծաղկաթափ էին ծառերը, և բողբոջների փոխարէն նշմարւում էին կանաչ ու մանրիկ պտուղները:

Դպրոցի մօտ երեխաները խմբուել էին: Նրանք ինձ տեսան և իջան բլրակով: Որպիսի՜ միամիտ պարզութեամբ նրանք

[7] նով – աղբիւրի առջևում փայտէ կամ քարէ գուռ (աւազան)՝ անասուններին ջրելու համար

ինձ բարի ճանապարհ ասեցին: Մի քանիսը ծաղիկներ էին բերել: Հէնց որ մէկն ինձ մեկնեց ծաղիկը, միւսներն էլ նրա օրինակին հետևեցին:

Աղջիկներից ոմանք լաց եղան: Նրանք եւ ժպտում էին, եւ ժպիտի հետ սրբում էին արցունքը, որ ծորում էր աղբիւրի պէս: Լաց էր լինում և Խոնարհի քոյրը:

Մէկը թէ՝ «Ուսուցիչ, մեզ չմոռանաս»: Լաւ յիշում եմ ճուտիկին, որը միշտ դպրոց էր գալիս հօր մեծ փափախը գլխին և երկար, հնամաշ տրեխներով: Որբ էր ճուտիկը, լռիկ-մնջիկ մի երեխայ, որին բոլորը սիրում էին: Խմբի մէջ ճուտիկն էլ էր: Միւսների պէս նա մօտեցաւ ձեռք տալու, տրեխի ծայրերն իրար դիպան, քիչ մնաց ընկներ: Ճուտիկը փաթաթուեց ծնկներիս: Մեծ փափախի տակից տեսայ նրա խելօք աչքերը: Եվ այնքան խեղճութիւն կար ճուտիկի աչքերում:

Ձիապանի կանչը ինձ յիշեցրեց, որ ժամանակն է հրաժեշտ տալու: Մանուկները մի անգամ էլ ձեռք տուին: Կռացայ և համբուրեցի ճուտիկի ճակատը, ինչպէս Օհան ապերը՝ իմ ճակատը: Իմ աչքերում արցունք երևաց, արցունքի միջից մի անգամ էլ տեսայ այգու դռնակը, դպրոցի ներկած թիթեղները: Յետոյ ծառերը ամէն ինչ ծածկեցին:

Քայլում էի ձիապանի հետևից: Մինչև զառիվայրի սկիզբը ճանապարհն անցնում էր փոքրիկ տափարակով: Կանաչ արտերում քաղհան էին անում: Մի քիչ վերև, սարալանջին, եզները դանդաղ քաշում էին արօրը և հանգստացած հողը շրջում ակօսի մէջ: Արտերում կանաչի մէջ երևում էին կարմիր-կապոյտ ծաղիկներ: Բացւում էր պուտը[8]:

Սպիտակ քարի մօտ, գոգաձև ընկած երկարադարձ արտերում քաղհան անող կանանց մէջ տեսայ Խոնարհին: Մեր հայեացքներն իրար հանդիպեցին, և ես նրա աչքերում

[8] պուտ – այստեղ՝ ծաղկի տեսակ, վայրի կակաչ

ժպիտ չտեսայ: Ի՞նչ էր ասում. նրա համար դժուա՞ր էր, որ ես հեռանում եմ Զորագիւղից, չէ՞ որ ինձ ոչինչ, ոչինչ չէր ասել այդ խոնարհ աղջիկը: Հագին նոյն գորշ զգեստն էր, ինչպէս առաջին անգամ անտառում: Արտի մէջ կանգնել էր, ձեռքին քաղհանի բիրը, կարմիր պուտ և մոլախոտի մի կապ:

Ոչինչ չասացի, հեռացայ: Արահետով բարձրանալիս միշտ յետ էի նայում: Կռացած կանայք կանաչին ընկած թռչունների էին նման: Եվ այդ երամից մէկը, գորշ շորերով մի աղջիկ, աւելի յաճախ էր բարձրանում, ձեռքը դնում ճակատին, որ արևի շողերը չխանգարեն տեսնելու անտառի մէջ հալուող արահետը և միայնակ անցուորին: Զորի գլխին կանգնեցի, և երբ աղջիկը մի անգամ էլ բարձրացաւ, նայեց իմ կողմը, ձեռքով արի: Խոնարհն իսկոյն կռացաւ արտի վրայ: Ես արագացրի քայլերս ձիապանին հասնելու:

Երբ ընկերս լռեց, ինձ թուաց, թէ գետակը նոյն հանգով է պատմում, խօսում է նոյն կերպ, ինչպէս նա, որ մէջքին ընկած, փակ աչքերը երկնքին, անգիր ասում էր մի ծանօթ պատմութիւն՝ գրուած Օհան ապօր հին գրքերում:

Վեր կացայ, թուլացրի ձիու թամբի կապերը: Ձիերը յագեցել էին կանաչից և մեզ նման մեկնուել էին գարնան արևի տակ:

– Յետոյ տասներկու տարի... Եվ ի՜նչ տարիներ: Կռիւ, քաղց, երկրներ ու քաղաքներ, հազարաւոր դէմքեր, տարբեր ցեղից, անցքեր՝ մէկը քաղցր, միւսը դառն յիշողութեան հետ կապուած... Եվ նրանց մէջ Խոնարհի դէմքը, ցանկապատի փշերի արանքից երկու մանրիկ աչքեր, որպէս սև ձիթապտուղ և բարակ, կարմիր շրթունքներ:

Ցանկարծ ընկերս կողքի դարձաւ, վիգը ձգեց իմ կողմը: Նրա աչքերն աւելի մեծացան:

– Գիտե՞ս, ես Խոնարհին տեսայ:

– Ե՞րբ:

– Երեկ: Վերին գիւղում: Դու քնել էիր, դպրոցի բակում հաւաքուել էին գիւղացիները: Խօսում էին հողի մասին, գանգատւում էին, որ հողը առաջուա բերքը չի տալիս: Այս տարուայ ժանտախտից էին խօսում: Շատ կովեր են սատկել, ոմանք ցել անելու[9] եզ չունեն: Յետոյ ինձ մօտեցաւ մի կին, ցնցոտիների մէջ, ոտքերը բոբիկ, ոտքերի կաշին ճաքճքած: Կնոջ փէշերից կախուել էին երեք կիսամերկ երեխայ: Նրանք մերթ ինձ էին նայում, մերթ մօրը:

Կինն արցունքն աչքերին չորս փութ ցորեն էր խնդրում մինչև հունձը:

– Յետոյ մի ճար կլինի, – ասաց:

Ամուսինն անցեալ տարի էր մեռել: Ժանտախտից սատկել էր նրանց միակ կովը: Իսկ տանն ուրիշ աշխատող չկար:

Ես ճանաչեցի Խոնարհին... Աչքերն էլի առաջուանն էին, բայց առանց փայլի: Ես ճանաչեցի Խոնարհին: Բայց չգիտեմ նա ինձ ճանաչե՞ց, թէ ոչ:

...Անխօս նստեցինք ձիերը և անցանք գետակը: Արևն արդէն դէպի մայրամուտ էր կախուել:

[9] ցել անել – վարել, հերկել

ԱԼՊԻԱԿԱՆ ՄԱՆՈՒՇԱԿ

Արփենիկ Չարենցի յիշատակին

Կաքաւաբերդի գլխին տարին բոլոր ամպ է նստում, բերդի ատամնաձև պարիսպները կորչում են սպիտակ ամպերի մէջ, միայն սևին են անում բարձր բուրգերը: Հեռուից աւերակներ չեն երևում, և այնպէս է թւում, թէ բուրգերի գլխին հսկում կայ, գոց են ապարանքի երկաթէ դռները, աշտարակի գլխից մէկը ահա ձայն է տալու քարափը բարձրացողին:

Իսկ երբ քամին ցրում է ամպերը, ձորերում հալւում են ամպի ծուէնները, պարսպի վրայ երևում են մացառներ, աշտարակի խոնարհուած գլուխը և կիսով չափ հողի մէջ խրուած պարիսպները: Ո՛չ մի երկաթեայ դուռ և ո՛չ մի պահակ աշտարակի գլխին:

Լռութիւն կայ Կաքաւաբերդի աւերակներում: Միայն ձորի մէջ աղմկում է Բասուտա գետը, քերում է ափերը և յղկում հունի կապոյտ որձաքարը: Իր նեղ հունի մէջ գալարւում է Բասուտա գետը, ասես նրա սպիտակ փրփուրի տակ ոռնում են հազար գամփռներև կրծում քարէ շղթաները:

Պարիսպների գլխին բոյն են դրել ցինը և անգղը: Հէնց որ բերդի պարիսպների տակ ոտնաձայն է լսւում, նրանք կռնչիւնով աղմկում են, թռչում են բներից և ահարկու պտոյտներ անում բերդի կատարին: Ապա բարձրանում է քարէ արծիւըկտուցը կեռ թուր, մագիլները սրածայր նիզակներ,

փետուրները որպէս պողպատէ զրահ:

Կաքաւաբերդի բարձունքի միակ ծաղիկը ալպիական մանուշակն է, ցօղունը կաքաւի ոտքի պէս կարմիր, ծաղիկը ծիրանի գոյն: Քարի մօտ է բսնում ալպիական մանուշակը, պարիսպների տակ: Արևից քարերը տաքանում են, և երբ ամպերը ծածկում են քար ու պարիսպ, մանուշակը թեքւում է, գլուխը հենում քարին: Ծաղկափոշու մէջ թաթախուած գունաւոր բզէզին մանուշակը ճօճք է թւում, աշխարհը՝ ծիրանագոյն բուրաստան:

Ներքևը, ձորում, Բասուտա գետի միւս ափին, քարաժայռերի վրայ թառել են մի քանի տներ: Առաւօտեան ծուխ է ելնում երդիկներից, ծուխը ձգւում է կապոյտ երիզի նմանև հալւում ամպերի մէջ: Շոգ կէսօրին գիւղում կանչում է աքլորը, աքլորի կանչի հետ պառաւ մի շինական յօրանջում է տան ստուերում, ձեռնափայտով աւազի վրայ նշաններ գծում, նշանների հետ փորփորում գլխով անցածը:

Եվ գիւղում, և՛ բերդի գլխին ժամանակը սահում է դանդաղ, տարիները նոյն ծառի միանման տերևներն են: Դրա համար էլ խառնւում է ծերունու յիշողութիւնը: Գետն աղմկում է առաջուա հանգով, նոյն քարերն են և նոյն քարէ արծիւը:

Քանի՞ սերունդ է ապրել Բասուտա գետի մօտ, կարկատած թաղիքները փռել ցեխերի վրայ, եղեգնով պատել վրանները, և ամէն գարնան, երբ Կաքաւաբերդի լանջին բացուել է ալպիական մանուշակը, այծ ու ոչխարը քշել են բերդի լանջերը, պարկը պարէնով լցրել ու ձմեռը կրծել կորեկ հաց և այծի պանիր:

* * *

Արև մի կէսօր Կաքաւաբերդի քարափով բարձրանում էին երեք ձիաւոր: Ոչ միայն զգեստից, այլև ձի նստելուց երևում էր,

որ առաջին երկու ձիաւորը քաղաքի մարդիկ ենև չեն տեսել ո՛չ Կաքաւաբերդը, ո՛չ նրա քարափը:

Երրորդ ձիաւորը նրանց ուղեկցում էր, և մինչդեռ առաջինները պինդ բռնել էին ձիերի բաշից, համարեա թէ կռացել՝ հաւասարակշիռ մնալու, – վերջին ձիաւորը քթի տակ մռմռում էր մի երգ, մելամաղձոտ ու յուսահատ, ինչպէս ամայի ձորը, տխուր քարափը և հեռաւոր գիւղը:

Բերդի գլխին նստած ամպը վարագոյրի պէս մէկ յետ էր քաշւում, երևում էին պարիսպները, մէկ ծածկում էր կատարը: Առաջին ձիաւորը աչքը պարիսպներից չէր հեռացնում: Նրա գլխում բերդի պատմութիւնն էր, մագաղաթեայ մատեաններում գրած խօսքերը իշխանական օրերի մասին, երբ զրահապատ ձիերի սմբակները դոփում էին երկաթեայ մուտքի առաջ, և աւերից դարձող նրա համհարզները ճօճում էին նիզակները: Ակնոցի արանքից նրա ուսեալ աչքերը տեսնում էին զրահաւորներին, մագաղաթեայ մատենագրին՝ եղեգնեայ գրչով նրանց գովքը յօրինելիս, և նա լսում էր հնօրեայ ձիերի դոփիւնը: Ինչ դժուար էր նրա համար քարափը, որով քարայծի նման մագլցում էին երբեմնի տէրերը:

Երբ հասան վրաններին, առաջին ձիաւորը շարունակեց ճանապարհը: Նա փնտրում էր հին ճանապարհը և չէր տեսնում վրանների առաջ, մոխրի մէջ խաղացող կիսամերկ երեխաներին, այծերին, որոնք զարմանքից վեր ու վար էին անում գլուխները:

Ֆետրէ[10] գլխարկով երկրորդ ձիաւորը Կաքաւաբերդի գլխին հնութիւններ չէր որոնում: Նրա ամբողջ հարստութիւնը ծոցի հաստ տետրն էր և սրածայր մատիտը: Հերիք էր աչքն ընկներ մի դէմքի, տեսներ գեղեցիկ մի անկիւն, մամռապատ մի քար, որպէսզի թղթի վրայ մատիտով նկարեր այն, ինչ

[10] ֆետր – թաղիք, որից գլխարկ են պատրաստում

տեսել էին նրա աչքերը:

Առաջին ձիաւորը հնագէտ էր, երկրորդը՝ նկարիչ:

Երբ նրանք հասան վրաններին, շները յարձակուեցին ձիաւորների վրայ: Շների ձայնին մի քանի հոգի դուրս եկան վրաններից, նայեցին նրանց կողմը: Մոխրի մէջ խաղացող երեխաները տեսան, թէ ինչպէս շները հաչելով վազեցին ձիերի վրայ: Երրորդ ձիաւորն իզուր էր մտրակով փորձում շներին հեռացնել: Շները հաչելով մինչև բերդի պարիսպները ուղեկից եղան ձիաւորներին, յետոյ իրար հետ խաղալով վերադարձան:

Կաքաւաբերդի քարերն, ասես, կենդանացել ու խօսում էին հնագէտի հետ: Նա մօտենում էր այս ու այն քարին, կռանում, նայում, չափում, ինչ–որ գրում, ոտքով փորում հողի փլուածքը, բաց անում հողի տակ թաղուած տաշած քարի ծայրը: Նա բարձրացաւ պարսպի վրայ, գլուխը դուրս հանեց բուրգի դիտարանից և բարձր կանչեց, երբ բուրգի անկիւնում, քարի վրայ տեսաւ փորագիր խօսքեր:

Երրորդ ձիաւորը, որ ձիերի սանձերն արձակել ու պարսպի մօտ նստած ծխում էր, հնագէտի կանչից վեր թռաւ: Նրան թուաց, թէ օձը խայթեց ակնոցաւոր մարդուն:

Ֆետրէ գլխարկով մարդը նկատեց պարիսպների փլուածքը, սրածայր բուրգը և պատերի հետքերը: Բերդի մուտքը նկարելիս՝ մատիտը մի պահ ձեռքին մնաց, որովհետև նրա ոտնաձայնից մի անգղ կոնչիւնով թռաւ բնից, պտոյտներ արեց բերդի գլխին: Նրա ձայնին միւսներն էլ հաւաքուեցին:

Ձիերը, անգղների կոնչոցից վախեցած, խլշեցին ականջները, իրար մօտեցան: Եվ երբ հնագէտը բուրգի ծայրից կանչեց, թէ ինքը գտել է Բակուր իշխանի դամբանը, նկարիչը չհասկացաւ նրա խօսքը: Աչքերն անգղների պտոյտի հետ էին, նրանց թևերի հզօր շարժումի, կեռ ու արնագոյն

կտուցների հետ: Ինչ ահեղ թափ կար նրանց պտոյտում: Մի պահ մատիտը ձեռքին մնաց և չնկատեց, թէ ինչպէս գլխարկը սահեց և ընկաւ քարի վրայ:

Վրաններից մի մարդ, մանգաղը գօտու մէջ խրած, գլուխը փաթաթած կեղտոտ թաշկինակով, մահակին յենուելով բարձրացաւ բերդի քարափով և մօտեցաւ ձիերի մօտ նստած պահակին: Մարդը տեսաւ ակնոցաւորին մի քար տեղահան անելիս: Եվ երբ պահակին հարցրեց, թէ ովքե՞ր են եկուորները, ի՞նչ են փնտրում բերդի աւերակներում, պահակը նախ յանկարծակիի եկաւ և պատասխանեց, որ գրքերում գրած է, թէ Կաքաւաբերդի գլխին կարասի մէջ թաղուած են ոսկէ գանձեր:

Հնձուորը միտք արեց, ուսը քորեց և դարձաւ դէպի ձորը՝ հնձելու կորեկի արտը: Ու գնում էր ինքն իրեն խօսելով: Ինչ կը լինէր, եթէ ինքը գտնէր գանձը: Քանի անգամ է նա նստել հէնց այն քարի վրայ, որ տեղահան արեց ակնոցաւորը: Եթէ իմանար, ապա գանձերը կլինէին նրա արխալուղի գրպանում: Քանի՜ կով կ՚առներ...

Միտք էր անում հնձուորը, երբ նկատեց, որ կորեկի արտի կողքին է: Նա չուխան շպրտեց, չուխայի հետ էլ աւելորդ մտքերը, մանգաղով զարկեց մի կապ կորեկ ու կտրեց:

Բերդի քարերի մօտ բուսել էր ալպիական մանուշակ, ծաղիկը ծիրանի գոյն: Հնագէտը չէր տեսնում ոչ մանուշակ, ոչ խոտ: Նրա կօշիկները կրնկակոխ էին անում խոտ ու ծաղիկ:

Աշխարհը նրա համար ընդարձակ թանգարան էր, ուր չկար ոչինչ կենդանի և ոչ մի բզէզ: Նա պոկոտում էր քարերին փաթաթուած բաղեղը, փայտի ծայրով արմատախիլ անում քարի ճեղքում բուսած մանուշակը, ձեռքով քարը շոյում և սրբում գրերի հողը:

Ֆետրէ գլխարկով մարդը երբ նկարեց այն ամէնը, ինչ

հարկաւոր էր հնագէտին, տետրի նոր էջի վրայ նկարեց և պարսպի մի մասը, ատամնաձև քարերի արանքում, քարէ արծուի բունը, պարսպի ոտների տակ՝ ալպիական մանուշակներ:

* * *

Կէսօրից անց նրանք բերդից իջան: Հնագէտը մի անգամ էլ պտոյտ արեց բերդի չորս կողմը, տետրում մի բան նշանակեց և ապա արագ քայլերով հասաւ ձիերին:

Այս անգամ ամէնից առաջ գնում էր երրորդ ձիաւորը: Եթէ հնագէտի գլխում Բակուր իշխանն էրև մատենագրի մագաղաթը, նկարիչը յիշում էր մանուշակները և լսում Բասուտա գետի խուլ աղմուկը, – երրորդ ձիաւորի աչքի առաջ թարմ լաւաշներ էին, պանիր ու մածուն:

Նա հէնց առաջին վրանի մօտ ձիերն արձակեց, սանձով կապեց ձիերի ոտքը ու ներս մտաւ վրանի նեղլիկ դռնից: Քաղցած ձիերն ագահութեամբ մռութները կախեցին թարմ կանաչի վրայ:

Վրանի մուտքի առաջ, օջախի կողքին, մի փոքրիկ տղայ մոխրի մէջ սունկ էր խորովում: Անծանօթ մարդկանց ներս գալը նրան զարմացրեց, չիմացաւ սունկը թողնի՞ կրակի վրայ, վազի մօր հետևից, թէ՞ սունկն էլ հետը տանի: Երբ վրանի մօտ նա լսեց մօր բոպիկ ոտքերի ձայնը, զգեստի խշշոցը, տղան սիրտ առաւ, խորոված մի սունկ հանեց մոխրից և դրեց օջախի քարին:

Մայրը ներս մտաւ, գլխի շորը մի քիչ իջեցրեց աչքերի վրայ, մօտեցաւ և վրանի անկիւնում դարսած ծալքից երկու բարձ մեկնեց հիւրերին:

Երրորդ ձիաւորը հնագէտի պայուսակից կոնսերվ հանեց:

– Մենք սոված ենք, քոյրիկ: Թէ մածուն ունես, տո՛ւր, համ էլ

թէյ գցիր: Շաքար ունենք... – ասաւ նա:

Կինը մօտեցաւ օջախին, տղայի սունկերը դէն դրեց, կռացաւ ու փչեց մխացող աթարներին: Նրա գլխի շորը յետ ընկաւ, ֆետրէ գլխարկով մարդը տեսաւ կնոջ սպիտակ ճակատը, սև մազերը և նոյնքան սև աչքերը:

Նրա հայեացքը սևեռած մնաց մխացող օջախին, մոխրի մօտ չոքած կնոջը: Որտե՞ղ էր տեսել նա նման մի դէմք, բարձր, սպիտակ ճակատ և մուգ մանիշակագոյն աչքեր: Երբ կինը վեր կացաւ, եռոտանի կասկարան[11] բերեց օջախի վրայ դնելու, հանեց ծխից սևացած թէյամանը, նկարիչը շատ մօտ տեսաւ նրա աչքերը և մոխրի փոշին ունքերի վրայ, մազերի վրայ:

Ինչքա՜ն շատ ժամանակ էր անցել այն օրից: Եվ մի՞թէ հնարաւոր է այդքան նման երկու դէմք, նոյնիսկ նոյն շրթունքները: Կաքաւաբերդի կնոջ դէմքն արևը մի քիչ այրել էր: Բայց աչքերի ձևը նոյնն էր, ինչ որ միւս կնոջ, որ դարձեալ բարակ մէջքով էր և բարձրահասակ:

Կինը թէյի պատրաստութիւն էր տեսնում, անխօս և արագ շարժումներով: Ամէն անգամ, երբ նա կռանում էր, բարձրանում կամ բոպիկ ոտքերով քայլում էր խսիրի վրայ, զրնգում էին նրա թևերի արծաթագոյն սուրմաները[12], փոքրիկ զանգակների ձայն հանում: Խշշում էր նրա զգեստը, որի փէշերը իջնում էին մինչև մերկ ներբանները:

Այն կինն էլ ունէր խշխշան շորեր, հագնում էր գորշ գոյնի վերարկու, սև թաւիշէ գլխարկ, որի երկար քորոցը նարնջագոյն գլուխ ունէր: Հեռու էր, շատ հեռու: Գուցէ Բասուտա գետը ուրիշ գետի հետ խառնուելով հասնում է այն ծովին, որի ափին, աւազի վրայ, մի օր նստել էին կինը և

---

[11] կասկարայ – կաթսայի տակ դրուող եռոտանի

[12] սուրմայ – այստեղ՝ մետաղեայ փոքրիկ զարդ՝ հագուստի կամ գլխանոցի վրայից կախելու համար

նկարիչը:

Պահակը բաց արեց կոնսերուի երկրորդ տուփը: Հնագէտը սփռոցից ու պղնձէ ամաններից գլուխը չէր բարձրացնում: Տղան սունկը կերաւ և աչքերը սևեռեց կոնսերուի փայլուն տուփին, սպասելով, որ դատարկեն: Մարդը տեսաւ նրա հայեացքը և կոնսերուի տուփը մեկնեց տղային:

Տղան տուփը թափահարեց, վրանի առաջ պառկած շունը կուլ տուաւ մսի կտորները և լիզեց քիմքերը: Ապա դատարկ տուփը ձեռքին նա վազեց երեխաների մօտ՝ նրանց ցոյց տալու սպիտակ թիթեղեայ տուփը, որ չտեսած նորութիւն էր այդ քարափների վրայ:

Կինը նստել էր օջախի առաջ, յաճախ բարձրացնում էր թէյամանի կափարիչը և նայում տաքացող ջրին: Նա խառնում էր կրակը, աթարներն իրար մօտ քաշում, և երբ ծուխն ամպի պէս բարձրանում էր ու դուրս գալիս վրանի եղեգնեայ պատերի արանքով, կինը, աչքերը մուխից պահելու համար, ձեռքը բռնում էր ճակատին:

Ֆետրէ գլխարկով մարդուն օջախի մօտ նստած կինը, որի երկար զգեստի տակ պարզ երևում էին նրա ծնկները, թուում էր քրմուհի[13]՝ եռոտանու առաջ ծխի շարժումները գուշակող:

Այն կինը երբեք բոպիկ ոտքերով չի՛ քայլել, չի՛ նստել մխացող աթարի առաջ: Առաւօտեան ծովը բրոնզէ հալոցքի պէս տարուբեր էր լինում և լիզում ափերի կրաքարերը: Ծովափին սև թաւիշէ գլխարկով կինը հովանոցի ծայրով աւազի վրայ նշաններ էր անում և աւերում: Իսկ ինքը ջարդում էր ձեռքի չոր ճիւղը, մանրիկ փշուրներ անում, և երբ ալիքները կաթիլներ էին ցողում նրանց ոտքերին ու յետ վազում, ալիքներն իրենց հետ տանում էին չոր ճիւղերի փշուրները: Այն կինը ծովափին խօստումի բառեր ասաց, աշխարհը թուաց լայնարձակ մի

[13] քրմուհի – մոգուհի, կախարդուհի

ծով, և սիրտը ձուլուեց ծովի հետ:

Յետոյ ուրիշ օրեր եկան: Այնքան պատահական եղաւ ճամփաբաժանը և այնպէս պարզ: Մտքի մէջ մնացին մի զոյգ մանիշակագոյն աչքեր, գորշ գոյնի վերարկու և հովանոցի ծայրը, որով կինը աւազի վրայ խօստումներ էր գրում և աւերում:

Թէյամանի մէջ ջուրը եռաց, կափարիչը ձայն հանեց: Կինը կողովից հանեց պնակները և ծաղկաւոր բաժակները շարեց սփռոցի վրայ: Երբ նա կռացաւ սփռոցի վրայ, թիկունքից ծամը թեքուեց, կախուեց ուսն ի վար: Ծովափի կինը կարճ խուզած մազեր ունէր և սպիտակ պարանոց, որի բարակ մորթու տակ երևում էին կապոյտ երակները: Տղան դատարկ տուփը ձեռքին ներս վազեց: Վրանի դռնից մի խումբ մանուկներ զարմանքով նայում էին խսրի վրայ նստած հիւրերին: Որքան մեծ եղաւ տղայի ուրախութ իւնը, երբ նա ստացաւ երկրորդ տուփը: Այս անգամ նա դուրս չւազեց, այլ նստեց խսրի վրայ, մայրը նրա համար ևս թէյ լցրեց, իսկ ֆետրէ գլխարկով մարդը շաքարի մի մեծ կտոր գցեց տղայի բաժակը:

Տղան զարմացաւ, և երբ շաքարից պղպջակներ բարձրացան թէյի երեսը, նա մատը կոխեց բաժակի մէջ՝ շաքարը բերանը տանելու: Թէկուզ տաք թէյը վառեց մատը, բայց ծպտուն չհանեց: Այնքան համեղ էր կիսահալ շաքարը: Հնագէտը քթի տակ ծիծաղեց, ինչ-որ բան յիշեց մարդու նախնական օրերից: Կինը նորից ջուր լցրեց թէյամանի մէջ և ուրախ ժպտաց երեխայի չարաճճի արարքի վրայ:

Ֆետրէ գլխարկով մարդը տեսաւ այդ ժպիտը, ինչքա՜ն ծանօթ էր... Երևի նոյն դէմք ունեցող մարդիկ նոյն կերպ են ժպտում: Կնոջ վերին շրթունքը աննկատ դողդողաց, ժպիտից շրթունքները կարմրեցին, որպէս արնագոյն մեխակի թերթեր, ժպիտից աչքերը փայլեցին:

Յանկարծ նա ծոցից հանեց տետրը, թերթեց քարերի և քանդակների նկարներ, թերթեց և քարէ արծուի բոյնը պարսպի գլխին ու սպիտակ թղթի վրայ մատիտի արագ շարժումով նկարեց կնոջը՝ օջախի մօտ նստած, աչքերը օջախի քարին: Ծանօթ էին դիմագծերը, միտքն այնքան էր աշխատել նրա վրայ տարիներ առաջ: Փակ աչքերով էլ նա տեսնում էր կնոջ պրոֆիլը:

Միայն տղան տեսաւ մօր նկարն սպիտակ թղթի վրայ: Նրան այնպէս թուաց, թէ ֆետրէ գլխարկով մարդու սպիտակ թղթերը արտացոլում են ամէն ինչ, ինչպէս աղբիւրի վճիտ ջուրը:

Քիչ յետոյ ձիերը վրանի առաջ էին: Երրորդ ձիաւորը ձիերի գլխին հագցնում էր սանձերը, պնդացնում թամբի կաշեայ կապերը: Եվ երբ պա յու սակը կապեց թամբին, մօտեցաւ մնաս բարով ասելու օջախի մօտ նստած կնոջը: Կինը տեղից վեր կացաւ, գլխի շորն արագ իջեցրեց ճակատին և մատների ծայրով բռնեց երրորդ ձիաւորի մեկնած ձեռքը: Միւսներն էլ հետ և եցին նրա օրինակին: Այս անգամ կինը ձեռքը կրծքին սեղմեց և խոնարհեց գլուխը: Ֆետրէ գլխարկով մարդը տղային տուեց արծաթ դրամ ու շոյեց նրա մազերը:

Ձիերն իջնում էին Կաքաւաբերդի քարափով դէպի Բասուտա ձորը: Ձիերի սանձից բռնած իջնում էին երեք հոգի, որոնցից ամէն մէկը մտքերի մէջ հիւսում էր իր նախշը: Ճանապարհի երկու եզրին բուսել էին ալպիական մանուշակներ: Ֆետրէ գլխարկով մարդը կռացաւ, պոկեց մ է կը և դրեց տետրի այն թերթի արանքը, որի վրայ նկարուած էր եռոտանին և այն բարակիրան կինը:

Ձիերի սմբակի տակից քարեր էին թռչում, քարերն աղմուկով գլորւում էին ձորը: Ծով կար նրա մտքում, և այդ ծովը ափ էր շպրտում մերթ սև թաւիշէ գլխարկով մի

գլուխ, մազերը կարճ կտրած, մերթ երկարազգեստ մի կնոջ, թիկունքին երկար ծամեր, մերթ քարէ քանդակներ, կիսաւեր պարիսպներ, նրանց հիմքի մօտ ալպիական ծիրանագոյն մանուշակներ...

* * *

Իրիկնացաւ:

Նոյն ճանապարհով վրանների կողմն էր բարձրանում մի մարդ, գօտկում՝ պողպատէ փայլուն մանգաղը: Բեզարած էր մարդը, ամբողջ օրը հնձել էր կարճ ցողունով կորեկ, և մէջքը ցաւում էր: Դրա համար էլ նա դանդաղ էր բարձրանում, մահակը դէմ տալիս քարին, երբեմն կանգնում շունչ առնելու: Երբ կանգ էր առնում, նրա կորացած ծնկները դողում էին:

Հնձուորը ցերեկուայ մարդն էր, որին երրորդ ձիաւորը պատմել էր բերդի գանձերի մասին: Իր արտից նա տեսաւ ձիաւորներին, և նրան թուաց, թէ ձիու թամբին կապած պայուսակներում հէնց այն գանձերն են, որ հարիւր տարիներ մնացել են քարի տակ, որի վրայ ինքը շարունակ նստել է, երբ բերդի ա ւ երակներում պահում էր այծ ու ոչխար: Այդ միտքն էր նրան զայրացրել, թէ յոգնութիւնը. մարդը մռայլ էր, որպէս իրիկնապահին անտառում որսի դուրս եկող սոված արջը:

Նա հասաւ առաջին վրանին, ոտքով զարկեց շանը, որ պոչը շարժելով առաջ էր վազել տիրոջը դիմաւորելու , ապա գօտուց մանգաղը հանեց, շպրտեց միանկիւն, փայտը դրեց օջախի մօտ և լուռ նստեց խսիրի վրայ:

Օջախը մխում էր: Թէյամանում եռում էր տաք թէյը: Ծալքատեղում, բարձի վրայ, երկու կտոր շաքար կար: Հնձուորը դեռ տրեխները չէր հանելև գուլպաներից թափ չէր տուել կորեկի փնջերը, երբ սուրմաների զրնգոցով, երկար

զգեստի ծալքերն իրար քսելով, ներս մտաւ նրա կինը, կնոջ փէշից կախուած տղան՝ կոնսերուի երկու դատարկ տուփ ձեռքին:

Տղան դէպի հայրը վազեց՝ տուփերը ցոյց տալու: Հայրը հասկացաւ, որ ձիաւորները նստել են իր խսրի վրայ: Տղան ցոյց տուեց և արծաթ դրամը, որ տուել էր նրան մի բարի քեռի:

Հայրը ոտքով դէն հրեց որդուն էլ, դատարկ տուփերն էլ: Գլորուեցին տուփերը, տղան էլ գլոր ու եց: Ապա տղան ցատկեց և վազեց տուփերի հետևից: Երկու տուփը ձեռքին նա փաթաթուեց մօր փէշերին և սկսեց լալ: Հայրը ձայնը մեղմացրեց, տղային կանչեց, խնդրեց նրա արծաթ դրամը: Տղան արցունքների միջից ժպտալով մօտեցաւ հօրը՝ դրամը բռի մէջ: Ապա նա պատմեց, թէ հիւրի ծոցում կար մի փայլուն իր, մէջը սպիտակ թերթեր: Արծաթ տուող մարդը մօր պատկերը հանեց թերթի վրայ և դրեց ծոցը:

Խանդը կայծակի պէս փայլատակեց մռայլ հնձուորի սրտում: Աչքերը լայնացան, նա գունատուեց: Մայրը նայեց տղային, հրդեհուեց դէմքը, հայրը տեսաւ կնոջ դէմքի կարմիրը: Այդ ամէնը կատարուեց մի վայրկեանում: Յաջորդ վայրկեանին մարդը գազազած արջի նման ոստիւն արեց, նրա մազոտ ձեռքերը սեղմեցին ծանր մահակը, և մահակն անասելի թափով իջաւ կնոջ թիկունքին:

Սուրմաները զրնգացին, ցնցուեցին կնոջ երկար ծամերը: Եռոտանու վրայ դրած թէյամանը թեքուեց: Մահակի ջարդ ու ած ծայրը թռաւ ծալքի վրայ: Կինը աղաղակ չհանեց, այլ ցաւից գալարուեց: Նա ձեռքը թիկունքին տարաւ, ապա դուրս եկաւ վրանի դռանը անձայն հեկեկալու:

Տղան դատարկ տուփերը ձեռքին հետևեց նրան և պահուեց մօր փէշի տակ: Մարդը մի քիչ էլ դժգոհեց, ապա կերաւ կորեկ

հացը և փափախը գլխի տակ, մեկնուեց խսիրի վրայ:

Յետոյ Կաքաւաբերդի գլխին լռութիւն իջաւ: Օջախներում յանգաւ կրակը, եղաւ խաւար գիշեր: Գազանների ահից շները կուչ եկան վրանների առաջ: Ոչխարը պառկեց կանաչի վրայ: Խսիրի վրայ մեկնուեց և կինը՝ թաղիքի տակ ծածկելով տղային:

Կաքաւաբերդի գլխից ամպը հսկայ խխունջի պէս սողաց դէպի վրանները, խոնաւութիւն կաթեց քարերի վրայ, մամուռների վրայ, և մակաղած ոչխարների բրդի վրայ նստեց գիշերային խոնաւութիւնը: Ցօղ կաթեց ալպիական մանուշակի ծաղկաթերթերի վրայ:

Բուրմունքից արբեցած մի բզէզ քնել էր առէջքների մէջ, և նրան այնպէս էր թւում, թէ աշխարհը հոտաւէտ բուրաստան է, ալպիական մանուշակ...

ԾԻՐԱՆԻ ՓՈՂԸ

Ես թերթում եմ ուղեգրութիւնների իմ տետրը և նրա էջերի արանքում գտնում եմ սուսամբարի երկու տերև՝ չոր ու գորշ, ինչպէս յանգած մոխիր: Կռանում եմ թղթի վրայ, ռունգերս լայնանում են սուսամբարի հոտից, ու դողալով թերթում եմ տետրը... Յետոյ պատից վերցնում եմ ծամի նման պիրկ մտրակը: Ես շօշափում եմ մտրակը, և Յոլակը խելօք աչքերով նայում է ինձ, նայում է և յանդիմանում: Ինչո՞ւ էիր մտրակում: Մտրակը դառնում է սև օձ, որ զարկում էր ձիու ողորկ մարմնին:

Ես նորից եմ թերթում իմ տետրը, և սրտիս վրայ իջնում է անդորը: Յոլակը կայտառ վրնջում է, խաղացնում ականջները: Անընդհատ բարձրանում ենք, անցնում առապար ու քարափ: Քրտնած ձին մռութը կոխում է ջրերի սպիտակ փրփուրի մէջ և սանձերի երկաթների միջով ծծում սառցահամ ջուրը: Ինչքան վեր ենք բարձրանում, այնքան մօտ է արևը (և արևը խանձում է դէմք, զգեստ, ձեռք), այնքան սառն են ջրերը, օդը ջինջ, և լսելի է ծաղիկների մէջ մոլորուած մեղուի հանդարտ բզզոցը:

Յոլակը վրնջում է և արագացնում քայլերը: Ճանապարհը լայնանում է: Ահա մի արտ՝ քարէ պատով: Նօսր հասկերը սվսվում են լեռան հովից: Գիւղը մօտ է, ձին փռռացնում է ռունգերը և խայտալով կրծում սանձը:

Ճանապարհից վերև, բլուրի լանջին, մէկը ջրում է մուգ–

կանաչ առուոյտը: Ես լսում եմ, թէ ինչպէս առուի աւազի մէջ զրնգում է նրա ծանր բահը: Իսկ երբ բարձրացնում է բահը, արևը լուսաւորում է բահը, և թւում է, թէ ջրուորի ուսին բռնկուած ջահ է:

– Սա՞ է Ձեանբերդի ճանապարհը...

Ջրուորը բացականչում է ոչ «հա», ոչ «հո»: Հարցս կրկնում եմ: Մարդը բահը խրում է առուի աւազի մէջ և գալիս է դէպի ինձ: Ինչքան մօտենում է ջրուորը, այնքան աւելի բարձրահասակ է երևում: Ես նայում եմ նրա բաց կրծքին. թւում է, թէ նրա ձայնը պիտի խրոխտ թնդայ: Ջրուորը լայն ու ծանր ձեռքը մեկնում է ինձ, ասում է «մեր աչքուն» ու ձեռքը տանում դէպի ճակատը:

Ամենևին էլ խրոխտ չէ նրա ձայնը, այլ բարակ ու քաղցր: Ծերունի է. սպիտակ են ոչ միայն բեղերը և ունքերը, այլև կրծքի մազերը, որ յիշեցնում են խաճուած մացառուտ:

Հարցս կրկնում եմ:

– Հա, – ասում է, – մըր գուղն ի... Իդա դար լէ շրջուէ... – ու գրպանից հանում է ծխախոտի քիսէն: Առաջարկում եմ գլանակ: Նա ժպտում է, կարծես ուզում է ասել, որ բարակ գլանակը նուրբ է նրա համար, սակայն վերցնում էև դնում ականջի հետևը: Ապա ոլորում է մատի չափ հաստ «ծգարան»:

–Եօնջան քո՞նն է:

Նա կուշտ ծծում է ծխախոտը, կուրծքն ուռչում է, չոր կաշուի նման ճռռում են թոքերը: Ռունգերից և բերանից ծխի քուլաները բաց թողնելով, գլխով է անում:

–Վարկայութեանննախակահ բերեց հերու: Անուշ բուս է: Ինա կուտ (ցորեն) լէ մեր է, – գլխով նշան է անում քարոտ սարալանջի կողմը, որտեղ կանաչին են տալիս ցորենի մանր արտերը: Ես դժուարանում եմ որոշել նրա արտը, բայց գիտեմ, որ ջրուորը հեռուից ճանաչում է նոյնիսկ իր արտի կարմիր

պուտերը:

– Մը բախտ կապած ենք գդալ ջրի... Մը հողեր լէ ցրուկ: Էհ, հացի տեղ արուն շատ կերանք: Հիմա որ սերմ թալինք, սերմ վերունք, էլի գոհութիւն:

Նրա ուսից կախուած է յարդի տոպրակը: Տարուա այս ժամանակ նրան ինչի՞ է պէտք յարդը, և ինչո՞ւ է տոպրակը ուսից կախ:

Նա ինձ պատասխանում է, որ ինքը գիւղի ջրբաժանն է և գիշերները առուների ջրերն ինքն է բաշխում մանր և ցրուած հողակտորների վրայ:

– Իսկ յա՞րդը:

Յարդը ջրաչափն է: Ջրբաժանը ոսկեգոյն յարդը շաղ է տալիս առուների ջրերի վրայ և որոշում հոսանքի արագութիւնը, ջրի ծաւալը:

– Մուրօ օ... Մո՛ւ...րօ օ, – վերևից լսւում է մի զիլ ձայն, – ջուր խլսա՛ւ:

– Տղայ լաօ ...

Ծերունին առաւ բահը ու վազեց վերև, երևի ջրի բանդը:

Յետոյ ես և Ցոլակը շրջեցինք «դարը», իջանք ձորակը, նորից բարձրացանք, և սարահարթի վրայ երևաց լեռնային գիւղը՝ առանց ծառերի, առանց այգիների, օղակուած կանաչ մարգագետիններով և բաց առուներով, որոնց ջրերը արևամուտին վարարում են, կէսգիշերին աղմկում խոր ձորերում, իսկ երբ արևը զարթնում է, լռում են՝ լեռան սառոյցներից իջնող այդ առուները:

* * *

Սպիտակ եզան հետ մտանք բակը: Եզը գնաց դէպի միակ դուռը, որի ճակատին փակցրած էր աղբ, աղբի վրայ՝ ձուերի ներկած կճեպներից խաչ: Եզը միակ դռնից ներս մտաւ, և

մենք՝ նրա հետևից: Գնացինք մութ միջանցքով, ապա մի դուռ բացուեց դէպի ձախ, մթնի մէջ կորաւ սպիտակ եզը, նրա հետևից՝ իմ յոգնած ձին, որ լեռների մաքուր օդից յետոյ անախորժութեամբ էր շնչում գոմի կծու հոտը:

Յետոյ միջանցքի աջ կողմը նոյն յանգով երգեց մի այլ դուռ, և բոցերիլոյսով, մուխիմէջերևաց ոսկէ ծամիկներով մի աղջիկ,Ազնօն, դուստրը իմ վաղեմիծանօթի, որի տանը գիշերելու էինք ես և իմ ձին:

Ազնօ, Ազնիւ... Երբ հիմա թերթում եմ իմ ուղեգրութիւնների տետրը, որի էջերի արանքում գտնում եմ չորացած ծաղիկներ և սուսամբարի տերևներ, ես երկար-երկար նայում եմ դաշտային թիթեռնիկի թևին, որի ոսկէփոշին փայլում է, ինչպէս այն օրը, երբ մարգագետնի վրայ թիթեռը ծծում էր ջրախոտի ծաղիկները: Թիթեռնիկի թևի վրայ ես կարդում եմ՝ «Ազնօ»... Եվ մտածում եմ, որ Ազնօն հիմա դպրոց է գնում և կտուրների վրայ ջինջ ձայնով այլևս չի երգում.

Քանց լուսին ամպի տակով,

Դու ջուր կ'երթաս ջուխտ դորակով:

Եվ այլևս չի պատասխանի այնպէս, ինչպէս այն օրը, երբ միասին նստել էինք իրենց բարձր կտուրին, և լեռան միամիտ աղջիկը պատասխանում էր իմ հարցերին.

– Ազնօ, կինօ տեսնե՞լ ես:

– Հաբա օրի չըմ տեսէ. շուր մը զարկեր է պատ, կը ցուցէ ձի, աղջիկ, օրիորդ, կարտոֆել:

– Կարմիր բանակ լսե՞լ ես:

– Կարմիր բանակ շուր է, քցեր են դրօշակի վրայ:

– Ազնօ, աստուած կա՞:

– Հաբա: Աստուած կանաչ ճնճղուկ է:

– Հապա երկի՞նքը:

– Երկինք գինջիլով կապուկ է եզան կոտոշին:

– Ազնօ, որ մեծանաս ինչ ես դառնալու:

– Կ'եղնիմ օրիորդ:

Ազնօ, Ազնիւ...

Բոց էր բարձրանում խոր թոնրից, գուում էր օդը սնդուի խողովակների մէջ և թում էր, թէ գուում էր գետինը բոցերի ուժից, մխի սև քուլաներից, որ հրեղէն սիւնի հետ գալարուելով՝ ձգում էր մինչև լեռնային երկնքի սառն աստղերը:

Իմ վաղեմի ծանօթը կրակի մօտ պատմում էր ջրի և ջրբաժանութեան, քարոտ հողերի և հանդերի մասին:

– Ինչ եղեր է, չեղեր է, գացեր է: Եղանք գոմշու կոտոշ, կը պանք գիրար: Սև թօն եկաւ, արուն առու ելաւ: Մը փողպատ ազատինք Մօտկանայ երկրէն, մը Տալուորիկի հուղերէն: Ախ ու փախ, գիշեր-ցերեկ չփլախ, սոված, ռութ: Լենինի լոյս մեզ ազատութիւն տուեց: Մենակ մը սահման նեղ է, շնորհիւ սահմանի նեղութեան, ժողովուրդ կը նեղուի: Մը հողերի սահման ղըռ քար է, ժողովուրդի նեղութիւն քարից է: Մը հոգին լէ կառաւարութեան, մը ջան լէ...

Նա յոյս ուներ, որ Ձեանբերդի ժողովրդի հողերի սահմանները կը լայնանան, քար ու քարափ կանաչով կը պատեն, լեռան գագաթին, սառոյցների տակ կը կառուցեն ջրամբարներ և լեռնային լճակներ, և այլևս գիշերները ձորերով անպտուղ չեն հոսի սառոյցների ջրերը:

Նա պատմում էր, որ գիւղի երկու թայֆաները՝ «բարակ» և «հաստ» թայֆան հետզհետէ հաշտուում են, առաջանում է նոր սերունդ, որն իրեն չի համարում ո՛չ Մօտկանայ երկրից և ո՛չ Տալուորիկից, այլ Ձեանբերդից: Եվ որ ինքը և իրեն հասակակից մարդիկ դեռ յիշում են իրենց ձորերը և դուրանը, որտեղ խոտը բարձրանում էր մինչև կովի կուրծը, այնպէս, որ կովերը հորթ էին բերում խոտերի միջին, և կովի հետքով գտնում էին հորթին՝ խոտերի մէջ նստած:

– Երեկ ամպ էր, էսօր պարզ արև...

Իմ ծանօթը պատմեց այնպիսի բաներ լեռների մարդկանց մասին, որ այժմ էլ, երբ թերթում եմ իմ տետրը, սիրտս լցւում է կսկիծով և դառնութեամբ: Նրա սերունդը տեսել է եւ հուր, եւ պատերազմ, եւ ջարդ, եւ գաղթ: Երբ նրանց քշում էին հարաւ, խփում էին եւ հարաւից, եւ հիւսիսից: Հրդեհուում էր մի անտառ, և նրանք եղնիկների խմբերի նման, այրուող ծառերի միջից, եղջիւրներով բացում էին իրենց ճանապարհը: Նրանց քշել են արևմուտք, ապա ձիերի գլուխը դարձրել են հիւսիս և բնակութիւն հաստատել այս բարձր լեռան վրայ:

Իմ ծանօթը պատմում էր, որ ոմանք հին սերնդից հրաժարւում էին հերկել Զեանբերդի հողերը, որովհետև նրա սահմաններում թաղուած են և թուրքեր: Որ դեռ երկար տարիներ նրանք իրենց մեռելները ուսերի վրայ, լեռներից իջել են դաշտի գիւղերը, որպէսզի նրանց թաղեն հին վանքերի պատերի տակ: Նա ասում էր, որ Զեանբերդում ես կը տեսնեմ շատ խաչեր՝ դռան ճակատին, եզների եղջիւրներից կախ, կաւէ կարասների վրայ, թոնրի շրթունքներին, նոյնիսկ այն խրտուիլակների կրծքին, որոնց ցցում են արտերում՝ ճնճղուկների դէմ: Որ Զեանբերդում ապրում է մունջ Սևդոն, որը հագնում է մազեղէն կոշիկ՝ «խարուկ», ինչպէս Մօտկանայ երկրում, որն «իր բերնին նալ է զարկել» և չի խօսում նրանց հետ, որոնք Մօտկանից չեն:

Զեանբերդում միայն մի մարդ կայ, որի առաջ խոնարհւում է յամառ Սևդոն: Այդ մարդը Հազրօն է, ինչպէս անուանեց իմ ծանօթը՝ լեռան գիւղերի ամենալաւ մարդը:

Բայց մեր զրոյցը խանգարուեց, որովհետև լսուեց ոչխարների մայիւնի աղմուկը: Ազնօն տեղից թռաւ, դուրս եկան և միւսները, նրանց հետ՝ ես:

Լեռներից գիւղի վրայ իջնում էին այծերի ու ոչխարների

հոտերը: Ինչ աշխոյժ աղմուկ էր, ինչպիսի՜ զուարթութիւն, կանչեր, շան կաղկանձ, պղնձէ կովկիթների զրնգոց, բառաչ, մայիւն և հովիւների սուլոցներ: Կարծես աւար էին բերում գիւղը, և կին, աղջիկ, երեխայ ու տղամարդ, փողոցներից դէպի բակերն էին քշում այծ, ոչխար, հորթ:

Իմ ծանօթի բարձր կտուրից ես նայում էի Ձեանբերդին, Արարատեան դաշտին, որտեղ կանաչներով շրջապատուած գիւղերը հետզհետէ սուզուում էին երեկոյեան մութի մէջ, և աւելի պայծառանում էին քաղաքների կրակները:

Երբ յիշում եմ այդ երեկոն, քաղաքների կրակները և դաշտի վրայ իջնող գիշերը, Ձեանբերդի ներքևի կտուրի վրայ տեսնում եմ մի մարդու, թիկունքը դէպի ինձ, դէպի լեռան գագաթը, երեսը դաշտի կողմը, և լսում եմ լեռան գիւղերի ամենալաւ մարդու նուագը:

* * *

Նրա հայրենիքը եղել է քարոտ Սասունը, այդ խուլ երկրի ամենախուլ անկիւնը, որտեղ ձորերը դառնում են կիրճերև լեռների գագաթները՝ ապառաժներ: Տաք կիրճերում, լեռնային վտակների ափերին, կանաչում էր վայրի խաղողը, և նրա որթը մագլցում էր պղնձագոյն ժայռերի վրայ: Աճում էր և վայրի հոնը, երբեմն՝ թուզը: Իսկ բարձրերում, որտեղ քարափների վրայ ցրուած էին նրանց աղքատ հիւղակները, ցանում էին կորեկ և վաղահաս ցորեն: Երբ հասնում էր կորեկը, ձորերից բարձրանում էին գազանները: Մարդիկ արտերի եզրինխարոյկէին վառում, որպէսզի արջերըչտրորենկորեկը:

Նրա մանկութիւնը խաղացել է այդ քարափների վրայ: Ինչպէս ֆաւն, այդ պատանին փող է նուագել քարանձաւների ստուերում, և նրա պարզ երգերին արձագանքել են ձորերը: Երբեմն կարկուտն է ջարդել նրան, երբեմն քարերն են քերծել

դէմքը, ցուրտը և արևը խանձել են նրա կուրծքը, ինչպէս լեռան լանջը: Նա կռուել է գազանների հետ և նրանց հետ, որոնք հրացանների կրակոցների աղմուկով քշում էին նախիրը, ոչխարը, առևանգում կին ու երեխայ:

Թուում էր, թէ մինչև մահ կ՚ապրի այդ ժայռերի վրայ, ինչպէս իր պապերը, կցանի կորեկ, աշնանը կ՚իջնի ձորերը, կը հաւաքի միրգ և ցախ, ձմեռը կը լսի հին զրոյցներ՝ Զէնով Օհանի, Մլսրայ Մելիքի և Թլոր Մանուկի մասին:

Բայց պայթեց պատերազմը, եղաւ զօրաժողով, բռնութիւններ, հրդեհեցին դաշտի գիւղերը, հրդեհաձիգները ձորերով բարձրացան մինչև լեռների գագաթները, մինչև նրանց խեղճ խրճիթները, հրացաններ որոտացին, և շողացին սրեր, ամպերի փոխարէն քարափների վրայ նստեց այրուող գիւղերի մուխը: Բոցը հասաւ դեղնած արտերին, կրակը լափեց եւ սերմ, եւ սերմնացան:

Հազրօն առաւ իր կնոջն ու աղջկան և ծերպերով, քարայծի արահետներով անցաւ լեռից լեռ, քարանձաւից քարանձաւ, կերաւ ընդեղէն, եւ ալոճ, եւ մասուր, ապա յոգնած, ահը աչքերի մէջ, գնաց հարաւի կողմը, գնաց մերթ իբրև քուրդ հովիւ, մերթ իբրև քաղցած գայլև հասաւ անծանօթ մի աշխարհ, որտեղ ոչ լեռներ կային, ոչ լեռնային լոյս աղբիւրներ: Շոգ հարթավայր էր, պղտոր, դեղին գետերով, որոնց ջրերի մէջ չէին երևում այն կապոյտ առուակները, որ իջնում էին իրէնց լեռների սառոյցներից:

Նա հանեց ծիրանի փողը, այն կարմրաւուն սրինգը, որի վրայ նուագել էր կապոյտ լեռների երգերը, և նրա մատները խաղացին ծիրանի փողի վրայ: Հազրօն շոգից խանձուած շրթունքներով գրկեց փողի բերանը, ինչպէս լեռնային գիւղերում ջուր են խմում կաւէ դորակներից: Ջրի նման գլգլում էր նրա նուագը, լեռների երգը՝ շոգ հարթավայրում:

Լաց լացեց կինը, փոքրիկ աղջիկը քնեց մօր ծնկների վրայ, լացեց և Հազրօն, յետոյ թեթևութիւն իջաւ սրտի վրայ, ինչպէս կապոյտ ամպը նստում էր Մարութայ բարձր սարին: Ապա սրբեց արցունքը, ուսն առաւ աղջկան, առաւ կնոջը և յետ նայեց: Փոշի էր նստել հեռուի լեռների վրայ, և չէին երևում իրենց բարձր լեռները:

Հազրօն ասաւ կնոջը.

– Էսօր դուման է մեր լեռան վրայ, վաղը նորէն արև կը ծագի:

Բռնեցին մի ճանապարհ, մոլորուեցին հազար ճանապարհներում, յետոյ, երբ արդէն սպիտակ մազեր կային նրա գլխին, Հազրօյի քոչը ելաւ այս բարձր լեռը:

* * *

Հանդարտուում էր գիւղի երեկոյեան աղմուկը:

Լեռան սպիտակ սառոյցները լոյս էին տալիս: Մարգագետինները ծխում էին դաղձի բոյր: Բարակ լուսինը դողդողում էր, և նրա լոյսի տակ եզների շողիքը օրօրուում էր արծաթեայ օղակների նման: Դադրած եզները ննջում էին, և լուսնի տակ նրանք նման էին մարմարէ արձանների:

Ներքևի կտուրի վրայ հաւաքուել են գիւղի յոգնած մշակները: Երեկոյեան մութի մէջ նրանք աւելի յաղթամարմին են, ինչպէս գէր եզները:

Ես բարձրանում եմ կտուրը:

Այնտեղ չորս փոքրիկ աղջիկներ կան և մի տղայ: Մի բարձրահասակ մարդ զբաղւում է նրանց հետ: Աղջիկները յարձակուում են փոքրիկ տղայի վրայ, իսկ տղան հրում է նրանց, ապա իրար են խառնուում ու գլորուում կտուրի վրայ: Բարձրահասակ մարդը քրքջում է, միւսների խօսակցութիւնը

դադարում է, և լեռնցու բոց աչքերով նրանք նայում են երեխաների կռուին: Ցաւից ճչում է մի աղջիկ և վազում կտուրի վրայ նստածներից մէկի, ըստ երևոյթին հօր, գիրկը: Հայրը ծիծաղում է.

– Հաբա աղջիկ, գռիւ տփոնք է:

Բարձրահասակ մարդը բաժանում է միւսներին, գրկում է տղային, որ կորիւնի նման կռւում էր հասակակից երեք աղջիկների հետ:

– Բաբէն ղուրբան, հերիք, – ասում է մարդը: Իսկ տղան նրա գրկի մէջ թպրտում է, կարծես հիմա պիտի թռնի շիւար աղջիկների վրայ:

Մէկը աղջիկներին պատուիրում է տուն գնալ, և նրանք փայտէ սանդուղքով իջնում են ցած:

Տիրում է լռութիւն: Միայն բարձրահասակ մարդը զուարթ քրքիջով հանգստացնում է տղային.

– Բաբէն ղուրբան, չէ՞ աղջիկ լէ մեղք է...

– Մինչև էնի չզարկեր, ես լէ չզարկի, – բողոքում է տղան:

– Հազրօ, – կանչում է նստած ստուերներից մէկը, – չալեա՛ս:

Ուրեմն այս բարձրահասակ մարդն է Հազրօն, որի մասին պատմել էր ինձ իմ վաղեմի ծանօթը:

– Խանամին, խանամին...

– Ցար խուշտայ...

Տղան արագ իջնում է նրա գրկից և վազում ներքև: Հազրօն մօտենում է ինձ և մեկնում ձեռքը:

– Բարի տեսանք:

Նա ունի լայն ճակատ, որ լուսնի տակ պղնձագոյն է երևում, ճերմակ մազեր և կեռ արծուաքիթ: Նրա աչքերը փայլում են երիտասարդական աւիւնով:

– Կխաղա՞ք, – նայում է միւսներին:

Ես երբեք, երբեք չեմ մոռանայ այդ լուսնեակ գիշերը

բարձր լեռան մի գիւղում: Հազրօյի տան կտուրը, նրա նուագը և հսկաների հին պարը:

Տղան տնից բերեց սրինգը, այն ծիրանի փողը, որ քիչ աւելի երկար էր մեր հովիւների սովորական սրնգից: Նա կանգնեց կտուրի ծայրին, փողի բերանը դարձրեց դէպի գիւղի կողմը, և հետզհետէ, ինչպէս լուսաբացը լեռներում, զարթնեց «Ցար խուշտան»: Նա սկսեց դանդաղ և մեղմ, յետոյ ձայները զօրացան, արագացաւ չափը: Յետոյ վայրենի կանչով վեր թռաւ ջրբաժանը, կանգնեց կտուրի մէջտեղ, նրան հետևեց երկրորդը, երրորդը և շուտով նրանց երկու շարքը, ինչպէս երկու վիթխարի ապառաժ, զարնուեցին իրար՝ ձեռքերով, ծնկներով և կրծքով: Նուագն աւելի թնդեց. դողում էին կտուրի գերանները, կարծես իրար վրայ արշաւում էին բանակներ: Նրանց ձեռքերի հարուածը պողպատի ձայն էր հանում, և կայծեր էին թռչում նրանց բորբոքուած աչքերից:

Հարևան կտուրների վրայից, տների բակերից կանայք և աղջիկները դիտում էին լեռնականների պարը: Երբ մի շարքը միւսին յետ էր մղում՝ ձեռքերի հարուածով, կարծր կրծքերի զարկով, նահանջողները արշաւում էին նոր թափով, որպէսզի վրիժառու լինէն ամօթի և պարտութեան համար:

Հազրօն նուագում էր իր ծիրանի փողը, նուագում էր նոր զուարթութեամբ այն երգը, որ իբրև երիտասարդ ֆաւն նուագել էր իր հայրենի քարանձաւներում, այնտեղ, ուր ամպերը հիւղակներից ցածր են լողում, և երբ զարկում է կայծակի լախտը, մի վայրկեան բռնկուում են ձորերը:

* * *

Նրանք գնացին:

Կտուրի վրայ մնացինք Հազրօն և ես: Տուն գնաց և այն փոքրիկ տղան, նրա թոռը: Լուսնի տակ ես դիտում էի նրա

կարմրաւուն փողը: Նա ծանր էր և կարծես ձուլուած էր ծանր մետաղից: Ես բռնում էի այդ փողը գիշերային զովի դիմաց, և փողը մեղմ քամուց մետաղի ձայն էր հանում:

Իսկ Հազրօն պատմում էր, որ իր կեանքում ամենածանր հարուածը եղել է կնոջ մահը: Աղջիկն ամուսնացել է դաշտի գիւղում: Պապի մօտ յաճախ է լինում այն փոքրիկ տղան, նրա առաջին թոռը:

Աստղերի և լուսնի տակ փռուել էր Արարատեան դաշտը: Մասիսների ձիւնոտ գագաթների սպիտակ ցոլքը լոյս էր գցում մինչև երկնքի խորքը: Հեռուում, ուղտերի քարաւանի նման ձգուել էին Հայկական պարի լեռները:

– Կը տեսնե՞ս էն գուղ, կրակների ձախ կողմ:

Հովուական կրակների ձախ կողմը, դաշտի վրայ, երևում էր մի սև կէտ:

– Հոնի գիմ նշանածն ա թաղուկ:

Երբեմն նա իջնում է լեռան գիւղից, վերցնում է չոր ցախ և կնոջ գերեզմանի գլխավերևը կրակ վառում: Նա նստում է այնքան, մինչև հանգչում է կրակը, յետոյ տխուր-տխուր նուագում է ծիրանի փողը և այն երգերը, որ նուագում էր իրենց հեռու երկրում, որտեղ ինքը հովիւ էր, կինը՝ գիւղական աղջիկ: Յետոյ թեթև հոգով գնում է աղջկայ տունը, լսում է նրա տան աղմուկը, խաղում է թոռների հետ և մենակ ճանապարհ ընկնում դէպի լեռը, դէպի լեռան գիւղի իր պարզ խրճիթը:

– Հազրօ, դու լա՞ւ էիր ապրում քո գիւղում:

– Մեր քարափների վրա՞յ: – Եվ լռում է:

– Հէյ վա՜խ ջահելութիւն, թռար... Եվ նորից վերցնում է փողը:

Նուագում է, այս անգամ ոչ թէ լեռնականների կորովի երգը, որից բորբոքուում է արիւնը, այլ հովուական պարզ մի

երգ: Կա եւ թախիծ այդ երգի մէջ, կարծես մէկը մոլորուել է խոր ձորերում և տխուր հեկեկում է, կա եւ ջինջ ուրախութիւն, երբ լեռների վրայ ծագում է արևը, ելնում է ծուխը, մշակը գնում է աշխատանքի, վերջապէս կան և կարօտի հնչիւններ՝ վերադարձի և վերջին յոյսի:

– Հաղ մի երթամ տեսութեան մըր քարերին, մըր ձորերին, մըր Մարութայ բանձր սարին: Առնիմ զիմ ծիրանի փող, ժողուիմ մարդերու, նստիմ անուշ խոտերու վրէն, հանց գառներ մարդիկ նստեն զիմ չորս բոլոր, երգեմ էնոնց խաղաղութեան զիմ երգեր, մարդիկ հալալ-զուլալ ախպրտոց պէս գրկեն զիրար, չեղնի ոչ տեր, ոչ մշակ, ոչ թուր, ոչ բռնութիւն: Փչեմ զիմ ծիրանի փող, էլման ծուխ բանձրանա երդիկներէն, խմեմ մըր լուս աղբըրներէն, զիմ քրտինք կաթայ մըր քարերու վրէն, մըր Մարութայ բանձր սարի ամպ թող լիզայ զիմ սիվտակ ոսկորներ...

– Հազրօ, իսկ ո՞ւմ կը տաս քո ծիրանի փողը:

– Ջիմ փող կ՚իտամ իմ քաջարծիւ թոռնիկին:

* * *

Փողոցում խաղաղութիւն է:

Քնել են յոգնած մարդիկ, և փողոցի լապտերների լոյսի տակ օրօրուում են քաղաքի տները, նրանց սև պատուհանները: Լեռներից զով է իջնում քաղաքի վրայ, և գիշերային զովը բերում է սուսամբարի բոյրը, լեռների յստակ օդը և մաքուր ջրերի ձայնը:

Ես գոցում եմ ուղևորութեան իմ տետրը, նրա մէջ սուսամբարի երկու տերև՝ գորշ ու չոր, ինչպէս յանգած մոխիր: Լեռների վրայ վրնջում է իմ ձին՝ ինչպէս սանձարձակ ուրախութիւնը, ինչպէս սպիտակ ջրվէժը, որ իջնում է

բարձրերից, թափով կտրում դաշտեր, խառնուում մի պղտոր գետի և ուրիշ ջրերի հետ, գնում դէպի անեզր ծովը:

Ձեանբերդ, Ձեանբերդ...

Դու դառնում ես անպարտելի ամրոց, քո բարձր լեռները զարթնել են, և քո լանջերին հնչում են յաղթութեան երգերը:

Մի վիթխարի ծիրանի փող, առանց հին ահի և նոր խնդութեամբ հնչեցնում է մեր արդար երգերը:

ՆԱՄԱԿ ՌՈՒՍԱՅ ԹԱԳԱՒՈՐԻՆ

Իրիկնապահին՝ Արթին պապիս նստելու տեղը կամարակապ դարպասի նիշն էր, որի ներքևի մասը, գետնից մի մետրաչափ բարձր, կոկիկ տաշած էր, քարէ աթոռի պէս սարքած:

Կը նստէր իր տեղը, կը կռթնէր հոնի կարմիր մահակին, գլուխը մի կողմի վրայ կը թեքէր և , եթէ զրուցընկեր չունենար, ինքնիրեն կը խօսեր ու քթի տակ կը ժպտար: Երբ նա ժպտում էր, նրա կապոյտ աչքերը փոքրանում էին, և աչքերի տակ շարուում էին բարակ կնճիռներ:

Դարպասի մօտ իրիկնապահին նստելը պապիս հին սովորութիւնն էր: Կովերը արօտից էին տուն գալիս, վարից՝ յոգնած ու դանդաղ քայլերով եզները, պառաւ ատամների տակ ծամելով ճամփի եզրից պոկած խոտը: Ու նստած տեղից պապս մեզնից մէկին մի բան էր պատուիրում.

– Էգուց Ալա եզը վարի չտանեք, – կամ թէ՝ – Մի տեսեք էն քուռակն ինչի՞ է կաղում:

Յետոյ պիտի վեր կենար, խոտը հոնի փայտով հաւաքեր և մօտեցներ Ալա եզին կամ շոյեր քուռակի հիւանդ ոտքը:

Մութն ընկնելուց ժամի զանգերը ծլնգում էին: Առաջին ծլնգոցին պապս փափախը կը հաներ, կը խաչակնքեր, թէկուզ այդ պահին կանգնած լինէր Ալա եզան մօտ: Եվ խաչակնքելիս հոնի փայտը ձեռքից բաց չէր թողնում:

Մենք բոլորս էլ գիտէինք, որ խաչակնքելուց յետոյ ձայն է տալու:

– Նազու աղջիկ, դռները բաց արա...

Նազու աղջիկը տատս էր, ծերութիւնից մի քիչ կռացած, ականջի մէկը խուլ: Եվ Նազու աղջիկը դռնակը բաց էր անում, դռնակը ճռռում էր, ինչպէս սայլի անիւը սառոյցի վրայ:

Դռան շեմքին նստելն ունէր և մի ուրիշ նպատակ: Գիւղի մեծ փողոցը մեր տան առաջովն էր անցնում: Ուրիշ գիւղից եկողը մեր տան կողքով պիտի գնար: Հանդից տուն դարձողները՝ որը մի խուրձ խոտ շալակին, որը՝ լուծի կապերն ուսին ու բեզարած եզներն առաջն արած, որը՝ էշի վրայ, ոտները գետնին քսելով, մի խօսքով, իրիկնապահին ով անցներ փողոցով, պապիս պիտի ասեր «բարի իրիկուն»: Պապս էլ նրանց պիտի հարցներ, թէ՝ վարը պրծա՞ն կամ թէ այսինչ սարի խոտն ինչպէ՞ս է:

Մի անծանօթ մարդ եթէ անցներ փողոցով, պապս մեզանից մէկնումէկին շտապ կ՚ասեր.

– Հէնց էր ղարիբ լիներ... Շուտ հասի կանչի, թող մեր տունը գայ...

Վազում էինք և մինչև չիմանայինք, թէ ո՞ւմ հիւրն է, նրան բաց չէինք թողնում:

– Պապի, էն ղարիբը Իսաջանենց ղոնաղն էր, նրանց տունը գնաց:

Եվ պապս պիտի միտք աներ, թէ նորեկը Իսաջանենց որի՞ հիւրն է, ե՞րբ է եղել նրանց տանը, ի՞նչ ծանօթութիւն կար նրանց միջև: Եթէ կասկածէր, կնոջը պիտի հարցներ.

– Նազու աղջիկ, հերո՞ւ էր, թէ մէկէլ տարին, էն որ Իսաջանենց Ադամի տղան սարուշենցի բրուտին կանչեց: Էն ղարիբը նմանեցնում էր բրուտին:

Տատս եթէ խուլ ականջն էր դարձրել նրա կողմը, պիտի

գլուխը թեքէր, մի անգամ «հը՞» ասէր և ապա յայտնէր իր կարծիքը սարուշենցի բրուտի մասին:

Անասունները տեղաւորելուց յետոյ, եթէ ամառուա գիշեր էր, պապս տնքալով բարձրանում էր թախտը, արխալուղի կոճակներն արձակում և հնձուորի նման գլխին կապում սպիտակ շորը: Հողի գաւաթի մէջ սառած սպասից մի քանի գդալ ուտելուց յետոյ՝ թիկնում էր բարձին և ննջում:

Առաւօտ ծէգին ամէնից կանուխ նա էր վեր կենում: Քաղցր քնի մէջ, մանաւանդ երբ լուսաբացին զովը պաղեցնում էր օդը և քունն աւելի անուշ դարձնում, պապս ձայն էր տալիս մեզ.

– Դէ, վերէք, հրէն արևը դուրս եկաւ հա՜...

Մենք աւելի էինք ներս խցկուում վերմակի տակ ու սկսում սուտ խռմփացնել: Ու մէկ էլ մի ձեռք վերմակի տակ խտղտացնում էր մեր կրունկները: Ծլօնգ էինք անում, նստում անկողնում և տրորում մեր քնատ աչքերը:

– Դէ հա՜, վերէք... Տղամարդն էլ էդքան քնի՞: Հրէս ձմեռը էնքան արջաքուն տա՞ք...– ասում էր և հոնի փայտի ծայրով դիպչում մեր մարմնի բաց մասերին և ինքն էլ մեզ հետ ծիծաղում:

– Վերէք, ես ձեր ժամանակ կարգին տղամարդ էի: Հրէս ձեր պսակելու վախտը մօտենում ա հա՜, վերէ՛ք...

Մենք այն ժամանակ ութ–տասը տարեկան երեխաներ էինք: Ու պիտի վեր կենայինք, քնաթաթախ աչքերով չջոկէինք, թէ ով ում տրեխն է հագնում, պիտի կռուէինք իրար հետ, թէ ո՞վ է եզները տանելու և ո՞վ է գնալու վարի: Բայց աւելորդ էր մեր խօսքն ու կռիւը, որովհետև պապս արդէն որոշել էր աշխատանքը, իսկ Նազու աղջիկը մեր պաշարի կապոցները կախել էր բակի ցից փայտերից:

Եվ արևածագին սկսուում էր գիւղի ծանր աշխատանքի առօրեան:

Ձմեռն էր լաւ: Աշխատանք քիչ կար, տաւարը գոմումն էր, խոտն ու դարմանը՝ մարագում: Պապս ոչ նստում էր դարպասի քարին և ոչ էլ պառկում բակի թախտի վրայ: Արև օրերին նրա փոխարէն հաւերը, սառած գետինը կոխ տալով, մօտենում էին, վիզները երկարում, թռչում ու շարուում թախտի վրայ, գլուխները ծածկում թևերի տակ:

Պապս քուրսու մօտից չէր հեռանում: Նա սովորութիւն չուներ գիւղի հրապարակը գնալու: Քուրսու մօտ կը նստեր, բրդէ շալը ուսին կը գցեր ու կը մտմտար, երբեմն ինքն իրէն կը ժպտար՝ բարի և անչար մարդու ժպիտով:

Մանաւանդ ձմեռը հիւրն անպակաս էր: Ով էլ լինէր, ինչ գործով էլ գար, մի օրուայ փոխարէն պապս նրան պահում էր երկու, երեք օր: Եթե հեռու գիւղերից իր վաղեմի ծանօթը կամ թուրք «քիրւան» նրան տեսութեան էր գալիս, մեր տունը դառնում էր հարսանքատուն: Նստում էին մինչև աքլորականչը, պատմում անցած օրերից, վերյիշում մեռած մարդկանց, վաղուց եղած դէպքեր ու վաղեմի պատմութիւններ:

Մենք էլ էինք նստում այնքան, մինչև քունը հաղթէր, գլուխներս հենէինք քուրսու թախտին, մինչև տատը բօթէր մեզ, զարթեցնէր ու վեր կենայինք, որպէսզի վերմակի տակ մի քիչ էլ լսէինք նրանց զրոյցը:

Պապս այնքան էր պատմել իր գլխով անցածը մեզ և հիւրերին, որ հէնց խօսքի կծիկը ետ տար թէ չէ, մենք պիտի իմանայինք, թէ ո՞րն է պատմում՝ այն, ինչ եղաւ գիւղի աւերակ մատուռում, երբ ջահել ժամանակ պապս ընկերների հետ գրազ էր բռնել, գիշերով գնացել փափախը դնելու մատուռի ներսը, ու մի աղուէս դուրս էր թռել, վախից պապս գիւղի ճանապարհը կորցրելև մինչև լոյս բոստաններում պտոյտ էր տուել, թէ ինչպէս սարում գայլերը յարձակուել էին ձիու երամակի վրայ, ինքը պահուել էր ձիերի արանքում և մի կերպ ազատուել:

Պատմութիւնն անելիս պապս միշտ կամ ջահել օրերին էր երանի տալիս, կամ էլ առանձին շեշտով խօսքը վերջացնում.

– Աշխարհքս միշտ կը մնայ, ասա մարդը սևերես չմնայ...

Աշխարհի չար ու բարուց անտեղեակ, միամիտ երեխաներ էինք: Մեզ համար ամէնից հզօրն ու սարսափելին գիւղի գզիրն էր: Տանուտէրը, որը նստում էր հարևան գիւղում, մեր գիւղի գործերը տեսնում էր գզիր Իբիշի ձեռքով: Մէկ էլ գզիրը տնկուում էր կտուրի վրայ կամ կռանում էր և երդիկից կանչում.

– Քեօխուից հրաման կայ... Տէրութեան խարջը երեք օրում ուզում են: Չտուողին՝ Սիբիր:

Եթէ հրամանը հասարակ էլ լինէր, Իբիշը խօսքը վերջացնում էր սպառնալիքով: Ոչ մի խնդիր և ոչ մի աղերս չէր կարող փափկացնել նրա սիրտը:

– Ուզում ես թագաւորի հողից ինձ քոչեցնե՞ն... Չէ՛, չէ՛, բեր: Ես ի՞նչ պատասխան պիտի տամ քեօխուին: Ուզում ես խալխի մէջ ինձ խայտառակ անի՞: Բեր, թէ չէ Սիբիր, հա՜...

Գզիր Իբիշը մեզ սարսափելի և հզօր էր թուում, որովհետև պապս, որ մեր աչքում անուախ մարդ էր, գայլ ու գազան տեսած, նա էլ էր խեղճանում, երբ գզիրը կանչում էր երդիկից կամ թէ երբ դարպասի քարին նստած ժամանակ գզիրը մօտենում էր և չոր ու կոշտ յայտնում տանուտէրի հրամանը:

– Մեր տան կերած աղ ու հացը քոռացնի աչքերդ, Իբիշ...

Պապս էր ասում այդ խօսքերը, երբ գզիրը հեռանում էր այնքան, որ չլսի ասածը:

Եվ ամէն անգամ, երբ գար ու գնար Իբիշը, պապիս ժպիտը կորչում էր, մոռանում էր մեզ էլ, տունն էլ, եզն ու կովն էլ: Ամէն մի այցից յետոյ նա խոր թառանչով ասում էր.

– Ախ, Եգոր, մի էստեղից դուրս գայիր... Յարաբ աչք ա լինելո՞ւ քեզ տեսնեմ...

Այդ որ ասէր, մենք էլ էինք տխրում, չնայած մեզնից ոչ ոք չէր տեսել մեր քեռի Եգորին, որին տարիներ առաջ աքսորել էին:

Նրա աքսորման մասին հակասական պատմութիւններ կային, որոնցից ոչ մէկը ճշմարիտ չէր: Գիտէինք միայն, որ քեռիս զինուոր եղած ժամանակ ընդդիմացել է և իբրև թէ հրացան է քաշել հրամանատարի վրայ: Մեզ համար մութն էր այդ պատմութիւնը, չէինք տեսել ոչ նրան, ոչ էլ գիտէինք այն երկիրը, որտեղ, ինչպէս պապս էր ասում, «ամառ-ձմեռ ձիւն է»: Իր որդու մասին պապս մեզ հետ չէր խօսում և եթէ ձմռան գիշերներին քուրսու մօտ նստած հիւրերից մէկն ու մէկը պատահմամբ կամ անզգոյշ հարցով յիշեցնում էր նրան այդ մասին, պապս «Է՜հ» էր անում, ուսերը թօթուում և մի քիչ լուռ մնալուց յետոյ շարունակում զրոյցը:

Այդ դէպքը մի ստուեր էր մեր լոյս օրերի վրայ: Մեծերը տխրում էին, տատս արտասուում էր, երբ նայում էր սնդուկում պահած որդու գուլպաներին: Եթէ մենք նրան հարցնէինք, թէ հեռո՞ւ է քեռին, նա պատասխանի փոխարէն պիտի կռանար, համբուրեր մեզ, մի-մի բան էլ ձեռքներիս դներ:

Ամիսներով մոռացուում էր այդ պատմութիւնը: Վար ու ցանքի հետևից էինք ընկնում, աշխատում էինք լուսաբացից մինչև իրիկուն, և մեզ թուում էր, թէ մեր ընտանիքում ոչինչ չի պատահելև մեր տան գլխին չի ծանրացել ոչ մի հոգս:

Սակայն անյայտ աղբիւրներից երբեմն լսուում էին լուրեր, մանաւանդ հարևան գիւղերում, և այնտեղից էլ այդ լուրերը, որպէս շշուկ, հասնում էին պապիս ականջին: Մերթ ասում էին, որ նրան տեսնող է եղել, և ուրիշի անունով ապրում է այսինչ քաղաքում. պապս ձի էր նստում, գնում լուրը ստուգելու և յուսահատ վերադառնում: Մերթ պատմում էին, թէ սահմանն անցել և գնացել է Իրանի հողը և իբրև թէ նամակ է ուղարկում

մեզ, բայց նամակը ճանապարհին բռնում են:

Սոսկալին այդ անյայտութիւնն էր, որովհետև եթէ ստոյգ իմացուեր, որ նա այլևս չկայ, լաց կլինէին, և տարիների հետ կը հալուեր մորմոքը: Սակայն մերոնց վիշտն անթեղած կրակ էր, որ մերթ բոցավառուում էր որպէս պայծառ յոյս, մերթ դառնում մարմրին տուող տկար կայծ:

Պատահում էր, որ ձմռան գիշերին մեզնից մէկն ու մէկը յանկարծ զարթնում ու գլուխը հանում էր վերմակի տակից: Այդ գիշերներին շատ անգամ տեսնում էինք տատիս ու պապիս քուրսու մօտ նստած: Երբեմն նրանք լուռ ննջում էին: Տատս յանկարծ սթափուում էր, աչքերը տրորում, մօտեցնում բրնձով լի ամանը և մատով մէկ-մէկ ընտրում բրինձը: Նրանք իրար հետ խօսում էին, ամէն գիշեր համարեա նոյն ձևով, նոյն յանգով:

– Բա ի՞նչ ասաց:

– Կը տեսնեմ... ասում էր շատ ա դժուար...

– Հը՞:

– Դժուա՛ր ա, դժուա՛ր...

– Տուածնիս աչքերն առնի, բա հիմա ի՞նչ է ուզում...

– Ճարներս ինչ, պիտի տանք... Տեսնենք մի խաբար կբերի՞:

Ու մենք հասկանում էինք, թէ կայ մի մարդ, որ, եթէ մտքում դնի, ստոյգ լուր կը բերի մեր Եգոր քեռուց: Ո՞վ էր այդ մարդը, մենք չգիտէինք: Յայտնի էր, որ երբեմն գզիր Իբիշը մեր տնից իւղ ու պանիր էր տանում նրա համար: Մի անգամ էլ երկու ոչխար տարաւ ու հէնց գոմի շեմքին երդուեց, որ անպատճառ նրան կասի: Գզիրը ոչխարը քշեց հարևան գիւղը, որտեղ ապրում էր տանուտէրը, և որի տանը շատ անգամ լինում էր պրիստաւը[14]:

---

[14] պրիստաւ – մինչյեղափոխական Ռուսաստանում տեղական ոստիկանութեան պետ

* * *

Աշնան մի օր պապս, որ առաւօտ կանուխ ձի էր նստել ու գնացել հարևան գիւղը, ուրախ-ուրախ ձիուց իջաւ, սանձը հանեց ձիու գլխից, ու մինչև ձին ներս կմտնէր գոմի դռնով, շտապեց մեզ յայտնելու, որ տանուտէրից տեղեկացել է, թէ քեռիս ողջ էև գտնուում է այսինչ քաղաքում:

– Անունն ինչ էր էն անտերի... Տես Է՛, յուշ[15] եմ ասել: Լեզուիս պտկին էր, ամբողջ ճանապարհին ասում էի, որ մտահան չանեմ:

Հարկաւոր էր խնդիր ուղարկել ամենաբարձր տեղը՝ հէնց իրեն՝ ռուսաց թագաւորին, ինչպէս ասել էր տանուտէրը: Պապիս պատմածը մեզ թուում էր հեքեաթ: Եվ մինչդեռ տատս ուրախութիւնից շփոթուել ու անվերջ աղ էր լցնում ապուրի մէջ ու խառնում, մենք զարմացած նայում էինք մեր կարձլիկ, մազը սպիտակ պապին, որի կապոյտ աչքերը պայծառացել և վառում էին յոյսի հրձուանքով:

– Պապի, թագաւորը նամակդ որ ստանայ, ի՞նչ պիտի անի:

– Կը կարդայ, հրաման կը տայ պրիստաւին, որ Ադամով Եգորին, որտեղ որ է, սաղ-սալամաթ հասցրէք իրեն հօրը:

– Բա ո՞նց է գնալու նամակը:

– Էհ, դուք հըլա աշխարհքի որտե՞ղն եք... Փոշտ[16] կայ, յասաուլ[17] կայ, պրիստաւ կայ: Տանելու են թագաւորի ձեռքին դնեն: Քեօխուան ասում էր, որ պիտի լաւ թղթի վրայ գրել տաս, ղալամն[18] էլ ոսկի պիտի լինի, թէ չէ ընդունիլ չեն:

Ու մանկական երևակայութեամբ պատկերացնում էինք

---

[15] յուշ – այստեղ՝ յիշողութիւն

[16] փոշտ – փոստ

[17] յասաուլ – մինչյեղափոխական Ռուսաստանում կազակական զօրքերի սպայական աստիճան

[18] ղալամ – գրիչ

ոսկէ գրիչը, որով փայլուն թղթի վրայ գրում են պապիս խնդիրքը, բառերը պսպղին են տալիս, նամակը սարերի վրայով և թռչունի թևով հասնում է ոսկէ մի տուն, և թռչունը նամակը դնում է թագաւորի թախտին:

Այդ իրիկուն տատս ջոկեց պանրի իւղոտ կտորները, լցրեց մի մորթու մէջ և բերանը կապեց: Երբ պապս պատուիրեց պոչը ծաղիկ երինջին գիշերը կուշտ խոտ տալ, մենք հասկացանք, որ նա իւղ ու պանրի հետ քաղաք է տանելուև պոչը ծաղիկ երինջին, որը մեր բոլորի սիրելին էր, մեր աչքի լոյսը:

Սակայն ոչ ոք չառարկեց: Առաւօտ կանուխ բոլորս ոտքի էինք, և մեզնից ամէն մէկն աշխատում էր աւելի շոյել երինջի մէջքը, խոտի մէջ եղած չոր ծաղիկները ջոկել ու տալ նրան:

Պապս ձիու թամբին կապեց իւղն ու պանիրը և երինջին առաջ արաւ: Դարպասից դուրս գալուց երինջը յետ նայեց դէպի կիսաբաց դուռը ու բառաչեց: Գոմից նրան ձայն տուեց նրա պառաւ մայրը:

Երբ ձին ու երինջը ծածկուեցին բոստանների պատերի հետևը, ու միայն երևում էր պապիս փափախը, որ սև կատուի պէս վազում էր պատի վրայով, մենք մի քիչ էլ կանգնեցինք ու ներս մտանք:

Երկու օր յետոյ պապս վերադարձաւ: Իր խնդիրքը գրել էր տուել Միրզայ Դաւիթին և տանուտէրի օգնութեամբ յանձնել փոստը: Պոչը ծաղիկ երինջն էլ էր գնացել, իւղն ու պանիրն էլ: Փոխարէնը պապս բերել էր թղթի մի փոքրիկ կտոր, որ նրան տուել էին նամակն ընդունելուց յետոյ:

– Նազու աղջիկ, լաւ տեղ դիր, աչքի լոյսի պէս պահիր: Պատասխանն էդ թղթովն ա գալու: Թէ որ կորաւ...

Եվ փոքրիկ թուղթը, որ շորի մէջ ամուր փաթաթելուց յետոյ տատս դրեց սնդուկի մէջ, մեզ համար դարձաւ և՛ ամէնից թանկը, և՛ ահաւորը:

Ի՞նչ կար այդ փոքրիկ թղթի մէջ, ո՞ւր է մեր պոչը ծաղիկ երինջը, մորթեցի՞ն, թէ՞ բառաչում է ուրիշի գոմում: Մտածում էինք այնքան, որ յոգնում էինք, քնում ու երազի մէջ տեսնում երինջին, որ խոտի տեղ ախոռում ուտում էր թուղթ...

Մի ձմեռ անցաւ, բայց նամակի պատասխանը չեկաւ: Ամբողջ գիւղը գիտէր այդ մասին, և պապս միամիտ պարծանքով պատմում էր, որ ինքը ռուսաց թագաւորին նամակ է ուղարկել: Մեր տունը հիւր եկողներին նա նկարագրում էր, թէ ինչպէս է Միրզայ[19] Դաւիթը խնդիրքը գրել:

– Է՛, մենք էլ ասենք ապրում ենք: Էնպէս ղալամ ունի, որ քարին դնի, քարը կճաքի... Ինձ որ տեսաւ, երեսիս նայեց, թէ Արութիւն ապեր, ուզո՞ւմ ես ասեմ, ինչի ես եկել ինձ մօտ: Ասաց, թէ դու ուզում ես, որ թագաւորին նամակ գրեմ տղիդ համար: Մնացի զարմացած: Օրէնքի գրքերը բաց արեց կարդաց– կարդաց, մինը դրեց, միւսը վերկալաւ, վերջը գտաւ: Ոսկէ ղալամը դրեց թղթի վրայ... Մի զարմացք էր որ: Էդպէ՛ս էլ գիր, էդպէ՛ս էլ զօրութիւն...

Ունկնդիրն իր հիացմունքն էր յայտնում Միրզայ Դաւիթից և նրա գրչից, ինքն իր հերթին անում մի պատմութիւն նրա իմաստութիւնից և հնարագիտութիւնից:

– Ասէնք թէ անունը միրզայ է, բայց ադուակատից էլ գիտուն է:

– Պապի, բա պատասխանը ինչո՞ւ չի գալիս...

– Ա՛յ որդիք, հէնց իմանում եք թէ թագաւորը ունի–չունի էդ հոգսն ունի՞: Կռիւ կայ, ժողովուրդին կերակրել կայ: Օրը ես հազար ասեմ, դու երկու հազար իմացի, էդքան նամակ ու խնդիրք ա ստանում: Հալբաթ մի օր էլ մերը ձեռքը կը հասնի... Բա էս թուղթն ինչի՞ համար են տուել: Էդպէս էլ վրան գրած է. Արութիւն Ադամովից նամակ ռուսաց թագաւորի վրայ:

---

[19] միրզայ – յարգական դիմելաձև կրթուած մարդու նկատմամբ

* * *

Եկաւ գարունը: Մի օր էլ գզիր Իբիշը ձայն տուեց, որ հարևան գիւղում ժողով կայ:

– Թազայ պրիստաւ են դրել, ա՛յ ժողովուրդ, թազայ քեօխուա են ընտրելու: Տունը մի մարդ...

Տանուտէրի ընտրութեանը պապս չգնաց: Ալա եզն այդ օրը տնքում էր, նրա պնչերից ծորում էր ժահրոտ[20] լորձունք: Պապս տաք մոխիր էր կապել եզան ճակատին, շոյում էր նրա մէջքը և փաղաքշական խօսքեր ասում:

Մի քանի օր անց, երբ հիւանդ եզը ոտքի կանգնեց ու ոտքերը զգուշութեամբ փոխելով սկսեց լիզել բակի քարերը, պապս դարձեալ նստել էր իր սովորական տեղը, աչքը՝ հանդից տուն դարձողներին: Ու մէկ էլ երևաց գզիրը:

– Թազայ պրիստաւը քեզ էգուց առաւօտ կանչել ա: Վախտով[21] էնտեղ լինես, թէ չէ ասում են հերսոտն ա...

– Խէ՞ր լինի, Իբիշ... – հարցրեց պապս, տեղից վեր կենալով:

– Հաստատ տեղեկութիւն չունեմ: Ինձ էդպէս ա հրամայել:

– Ո՞վ:

– Թազայ քեօխուան, Մուքելանց Առստամը:

Պապս էլ ոչինչ չհարցրեց: Իբիշը հեռացաւ: Լաւ նշան չէր Առստամի մասնակցութիւնը: Նա հին հաշիւ ուներ պապիս հետ:

– Ինչե՞ր էր ասում բայղուշը[22], – հարցրեց տատս:

– Առստամը կանչել ա, թազայ քեօխուան:

– Հը՞, – պապս նորից կրկնեց:

– Պատասխանը եկած չլինի՞, – ասաց տատս:

– Կարող ա: Վախտն ա. եկած էլ չլինի, հրէս որտեղ որ ա

[20] ժահր – թարախ

[21] վախտով – ժամանակին

[22] բայղուշ – բու. այստեղ՝ չարագուշակ բան ասող

կը հասնի: Համա ասեց պրիստաւն ա կանչում: Հը՞, – դարձաւ նա մեզ:

Մենք հաստատեցինք, որ Իբիշն այդպէս ասաց, և որպէսզի աւելի ստոյգ իմանայինք, պապս մեզ ուղարկեց նրա մօտ մի անգամ ևս հարցնելու: Գգիրը նախ մեզ վրայ բարկացաւ, թէ չենք թողնում, որ հանգիստ հաց ուտի, ապա մեզ յայտնեց, որ պապիս կանչողը պրիստաւն է, բայց ինքը հրամանը ստացել է Մուքելանց Առստամից:

– Հէնց քու ասածն ա լինելու, Նազու աղջիկ, – ասաց պապս մեզ լսելուց յետոյ: – Երևի պատասխանը եկել է կամ թէ ո՞վ գիտի, թագաւորի կողմից մի հարցմունք պիտի անի:

Քնելուց առաջ պապս ինձ պատուիրեց առաւօտը կանուխ վեր կենալ: Ես նրան պիտի ուղեկցէիև այնտեղ նրա ձին պիտի պահէի, մինչև պապս ներկայանար պրիստաւին:

Ուրախութիւնս անչափ էր: Ես պիտի տեսնէի հարևան գիւղը, պապիս թարքին[23] նստած պիտի բարձրանայի սարի գագաթը, որ մեր բակից անչափ հեռու էր երևում: Վերջապէս ես պիտի տեսնէի պրիստաւին: Այս մտքի վրայ ուրախութիւնս տեղի էր տալիս ահաւոր երկիւղի:

Լուսաբացին մի անգամ ձայն տալուց իսկոյն վեր թռայ և արագ հագնուեցի: Բակում պապս հագցնում էր ձիու սանձը: Քիչ յետոյ երկուսով նստեցինք ձին ու ճանապարհ ընկանք:

Երբ հեռացանք գիւղից, ամէն ինչ ինձ համար նոր էր և անծանօթ: Իմ հարցերին վերջ չկար: Ու դեռ մէկի պատասխանը չստացած, միւսն էի տալիս, իսկ պապս դողդոջ ձայնով պատասխանում էր, երբեմն կանչում ձիու վրայ և սանձը ձգում, երբ ձին ոտքը դիպցնում էր քարին:

– Հրէն է՛, էն սպիտակ տունը, կտուրն էլ կարմիր, – ցոյց տուաւ պապս սարի գագաթից, – պրիստաւն էնտեղ է նստում:

[23] թարք – ձիու գաւակ

– Պապի, որ թագաւորը գրած լինի, թէ իրաւունք եմ տալիս, քեռին քանի՞ օրում կը գայ:

– Մի աչքը ճպելում[24]: Թագաւորի համար ինչ: Ուզենայ մի օրում հազար ոչխար մորթել կը տայ:

– Հազար ոչխա՞ր...

Քիչ յետոյ մենք սպիտակ շէնքի մօտ էինք: Ինչքա՜ն նորութիւն կար ինձ համար: Այստեղ փողոցներն աւելի լայն էին, տներն աւելի գեղեցիկ: Փողոցում շատ ժողովուրդ կար: Խանութների առաջ մարդիկ խոնուել էին իրար՝ իւղ էին ծախում, կով, բուրդ, մէկը գովում էր իր ապրանքը, միւսը՝ բարձրաձայն սակարկում գնորդի հետ: Մի քանի հոգի բարևեցին պապիս: Այդ ինձ ուրախութիւն պատճառեց:

– Էս հեռու տեղը որտեղի՞ց են իմ պապիս ճանաչում, – մտածեցի ես:

Սպիտակ տան առաջ իջանք, ձին քաշեցինք բակի ստուերը: Սանդուղքի վրայ նստել էին գիւղացիներ՝ հայ, թուրք, ոմանք զրուցում էին իրար հետ, ոմանք պատի ստուերում պառկել էին, գլխատակին աղլուխի[25] մէջ փաթաթած պաշարը: Պապս մօտեցաւ և խառնուեց նրանց: Մի րոպէ ես նրան իմ աչքից կորցրի. սիրտս ահ ընկաւ և երբ տեսայ նրա սև փափախը, կանչեցի.

– Պապի՜...

Ժպիտն երեսին մօտեցաւ, պատուիրեց որ ձիուն լաւ նայեմ և չթողնեմ, որ մօտենայ միւս ձիերին:

– Քեզ քացի կտան, աչքդ վրան պահիր, –և յուսադրելու համար ասաց, – թէ որ պատասխանը եկած լինի, քեզ համար խուրմա[26] եմ առնելու...

---

[24] ճպել – թարթել, մի աչքը ճպելում – փխբ.՝ մի ակնթարթում

[25] աղլուխ – թաշկինակ, գլխաշոր

[26] խուրմայ – արմաւ

Նրա խօսքը կիսատ մնաց. սանդուղքի գլխից մէկը կանչեց.

– Ադամով Արութիւն:

Ես տեսայ, թէ ինչպէս պապս շտապեց արագ հասնելու սանդուղքին: Աստիճանների վրայ նստած գիւղացիները նրան տեղ տուին անցնի: Յետոյ պապիս սև փափախը ծածկուեց դռների ետևը:

Ձիու սանձից պինդ բռնած, ես աչքս չէի հեռացնում փակ դռներից: Երբեմն դռները բացուում էին, ներս ու դուրս էին անում պսպղան կոճակաւոր մարդիկ, աստիճաններին նստած մարդկանցից ոմանք ոտքի էին կանգնում և նրանց խոնարհ գլուխ տալիս: Իմ աչքին բոլորն էլ պրիստաւ էին, ու ես չէի կարողանում ջոկել, թէ նրանցից որն է աւելի մեծաւորը:

– Պրիստաւն էն է՞, – հարցրի ես կողքիս նստած մի գիւղացու, որի գլխին փաթաթած կեղտոտ շորի վրայ և երեսին կային արեան չորացած կաթիլներ:

– Էն ուրեադնիկ[27] Վասոն ա. պրիստաւն օթախումն[28] ա,– ասաց նա: Ես չհարցրի, թէ ուրեադնիկը պրիստաւի ինչն է: Սակայն հետաքրքրութիւնս աւելի սաստկացաւ: Եթէ ուրեադնիկն այդքան շատ ոսկի կոճակներ ուներ, ապա ինչեր կը լինի պրիստաւի հագին: Իսկ թագաւորը...

Ինձ թուաց, թէ սպիտակ տան ներսը մէկը գոռգոռում էր և ոտքը խփում գետնին: Սանդուղքի քարին նստած մարդկանցից ոմանք իջան և կանգնեցին բակում:

Յանկարծ դռները բացուեցին, երևացին մի քանի ձեռքեր, իրար խառնուած մարմիններ, անթիւ փայլուն կոճակներև այդ ամէնի մէջ պապիս ալեհեր գլուխը:

Ձեռքերն իջնում էին նրա գլխին:

Ու մինչև ես բարձր կանչեցի և ձիու սանձից բռնած վազեցի

---

[27] ուրեադնիկ – գաւառական ոստիկանութեան ստորադաս պաշտօնեայ

[28] օթախ – սենեակ

սանդուղքի կողմը, պապս արդէն թափ էր տալիս փէշերը: Վերևից մէկը ոտքով շպրտեց նրա սև փափախը: Դռները նորից փակուեցին:

Մի քանի հոգի սիրտ արինև մօտեցան մեզ: Սակայն ոչ ոք ծպտուն չհանեց: Իսկ երբ սանդուղքի վրայ երևաց ուրեադնիկը, նրանք իսկոյն հեռացան: Պապս փոշոտ գլխարկը թափ տուեց ու դարձաւ ինձ.

– Չին պահի, բալաս... Պատասխանը չկայ:

Բերանից արիւն եկաւ: Ես տեսայ նրա ջարդուած ատամը: Արիւնը թքի հետ խառնուած կաթում էր նրա արխալուղի վրայ:

Չին մօտ քաշեցի: Մեր գիւղացի մէկը օգնեց ինձ ու պապիս՝ ձին նստելու:

Մենք անխօս ճանապարհ ընկանք:

Պապս գլուխը կախել էր և ձախ ձեռքով բռնել ծնօտը: Ես պինդ գրկել էի նրան, գլուխս հենել մէջքին: Լսում էի նրա ընդհատ շնչառութիւնը:

Նա հեկեկում էր:

Էլ չկարողացայ ինձ զսպել, և արցունքներս ամբարտակը պատռած ջրի նման ժայթքեցին դուրս: Ես աւելի պինդ փաթաթուեցի նրա մէջքին:

Երեկոյեան, երբ պապս, ատամների ցավից տնքալով, հազիւ լսելի պատմում էր, թէ ինչ եղաւ ներսը, երբ ներկայացաւ պրիստաւին, երբ Մուքելանց Առստամը պրիստաւի ականջին փսփսաց, պրիստաւը փրփրեց, հայհոյեց և ոտքը գետին տալով բղաւեց.

– Ես քեզ ցոյց կտամ, թէ ինչ ասել է թագաւորին նամակ ուղարկել:

Պապս իզուր էր փորձել թարգմանի միջոցով յայտնել, թէ ինքը ռուսաց թագաւորին նամակ է ուղարկել միայն իր որդու՝ Եգոր Ադամովի մասին:

– Բերանս բաց արի թէ չէ, մի անգամ խփեց: Աչքերս սևացան... էլ միտս չի, թէ ինչպէս դուրս գցեցին... Առստամը բեղի տակ ծիծաղում էր...

* * *

Այն օրից շատ տարիներ են անցել: Պապս վաղուց է մեռել: Նրա գերեզմանի հողը նստել է, և թեք է ընկել գերեզմանաքարը:

Մինչև վերջին րոպէն միամիտ ծերունին հաւատում էր, որ մի օր պատասխանը գալու է: Երբ յիշում էր այն օրը, դէմքն այլայլւում էր, և աղօտանում էր նրա յոյսը: Սակայն յետոյ նորից յուսադրում էր իրեն էլ, մեզ էլ:

– Նազու աղջիկ, ես մեռնում եմ: Հուր յաւիտեան պարտական մնաս, թէ պատասխանն ստանալիս չգաս և իմ գերեզմանին իմաց չտաս, – ասել էր նա վերջին լուսաբացին:

Նրանից մի տարի յետոյ մեռաւ և տատս:

Նազու աղջիկն էլ դատարկ ձեռքով էր պառկել նրա կողքին: Ու նրա հետ թաղել էին և թղթի այն կտորը, որ իբրև թանկագին աւանդ պառաւը պահում էր սնդուկի մէջ:

Եվ այդպէս էլ չիմացուեց, թէ ինչ եղաւ Եգոր Ադամովը:

...Շատ տարիներ են անցել: Այդ անցեալը ինձ համար դարձել է յիշողութիւն, որ հետզհետէ ընկղմւում է մոռացութեան անդունդը: Միայն երբեմն աչքիս առաջ երևում է իմ Արթին պապի ալեհեր գլուխը, նրա կապոյտ աչքերը և խեղճ ժպիտը: Սակայն յանկարծ աւերուում է և այդ պատկերը, նրա ժպիտը դառնում է ցաւ, և ծերունու ջարդուած ատամից նրա արխալուղի վրայ ծորում է արիւնը:

ՍՊԻՏԱԿ ԶԻՆ

1

Շարմաղ բիբին[29] երեկոյեան, երբ ժամհարը քաշում էր եկեղեցու զանգերը, խրճիթի ծանր դուռը տնքալով բաց էր անում: Երկար ու կերկեր, իբրև արևելեան թախծոտ երգ, ճռնչում էր հին դուռը, երբ պառաւի դողացող ձեռքերը ձգուում էին դէպի դռան մաշուած ունկը: Խաւար խրճիթում դռան երգին արձագանքում էր պղինձների զնգոցը և Շարմաղ բիբու ջինջ ձայնը.

– Քո փառքը շա՛տ, էսօր էլ զանգերը զարկին, – մրմնջում էր այդ լուսերես կինը, որին իրիկնապահի զանգերն աւետում էին անանձնական[30] անդորը:

Նա կանգնում էր դռան շեմքին, աչքը դէպի ներքևի բլուրները, որոնք անսահման հեռուում ձուլուում էին մայրամուտի մուգ–կապոյտ երկնքի հետ և կազմում եզրը մի անգոյ[31] աշխարհի, որին եօթանասուն տարի անդաւաճան հաւատում էր այդ միամիտ կինը:

Կանգնում էր դռան շեմքին և, կարծես թէ տեսնում էր պղնձեայ զանգերի տխուր ղօղանջները, ինչպէս մթնող

---

[29] բիբի – հօրաքոյր

[30] անանձնական – ոչ մարմնական, աննիւթական

[31] անգոյ – գոյութիւն չունեցող

երկնքի տակ նազով ճախրող աղաւնիները: Նա հաւատում էր, որ երեկոյեան զանգերի հետ երկնային մի օրհնութիւն թրթռալով ներս է մտնում ու քսուում հին տան սևացած քարերին, նրա այրուող օջախին, ինչպէս ներս կը մտնէր գետնի երեսով սողացող մշուշը:

Եվ այդ հին հաւատով էլ վերջանում էին Շարմաղ բիբու կրօնական զգացումները: Եկեղեցի չէր գնում. ոչ աղօթք գիտէր, ոչ ծանօթ էր եկեղեցական ծէսերի: Բայց և այնպէս մի խորհրդաւոր ակնածանք էր ապրում, երբ երեկոյեան երգում էին զանգերը, երգում էր և հին դուռը, բլուրների և աշխարհի վրայ իջնում էր մի խաղաղ երեկոյ, ճախրում էին ոսկեթև աղաւնիները. և այդ ամէնը ռամիկ հաւատով նա ընդունում էր որպէս անքննելի խորհուրդ, որ մնացել էր գիւղական աղջկայ անուրախ մանկութիւնից:

Այդ երեկոյ, երբ Շարմաղ բիբին դուռը յետ քաշեց և ոտքը շեմքին դրեց, յանկարծ յետ քաշուեց մի ահարկու ձայնից, որ անակնկալ որոտաց հէնց նրանց կտուրի վրայ և խռպոտ աղմուկով խլացրեց զանգերի ծանօթ ղօղանջը:

Տանեցիները, որոնք սփռոցի չորս բոլոր նստած լուռ ընթրում էին, արձանացան և զարմացած իրար նայեցին: Ահ կար նրանց աչքերում: Նոյնիսկ փոքրիկ Երեմը բնազդով զգաց, որ խռպոտ ձայնը բօթ է գուժում:

– Է-հէ-հէյ, – ալիք-ալիք դիզուեց ձայնը, – ժողովո՛ւրդ... Թագաւորի հրամանով առաւօտը կանուխ ձիատերը ձիով քաղա՛մք, հէյ-հէյ... Ով չտանի, թագաւորի հրամանով տունը, տեղը, է-հէ-հէյ...

Եվ ձայնը հեռանալով նուազեց, որովհետև գգիրը ուրիշ կտուր բարձրացաւ և երեսն ուրիշ թաղի կողմը դարձրեց:

Շարմաղ բիբին չլսեց, թէ զանգերն ինչպէս լռեցին և ո՞ւր կորան նրանց վերջին թաւ ելևէջները: Դուռը դժգոհ վրայ

դրեց, և դուռը չերգեց երկար ու կերկեր, այլ դժգոհ վնգստաց պառաւ շան նման:

– Չո՛ռ, բայղուշ, հէնց էս սհաթին էր...

Երբ Շարմաղ բիբին եկաւ, տեղը նստեց, և երեխաները տատի ներկայութիւնից սիրտ առան, Սիմոնը խոր հառաչով, կարծես ինքն իրեն, ասաց.

– Էսօր Մինասի տղան էր պատմում... Ասում էի սուտ կլինի, ա՛ռ քեզ...

– Ապի, յանի թագաւորն էդքան ձի ինչի՞ ա հաւաքում, – հօրը դարձաւ անդրանիկ աղջիկը՝ ութ տարեկան Շողերը:

– Եսի՞մ, – ուսերը վեր քաշեց հայրը, – կռիւ ա, բալա ջան... Մարդ են ջարդում, ձիեր են կոտորում: Ժողովուրդ տո՛ւր... Թագաւորի հրաման ա:

– Փո՛ւ, փո՛ւ...

Անյայտ էր, թէ Երեմը այդ բացականչութեամբ իր զարմանքն էր արտայայտո՞ւմ, թէ՞ պաղեցնում էր տաք ապուրը: Մայրը սկսեց նրան կերակրելև ահը սրտում ամուսնուն հարցրեց.

– Մեր Ցոլակը չափումը կգա՞յ[32], – բայց Սիմոնը, որ անակնկալ մտքերի հետ էր, չլսեց նրա հարցը:

Ցոլակը նրանց ձին էր, կապտաւուն մորթով, որի վրայ, ինչպէս աստղերը՝ ցրուած էին սպիտակ նշաններ: Երկար, ալիքաձև պոչ ուներ Ցոլակը: Եվ ասում էին, թէ մի հին և ազնիւ ցեղի շառաւիղն էր այդ ձին, որ Սիմոնը գնել էր երկու տարի առաջ, փոխարէնը տալով իրենց էշը, մի անմայր հորթ, մի կարպետ և երկու բեռ ցորեն:

– Տուն եմ, երեխաների տէր եմ, առանց ձիու հնար չկայ, – ասել էր նա և ուրախութեան ժպիտով առաջին անգամ ձին քաշել աղբիւրը: Հէնց այդ օրն էլ նրան անուանել էին Ցոլակ, այն ձիու անունով, որ եղել էր նրանց տանը՝ Սիմոնի

[32] չափումը գալ – չափսերը համապատասխանել

մանկութեան տարիներին:

– Հակառակի պէս հայւանն էլ ջանով ա, – ասաց Սիմոնը և սթափուելով խոր մտքերից, դանդաղութեամբ հացի փշուրները փէշից սփռոցի վրայ թափելով, – տարուա էս ժամանակ ձին էլ էդքան ջանով լինի: Հալբաթ էսպէս պիտի լիներ...

Ասաց ու վեր կացաւ, փափախի մորթու միջից ծղօտները մէկ-մէկ դեն գցելով, դուրս եկաւ գիւղամէջ՝ հարևաններից իմանալու աւելի ստոյգ տեղեկութիւն:

Դարպասի մօտ Սիմոնը մի պահ կանգնեց, նայեց ձիուն, որ արօտից վերադարձել և ախորժակով խժռում էր սարի թարմ խոտի խուրձը, երբեմն մռութով քրքրում խուրձըև փնտրում սուսամբարի տերև: Սիմոնը տխուր նայեց. Ցոլակի ողորկ մարմինը և մորթու սպիտակ բծերը աստղալուսին մեղմ շողշողում էին:

Նա մի անգամ էլ տեսաւ, որ ձին նիհար չէ և չար վրդովանքով կանչեց.

– Սատկած, քիչ կեր էլի, տրաքուելու չե՞ս հո...

Կանչեց ու խուրձը դրեց գոմի կտրան: Ձին մեղմ վրնջացև վիզը մեկնեց դէպի խուրձը:

– Հը՞, բոյը կարճ չի՞, նանի... Չափումը թէ չգայ, – դարձաւ նա մօրը, որ հաւաբնի մուտքը կալել ու կանգնել էր նրա կողքին:

– Եսի՞մ, այ որդի...

– Ռուսի ղազախը սրա վրայ կարո՞ղ է նստի... Չէ՛, չեն տանի, –յուսադրեց իրեն Սիմոնըև քայլեց փողոցով:

Շարմաղ բիբին նայեց որդու օրօրուող մարմնին, մինչև նա հալուեց մթնում և կենդանական խանդաղատանքով ինչ-որ բան մրմնջաց, որ չգիտես աղօթք էր, օրհնութի՞ւն, թէ՞ աղօտ յոյսի ակնկալութիւն:

2

Մութն էր, երբ Սիմոնը տուն եկաւ: Գոմում կապած ձին լսեց տիրոջ ոտնաձայնը, նորից վրնջաց: Սիմոնը խղճահարուեց. նա ճրագը վառեց, խոտի խուրձը գրկեց և ներս մտաւ գոմը: Ցոլակն ուրախութիւնից վրնջաց, մի քանի քայլ արեց, փորձեց կապը կտրել, բայց չկարողացաւ: Սիմոնը խուրձը մսուրը դրեց, և երբ ձին մռութը կոխեց մէջը, ձեռքով շոյեց Ցոլակի փափուկ մէջքը:

Ընդարձակ գոմի անկիւնում նստել էր պառաւ կովը: Երկու այծերը, որոնք բարձրացել էին մսուրի վրայ, Սիմոնին տեսնելով ցած թռան և միրուքներն օրօրելով մօտ վազեցին: Սակայն Սիմոնը չմօտեցաւ ո՛չ կովին և ո՛չ էլ այծերին: Նա մի պահ կանգնեց, ապա ձիու ոտքերի տակ թափուած խոտը ժողովեց և դուռը դրեց:

Երեխաները քնել էին: Շարմաղ բիբին, աչքերը կկոցելով, դժուարութեամբ թելում էր հաստ ասեղը, որպէսզի կարկատի որդու գուլպաները: Նրանց տան վաղուցուա կարգն էր այդ: Երբ Սիմոնը քաղաք գնար, մայրն էր հոգում նրա ճանապարհի պատրաստութիւնը:

Խրճիթի հին դուռը ճռռաց, պառաւը ասեղը թողնելով՝ անհանգիստ հարցրեց.

– Հաստա՞տ ա...

– Բա հո սուտ չի՞...

– Ի՞նչ են ասում:

– Ասում են՝ բոյը հաշիւ չի, եթէ ձին առողջ է, կը տանեն... – և դարձաւ մօրը, – նանի, Ցոլակի էն մեծ տոպրակն ո՞ւր ա, հետս դարման եմ տանելու:

Շարմաղ բիբին վեր կացաւ մեծ տոպրակի միջի բուրդը թափելու:

Քնելուց առաջ Սիմոնը մի անգամ էլ գնաց գոմը: Պառաւ

կովը այդ անսովոր այցից զարմացած, մինչև վեր կենար ու որոճալով մօտենար գոմի դռան, Սիմոնը ձիու համետն[33] ու չուանները սարքեց, դրեց ախոռի մօտ ու դուրս եկաւ:

Դուրսը աստղալոյս գիշեր էր:

Գիւղում մէկ-մէկ հանգչում էին կրակները, և կրակների հետ լռում էին ձայները: Ներքևը, գետափի մարգերում կանչում էր գիշերահաւը: Արտերից, դաշտերից և հեռուի անտառից հովը բերում էր զով սառնութիւն և հազարաւոր խոտերի բոյր, որի մէջ աւելի սուր զգացուում էր սուսամբարի և արդէն չորացող դաղձի կծու հոտը:

Սիմոնը նստել էր դարպասի քարին, և քարի նման հոգսը ծանրացել էր նրա սրտին: Հազիւ էր ծայրը ծայրին հասցնում, երբ հաւասար աշխատում էին ինքն ու Ցոլակը: Իսկ ա՞յժմ... Եվ Սիմոնին թուաց, թէ իրենց տնից տանում են ոչ թէ մի ձի, այլ իր եղբօրը, իր որդուն, այնպէս, ինչպէս անցեալ ամառ շատ տներից տարան նրանց որդիներին ու եղբայրներին:

Սակայն յոգնութիւնը յաղթեց, ու ներս մտաւ տուն:

– Հակառակի պէս անիրաւի մէջքը կ՚ասես հինայեած լինի, – նորէն յիշեց Սիմոնը:

3

Լոյսը դեռ չէր բացուել, երբ Սիմոնը ձրագը ձեռքին մտաւ գոմը, Ցոլակին համետեց ու դուրս քաշեց: Հարևան բակերում ձրագներ էին շարժուում, ճռնչում էին դռները, ինչ-որ ձայներ էին գալիս:

Սիմոնը լսեց իր հարևանի՝ Սաքու տղայի ձայնը: Նա բարկացած կանչում էր հարսի վրայ, թէ ինչու ձիու չուանը լոյսով չի գտել:

---

[33] համետ – բեռնակիր անասունի մէջքին դրուող յարմարանք՝ բեռ բարձելու կամ նստելու համար, փալան

Դռանը կանգնել էին Շարմաղ բիբին, կինը և նրա փէշից բռնած քնաթաթախ Շողերը, որ չէր լսել մօր խօսքը և լացով հագել շորերը, որպէսզի տեսնի, թէ ինչպէս են ճանապարհ գցում Ցոլակին:

Տխուր ժամ էր, երբ Սիմոնը դռնից հանեց ձին: Կարծես ներսը նա զարդարել էր մի դագաղ, իսկ դուրսը սպասում էին այդ ծանր վայրկեանին, որ աղի արտասուեն:

Ցոլակը գոմից երբ դուրս եկաւ, վրնջաց և ականջները խլշեց: Շարմաղ բիբին ձեռքը կրծքին խփեցև աղիողորմ ասաց.

– Ջա՛ն, – ու սրբեց արցունքը:

Շողերը մօտ վազեց, երեկուա խոտի փշրանքից մի բուռ մօտեցրեց ձիուն: Ցոլակի տաք ռունգերից մի ջերմ շունչ շոյեց աղջկայ սառած ձեռքերը:

Սիմոնն ամրացնում էր ճանապարհի պաշարը, կապում յարդով լի պարկը և միաժամանակ տնեցիներին պատուիրում, որ ցերեկն այծերը հեռու չքշեն, որ եթէ արև լինի՝ հնձած խոտի կիտուկները շրջեն և, եթէ ջրի հերթն իրենց տան, լոբու մարգերն անպատճառ ջրեն: Հէնց այդ խօսքին Սաքու տղան կանչեց.

– Սիմոն, բա չպրծա՞ր...

– Եկա՛յ, եկա՛յ:

Եվ Ցոլակի սանձը քաշեց: Տանեցիները դանդաղաքայլ հետևեցին մինչև հարևանի դուռը, ասես յուղարկաւոր էին մի թանկագին դագաղի, որին ուղի էին գցում մահուան անվերադարձ ճանապարհով:

Շարմաղ բիբին անընդհատ լալիս էր. լաց էր լինում և Շողերը, լալիս էր նրա մայրը: Փողոցին չհասած, մայրը լսեց Երեմի ձայնը.

– Ապի՛, ապի՛...

Դռան շեմքին կանգնել էր մերկ երեխան ու բարձր-բարձր

հեկեկում էր և կանչում հօրը: Բայց ուշ էր: Սիմոնը Սաքու տղայի հետ արդէն իջնում էր ձորակը, որպէսզի միանայ ուրիշ ձիաւորների:

Մայրը վերադարձաւ, գրկեց տղային ու տուն մտաւ: Շարմաղ բիբին ու Շողերը կանգնեցին այնքան, մինչև ձիաւորները դարիվերը բարձրացան և պահուեցին բլուրի յետևը:

Արևը նոր-նոր շողերով ոսկի էր թափում բարձր սարի կատարին, երբ վերջին ձիաւորը երևաց դարիվերի գլխին և անհետացաւ, ինչպէս սև ուրու:

4

Ձիաւորները սկզբում լուռ էին, ոմանք առաւօտի զովից ընդարմացել ու կարկամել էին: Սակայն բոլորն էլ իրենց դժուար մտքերի հետ էին, ձիերն էին համեմատում իրար, ուշի-ուշով դիտում, որպէսզի որոշեն, թէ ո՞րը նորից կը վերադառնայ այս ճանապարհով, և որի՞ սանձն ու սարքը տէրը շալակած տուն կը բերի, որպէս մեռած մարդու զգեստներ, որոնց վրայ այնպէս դառնաղի ողբ են երգում գիւղի կանայք:

Գնում էին մէկ-մէկ, խումբ-խումբ: Մէկը գրպանից հաց էր հանել, միւսն ագահութեամբ ծծում էր չիբուխը, երրորդը կախ էր արել ոտքերը, աչքը ձիու ականջներին և լուսաբացի նինջով օրօրուում էր ձիու հետ:

Բայց երբ սարի հետևից արևը բարձրացաւ, կարծես ջերմացաւ տխուր ու լուռ ձիաւորների սիրտը: Ամէնից առաջ խօսեց դարբին Աւագի տղան՝ շիլ Իւանը, որ սարը բարձրանալիս սահել և հասել էր մինչև ձիու գաւակը:

Նա ընդհատեց իր տխուր երգը և միամիտ պարզութեամբ ասաց.

– Ես աստծու քոռ հաւատն անիծեմ... Իմ աչքս էսպէս արեց:

Իմ ձին որ քոռ լինէր, ես էս սարի գլխին ինչ ունէի:

Մի քանիսը ծիծաղեցին: Սաքու տղան մտքում բարկացաւ նրա վրայ.

– Անդա՛րդ հէյւան...

– Հրեն Հիբանի ձիուն տեսէք, – շարունակեց Իւանը, ուրախ, որ ընդհատեց ծանր լռութիւնը, – կասես ղազախի ձի լինի: Հիբան, պրիստաւը քեզ էդ ձիով տեսնի, քեզ էլ հետը կը տանի...

– Ինչ պակաս կաւալեր ա, – ձայն տուաւ մէկը: – Էն օրը Քարուտի առուով էնպէս թռաւ, որ մնացինք արմացած:

– Մի տեսէք է՛... Տէրտէրն իրա ձին ժամհարին ա տուել: Այ, ինչ եմ ասել հալալ ախպերութեան, – խօսքը փոխեց դարբնի տղան:

– Ա, քիչ յավա-յավա[34] խօսիր, է՛յ... – կանչեց Շուղունց Աքելը, որ գիւղում աւել անունով յայտնի էր որպէս «աղուէս խեղդող»՝ երիտասարդ ժամանակ ձեռքով աղուէսը խեղդելու համար, – տէրտէրը հիւանդ տեղով կարող ա՞ ձի նստի:

– Դէ, ասի մնացել ա, որ մեզ համար աղօթք անի, էլի՛, – կծու հեգնեց մի ուրիշը:

Ընդհանուր խօսակցութիւնից բացի ծայր առան և մասնակի զրոյցներ: Ոմանք ճանապարհն աննկատ անցնելու համար մի պատմութիւն սկսեցին, ոմանք էլ խօսում էին պատերազմի և նրա արհաւիրքների մասին:

– Մեր Անդրին անցկացած շաբաթը մի նամակ էր ուղարկել Վարշաւու կողմերից... Լաւ չի գրում. ասում է՝ էս է մի ամիս է ծմակի մէջ, գիշեր-ցերեկ թոփերը տրաքում են: Մինչև անգամ չոլ դուրս գալն էլ ա երկիւղալի...

– Իմ հօրեղբօր Սիմոնն էլ ա գրել: Լազարեթից[35] ա գրում,

---

[34] յաւայ-եաւայ – դատարկ-դատարկ, յիմար-յիմար

[35] լազարեթ – (ռուս.) – զօրամասային հիւանդանոց, հոսպիտալ

համայ տեղը յայտնի չէ: Մի տեսակ անուն են ասում... Էն օրը տէրտէրը ինչքան ման եկաւ գրքերում, չգտաւ: Ասում ա էդպէս քաղաք Ռուսեթու հողումը չկայ:

– Նրա ինչն ա որ...

– Ոտիցն ա կպել: Գրում ա, որ ծանր չի, մի ամսից պիտի դուրս գայ:

– Աքել ամի, դու երկիր տեսած մարդ ես, էս կռիւն ինչո՞վ կը վերջանայ, – դարձաւ նրան դարբնի տղան: Շատերը ծիծաղեցին, որովհետև Շուղունց Աքելն իր ողջ կեանքում իրենց գիւղից և գաւառական աւանից այն կողմը չէր եղել:

Ինքը՝ Աքելը, դժգոհ սաստեց.

– Անհամ անհամի տղայ...

Քիչ յետոյ խօսք ընկաւ ձիերի պետական գնի մասին:

– Թէկուզ անունը փող, ինչ կառնուի դրանով...

– Երկու բեռ գարի...

– Էդ էլ չես առնի:

– Դէ, գոնէ գինը տային:

– Տային էլ, որտեղից ես ձի առնում: Մեր գիւղից որ էսքան ձի են պահանջել, դու տես ամբողջ գաւառից քանիսն են բերելու...

– Այ տղայ, էս հո կարգին զորք ենք, –և դարբնի տղան բարձր կանչեց.

– Սլուշա՛յ... Ափիցեր Աքել Շուղունցով...

– Ա, հերիք տնազ տաս Աքել ամուն:

– Աքել ամիս նեղանալ չի... Դէ, շարքով գնացէք, տեսնեմ ով ա յետ ընկել, – ասաց Իւանը և ձին ճանապարհից հանեց:

– Թամամ հաշիւ... Աբրահամի ձին չկայ՝ էն ա բազարում, Իսախանենց ձին՝ ոտը գէլը ցրիւ ա տուել, մէկ էլ Կոստանդ աղայի սպիտակ ձին...

– Կոստանդը հիմա քնած, ձին էլ ոսկի գարին առաջը... Վեր

կը կենա, իւղ ու մեղր կ՚ուտի, ձին կը թամքի և Կաթնաղբիւր մեզ կը հասնի: Նա հո քո հաւասարը չի՞, – ասաց Գիլանց Մուքին:

– Մի հաշիւ չի՞... Էս գլխից հէնց նրա ձին են տանելու, – ասաց Սիմոնը և տխուր նայեց Ցոլակին, որ ականջները խաղացնելով գնում էր միւս ձիերի կողքով:

– Ոնց չէ, – առարկեց Իւանը, – քո Ցոլակը առաջի նոմերը կը հանի, նրանը չէ... Թող Շարմաղ հօքիրն ինչքան ասես լաց լինի, – ձայնը տխուր մեղմացրեց Իւանը:

Սիմոնը վրդովուեց:

– Ուրեմն Կոստանդի սպիտակ ձին ու Ցոլակը մի հաւասարի են... Նա սպիտակ ձիու արժէքը մի բեռ ոսկի է տուել: Ես ինչ եմ տուել...– Էս է, սև ու սպիտակ էնտեղ կը ջոկուի, – ասաց դարբնի տղան և խօսակցութեանը վերջ տալու համար սկսեց պատմել, թէ իբրև գերմանացիք պայթեցրել են մի ահռելի պարիսպ և ծովը կապել ռուսների հազար–հազար զօրքի վրայ...

5

Արևը բաւական բարձրացել էր, երբ ձիաւորները հասան Կաթնաղբիւր և Գիլանց Մուքու առաջարկով իջան հանգստանալու: Նրանք ձիերն արձակեցին աղբիւրից ներքև ընկած արօտներում, իսկ իրենք տեղաւորուեցին աղբիւրի մօտ և բաց արին ճանապարհի պաշարը:

Այդ աղբիւրը, ուտելու պահանջը, գուցէ և այն, որ ճանապարհին յոգնելու չափ խօսել էին պատերազմից, ձիերի հաւաքից և օրուա չարիքներից, այդ ամէնը աղբիւրի մօտ նրանց զրոյցը փոխեց խաղաղ և սովորական առօրեայի հունով:

Կարծես հունձի ժամանակն էր, և ինչպէս միշտ, ծփում էին լեռան լանջերի բարձր խոտերը: Եվ ինչպէս ամէն տարի, ահա

նրանք ձիերով եկել են սարը: Հիմա կը զրնգան գերանդիները, լորը կը թռչի խոտերի միջից, և լեռնային կաքաւը կը կարդայ կանաչ սաղմոսը:

Դարբնի տղան յանկարծ նկատեց, որ Շուղունց Աքելը շտապելուց մթնում տրեխները թարս է հագել: Եվ այդ բուռն զուարճութիւն պատճառեց միւսներին:

Նրանց զուարթ ծիծաղը լռեց, երբ Գիլանց Մուքին, որ արդէն ալեհեր ծերունի էր, բարձրացրեց օղու առաջին թասը:

– Բարի լոյս բացուի մեզ վրայ և մեզ նման չարքաշ մշակների վրայ... Բարով տեսնենք մեր զաւակների ազատութիւնը սրի բերանից: Ողջութիւն լինի և արդար լիութիւն: Դու մեր սրտովն անես,– և ալեհեր գլուխը դարձրեց դէպի ջինջ երկինքը, կարծես նրա անհուն խորքից մի աչք քաղցր նայում էր այդ խեղճ մարդկանց:

Սիմոնը լուռ էր: Նա թիկնել էր քարին, թրջում էր հացը պաղ ջրի մէջ և դանդաղ կրծում: Երբեմն նայում էր արածող ձիերին, որոնք գլուխները չէին բարձրացնում ցօղապատ խոտից: Գիւղի ձիերի հետ արածում էր և Ցոլակը:

Սիմոնը մերթ աչքի տակով համեմատում էր ձիու բարձրութիւնը միւս ձիերի հետ և տեսնում, որ Ցոլակը նոյնիսկ Գիլանց Մուքու ձիուց էլ կարճ է, մերթ հայեացքը գցում էր սարալանջի կողմը: Եվ դժուարին մտքերը խռնուում էին ուղեղում, ու ելքը չէր տեսնում: Ահա՝ նորէն դռանը կը չոքի դառն աղքատութիւնը, վիզ կծռի ուրիշին, որ իր խուրձերը տուն բերեն, որ խոտը սարից բերեն: Ցոլակին կը տանեն, և հնձած արտում խուրձերը անձրևից կը սևանան...

– Թէ Գիլանց Մուքու ձին հաւասարուի Ցոլակի հետ... Թէ չէ՝ նրանից կարճը չկայ...

– Սիմոն, հրէ՛ն, – յանկարծ կանչեց դարբնի տղան, և Սիմոնը ցնցուեց:

Նա գլուխը յետ դարձրեց:

Հեռուից խաղալով և խայտալով վազում էր սպիտակ ձին, քամին փռփռացնում էր բաշը, և ձին լայն կրծքով ճեղքում էր լեռնային օդի սառն ալիքները: Փոշի չէր բարձրանում գետնից, և թում էր, թէ ձիու արագաւազ ոտները չեն դիպչում գետնին, և պայտերը զրնգում են օդի մէջ:

Արևը դէմից էր և արևը ոսկեվորել էր ձիու մարմար ճակատը, արծաթաձոյլ ասպանդակները և պողպատեայ սանձը: Ձիաւորը ձիու հետ միաձոյլ էր, և թում էր, թէ արևմուտքի գորշ ամպերի պատուանդանից պոկուել էր մարմարիոնէ մի հեծեալև արշաւում էր որպէս չքնաղ տեսիլք:

Գիւղացիների զրոյցը դադարեց: Բոլորը նայում էին նրա կողմը: Նոյնիսկ ձիերից մի քանիսը բարձրացրին իրենց գլուխները և յափշտակուած, անասնական ահով նայեցին սպիտակ ձիուն:

Շուղունց Աքելի բերանում հացի պատառը սառել, մնացել էր:

– Այ ձի... Հազար մանէթ գին ունի:

– Տէրն էլ պակաս փող չունի:

– Էդ ձին ինձ տան, կռիւ չգնացողը մարդու տղայ չի, – ասաց դարբնի տղան:

– Նրա վրայ ամենաքաշը[36] գեներալ կը նստի...

– Վրան նստողն էլ գեներալ է:

Երբ ձիաւորներին հասաւ, Կոստանդ աղան սանձը ձգեց և հազիւ կարողացաւ պահել ձիու գլուխը: Կապոյտ քրտինքի փրփուրը նստել էր ձիու սպիտակ մորթի վրայ: Ձին կարմիր ռունգերը փնչացնում էր, կանգնած տեղը ոտքերն անհանգիստ դոփում:

– Դուրս գալդ մի սհաթ կա՞յ, Կոստանդ աղայ, – շողոքորթ

[36] ամենաքաշը – ամենաքիչը, ամենացածր աստիճանը

կեղծութեամբ հարցրեց Շուղունց Աքելը, որին շշմեցրել էր այդ տեսարանը:

– Սհաթին չեմ նայել... Մինչև դուք ձիերը նստէք, ես բազար կը հասնեմ: Չեմ կարողանում գլուխը պահեմ, ձեռքերս կոտորեց...

Դարբնի տղան կամաց վրայ բերեց.

– Տո՛ւր ինձ, ես կը պահեմ:

Կոստանդն ուզեց ինչ–որ բան ասի, սանձը մի քիչ թուլացրեց. սպիտակ ձին նոյն վայրկեանին զգաց այդ, և տիրոջ խօսքը մնաց կիսատ:

Գիւղացիները տեսան սպիտակ ձիու ամեհի ոստիւնը: Մի ակնթարթից ձին պահուեց սարի հետևը:

– Հրեղէն ձի սրան կ՚ասեն...

Քիչ յետոյ գիւղացիները քաշեցին իրենց ձիերն ու ճանապարհ ընկան:

6

Երկու լեռնաշղթայի արանքում, նեղ հովտի վրայ, որի մէջտեղով գլորւում է լեռնային կապոյտ գետը, – ընկած է այն փոքրիկ քաղաքը, դէպի ուր այդ օրերը լեռնային կածաններով և դժուար արահետներով գնում էին մարդկանցև ձիերի անընդմէջ շարքերը:

Նրանք իջնում էին բարձր լեռներից, որոնց գոգերում, ինչպէս լեռնային արծուի բները, ծուարել են քարակոփ գիւղերը: Նրանք ելնում էին մթին ձորերից, ուր խաւար խեղճութիւն կար: Նրանք գալիս էին բարձրաւանդակի տափարակից, որի մէջտեղը ադամանդի նման ջինջ լիճն էր՝ եղեգների երիզով, քարոտ ափին՝ հին գիւղը, որի կիսաւեր վանքը քարափից ցոլք էր գցում ջրերի վրայ, և թւում էր, թէ ջրերի տակ սուզուել է մի մեռած վանք, ու սպիտակ բադերը

գիշերում են նրա մռայլ խորաններում[37]:

Եվ ով հայրենի ճանապարհով հասնում էր այն ծանօթ կէտին, որտեղից յանկարծ բացուում էր գետահովիտը, շողշողում էին քաղաքի տների ապակեպատ պատշգամբները, թիթեղեայ կտուրները, ով հասնում էր այդ կէտին, ահով էր նայում ներքև, ինչպէս արջառը, որին քշում են սպանդանոցև ահա թաց ռունգերով շնչում է թարմ արեան հոտը:

Վրնջում էին ձիերը՝ մետաղաձայն և երկարածոր, ինչպէս տխուր երգը, կարծես վերջին հրաժեշտն էին ուղարկում լեռնային կապոյտ լճերին, որոնց ջրից խմել էին, տափաս-տանններին, որտեղ անցել էր նրանց մանկութիւնը, և ամայի գոմերին: Մէկը թաւ էր վրնջում, միւսը՝ արծաթահնչիւն, և բարձրանում էր հետևի ոտքերի վրայ, ինչպէս գազազած ցուլ, ձգում էր սանձը և չէր ուզում իջնել այդ անվերադարձ ուղիու:

Երբ ձիաւորները քաղաք հասան, հրապարակում ասեղ գցելու տեղ չկար: Փողոցները, արտերի միջնակները[38], նոյնիսկ տների բակերը սևացել էին ձիերի հազարաւոր խմբերից:

Կային հազար գոյնի ձիեր՝ որձ, էգ, ծանրած և ծեր, քուռակներով և դեռ անծին, թամբած ու մերկ: Նրանց կապոտել էին՝ որին քարից, որին ծառից կամ գետնին խրած սեպից: Կային և իրար կապած ձիերի խմբեր: Մէկի առաջ խոտ էր, միւսինը յարդ, երրորդը նեղուում էր քաղցից, շոգիցև անսովոր միջավայրից: Քաղցած ձիերը պոկոտում էին փողոցի չոր և հազար սմբակի տրորած խոտը:

Ձիերն իրար հետ կռուում էին. ամէն անկիւնից վրնջոցի ձայն էր լսուում: Մի տեղ, ձիերի բազմութեան մէջ, քուռակը իր մօրն էր կորցրել և բարակ վրնջոցով կանչում էր, վազւզում, մռութը մօտեցնում ուրիշ մայրերի: Շոգից կատաղած որձաձիերը

---

[37] խորան – այստեղ՝ կամարակապ որմնախորշ

[38] միջնակ – արտի վարած տեղերի միջև անվարել մնացած մաս

կտրատում էին կապերը և ամեհի կրքով հալածում էգերին, իրար կրծոտում և արնոտում բաշ ու ազդրեր:

Այդ ժխորին խառնուում էր տէրերի կանչն ու աղմուկը, հարայ- հրոցն ու բղաւոցը: Հայ, թուրք իրար էին խառնուել: Պետական հրամանը բոլոր գիւղերում կրկնուել էր պաշ-տօնական կարգադրութեան գորշ նմանութեամբ և մարդկանց ու ձիերի այդ ահագին բազմութիւնը քշել քաղաք:

Հրապարակի մի անկիւնում, տախտակներից շինած փոքրիկ բարձրութեան վրայ, դագաղի նման նեղ սեղանի շուրջը նստել էին իշխանաւորները: Նրանցից հեռու ոտքի վրայ էր ստորադաս պաշտօնեաների՝ ուրեադնիկների, տանուտէրերի և գիւղական գրագիրների խումբը, իրենց պաշտօնական տարազով, շքանշաններով և պղնձեայ ծանր մեդալներով: Աւելի հեռու՝ հպատակների բազմութիւնն էր, որ ծովի նման ծփում էր: Եվ բոլորի աչքերն ուղղուած էին սեղանի շուրջ նստած չինովնիկների կողմը, որովհետև նրանք էին որոշում ձիուև ձիատիրոջ բախտը:

Գիւղի տանուտէրը կարդում էր ձիատիրոջ ազգանունը, բազմութեան միջից մէկը, ձիու սանձը բռնած, առաջ էր գալիս, ինչպէս կրկէսում՝ ըմբիշը: Ապա նրա ձիուն մօտենում էին մի քանի հոգի, տնտղում, ատամները նայում, թղթի վրայ ինչ-որ նշումներ անում: Մի վայրկեան խորհրդակցելուց յետոյ՝ սեղանի մօտ նստած պրիստաւը ձեռքով նշան էր անում:

Ահա այդ նշանն էր, որ յայտնի էր դարձնում ամէն ինչ.

Եթէ նշանը բազմութեան կողմն էր, ուրեմն ձին անպէտք էր: Ձիու տէրը սկզբում երկիւղով, ապա ուրախութիւնից դողացող ոտքերով քաշում էր ձին և արագ հեռանում: Իսկ եթէ նշանը տախտակների մօտ կանգնած ռուս զինուորներին էր ուղղած, ապա նրանք իսկոյն մօտենում էին, նոր սանձ հագցնում ձիու գլուխը, հինը շպրտում տիրոջ կողմը, ձին հեռացնում էին,

յանձնում ուրիշ զինուորների, որոնք բազմութեան և տիրոջ աչքի առաջ միահաւասար կտրում էին ձիու պոչը, բաշը խուզում և բաշի մազերից կախում տախտակի մի փոքրիկ կտոր:

Ձիատէրը փորձում էր գնալ իր ձիու հետևից, սակայն բղաւում էին նրա վրայ, և ինչպէս պարտուած ըմբիշ, նա մնում էր գլուխը կախ: Բազմութիւնը լուռ դիտում էր այդ տեսարանը: Ապա տանուտէրը կանչում էր նրան, և շշմած մարդը սթափուում էր, հաւաքում այն, ինչ յանձնում էին՝ ձիու սանձը, չուանները, համետը, և այդ իրերը շալակած անցնում էր հրապարակով դէպի բազմութիւնը, ձեռքում բռնած թղթի կտորը, որի վրայ նշանակուած էր ձիու գինը և նրա նախկին տիրոջ ազգանունը:

Գիւղացիները երբ քաղաք իջան, ձիերը կապեցին հրապարակից հեռու: Գիլանց Մուքին և Աքելը առաջ ընկան՝ ամբոխի մէջ գտնելու հարևան գիւղերի մարդկանց:

Առաջին հանդիպած ծանօթին, որ նրանցից կանուխ էր եկել, իսկոյն հարցրին.

– Հը, շատ են տանում...

– Էլ մի ասէք, զուլում ա...

Սիմոնը տեսաւ իր վաղուցուայ ճանաչ թուրքին և նրան մի կողմ քաշելով առանձին հարցրեց, թէ ինչպիսի ձիերն են ազատուում, արդեօք կարճահասակ ձին էլ էն տանում:

– Ձիուդ ոտքը պիտի կոտրած լինի կամ խոր վէրք ունենայ, որ ազատուի... Թէ չէ՝ բոյը հաշիւ չի...

Սիմոնի ոտները թուլացան:

Մինչև այդ խօսակցութիւնը նա դեռ մի աղօտ յոյս ուներ, որ այնուամենայնիւ յոյս էր: Այժմ այդ էլ ցնդեց: Նա յուսահատ մօտեցաւ ձիուն:

– Ցոլամ, –և ձին վրնջաց այդ ծանօթ կանչից: Կարծեց հիմա

խոտ պիտի գցէին նրա առաջը: Սիմոնը յարդով լի պարկը կոխեց նրա գլուխը:

– Ցոլակ... Գնում ես էլի...

Քիչ յետոյ Գիլանց Մուքին յոգնած վերադարձաւ: Նրա ալեհեր դէմքի վրայ դառն անյուսութիւն կար: Եվ յուզուած, հևացող շնչով ասաց գիւղացիներին.

– Հիմա Քարագլուխն են կանչում, յետոյ զիլբիրեցիք են գնալու, նրանցից յետոյ՝ մենք...

Սիմոնը մի վայրկեան մտածեց, տոպրակը ձիու գլխից հանեց ու ձին քշեց:

– Էդ ո՞ւր, Սիմոն, – ձայն տուաւ Սաքու տղան:

– Տանեմ գետը... Կաթնաղբիւրից ջուր չխմեց:

Այդպէս փախչում են սարսափից: Այդպէս փախչում է հօտը, երբ կայծակն ահռելի որոտով խփում է մօտակայ ժայռին: Այդպէս դողահար վազում է գազանը, երբ հրդեհուում է անտառը:

Սարսափահար փախչում էր Սիմոնը, մոլորուելով քաղաքի փողոցներում, անվերջ մտրակելով ձիուն: Կարծես նրա հետևից էին ընկել հրապարակի բոլոր զինուորները, և նրանք, որոնք նստել էին դագաղի նման նեղ սեղանի շուրջը:

Ահա հասաւ գետափի խուլ փողոցը: Այնտեղ էլ ձիեր կային. Նրա նման գիւղի մարդիկ, իւրաքանչիւրն իր ձիու սանձից բռնած և ստրուկի հեզութեամբ իր հերթին սպասող: Նրանք տեսան փախչող ձիաւորին, և ոմանք կարծեցին, թէ ահից սարսափած ձիաւորը փախչում է դէպի հեռուի լեռները, ինչպէս կը փախչի պարտուածը դէպի փրկութեան բերդը:

Ցոգնած ձին մտրակի հարուածից մի քիչ արագացնում էր քայլերը, ապա նորից գնում բեռան տակ մեծացած գիւղական ձիու ծանր քայլերով:

Ահա յետ մնաց վերջին տունը, և բացուեց կարտոֆիլի

դաշտերը: Սիմոնը դանդաղեցրեց ձիու ընթացքը և շունչ քաշեց: Նրան քաղաքի սահմանից դուրս աւելի հեշտ թուաց: Այն հեռուի լեռներից, որոնց լանջին իրենց գիւղն էր, մի անապական[39] զով զարկեց նրա քրտնած դէմքին:

Սիմոնը ծռուեց դէպի աջ, գետը տանող նեղ ճանապարհով: Ձին զգաց գետի սառնութիւնը և առանց մտրակի արագացրեց քայլերը:

Գետակի հունն իջնելուց առաջ Սիմոնը երկիւղով շուրջը նայեց և տեսաւ, որ ամայութիւն է: Միայն ներքևը, ուռիների ստուերում, ննջում էին կովերը: Ու երբ ծարաւ ձին գլուխը կռացրեց ջրի վրայ, Սիմոնը ցած թռաւ, սանձն ամուր կապեց ձիու առաջին ոտքից և սկսեց հետևի ոտքերը կապոտել:

Ցոլակը կուշտ խմելուց յետոյ փորձեց գլուխը վեր հանել, բայց չկարողացաւ: Եվ մռութը հնազանդ ու մունջ նորից կախեց գետի կապոյտ ջրերի վրայ:

Սիմոնն անսովոր արագութեամբ ձիու համետը հանեց: Արևի տակ փայլփլեց ձիու ողորկ և գէր մէջքը: Ապա նոյն արագութեամբ կռացաւ և գետնից վերցրեց մի չեչաքար: Երբ առաջին անգամ նա չեչաքարը Ցոլակի մէջքին քսեց, ձին հովութիւն զգաց, խաղացին նեարդերը, և հաճելի գրգռից մէջքի մաշկը դողդողաց:

Ապա յանկարծ ձին մէջքինզգաց ծակծկոց: Ձին փորձեց հեռանալ, բայց չկարողացաւ, որովհետև ոտքերն իրար պինդ կապուած էին: Նորից փորձեց գլուխը վեր հանել, դարձեալ չկարողացաւ: Իսկ ցաւը հետզհետէ սաստկանում էր, որովհետև Սիմոնը յուսահատ կատաղութեամբ չեչաքարը քսում էր նրա մէջքին: Մի քանի րոպեից մաշկը պլոկուեց և արնոտեց քարը:

Ցոլակը տնքում էր, պոչն ուժգին խփում այս ու այն կողմ,

[39] անապական – չապականուած, անարատ, մաքուր

գաւակն աջ ու ձախ դարձնում, բայց ոչինչ չէր օգնում: Սիմոնն ամբողջ ծանրութեամբ ընկել էր ձիու մէջքի վրայ և քարը հա՛ քսում էր: Արդէն նոր բացուած վէրքից արեան կաթիլները դուրս էին ցայտում և գլորուում հևացող կողերի վրայով: Իսկ Սիմոնն աւելի արագ էր քերում, կարծես չեչաքարն ուզում էր թաղել Ցոլակի այնքան գէր ու ողորկ մէջքի մէջ:

Ձին այլևս չդիմացաւ, շրջուեց կողքի վրայ և մէջքը կիսով չափ թաղեց գետի մէջ: Ցաւից և անսովոր վիճակից Ցոլակը ցնցում էր ոտքերը, փռնչում ռունգերով, վիզն ու գլուխը քսում գետափինև փորձում ոտքի կանգնել:

Սիմոնն արնոտ չեչաքարը մի կողմ գցեց, ինչպէս մարդասպանը դաշոյնը, և սարսափով նկատեց, որ գետի ջուրն անվերջ կարմրում է, երբ ալիքը զարկում է ձիու մէջքին:

– Չլինի՞ տամար[40] տրաքեց...

Ցոլակի աչքերի առաջ մթնել էր: Գլխիվայր դառնում էին քարերը, գետափը, և թուում էր, թէ գետափի փափուկ մամուռը կախուել է երկնքից: Հաճելի էր ջրի մէջ և բնազդաբար կենդանին աւելի խորն էր թաղուում լպրծուն տիղմիև ջրային խոտերի մահիճում: Իսկ վիզն ու գլուխը չէր բարձրացնում կապոյտ քարերի բարձից:

Սիմոնն արագ արձակեց կապերը, սանձը, ինքը կիսով չափ մտաւ ջուրը և գոռալով, աղերսելով, հրելով ու քաշելով մի կերպ բարձրացրեց ձիուն:

Ցոլակը դողում էր:

Նրա մէջքի աջ կողմը ափսեի չափ վէրք էր բացուել, և երևում էր կարմիր, տեղ-տեղ փոս ընկած, ճաքճքած միսը: Արիւնը շարունակում էր կաթկթել, բայց մի քանի տեղ արդէն լերդանում էր:

Սիմոնը յանցագործի հապճեպութեամբ արեան հետքերը

[40] տամար – երակ

լուաց ձիու կողերից, իր ձեռքերից, տիղմի բարակ շերտով ծածկեց վէրքը, ջրախոտերով ծածկեց, ապա շտապ համետեց ձին և դուրս եկաւ ճանապարհը:

Ձին հազիւ էր քայլերը փոխում: Սիմոնն ինչքան էլ կանչում էր, ոտքով փորին խփում, փաղաքշական խօսքեր ասում, ձին չէր արագացնում քայլերը:Եվ Սիմոնն ու Ցոլակը նոյն փողոցներով գնացին դէպի հրապարակը: Երկուսն էլ գլխիկոր էին: Մարդն իր դաժան խոհի հետ էր՝ կը տանէ՞ն այժմ, թէ ոչ, ձին հազիւ տնքում էր, պղտոր աչքերի առաջ գլխիվայր կախուած մի չնաշխարհիկ արօտ...

7

Իսկ հրապարակն այդ ժամանակ ծփում էր մի արտասովոր դէպքից: Փողոցներում խռնուած բազմութիւնից ոմանք բարձրացել էին պատերի և պատուհանների վրայ, որ աւելի լաւ տեսնեին, թէ ի՞նչ է կատարուում մէջտեղը: Ոմանք բարձրացել էին ձիերի վրայ: Ոտքի էին և կենտրոնում՝ սեղանի շուրջը բոլորած մարդիկ:

Մի կապտաւուն ձի՝ երկար, ծալուէծալ բաշով, բոլորովին մերկ, կատաղած վազում էր հրապարակով: Նա երամակի ձի էր, սնուել էր լեռներում, երբեք հեծուոր չէր նստել մէջքին, սանձը չէր դիպչել մռութին, սմբակները պայտ չէին տեսել: Այդ ձին էին ուզում բռնել զինուորները, որոնք երկար պարանները թևերին փաթաթած շպրտում էին գէրութեան օղակը, հէնց որ ձին մօտենում էր նրանց: Բայց ձին ամեհի ոստիւն էր անում, թռչում օձի նման գալարուող օղակի վրայով և փախուստի ելք փնտրում: Զինուորների միւս խմբերը գազանային ոռնոցով կտրում էին նրա ճանապարհը և յետ փախցնում դէպի նրանք, որոնք ոլորում էին նոր օղակ:

Գիւղացիները շունչ պահած, անսահման հետաքրքրութեամբ

դիտում էին կապտաւուն նժոյգի գազազած վազքը: Նրանք չէին թաքցնում իրենց հրճուանքը, երբ ձին թռչում էր օղակի վրայով: Նրանց բոլորի թաքուն ցանկութիւնն էր, որ ձին ճեղքեր զինուորների շղթան և հրեղէն հրաշքի պէս աներևութանար, թռչեր դէպի հայրենի լեռները և այնտեղից պղնձաձայն վրնջար հատուցման և անսահման ազատութեան երգը:

Մարդիկ մի պահ մոռացել էին իրենց ձիերը, որոնց զինուորները կապել էին փշալարի ցանկապատի ետևը, մոռացել էին, որ ձիերի սանձերն ու չուանները շալակած, ոտքով պիտի բարձրանային դէպի լուռ գիւղերը, որոնց դաշտերում այլևս չէին վրնջալու փշալարով անջատուած ձիերը:

Ցանկարծ բազմութիւնը հառաչեց. լսուեց խուլ գուռոց, ինչպէս հողմի շառաչն անտառում: Զինուորները վազեցին փշալարի կողմը: Մի վայրկեան ճեղքուեց բազմութիւնը, ինչպէս ծովի սև ալիքները, երբ երևում է մութ անդունդը, ապա նորից կլանեց ամէն ինչ:

Կապտաւուն նժոյգը վերջին յուսահատ ոստիւնն էր արել, փորձել էր թռչել փշալարի վրայովև ընկել էր լարի երկաթեայ սուր փշերի վրայ... Ճեղքուել էր կուրծքը, փորը և վշշում էր արիւնը լարերի վրայ, մահուան հրապարակի վրայ, և մեռնող նժոյգի ջինջ աչքերում ընդմիշտ սառչում էր հեռուի կապոյտ լեռնաշխարհը...

Զինուորները ձիու սառած մարմինն իջեցրին փշալարից: Բժիշկն արձանագրութիւն կազմեց և վերադարձաւ սեղանի շուրջը, որպէսզի նոյն գործ տաղտկութեամբ շարունակեն գործը:

Սիմոնը յուրայիններին նոյն տեղը չգտաւ: Նրան ասացին, որ արդէն իրենց գիւղացիներին կանչում են: Եվ բազմութիւնը հրելով՝ ձին ետևից՝ հասաւ հրապարակը, որի մի կողմը կանգնել էին դարբնի տղան, Գիլանց Մուքին, Աքելը և

միւսները: Գրագիրը կարդում էր անունները:

– Այ մարդ, ո՞ւր կորար, քիչ մնաց քեզ շտրաֆ անեն: Ասացինք՝ հրէս կը գայ:

Ամէնից առաջ Շուղունց Աքելին կանչեցին: Դողդողալով նա առաջ անցաւ, մի անգամ էլ յետ նայեց համագիւղացիներին, կարծես նրանց ներկայութիւնը յուսադրում էր նրան:

Մօտեցան և զննեցին նրա ձիուն: Ու մէկ էլ զինուորները վրայ տուին, ձիու համետն արձակեցինև շպրտեցին Աքելի կողմը: Ձեռքը վերևից յայտնեց վճիռը: Զինուորները քաշեցին ձին: Աքելը հրապարակում մնաց մի րոպէ, նայեց ձիու ետևիցև անխօս վերադարձաւ, մէջքին ձիու համետը:

Դարբնի տղան սրախօսեց.

– Ափիցեր Աքել Շուղունցով, – բայց ոչ ոք չծիծաղեց: Դարբնի տղայի ժպիտն այլանդակ կծկուեց և դէմքի վրայ սառեց որպէս դառնութեան կնիք:

Յետոյ Ռուստամենց ճակատը նշան ձին տարան: Գնաց և տէրտէրի ձին: Ժամհարը գլուխը կախ եկաւ:

– Հիմա ես տէր հօրն ի՞նչ պատասխան եմ տալու...

Չորրորդ հերթը Կոստանդինն էր: Գիւղացիները զարմացան, երբ լսեցին նրա ազգանունը, որովհետև Կոստանդը նրանց մէջ չկար: Դարբնի տղան նկատեց, որ սեղանի շուրջը նստողների մէջ ինչ-որ փսփսոց ընկաւ:

Հրապարակի միւս կողմից երևաց Կոստանդը՝ լղար, մէջքը փոր ընկած, մոխրագոյն մի ձի ետևից: Թուաց, թէ նոյնիսկ չնայեցին նրա կողմը, և ձեռքը վերևից նշան տուեց, որ Կոստանդն ու ձին հեռանան հրապարակից:

Այդ այնքան արագ կատարուեց, որ գիւղացիներից շատերը չհաւատացին իրենց աչքերին, թէ այդ «խեղճ» գիւղացին Կոստանդ աղան է: Նրանք մնացել էին ապշած: Իսկ Կոստանդը կեղծ ուրախութեամբ յետ տարաւ ձին և անյայտացաւ:

Դարբնի տղան Սիմոնի ականջին շշնջաց.

– Տեսա՞ր, որ ասում էի...

Բայց Սիմոնը չլսեց: Նրա ականջին հասաւ իր ազգանունը և, Ցոլակի սանձից բռնած, մտաւ հրապարակը:

Երբ մօտեցաւ, վերցնել տուին ձիու համետը, և մի ակնոցաւոր ռուս, որ անասնաբոյժն էր, քիթը վեր քաշելով կռացաւ վէրքի վրայ:

– Չտարան, – անցաւ Սիմոնի մտքով: Բայց մարդը բարկացաւ և մատը թափ տուեց Սիմոնի վրայ: Նա հայհոյում էր:

Սիմոնը վախից դողաց, գունատուեց և նստեց համետի վրայ:

Ձինուորները Ցոլակին տարան: Սիմոնը տեսաւ, թէ ինչպէս իր ձիու երկար պոչը սուր մկրատով կտրեցին: Եվ իսկոյն աչքին այնպէս երևաց, ասես Ցոլակը մեծացաւ և դարձաւ ղազախի ձի:Գիւղական գրագիրը բղաւեց նրա վրայ: Նա սթափուեց և բեռը շալակին վերադարձաւ յուրայինների մօտ:

8

Արևն արդէն թեքուել էր, երբ գիւղացիները ճանապարհ ընկան տուն: Ազատուել էին միայն ութ ձի, որոնց վրայ բարձել էին մնացած ձիերի համետները: Գիւղացիներից ոմանք իրենք էին շալակել ձիերի սանձերն ու չուանները:

Ազատուած ձիերը, որոնցից երեքը ծուռոտ էին, մէկի մէջքն էր փոս ընկած, երկուսը քոս էին, իսկ Հաբեդանց ձիու երկու կողոսկրը չկար, ազատուած ձիերը հազիւ էին քայլում ծանր բեռան տակ:

Սիմոնը գլուխը կախ գնում էր միւսների հետ: Դարբնի տղան էլ լուռ էր, որովհետև ոչ ոք սիրտ չուներ նրան լսելու:

Նրանք անընդհատ բարձրանում էին լեռը, կարծես պիտի գնային մինչև մութ երկինքը: Մայրամուտի արևը աջ կողմից

նրանց ոսկեվորել էր: Նեղ արահետով գնում էին նրանք իրար ետևից, ինչպէս կռունկի երամ, և թուում էր, թէ բեռների տակ կքած սև ստուերները յաւիտեան պիտի բարձրանային մութ լեռը, մինչև մի խաւար անդունդ յանկարծ կլաներ նրանց:

Սիմոնը ձիու չուանների և սանձից զգում էր Ցոլակի ողորկ մարմնի ծանօթ հոտը: Եվ մի միտք, ծանր բեռից աւելի դժուար ծանրութեամբ, նստել էր նրա գլխում, և նա խոնարհել էր գլուխը: Բայց փակ աչքերով էլ տեսնում էր արնոտ չեչաքարը:

– Հէնց իմ փիսութիւնը մնաց, Ցոլա՛կ... Հիմա հազար ձիու մէջ անտեր խրխնջում ես... Ցարաբ տեսնես արիւնը ցամաքե՞ց:

Եվ նա բուռը լայն բաց արեց, այն բուռը, որով բռնել էր քարը...

Բռի մէջ ստացականի կտորն էր, վրան Ցոլակի գինը և իր ազգանունը:

Արևի մայր մտնող շողերը հրդեհել էին ամպերը, ներկել արնոտ գոյնով: Լեռների սև ստուերները աւելի վառ էին ցոլացնում ամպերի կարմիրը: Կաթնաղբիւրի արօտներում և սարալանջում էլ ոչ մի կաքաւ չէր կարդում և ոչ լոր էր ձկում: Քնել էին քարերը, խոտերը, անբան հաւքերը, և լեռների վրայ իջել էր իմաստուն մի երեկոյ:

Կաթնաղբիւրից նրանք ջուր խմեցին և հացի փշրանքները թափեցին սառը ջրում: Մութն ընկնում էր, և ճանապարհ դեռ շատ կար:

Սիմոնը նայեց ներքև... Ա՜յ, այստեղ արածում էր Ցոլակը. նրա ատամների արանքում երևի դեռ մնում է այս դաշտերի խոտը: Իսկ ինքը պառկել էր այս քարի տակ, և մի լոյս ճառագայթ խոստանում էր զուարթ վերադարձ:

Ու ետ նայեց Սիմոնը: Այնտեղ, ներքևը խաւար էր, խաւարի մէջ քաղաքը, և քաղաքի փշալարեայ վանդակում աղիողորմ վրնջում էր իր յոյսը, իր Ցոլակը:

Յանկարծ Կաթնաղբիւրից ներքև, քարերի վրայ զրնգացին ծանր պայտերը: Գիւղացիները ճանապարհից դուրս եկան և մի կողմ քաշեցին բեռնած ձիերը:

Հեծուորը Կոստանդ աղան էր՝ սպիտակ ձիու վրայ...

Միայն Շուղունց Աքելը կիսաբերան ընդունեց նրա ողջոյնը: Միւսները քարի նման լուռ էին: Դարբնի տղան ատամները սեղմելով զայրացաւ.

– Տեսա՞ր, Սիմոն, սևն ու սպիտակը...

Սպիտակ ձին մի վայրկեան ցոլաց մթնող արևի շողերում և չքացաւ դէպի նարնջագոյն ամպերը: Կարծես մարմարիոնէ մի արձան արշաւում էր դէպի պատուանդանը, որ իր անհաս բարձունքից ահ ու սարսափ մաղի ռամիկ գիւղացիների վրայ:

9

Կէսգիշեր էր, երբ տուն հասան:

Դռան մօտ կանգնել էր Շարմաղ բիբին՝ ճրագը ձեռքին:

Սիմոնը ներս մտաւ, տոպրակն ու սանձը գցեց մի անկիւն: Անկողնից վեր թռաւ Շողերը:

– Ապի՛, բա Ցոլա՞կը:

Աղջկայ միամիտ հարցին, որպէս պատասխան՝ դուրսը, լեռնային գիւղի սառը խաւարում, վրնջաց անմայր մի քուռակ: Կարծես բազմաթիւ մանր զանգակներ երգեցին անեզրական տխրութիւն:

Շարմաղ բիբին սարսուռով վրայ դրեց դուռը, և հին դուռը մի անգամ էլ երգեց երկար ու կերկեր արևելեան թախծոտ մի երգ:

Պառաւը լալիս էր...

Յետոյ քանի երեկոյ իջաւ, և զանգեր զարկեցին, բայց մինչև մահ, իրիկնապահին նա ոչ դուռը բացեց և ոչ էլ զանգերի ղօղանջը որպէս անանձնական օրինութիւն ներս մտաւ նրանց սև խրճիթը...

ՄԻՐՀԱՒ

1

Աշուն էր, պայծառ աշուն:

Օդը մաքուր էր, արցունքի պէս ջինջ: Կապտաւուն սարերն այնքան մօտ, այնքան պարզ էին երևում, որ հեռուից կարելի էր համրել նրանց մաքուր լանջերի բոլոր ձորակները, կարմրին տուող մասրենու թփերը:

Աշուն էր՝ տերևաթափով, արևի նուազ ջերմութեամբ, դառնաշունչ քամիով, որ ծառերի ճղներից պոկում էր դեղնած տերևները, խմբերով քշում, տանում հեռու ձորերը: Նոյնիսկ քարափի հաստաբուն կաղնին խոնարհւում էր քամու առաջ: Ամայի ձորերում, դեղնակարմիր անտառի և հնձած արտերի վրայ իջել էր մի պայծառ տխրութիւն: Ջինջ օդի սառնութեան մէջ զգացւում էր առաջին ձիւնի շունչը:

Այգում երիտասարդ կեռասենիները մրսում էին, քամուց խշշում: Սիմինդրի երկար տերևները թրերի նման քսւում էին իրար, պողպատի ձայն հանում: Կարծես ձիաւորներ էին արշաւում իրար դէմ, և սիմինդրի տերևը, որպէս բեկուած սուսեր, ընկնում էր քամու առաջ:

Արևի տակ ժպտում էր վերջին արևածաղիկը և օրօրում դեղին գլուխը:

Դիլան դային նստել էր հնձանի պատի տակ, ընկուզենու չոր կոճղին: Նա սովորութիւն ունէր ուշ աշնանը վերջին

անգամ այգին մտնելու, դուռ ու ցանկապատ ամրացնելու և հնձանը փակելու, որպէսզի ձմռան ցուրտ գիշերներին գայլ ու գազան չպատսպարուեն ներսը:

Չորացած ոստերի և ցօղունների մի կապ ժողովել էր, դրել մօտը: Եւ յոգնութիւնից հանգստանում էր՝ աչքը հեռու սարերին: Նստել էր ու միտք էր անում՝ ականջը սիմինդրի տերևների խշշոցին:

Աշնան արևը ջերմացնում էր նրան. ձորի խաղաղութիւնը դուրեկան էր: Ծառերին փաթաթուած վազերն օրօրւում էին քամուց: Դիլան դայու միտքն էլ տարուբեր էր լինում, ինչպէս քամիների բերանն ընկած չոր տերև: Քամուց հնձանի դռնակը մեղմ ճռնչում էր, և մաշուած դուռը դողդոջ երգում էր մի հին երգ:

Եթէ արևը չխոնարհուէր դէպի մայրամուտ, նա առանց յոգնութեան երկար կը մնար այդ դիրքով և չէր յագենայ մրգերը քաղած և արդէն դեղնող ծառերի սօսափից: Շուտով կ'իջնի ձմեռ, և ո՞վ գիտի, բացուող գարնանը նորից պիտի ինքը՞ բանայ այգու դուռը, թէ մի ուրիշ ձեռք:

Աշնան խաղաղ օրին նրան հաճելի էր և՛ սիմինդրի տերևների խշշոցը, և վազերի օրօրը, և՛ հնձանի դռնակի երգը:

Այդպէս մի անգամ էլ, շատ տարիներ առաջ, ճռնչաց այգու դուռը: Էլի արև օր էր: Հնձանի ստուերում՝ ուռենու կողովների մէջ, սև խաղողը շողշողում էր:

Ներսը՝ քարէ տաշտի մէջ, Դիլան դային, մինչև ծնկները բաց ոտներով, ճմլում էր խաղողը, և արնագոյն շիրան քարէ տաշտից ծորում էր կաւէ կարասը:

Հնձանը շոգ էր, ճմլում էր խաղողը և ինքն իրեն դնդնում կայտառ մի երգ, և քրտինքի կաթիլները գլորւում էին, ընկնում շիրայի մէջ: Երիտասարդ էր այն ժամանակ, երակներում արիւնը եռում էր իբրև թունդ գինի:

Դռան ձայնին Դիլանը գլուխը դուրս հանեց: Այգում ոչ ոք չկար: Ու յանկարծ, երբ սիմինդրի մարգերում երևաց գլխի վառ կապոյտ մանդիլը[41], ինքը պահուեց դռան հետևը:

Կարծես հաւք էր թաքնուել անտառի մթին խորշում: Ապա վիզը երկարեց, ինչպէս կաքաւը դեղնած արտերում խշշիւն լսելուց, և մի ջահել կին դուրս եկաւ սիմինդրի խիտ արտից: Դուրս եկաւ, ճօճեց բարակ մարմինը որպէս եղէգ և կաքաւի մանր քայլերով սուրաց դէպի հնձանը:

Սոնան էր, զառ մանդիլով նորահարսը, լոյս ատամներով այն աղջիկը, որ այնպէս զրնգան ծիծաղում էր, երբ առուակի մէջ կախում էր սպիտակ սրունքները, իսկ դրացու տղան՝ Դիլանը, ջուր էր ցնցղում նրա ողկոյզի պէս գանգուր մազերին:

Հարսը փափուկ քայլերով, ինչպէս այծեամը ձիւնի վրայ, մօտեցաւ հնձանին: Դռան մօտ զրնգացին Սոնայի շալէ շապիկի արծաթ սուրմաները, և ներս մտաւ, ինչպէս միամիտ հաւքը վանդակի բաց դռնով:

Յանկարծ տեսաւ նրան, ցնցուեց, ոստիւն արեց դէպի ետ, բայց մի կրակուած ձեռք փակեց հնձանի դռնակը:

– Բաղը մարդ կը գայ, Դիլան,– դողալով խնդրեց նա:

Ու չիմացաւ գինուցն էր, թէ հնձանն էր տաք, Դիլան դային չիմացաւ: Սոնայի ականջին շշնջաց.

– Կաց, անխիղճ...

Շշնջաց ու պինդ-պինդ փաթաթուեց նրան: Այնքան դուրեկան էր նրա շույը[42] ուէր չարած, լաջուարդ հալաւի[43] հոտը, այնքան տաք էր հնձանը:

Սոնան օձի պէս կեռումեռ արեց, փորձեց ազատուել նրա բազուկների օղակից, կարօտով խնդրեց, խոստացաւ: Որպէս

---

[41] մանդիլ – գլխաշոր

[42] շույ – օսլայ

[43] հալաւ – շապիկ

եղէգ ճօճուեց նրա դալար մարմինը և մէջքը խոնարհեց... Անիմաստ մաքառումից յոգնած, հարսը սրտաբուխ նրան ընծայեց իր մարմինը՝ որպէս անարատ զոհ: Եւ նա ագահ համբուրեց հարսի կարմիր լար շրթունքը, անյագուրդ հիացաւ ոսկեդեղձան հիւսերով, որ ծփում և խշշում էին լուսեղէն լանջի վրայ:

Յետոյ թևը ջարդուած հաւքի պէս Սոնան ամաչկոտ դուրս թռաւ հնձանից, մի անգամ էլ շորորաց այգու շաղոտ խոտերի վրայ և ներսը թողեց լաջուարդ շապիկի բոյրը:

Իսկ զրնգան սուրմաները կայտառ կոհակների նման ծափ էին զարկում:

* * *

Նրանք մանկութեան ընկերներ էին, և նրանց սէրը ծնուել էր նոյնքան աննկատ, ինչպէս մի գիշերում բացւում է մուգ մանիշակը: Առուների ափին, այգիներում, դաշտերից խուրձ կրելիս, ամառուայ լուսնեակ գիշերներին խոտի դէզի մօտ, ամէն տեղից այդ սէրը ծիծեռնակի պէս ճռուողում էր, մինչև հասունացան նրանք, և մի օր էլ մեծատուն հարևանի շեմքով ներս մտաւ Սոնան, հարսի քօղը երեսին, արցունքից կարմրած աչքերը՝ պայծառ, որպէս լեռնային ծովակ:

Հարսանիքից չորս ամիս յետոյ, պատահմամբ հանդիպել էին իրար այգիների ճանապարհին:

Դիլանը նրան կանգնեցրել, հարցրել էր հալը, Սոնան թախիծով թօթուել էր ուսը և արագ հեռացել:

Հանդիպումը բորբոքել էր նրան, բայց առաջուայ նման մօտիկ լինելու ցանկութիւնը, իբրև խոր երկնքում նազով ճախրող թռչուն, երբեք չէր իջնում նրա շեմքին:

Ու յանկարծ այդ հաւքը թառեց նրա ուսին...

Ինչու՞ եկաւ այգին, արդեօք Սոնան մանկութեան առուակի

ջրեՔն էր կարօտել, թէ՞ պատահմամբ մօտեցաւ հնձանի դռնակին՝ մտածելով, որ ներսն էլ ամայի է, ինչպէս այգում: Դիլան դային մինչև վերջ չիմացաւ այդ:

Մի քանի անգամ մօտեցաւ, կամեցաւ նրա հետ խօսել, բայց Սոնան խոյս տուեց:

– Թո՛ղ, Դիլան, գնա քեզ համար...

Եւ էլ իրար չտեսան:

* * *

Դիլան դային միայն գիշերը տուն գնաց: Ամբողջ օրը թափառել էր ձորում, եղել էր հարևանի այգու շրջակայքում, աղբիւրն էր գնացել, փողոցի անկիւնում կանգնել էր, բայց ոչ մի տեղ Սոնային չէր տեսել:

Լուսնեակ գիշեր էր, երկինքն անամպ: Փչում էր գիշերուայ հովը: Դիլան դային պառկեց դէզի գլխին, նոր յարած խոտերի վրայ ու քունը չտարաւ:

Հազարաւոր չորացած ծաղիկներ էին բուրում խոտի խուրձերի միջից և լուսնեակ գիշերով նրան այնպէս էր թւում, ասես այդ նոյն դէզի վրայ պառկել է Սոնան և խուրձերի մէջ թողել լաջուարդի բոյրը:

Լուսաբացին հալուեցին աստղերը, գիշերուայ լազուրը գունատուեց: Երբ ծաղիկներն արթնացան գիշերուայ նիրհից և ցօղը շողշողուն կաթիլներ շարեց նարնջագոյն քարերի վրայ, արևի առաջին շողերի հետ, գիւղի դիմաց, դեղնած արտերում զարթնեց կաքաւը.

– Կա՛խ-կղայ, շա՛խ-կղայ...

Լսւում էր կաքաւի թաւ երգը: Աւելի վերև, անտառի խորքից կանչում էր միրհաւը:

Դիլան դային վեր կացաւ, ուսը գցեց կայծքարով հրացանը և երեսը դարձրեց դէպի սարալանջի անտառը, որտեղից

կանչում էր միրհաւը:

Սիրտ չունէր իջնելու այգին, տեսնելու հնձանը:

Քայլում էր Դիլան դային շաղոտ խոտերի միջով, հնձած արտերն էր կոխ տալիս, ոսկեգոյն ծղօտները, և գլուխը կախ բարձրանում դէպի անտառը՝ արահետի կեռմաններով և թփերի միջով:

Ահա ճամփի եզրին՝ մասրենու պառաւ թուփը, նրա մօտ տափակ քարը, որի վրայ հովիւներն այժմ էլ աղ են ցանում ոչխարի համար... Խուրձ էին կրում միասին՝ ինքը, Սոնան: Արևը խանձել էր աղջկայ երեսը, ոսկեդեղձան հիւսերի ծայրը: Դեղին ծղնօտի փշրանքներ կային մազերի արանքում:

Կալից ձիերը քաշում էին, հասնում այդ քարին, և ձիերը կանգնեցնում: Ինքը բարձրացնում էր Սոնային ձիու վրայ, յետոյ իր ձին նստում և գնում արտերը խուրձի:

Մի անգամ էլ Սոնան խնդրեց, որ միասին նստեն: Ու մի ձին հետքից քաշեցին: Առջևը Սոնան էր նստել, հետևում՝ ինքը: Մի ձեռքով սանձն էր պահում, միւսով գրկել էր նրա բարակ մարմինը: Աղջկայ ծամերը քսւում էին նրա երեսին:

Իսկ միւս առաւօտը, երբ այդ քարին հասան, և ինքը առաջարկեց նորից միասին մի ձի նստեն, Սոնան յայտնեց, որ մայրը յանդիմանել է իրեն և խստիւ պատուիրել առանձին նստելու:

– Ինչու՞:

– Ամօթ է,– ասաց աղջիկը արդար ժպիտով:

Դիլան դային մօտեցաւ մի դէզի, ձեռքը կոխեց խուրձերի մէջ և տաքութիւն զգաց: Կ'եծացել[44] էին խուրձերը, գիշերուայ խոնաւութիւնից հասկերը տմկել[45] էին:

Երբ ծանօթ արտին հասաւ, յենուեց կայծքարով հրացանին,

[44] կէծանալ – սաստիկ տաքանալ

[45] տմկել – խոնաւութիւնից փափկել

միտք արեց: Սոնան այստեղ մի ամառ քաղհան էր անում, կռանում էր ցորենների վրայ, մատները փուշ էին մտնում: Սոնան հնձուորի համար հաց էր բերում, քրտնում էր արևի տակ և քրտինքից շապիկը փակչում[46] էր լանջին:

Լինէ՛ր, այնպէս լինէր, որ ինքը հնձուոր լինէր, նրանց արտը հնձէր, Սոնան հաց բերէր իրեն, շապիկը քրտնէր և քրտնած նստէր կողքին:

Ետ նայեց Դիլան դային, եկած ճանապարհին նայեց: Մարդ չկար. աշնան մերկ դաշտերն էին: Ու միայն մասրենու կարմիր թփերն էին, և փայլուն մասուրները դեղնած տերևների արանքում:

Յանկարծ մի թփի հետևից լսուեց կաքաւի ձայնը.

– Կա՛խ–կղայ, շա՛խ–կղայ...

Դիլան դային զգոյշ քայլերով, կուզէկուզ մօտեցաւ թփերին: Հնձած արտում կաքաւները հաւաքում էին ընկած հատիկները, կտցահարում թափուած հասկերը: Մէկը չէր, շատ էին: Ցատկոտում էին, օրօրում գէր մարմինները: Գարնան երկու ճուտեր մի հասկի համար կռւում է՝ կտուց կտուցի:

Դիլան դային չոքեց, նշան բռնեց: Մի գէր կաքաւ սպիտակ վիզը ձգեց, սկսեց չորս կողմը նայել: Միւսները լռեցին, տապ արին ծղօտների մէջ:

Քամին խշշացրեց թփերը, ինչպէս Սոնան սիմինդրի երկար ցօղունները... Ու խշշոցը կաքաւներին հասաւ թէ չէ, իսկոյն փռռալով մի քանի հանգոյց արին օդում, իջան արև առած արտերի վրայ:

Ճանապարհը շարունակեց: Քանի գնում, թփերն աւելի էին շատանում, արտերի մէջ երևում էին յատուկենտ կաղնիներ՝ ծռուած, կռացած, կայծակից խանձուած: Ասես պահապաններ էին կանգնել անտառի և արտերի սահմանում:

---

[46] փակչել – կպչել

Արահետը բարակում էր: Վերջին արտերն էր կոխ տալիս: Անտառից հովը փչեց նրա դէմքին, ռունգերն ագահօրէն ծծեցին անտառի խոնաւ ու զով օդը:

* * *

Անտառը ծանօթ էր նրան, գիտէր, թէ որտեղ է սիրում բոյն դնել ու կանչել միրհաւը, մթին անտառների ոսկեփետուր թռչունը:

Անտառի մէջ մամռոտ ժայռեր կային, արջաբներ, քամուց ընկած դարաւոր կաղնիներ, որոնց վրայ սունկերը շար էին ընկել: Ծառերի կիսաչոր ճղները մամռոտել էին, և կիսախաւարի մէջ կարծես յետին ոտքերի վրայ բրդոտ արջեր էին կանգնած:

Ժայռերին չհասած՝ դիմացից լսուեց հրացանի պայթիւն:

Աղմուկից դրնգաց անտառը, դեղին տերևներից ցօղի խոշոր կաթիլները մետաղի ծանրութեամբ ընկան խազալի[47] վրայ: Մթնկայ խորշում թպրտաց գիշերահաւը:

Ո՞վ պիտի լինէր: Կայծքարով հրացանի ձայն չէր: Իսկ գիւղում ուրիշ բերդան չկար:

– Տեսնես ո՞վ է որս անում,– մտածեց նա:

Տերևները խշշացին: Դիլան դային տապ արաւ, պահուեց քարի հետևը: Միրհաւն էր. հանգիստ քուջուջ անելով փոխում էր արնագոյն տոտիկները և կտուցով քրքրում լորենու փափուկ տերևները:

Դիլան դային թաքստոցից գլուխը հանեց նշանի, հրացանի փողը երկարեց քարի վրայ: Բայց յանկարծ թռաւ միրհաւը, հետքից մի ուրիշը, ապա երրորդը, չորրորդը...

Ջգոյշ է միրհաւը, դժուար է նրան խփել: Երբեմն այնքան

[47] խազալ – չորացած խոտ, տերև

մօտ է գալիս, ահա ուզում ես կրակել, բայց մի թեթև խշշոցից, նոյնիսկ որսորդի խոր շնչառութիւնից, բացում է թևերը, թռչում է գնդակից արագ, ծղրտում, պտոյտներ անում թանձր սաղարթի վրայ և անձայն իջնում մի ուրիշ տեղ: Զգոյշ է միրհաւը, քուջուջ անելիս ձգում է վիզը, աջ ու ձախ կռանում և ապա նորից երկարում վիզը, չորս կողմը նայում:

Դիլան դային թաքստոցից դուրս եկաւ, ճանապարհը շարունակեց: Արդէն անտառի խորքն էր. տեղ-տեղ ծառերն անանց պատնէշ էին կազմել: Տերևները հարիւրաւոր տարիներ թափուել էին իրար վրայ, արևերես չէին տեսել ու չէին փնտրել: Ծառերի բները թաղուել էին տերևների կոյտի մէջ և ճիւղերը թխսամօր թևերի նման փռել ստուերում բուսած կապոյտ սունկերի վրայ:

Դիլան դային կոխ էր տալիս չորացած տերևները, թաղւում, ինչպէս յարդի շեղջի մէջ, սայթաքում և ճղներից բռնելով ճանապարհը շարունակում:

Հասաւ աղբիւրը, կռացաւ կուշտ ջուր խմեց: Քիչ յետոյ իջաւ լորենիների ձորը:

Ներքև, քարերի վրայ, այնքան շատ միրհաւ կար... Արևը տաքացրել էր մամռոտ քարերը, ոսկեփետուր միրհաւը, թևերին սև պուտեր, թռչում էր քարից քար, կանչում, կտցահարում հարևանին, էգի շուրջը պտոյտներ անում:

Նշան բռնեց: Երբ քարը կայծ տուաւ, և կայծից բռնկուեց վառօդը, հրացանի փողից բոց ու մուխ ելաւ, ձորերը որոտացին ահաւոր արձագանքով, ձորից թռան միրհաւները՝ թևերը լայն, փափուկ բմբուլով, թևերը փռած աշնան արևի ոսկէ շողերի տակ:

Միայն մէկը թփրտաց, մամռոտ քարից վայր ընկաւ թփուտների մէջ:

Դիլան դային վազեց և վազելիս նկատեց, որ մի սպիտակ

շուն, լեզուն հանած, ցատկեց թփուտների կողմը:

Որսկան շան շունչն ու Դիլան դայու ձեռները միասին ձգուեցին դէպի արնոտ միրհաւը:

Նրա մատները դիպան դեղին բմբուլներին, բայց վիրաւոր միրհաւը յանկարծ թևին տուեց, թռաւ վեր: Երկու փետուր օրօրուելով վայր ընկան, աշնան դեղին տերևների նման:

Դիլան դային ափսոսանքով նայում էր արնոտ միրհաւի հետևից, երբ յանկարծ, շատ մօտիկ լսուեց ոտնաձայն: Ետ նայեց, աչքերը զարմանքից լայնացան, և հրացանը բնազդմամբ ձեռքից վայր սահեց ծառի հետևը:

Անտառապահն էր, աչքերը՝ կաս-կարմիր ածուխ...

Մօտեցաւ, բղաւեց և մինչև ուշքի կը գար, նրա մտրակը օդը ճեղքելով չափեց Դիլան դայու ուսը, մինչև թիակների ոսկորը մրմուռը ծակեց, ինչպէս եղինջի հարուածը բաց մսերի վրայ:

Անտառապահը հարուածում էր նրան և զայրանում, որ Դիլան դային փախցրել էր նրա զարկած միրհաւը:

Անտառապահի որսկան շունը մէկ նայում էր տիրոջը, մէկ՝ Դիլան դայուն, մռռում էր, պոչը գետնով տալիս, մէկ բերանը բաց՝ յուզմունքից յօրանջում, մէկ էլ անհանգիստ հոտոտում թփերը, որտեղ քիչ առաջ թպրտում էր արնոտ միրհաւը:

Անակնկալ հանդիպումը նրան շշմեցրեց... Նրանք արդէն հեռացել էին, երբ Դիլան դային ուշքի եկաւ, նայեց նրանց հետևից, մտաբերեց շան կարմիր երախը...

Դիլան դային նստեց քարի վրայ: Ցաւից նրա դէմքը կծկւում էր: Մէջքը կարծես շիկացած շամփուրներով խանձել էին, աչքի տակը հարուածից տաքացել էր: Երկար միտք արեց Դիլան դային, աչքը միրհաւի երկու փետուրներին: Մի անհուն դառնութիւն և կսկիծ աւերեց նրա չքնաղ օրը:

...Արևը խաղում էր մայրամուտի ամպերի հետ: Անտառում լռութիւն էր: Միրհաւը թռել էր հեռու... Մամռոտ քարի վրայ

երկու փետուր էր ընկած, դեղնագոյն–սև պուտերով, իսկ թփի չոր ճիւղերին՝ արեան կաթիլներ:

Դիլան դային ձորով իջաւ ներքև:

Երբեմն երազ էր թւում միրհաւը, բայց մտրակի տեղերը մրմնջում էին, աչքի տակ ցաւ էր զգում, ոտքերը թեթև դողում էին:

Սեղմել էր հրացանի տաք փողը, ինչպէս միրհաւի մարմինը, որին միայն մէկ վայրկեան շօշափեց և մատների ծայրով զգաց, որ բմբուլը փափուկ է: Միրհաւի մարմինը՝ տաք բմբուլ, ինչպէս Սոնայի մարմինը լաջուարդ շապիկի մէջ:

Տուն չգնաց: Քարքարոտ արահետով իջաւ այգին: Ճռնչաց հնձանի դռնակը, ներս մտաւ, մեկնուեց քարէ յատակի վրայ:

Երբ առաւօտեան արևի շողքը հնձանի դռնակի ճեղքով փայլեց ներսում, Դիլան դային զարթնեց, տրորեց աչքերը և աչքի տակ ցաւ զգաց: Ուռուցքը չէր անցել:

Այդ օրը նա քարէ տաշտում աւելի զայրացած էր ճմլում սև խաղողը և չէր զգում, թէ ինչպէս քրտինքը գլորւում էր ճակատից, կաթում պղտոր գինու մէջ...

* * *

Աշուն էր, պայծառ աշուն...

Հնձանի առաջ նստել էր Դիլան դային, գլուխը խոնարհել կրծքին ու միտք էր անում արևի տակ՝ անցած–գնացած օրերի մասին:

Այդ աշնան յաջորդ ամառը Սոնան մեռաւ երեխայի վրայ և լաց լացին նրա մայրը, ամուսինը, բարեկամները:

Ուրիշ աղջիկ գնաց նրա տեղը, Դիլան դային էլ կին առաւ, բայց յիշողութեան մէջ յաւիտեան անջինջ մնաց Սոնան, հնձանը, լաջուարդ շապիկը, արծաթէ սուրմաները:

Դիմացի բլրակի լանջին գերեզմանատունն է: Սոնայի

գերեզմանաքարի վրայ մամուռ կայ, գրերը վաղուց լցուել են հողով, քարը թեքուել է մի կողմի վրայ և թաղուել հողի մէջ:

Սոնային լաջուարդ շապիկով թաղեցին: Արդէն վաղուց փտել է լաջուարդն էլ, ոսկէ մամուռի նման մարմինն էլ...

Քանի աշուն էր անցել այն օրից, համարք չունի: Գիտի, որ ինքը զառամել է արդէն, քայլելիս հենւում է փայտին, աչքը չի տարբերում աշնան անտառի գոյները, ականջը սուր չէ մանրիկ ոտնաձայն լսելու:

Հնձանի առաջ խոխոջալով հոսում էր առուակը, գիշերցերեկ ջուրն աղմկում էր, ջրի անվախճան և անքննելի զրոյցն անում մամուռներին, քարերին...

Դիլան դային առուակի կողմը նայեց, ժպտաց: Նրա յիշողութեան խաւար անդնդում բոցկլտաց այն օրը, ինչպէս միայնակ աստղը մթին երկնքում: Այն օրը, երբ Սոնան սրունքները կախել էր առուակի վրայ և ծիծաղում էր...

Ապա միտքը սահեց, արահետով անցաւ դէպի անտառը:

Միրհաւ կար անտառում, թռաւ արնակոլոլ, երկու փետուր թողեց փափուկ մամուռների վրայ: Միրհաւի պէս էր Սոնան, աչքերը խաղողի սև հատիկներ, տարիներ առաջ, մի արևոտ աշնան, երբ իր ջլուտ ոտները պղնձաքարի ծանրութեամբ ճմլում էին խաղողը և անապակ գինին շիթ առ շիթ ծորում էր մատների արանքով...

Միրհաւի պէս թռաւ Սոնան, հետքից թողեց տխրութիւն և դառնաթախիծ յուշեր:

... Դիլան դային վեր կացաւ, ետ քաշեց հնձանի դուռը, երկաթէ փակն ամրացրեց, մինչև միւս գարուն: Ապա կռացաւ, դժուարութեամբ շալակեց չորացած ոստերի և ցօղունների կապը և յոգնած ոտքերը ծերունու յուշիկ քայլերով փոխեց դէպի այգու դուռը:

Այգում էլ ոչ ոք չմնաց:

Միայն իրիկուայ հովից խշշում էին սիմինդրի կոշտացած ցողունները. չորացած տերևներն անհանգիստ խմբւում էին այս ու այն անկիւնում, թպրտում յուսահատ և անմռունչ պառկում սև գուբի մէջ:

ԿԵՕՐԵՍ

O tempora, o mores...
Օ՜ Ժանգեզուր, օ՜ Կեօրես...

1

Քաղաքն ունէր երկու անուն՝ Գորիս և Կեօրես: Երրորդ անունը՝ Կորիս, տալիս էր միայն մի մարդ՝ դեղավաճառ Քյալլայ Ծատուրը, որը քաղաքում հռչակուած էր որպէս փիլիսոփայ և հին գրքերի սիրահար: Գուցէ այդ գրքերից էր նա հանել քաղաքի Կորիս անունը, որ իզուր ձգնում էր տարածել: Նրան համամիտ էր միայն ժամհար Պարսեղը, որը և միակ ունկնդիրն էր Քյալլայ Ծատուրի ձեռագիր խորհրդածութիւնների՝ ճշմարիտ հաւատի, ամուսնալուծութեան և «Երից տարրի փոխակերպման մասին»:

Քաղաքն ունէր երկու անուն, և այդ երկու անուան մէջ, ինչպէս ընկոյզի երկու կճեպի մէջ, պարփակւում էր մի քաղաք երկու իմաստով, մի բնակավայր՝ երկու տարբեր ժողովրդով, որոնք ունէին իրենց առանձին սովորութիւնները, առանձին շահերը, և մինչև անգամ նրանց անունները տարբեր էին, և պատահում էր, որ այդ երկու ազգերը իրար լեզու չէին հասկանում: Մի կողմը «օտարականներն» էին, կամ ինչպէս կեօրեսեցիք էին ասում՝ ղարիբականներն էին, միւս կողմը բուն Կեօրեսն էր և նրա միջնաբերդը՝ Շէնը, և նրա նշանաւոր պարագլուխները՝ Ղաթրինի Աղալոն, որ բեռնած էշը գետնից

բարձրացնում էր, Պարան-Պարան Աւանեսը, որի ձայնը հասնում էր մինչև Դրնգանի ձորը, Գիւրջի Օբին, որի լեզուից վախենում էր մինչև անգամ քաղաքագլուխ Մաթևոս բէյը:

Ղաթրինի Աղալոն, Պարան-Պարան Աւանեսը, Գիւրջի Օբին և շատ ուրիշ կեօրեսեցիներ, լինելով բուն Կեօրեսի պարագլուխները, ժամանակակից չեն եղել: Այդ մի դինաստիայ էր հողագործների, բրուտների, ներկարարների, դարբինների և տաւարածների, ցեղային դինաստիայ, որ ի դէպ գլխաւորում էր բուն Կեօրեսի և նրա միջնաբերդ Շէնի կռիւը Գորիս քաղաքի և նրա «օտարականների» դէմ: Ղաթրինի Աղալոյի ժամանակ Գորիսը դեռ քաղաքագլուխ չունէր, և քաղաքը դեռ չէր տարածուել մինչև Մեծ կամուրջը: Ղաթրինի Աղալոն դեռևս կարող էր Գորիսի վաճառականներից երեքին խուրձի թոկով շալակել և սպառնալ նրանց թափել ձորը, եթէ վաճառականները Թաւրիզի կտաւը չծախեն իւղի հետ բարաբար[48]: Նրա ժամանակը հեշտ էր. ինքը՝ Շէնն ունէր իր կտաւագործները, իր դերձակները, իր իջևանատները, որտեղ գիշերում էին ուրիշ երկրներից քարաւաններ: Վերջապէս, Ղաթրինի Աղալոյի ժամանակ վաճառականների մեծ մասը դեռ «ղարիբական» չէր, այլ կեօրեսեցի էր, այսինքն վար ու ցանք ունէր և մինչև անգամ ապրում էր Շէնում, առևտուրն անելով Գորիսի շուկայում:

Այլ էր Գիւրջի Օբին և նրա ժամանակը... Գորիս քաղաքն ունէր երեք յարկանի բանտ, այնքան ընդարձակ, որ կարող էր Շէնի կէսը մէջն առնել, ունէր ուրիշ կալանատուն՝ սուբահանոց, միայնակ կալանաւորների համար, այնտեղ էր նստում գաւառապետը, այնտեղ էր ձիաւոր պահակների զօրամասը և Պենզայի 686-րդ դրուժինան: Գիւրջի Օբին զզգզուած շորերով, ինչպէս յետին մուրացկան, հարբած դուրս էր

[48] բարաբար – հաւասար

գալիս Շէնի միջնաբերդից և ծածանելով զգեստի ծուէնները, քաղաքի հրապարակում հայհոյում էր քաղաք հիմնողին, նրա գլխաւորին, Կեօրեսը կոյր դանակով մորթողներին ...Այն ժամանակ իրենց մաղազաներից[49] դուրս էին գալիս Գորիսի առևտրականները՝ Եփրատ Երեմը, Մալակրովնի Նիկոլայը, Բադիրին Չանթայ-Ռեխ Գալուստը, եղբայր Բաղիրովները, և զուարթ ծիծաղում էին, ինչպէս եթէ հրապարակում կապիկ պար ածէին: Բայց երբ Գիւրջի Օբին սկսում էր խաղ ասելով տեսնել Գորիսի անուանի քաղաքացիներին, այն ժամանակ նրա շուրջն էին հաւաքւում հացթուխները, խմոր հունցողները, կօշկակարի աշակերտը, որին վարպետը ջրի էր ուղարկել, մշակները, որոնք անկիւններում սպասում էին, թէ նրանց ով հացափոր աշխատանք կը տայ և մինչև անգամ քաղաքագլուխ Մատուեյ Մատուեյիչը, նոյն ինքը՝ Մաթևոս բէյը չէր կարող կտրել Գիւրջի Օբու այդ լեզուն:

Կար Գորիս, և կար Կեօրես: Երկու տարբեր ժողովուրդ էին, և տարբեր էին նրանց լեզուն, սովորութիւնները, անունները, և մշտաբորբոք կրակի նման նրանց միջև վառւում էր հին կռիւը: Թէ ինչ ազգի մարդիկ էին և ինչ լեզուով էին խօսում նրանք, այնքան էլ հեշտ չի պատմել: Շէնում ասում էին, որ գորիսեցիք խօսում են շան լեզուով.

– Խօջայ Բաղիրի թոռները մեր Բողարի նման են հաչում... Նրանք ի՞նչ մարդիկ են: Մեր կծոտողի ճակատը նրանց ճակատից արդար է, – այդպէս էր ասում Աթայ ապերը, երբ Գորիս քաղաքից վերադառնում էր:

– Կեօրեսի լեզուն շէնավարի է... Ափսոս չի՞ մեր բլաղարոդնի[50] լեզուն, – այդպէս էր ասում տիկին Օլինկան՝ Մատուեյ Մատուեյիչի կինը, Անիկա տեօտեային, երբ նրանք

[49] մաղազայ – խանութ

[50] բլաղարոդնի – (ռուս.) – ազնիւ

նստում էին ֆրապ[51] խաղալու:

– Հայ Գրիշա, Միշա, Մաշո, չեմ իմանում էլ ինչ շաշոյ... Ափսոս չի՞ մեր Մանգասարը, մեր Մանուչարը, մեր Սոնան... Հէրս, որ հարսին կանչում էր Մանիշա՜կ, Մանիշա՜կ, տասը մանիշակ էր բացում, – այդպէս էին խօսում ամենամոլեռանդ կեօրեսեցիք, որոնք ծաղրում էին Գորիսի օտարականների ոմանց շլեապան, անուանելով կլիբոյ և ծղաման[52], ոմանց կանանց՝ անուանելով շինովի տիկնիկ, ոմանց միրուքն էին ծաղրում, անուանելով կուտուռուզ և այլ այնպիսի խօսքերով, որ գրքի մէջ ընդունուած չեն: Կեօրեսեցիք ծաղրում էին քաղաքացիներին, յորինելով մականուններ՝ Պրիստաւի Թազի, Թեփռած Եփրեմ, Ամբարի կատու Սողոմոն՝ աւագ եղբայրը Աւագիմովների, որոնք վաճառում էին ալիւր և բրինձ:

Եթէ մի այդպիսի հին կեօրեսեցու հարցնէիր, թէ ինչ ազգից ես, նա կ'ասէր տոհմի անունը՝ Աւետանց, Շալունց, Բակունց և ո՞վ գիտի ինչպիսի ազգանուններ, որովհետև նրանց լեզուով ազգ նշանակում էր տոհմ, գերդաստան, տուն, որի բոլոր անդամներն իրար հետ կապուած են արեան կապով: Իսկ եթէ նրան բացատրէիր, որ ազգութիւնն ես հարցնում, այլ ոչ թէ տոհմը, նա կպատասխաներ.

– Կեօրեսեցի եմ... Զանգեզուրի մարդ եմ, – կարծես «Զանգեզուրի մարդ» այդ նոյնպիսի ազգ է, ինչպիսին ռուսը, անգլիացին, թուրքը:

– Աթա ապեր, բա դու հա՞յ չես:

– Ա, քեզ մատաղ, դէ ես ի՞նչ իմանամ ինչ եմ, է՜... Թողնում են գլխիս մէջ յուշ մնայ, որ իմանամ, թէ ես ինչ եմ... Էսպէս որ գնայ չեմ իմանայ, թէ ես Աթան ե՞մ, թէ՞ էն աղբանոցում հաչողը...

---

[51] ֆրապ – թղթախաղի մի տեսակ

[52] կլիբոյ – խրճիթ, տնակ, ծղաման – ծղոտից հիւսած աման, այստեղ՝ գլխարկի ծաղրական անուանումներ

– Վերջը, Աթա ապեր, բա դու հայ չե՞ս...

– Դէ հայ եմ մի տակով մի գլխով: Որ աւազանում մկրտուած եմ, ուրեմն հայ քրիստոնեայ եմ, էլի՛: Հո անհաւատ նասրանի[53]չեմ... Հիմա որ հայ եմ, ի՞նչ եմ արել: Գլուխս հո մեղրոտ չեմ արել: Ոչ ու փուչ լինի խօջայ Բաղիրի թոռը, երկու բեռ ցորեն տարայ... – Բայց ընդհատենք Աթա ապօր զրոյցը, որովհետև բնիկ կեօրեսեցի լինելով, նա խօսում է ծոր տալով և ծանր–ծանր, կարծես բառերը ձուլելով թափում է և դեռ երկար կը պատմի, թէ ինչպէս խօջայ Բաղիրի թոռը նրան խաբեց և երկու բեռ ցորենի դիմաց տուեց մի ոչինչ բան՝ մի քանի արշին չիթ, պառաւի համար հալաւացու, երկու գրուանքայ շաքար, մի քիչ բոնօթի, այն էլ կէսը հող: Ընդհատենք Աթա ապօրը և հարցնենք, թէ խօջայ Բաղիրի թոռներն ի՞նչ ազգից են:

– Շան ազգից են խօջայ Բաղիրի ճտերը... Նրանք էն ազգիցն են, որ խիղճ ասածդ չունի: Նրանք նասրանի են, նրանք մոլթանի են, նրանք մարդ պլոկող ազգից են...

– Աթա ապեր, նրանք էլ հայ են, տեղացիներ են, հայ վաճառականներ են Գորիս քաղաքից, մինչև անգամ կարող է, որ խօջայ Բաղիրը քո Օհան պապի խաչեղբայրը եղած լինի:

– Որ նրանք հայ լինեն, ես հայութիւնից դուրս կը գամ, – Աթա ապերը սկսում է զայրանալ, – հայը ես եմ, Ղուրդանց Իսօն է, որ ցամաք հացին աստուած է կանչում, չկա՛յ: Հայը վար կ'անի, ծառ կը տնկի, շալակով փայտ կը բերի, քերծ կը քանդի, հայը խեղճ ու կրակ ռահաթ է էս ձորերում բառաչող: Խօջայ Բաղիրի ժառանգներն ի՞նչ հայ են, կամ Աւագիմովներն ի՞նչ հայ են, ասենք նրանց պապի անունը հայ է: Իսկ եթէ ասում ես, որ խօջայ Բաղիրն իմ Օհան պապի խաչեղբայրն եղած լինի, ուրիշն էլ ասի, չհաւատաս: Իմ Օհան պապի խաչեղբայրը եղել է Բակունց Վիշապը, որ մի նստելում եօթ

[53] նասրանի – այստեղ՝ փխբ.՝ անօրէն, անհաւատ

հաց կ’ուտէր... Ա՜յ թէ ով է եղել իմ Օհան պապի խաչեղբայրը... Իսկ խօջայ Բաղիրը ուրիշ ազգից էր և կարող է, որ զիլանի եղած լինի:

Կեօրեսն ունէր իր սուրբերը՝ Կանաչ եկեղեցի, սուրբ Մարտիրոս («իմ երեսս նրա ոտի տակ», – կ’ասէր Աննա զիզին, երբ սուրբի անունը տար), Եզան Սուրբ, Ճգնաւոր և այլ այսպիսի ուխտատեղեր՝ հին և հնաւանդ, ինչպէս այն ընկուզենիները, որ, ով գիտէ, քանի հարիւր տարի աղմկում էին Մատուռի ձորում: Ոչինչ եկեղեցական չկար այդ ուխտավայրերում՝ ոչ գիր, ոչ խաչ: Քարափոր այրեր էին բարձր քերծերի լանջին և կամ խուլ ձորում խոխոջող մի աղբիւր և մի քարակոյտ: Միայն Կանաչ եկեղեցին ունէր ժայռի մէջ փորած սանդուղքներ, որ իբր թէ եօթը տարի փորել էր մի մենակեաց, թէև Սայու Մադին, Կեօրեսի նշանաւոր քերծ քանդողն ասում էր.

– Չորս փութ կորեկ տուէք, թէ եօթ շաբաթում էդքան չքանդէմ, իմ հօր տղան չեմ:

Կեօրեսն ունէր այդպիսի ուխտատեղեր, մրոտած պատերով, հողէ սև ճրագներով, օջախի քարերով, որ երբեմն տաքանում էին մատաղների կրակից, և երբ ծուխը բարձրանար, մի ծերունի նայում էր, թէ քամին որ կողմն է քշում ծուխը: Այդ միամիտ ծերունին հաւատում էր, թէ ծուխը որ կողմը գնար, այն կողմի արտերն այդ տարին շատ բերք կը տային...

Եւ պատահում էր, որ ծուխը գնում էր դէպի Ծլանգի տախտը, որտեղ խօջայ Բաղիրի քսան օրավար արտերն էին: Ծերունին բարկանում էր.

– Ես պիտի իմ ոչխարը քեզ մատաղ անեմ, որ դու հացը խօջայ Բաղիրի որդիներին տա՞ս:

Եւ ասում են, որ մի անգամ, երբ մատաղի ծուխը փարթամ քուլաներով գնացել է քաղաքի վրայ և մինչև անգամ փռուել

է քաղաքի շուկայի վրայ, Ջդին Հաբուդ անունով մի բնիկ կեօրեսեցի սուրբ Մարտիրոսի մատուռի առաջից կիսաեփ կաթսան գրկած տարել է Եզան Սուրբի ձորը, ասելով.

– Եզան Սուրբ, եթէ դու էլ սուրբ Մարտիրոսի նման լիրբ ես, մատաղը կ'ածեմ շների առաջ...

Երբեմն պալտօնաւորը, այսինքն Գորիս քաղաքացիք՝ Եփրատ Երեմը, Անիկա տեօտեան, տիկին Օլինկան, Կիզիկով Իսակը հանդերձ ընտանեօք, Սահակ Սերգեյիչը՝ թագաւորական ուսումնարանի տեսուչը, Աւագիմով եղբայրները, ճաղարին Մուղրովը՝ արծաթեայ մեդալներով, Կարճիկ Կևէր բէյի աղջիկները, նաւթավաճառ Գէորգին, Լալազարանց տունն իրենց նշանաւոր աղջիկներով, որոնցից մէկը՝ Հէրսելեան ամենաչքնաղն էր քաղաքում և կոչւում էր «թևը կոտրած հրեշտակ», որովհետև Հէրսելեան քայլում էր ձախ ուսը մի քիչ բարձր, երբեմն այդ ահագին բազմութիւնը լիքը զամբիւղներով ուխտ էր գնում սուրբ Մարտիրոս, գնում էր զուգուած–զարդարուած, գոյնզգոյն հովանոցներով (որոնցից ամենագեղեցիկը երկնագոյն մետաքսէ) հով էր անում օրիորդ Հէրսելեային, և երիտասարդ չինովնիկների ու գործակատարների մի խումբ, որ հետևում էր Լալազարանց աղջիկներին և մանաւանդ թևը կոտրած հրեշտակին, հիանում էր Հէրսելեայի խշխշան շորերով, բարակ մարմնով և նրա երկնագոյն հովանոցով:

Երբ պալտօնաւորն ուխտ էր գնում, Շէնը դժգոհում էր, կարծես եկողներն այլադաւան էին: Գորիսեցիք էլ էին մատաղ անում. մինչև անգամ Լալազարանց Հէրսելեան, բարձրացնելով զգեստի փէշերը, ծնկաչոք մտնում էր Կանաչ եկեղեցին, և այդ ժամանակ երիտասարդ չինովնիկներից մէկը փռում էր մի թերթ, որ աւազը չծակծկի նրա մարմար ծունկը: Նրանք էլ էին մոմ վառում, ոչ այն դեղին մոմը, որը

ձրագուից թափում էր սապոն եփող Սաւադը, այլ սպիտակ և զառ նշանով մոմեր:

Պատահում էր, որ օրիորդ Հէրսելեան և կամ Սահակ Սերգեյիչի դուստր Սուսաննան, համբուրում էին մատուռի քարը և մինչև անգամ խաչակնքում էին:

– Հողս գլխիդ, – նրանց հետևից ասում էր մի կեօրեսեցի պառաւ, – տեսնես բուլուարում քանիսին ես պաչպչել: Էլ սուրբը քեզ հի՞նչ անի...

Եւ դուրս էին գալիս եկեղեցուց, գորիսեցիք ընկուզենիների տակ մատաղը մորթում էին, իսկ նրանք, որոնք կեօրեսեցի էին, քաշւում էին վեր իրենց զուռնայ նաղարայով, հին պարերով, և հարս ու աղջիկ ծառերից կախելով պարանները, ճօճւում էին խոր անդունդի վրայ, փռփռացնելով զգեստները: Քաղաքացիները նայում էին նրանց, և օրիորդ Հէրսելեան ստուդենտ Ռուբենին ռուսերէն ասում էր.

– Երանի նրանց...

Երբեմն Կեօրեսն ու Գորիսն ընդհարւում էին հէնց ուխտավայրում: Եւ նոյնիսկ քահանաները չէին կարողանում հաշտեցնել նրանց: Ծաղրով, ծիծաղով կեօրեսեցիք քշում էին բուլկի ուտողներին: Այդ ժամանակ մի հարբած բրուտ մտնում էր Կանաչ եկեղեցու քարանձաւը և այսպէս էր գոռգոռում.

– Ապա դու սու՞րբ ես... Էն որ նաւթ ծախող Գևորգը քո պատին մոմ կպցրեց, ինչի՞ նրա մատները չբռնեցիր չկպցրեցիր քո պատին: Ապա չեմ ասել քեզ, որ քսան մանէթի դիմաց երկու եզս տարաւ, ինձ սոված թողեց: Ի՞նչ է, նրա մոմը ոսկի զառով էր, հա՞...Է՛, Կանաչ եկեղեցի, դու էլ ես ղալբացել[54], – և հարբած բրուտն սկսում էր հանգցնել քաղաքացիների մոմերը, գետնովն էր զարկում մոմերը և շարունակում էր նախատել սուրբին, – ա՛յ, ասում եմ, դրա վերջը որ չտաս,

[54] ղալբ – կեղծ, ղալբանալ – կեղծ դառնալ

դուռդ կը պատեմ... Դու սու՞րբ ես, թէ եօթը դռան հաչող շուն...

Այդպէս ամէն ինչով տարբեր էին Գորիսն ու Կեօրեսը և մանաւանդ Շէնը՝ Կեօրեսի միջնաբերդը: Տարբեր էին նրանց լեզուն, սովորութիւնները, տարբեր ազգ էին, և նոյնիսկ նրանց հաւատն ուրիշ էր: Նրանք կողք կողքի ապրում էին, և նրանց միջև կռիւն անպակաս էր, հին կռիւը, ինչպէս հին էր ձորը և ձորի գետը:

2

Ինչպէս ձորը և ձորի գետը...

Բայց նոյնիսկ ձորի գետը քանդում էր Կեօրեսի կողմը, որովհետև Գորիսը փռուել էր բարձրադիր տափարակի վրայ միանման տներով, որոնք բաժանւում էին հաւասար քառակուսիների, և ամբողջ քաղաքը նման էր զինուորական ճամբարի: Այնտեղ ամէն ինչ այնպէս էր, ինչպէս քաղաքի Սպիտակ բանտում: Փողոցներն ուղիղ միջանցքներ էին՝ հաւասար լայնութեամբ, տները միանման կամերներ՝ մեծ ու փոքր, երկու–երեք կամ չորս պատուհանով, որոնք պատած էին երկաթէ խիտ վանդակով, ինչպէս բանտի պատուհանները: Փողոցներում մայթերը նոյն չափի էին՝ նոյն քարով սալած: Տների առաջ միանման ծառեր էին՝ ուռենի, բալ, ընկուզենի և երբեմն դեղին ակացիա: Իւրաքանչիւր տուն զբաղեցնում էր չորս հարիւր քառակուսի սաժեն, որի անկիւնում, փողոցի վրայ, տունն էր, մի կամ երկու միանման յարկ, – իսկ մնացածը՝ պարտէզն էր նոյն ծառերով, ինչ որ փողոցում՝ ուռենի, բալ, ընկուզենի, խնձոր և երբեմն դեղին ակացիա:

Գորիսն ունէր մի թագաւորական ուսումնարան՝ ռուսաց շկոլ և մի հայոց դպրոց: Ունէր մի բանտ, մի ռուսաց ժամ, մի հայոց եկեղեցի, մի բիլիարդանոց, որի պատուհանները փակ էին, որովհետև անտիրական կատուները սիրում էին

օթևանել այդ ապահով ներքնայարկում, մի հիւրանոց՝ երեք սենեակից, մի բաղնիս, որի դուռը ժանգոտել էր իբր թէ ներսի գոլորշուց, բայց դռան առաջի խոտերը վկայում էին, որ այլ էր պատճառը. գուցէ ճշմարիտ էին նրանք, որոնք իբր թէ բաղնիսի աւազանների մէջ տեսել էին կանաչ գորտեր: Քաղաքն ունէր մի ժամագործ՝ Սահաթսազ Սանդրոն, որը նաև ոսկերիչ էր և սրում էր թարաքեամայ[55] քոչուորների դաշոյնները: Կար մի կանդիտէր, որ սրճատան հետևի մասը դարձրել էր գինետուն, որովհետև Գորիսի բնակիչները սուրճը համարում էին տիկին Օլինկայի խմիչք, իսկ տիկին Օլինկան միայն կիրակի օրերն էր սուրճ խմում: Քաղաքն ունէր լիմոնադի մի գործարան, որ հիմնել էին Շոր աղբիւրի կողքին: Երեք տարուց յետոյ տէրը գործարանը ծախել էր ուրիշին և գնացել Բաքու՝ պատրաստի հագուստեղէն վաճառելու: Քաղաքում պատմում էին, որ նա իր հետ փափուկ հող էր տարել և իբր թէ հեռանալուց առաջ նա համբուրել էր Շոր աղբիւրի քարը և ասել էր. «Շէն մնաս, Շոր աղբիւր, իմ հարստութիւնը դու տուիր»... Քաղաքն ունէր միայն մի գործարան և այն էլ լիմոնադի գործարան՝ առանց ծխնելոյզի, և երջանիկ այդ քաղաքում ուրիշ ոչ մի ծխնելոյզ չէր մրոտում փիրուզէ երկինքը:

Բայց ոչ այդ գործարանը, ոչ հիւրանոցը և ոչ նոյնիսկ «Սասուն» տպարանը, որտեղ տպում էին հարսանեաց հրաւէրներ, գաւառային վարչութեան բլանկներ և զանազան պուբլիկացիաներ տուրքի, քոչի և զինուորակոչութեան մասին, ոչ այդ ամէնը և նոյնիսկ տիկին Օլինկայի Հայ կանանց միութիւնը քաղաք չէին կազմում, Գորիսը չէին, որի միջուկը, այսպէս ասած, պարունակութիւնն էին վաճառականները և չինովնիկները, դիւքանդարները և մեծամեծերը, ինչպէս կ՚ասէր Աթա ապերը: Նրանք էին բուն օտարականները,

[55] թարաքեամայ – քրդական քոչուոր ցեղ

որոնց դէմ կռուում էր իսկական Կեօրեսը և նրա միջնաբերդը՝ հին Շէնը:

Ինչքան էլ ձորի գետը քանդեր բուն Կեօրեսի կողմը, և Գորիսը բարձրադիր լինելով զերծ մնար, այնուամենայնիւ գետը չէր քանդում կեօրեսեցիներին, այլ «պալտօնաւոր օտարականները», որոնք հետզհետէ դուրս էին մղում Շէնը իր հին հողերից և ջրովի խոտհարքներից, փակում էին ճանապարհները և այլևս ոչ Ղաթրինի Աղալո կար, ոչ Պարան–Պարան Աւանես, որ դիմադրէր նրանց, այլ մնացել էր մի խեղճ Գիւրջի Օբի՝ շորերը գզգզուած, աղքատ, արքայ՝ օրավարձ մշակների, ջրկիրների, այրիների և որբերի, որոնք դեռ մնում էին Կեօրեսի միջնաբերդում, իբրև պաշարուած զօրք, որ սպառել է հացը և վերջին կաթիլ ջուրը և դեռևս մի քանի զինուորներ շարունակում են կրակել՝ իրենց աղաղակներով խլացնելով բերդի մէջ մեռնողների կանչերը:

Գորիսը յաղթել էր: Ու թէև հին կռիւը շարունակւում էր, բայց այդ պաշարուածների յուսահատ դիմադրութիւն էր և ոչ թէ հաւասարների պատերազմ: Պատահում էր, որ Կեօրեսի տղաները գետում լողանալու ժամանակ ընդհարւում էին «բուլկի ուտողների» հետ, մինչև անգամ նրանց ծեծում էին, քարերով քշում էին դէպի քաղաքը, բայց այդ մանկական խաղ էր, ինչպէս արդէն խաղ էր և այն, երբ Կեօրեսի հարբած ուխտաւորները ծաղրով և ահագին գոռում–գոչիւնով Կանաչ եկեղեցու ուխտից քշում էին Կիզիկով Իսակին՝ հանդերձ ընտանեօք, նաւթավաճառ Գէորգուն, Եփրատ Երեմին, Աւագիմով եղբայրներին, և մինչև անգամ քշում էին ճաղար Մուղրովին, որի կուրծքը զարդարուած էր մեդալներով:

Կեօրեսը մեռնում էր, ինչպէս մեռնում էր Խուռուփի ձորի վերջին կաղնին... Ամէն տարի մի ճիւղ չորանում էր, անձրևները մերկացնում էին անտառի հողը, և հողի խորքից

հետզհետէ ցցւում էին տձև ժայռեր՝ սապատաւոր և ահռելի:

Տեսնելով վերջին կաղնին, ոչ ոք չէր ասի, որ երբեմն Շհարի Տախտը, որտեղ քաղաքն էր, և նաև Տախտի հարևան ձորերը պատած են եղել խիտ անտառով, որից մնացել է միայն մի կաղնի Խուռուփի ձորում: Այդպէս էլ ոչ ոք չէր ասի, թէ երբեմն Կեօրեսը, նրա միջնաբերդը՝ Շէնը, իր թաղերով եղել է աղմկոտ փեթակ, և այնտեղ, ուր միայնակ խոխոջում է Ղաթրինի աղբիւրը, մի ահագին գիւղ կար քարանձաւների մէջ, քերծերի գլխին... Որ Սալ կամուրջը, որից մնացել է միայն մի կամար, եղել է ժողովուրդների կամուրջ, քարաւանների կամուրջ, և անհամար բազմութիւններ են անցել այդ կամուրջով, ինչպէս յետոյ անցնում էին թագաւորական ճանապարհով:

Հետզհետէ ամայեանում էր Կեօրեսը: Անդունդն էր սուզւում հողագործների ազգը: Ով մեռնում էր, առանց բարձրացնելու այն քարը, որ ընկնում էր հին տան պատից, ով ծախում էր վերջին հորթը պարտքի դիմաց և կամ գերի էր գրւում մի վաճառականի կամ գլուխը փէշի տակ գնում էր օտարութիւն՝ Բաքու և Անդրկասպեան մի երկիր, մինչև Քերքի, մինչև Բուխար և աւելի հեռուներն էր գնում քարանձաւում ծնուած կեօրեսեցին: Այսպէս «օտարականները» ընիկներին մղում էին օտար երկրներ, և իզուր էր Գիւրջի Օբին սպառնում, թէ մի օր նրանք գերութիւնից ետ կը գան և բուլուարի ծառերից մէկ-մէկ կը կախեն «պալտօնաւորներին»:

Այդ սպառնալիքը վաճառականներին միայն զուարճութիւն էր պատճառում, և երբեմն Բադիրին Չանթայ-Ռեխ Գալուստը՝ ճոթի մաղազայի տէր, մի շիշ օղի էր խոստանում Գիւրջի Օբուն, եթէ նա խանութի առաջ կանգնէր և երգեր «Գորիսի գովքը», մի երգ, որ կապել էր Նիազանց Անդրին և որով ծաղրում էին Գորիսի վաճառականներին և չինովնիկներին՝ որի՛ ագահութիւնը, որի՛ պարտք ուրանալը,

որի՛ կաշառակերութիւնը և որի՛ ընտանեկան կեղտը...

Հատ ու կենտ կեօրեսեցիներ էին մնացել, որոնք հաւատում էին, թէ Գորիսի վերջն էլ կը գայ. բայց թէ ի՞նչ վերջ կը լինէր այդ, նրանք չգիտէին: Միայն Աթա ապերը, մի յարգևոր ծերունի, իբրև տեսիլք նկարագրում էր այն ժամանակը, երբ բազարի տեղն ինքը կամ մի ուրիշ կեօրեսեցի վար կ'անի, պրիստաւ Վասիլի տներից վեր նորից խոտհարքներ կը դառնան, և Կանաչ աղբիւրը, որի ակը խցկել են Սպիտակ բանտի տակ, նորից կը յորդայ: Այդպէս էր ասում Աթա ապերը՝ ծոր տալով և երգելով, ինչպէս երգելով խօսում էին հին կեօրեսեցիք: Բայց ո՞վ պիտի բացէր Կանաչ աղբիւրի ակը և ինչպէս պիտի բացէին: Աթայ ապերը չէր ասում, այլ միայն պատմում էր այն օրերի մասին, երբ ինքը հոտաղ տղայ էր և եզները պահում էր այնտեղ, ուր հիմա Սպիտակ բանտն է... Պատմում էր Սալ կամուրջի և կորած ճանապարհների մասին և պատահում էր, որ նրան լսելով մէկը մոռանում էր առօրեայ հոգսը:

Իսկ Կեօրեսն այնուամենայնիւ մեռնում էր: Մի կողմից գետն էր քանդում գետափի պարտէզները, երբեմն փլւում էին քերծերը՝ ծածկելով լանջերի փոքրիկ արտերը. հողը հողագործի ձեռքից գնում էր, և այդ անխուսափելի էր, ինչպէս մահը, ինչպէս արևի մայրամուտը... Բայց նրան ամէնից աւելի մաշում էր Գորիսը՝ վաճառականների և մեծամեծների քաղաքը, որի մօտ Կեօրեսը՝ ինչպէս մի բուռ ձիւն խարոյկի մօտ:

Մի անգամ Կեօրեսում եղաւ մի դէպք, որից յետոյ նոյնիսկ Գիւրջի Օբին այլևս չերևաց քաղաքի հրապարակում, և այնպիսի ահ պատեց Կեօրեսին, ինչպէս՝ եթէ յանկարծ պայթեր Լաստի խութը:

Խաչի անունով մի մարդ՝ բուն Կեօրեսից, որին անուանում էին Ծմակի Խաչի, որովհետև տարին բոլոր նա շրջում էր

անտառներում և վայրի ձորերում և այնքան էր մենակ շրջել, որ ասում էին, թէ Ծմակի Խաչին խօսել չգիտէ, այլ մռնչում է գազանի նման, Ծմակի Խաչին աղուէսի, կզաքիսի և լիսեմնի մորթիների մի շալակ տանում է Միրումովների մաղազան: Շատ վաղ ժամանակ Ծմակի Խաչին նրանցից պարտք էր առել տասնմէկ մանէթ: Եւ այդ ժամանակից տարին երկու անգամ՝ գարնանը և խոր աշունքին, Ծմակի Խաչին երկու շալակ մորթի էր բերում:

– Նրա վիզը կը մաշի, բայց Միրումովների դրած լուծը չի մաշի, – ափսոսում էին կեօրեսեցիք, որոնցից իւրաքանչիւրն ունէր իր լուծը և իր մաշուող վիզը:

Ծմակի Խաչին մտածում է, որ այս անգամ կ՚ազատուի պարտքից, որովհետև մորթիների մէջ կային երկու աղուէսի արծաթափայլ մորթի, որ հազուագիւտ է: Միրումովների մաղազայում նրան ասում են, որ պարտքից դեռևս մնում է քառասունչորս մանէթ և երեք աբասի:

– Երեք աբասին էլ քո գլխին մատաղ, – և Միրումով Կիւքին, որին անուանում էին Կոյր գայլ, համրիչը դնում է տեղը:

Ասում են Ծմակի Խաչին գոռացել է, ինչպէս՝ եթէ վրան կրակ թափէին: Եւ փախել է առանց ետ նայելու...

Երեք օր փնտրել են նրան: Փնտրել են որսորդ ընկերները, փնտրել են եզնարածները, մինչև անգամ տանուտէրին են յայտնում, երբ մի օր մի հորթարած լուր է բերում, թէ Լաչին քերծի տակ երևում է մի դիակ: Գնում և քերծի գլխից ճանաչում են Ծմակի Խաչու դիակը: Ձորն այնքան խորն է և անառիկ, որ հնար չի լինում իջնել՝ ոչ պարանով և ոչ այլ կերպ: Եւ վերևից հող են թափում դիակի վրայ:

Այդ օրերին ջրաղացպանը պատմել է, որ ինքը գիշերով Լաչին քերծի կողմից լսել է մի ամեհի գոռոց.

– Քանդուե՛ս դու, Գորիս, – լսել է ջրաղացպանը:

Այդ դէպքից յետոյ Գիւրջի Օբին այլևս չերևաց քաղաքի հրապարակում, և այնպիսի ահ պատեց Կեօրեսին, ինչպէս՝ եթէ յանկարծ պայթեր Լաստի խութը:

3

Գորիս քաղաքի միջուկը, այսպէս ասած պարունակութիւնը կազմում էին վաճառականները և պետական պաշտօնեաները՝ դիւքանդարները և մեծամեծները, – ինչպէս նրանց անուանում էր Աթա ապերը: Այդ մի ամբողջ բանակ էր, որ իր քարաշէն զօրանոցները կառուցել էր գետահովտում և Շհարի Տախտից ռմբակոծում էր մինչև խուլ գիւղերը՝ անտառների խորքում, բարձր լեռների լանջին և այնպիսի խոր ձորերում, որի բնակիչներն իրենց գիւղի ճանապարհի մասին այսպէս էին ասում.

– Մեր շէնի ճանապարհը կարգին ճանապարհ է... մինչև անգամ բեռնած էշն էլ կ'անցնի:

Գորիսը կենտրոն էր՝ վարչական, ռազմական և տնտեսական կենտրոն մի լայնածաւալ գաւառի, որ ամենաընդարձակն էր Անդրկովկասում և տարածւում էր Սևանայ լճի հարաւային լեռներից մինչև Արաքս: Լեռնաշղթաներով և խոր ձորերով կտրտուած այդ աշխարհում ապրում էին այլացեղ և այլադաւան ժողովուրդներ՝ նստակեաց և վաչկատուն, խաշնարած և հողագործ և այնպիսի ժողովուրդ, որ ոչ հողագործ էր և ոչ խաշնարած, այլ անտառաբնակ էր, և ոչ ոք նրանց մասին ստոյգ բան չգիտէր, և նոյնիսկ ասում էին, որ նրանք առանձին ազգ են՝ այրում են և երկրպագում են բարձր ծառերի և իբր թէ մութ ծմակներում նրանք շրջում են առանց զգեստի:

Այդ ընդարձակ գաւառը՝ Զանգեզուրը, լեռնաշղթաներով և խոր ձորերով բաժանուած էր բազմաթիւ մահալների:

Իրենք՝ մահալները, բաժանուում էին իրարից անջատ մանր գիւղախմբերի և յաճախ կարելի էր լսել այսպիսի խօսք.

– Մինչ սարի սեռը մեր երկիրն է, էն երեսը Աղուանու երկիրն է: – Նոյն գիւղացիներն իրենց գիւղին «հայրենիք» կամ «երկիր» էին ասում, հարևան գիւղին՝ «օտար երկիր» կամ «ղարիբ տեղ»:

Շհարի Տախտի բնակիչները գրաւել էին այդ ամէն «երկիրները», ինչպէս մի իրական պետութիւն զէնքի ուժով գրաւում է իսկական երկրներ, Մահալները և գիւղերը՝ մինչև վերջին բնակավայրը, որ նոյնիսկ գիւղ չէր հաշուում, այլ ձմեռանոց, այդ ամբողջ երկրներն իրար մէջ բաժանել էին Գորիսի վաճառականները և չինովնիկ մեծամեծները: Բաժանել էին կռուով, և ուժեղին բաժին էր ընկել ամէնից հարուստ մահալը: Այսպէս՝ Միրումովները հնուց անտի տիրում էին Մինքենդի բոլոր գիւղերին, այն լեռնային մահալները, որոնք այժմ կազմում են Քիւրդիստանի հիւսիսային մասը, Բայանդուրից մինչև Շօթանան սեփական ժառանգութիւնն էր Բաղիրովների առևտրական տան: Սիսիանի մի մասը՝ Որոտան գետից ձախ, տիրում էին Ֆրանգուլովները: Զորերը՝ Աւագիմովների միահեծան թագաւորութիւնն էր, Կեօրեսը և քաղաքամերձ չորս գիւղ բաժանուած էին առևտրական երկու տների միջև: Իւրաքանչիւր առևտրական տուն իր մահալի գիւղերում ունէր մանր ու մեծ խանութներ և ահագին թուով մանր վաճառականներ, որոնք խանութ չունէին, այլ ձիերի վրայ, երբեմն սեփական մէջքի վրայ այդ խանութների ապրանքը բարձրացնում էին մինչև լեռան ծերպը[56], եթէ այնտեղ ծխում էր մի օջախ:

[56] ծերպ – ծայր, գագաթ, նաև՝ ձեղք

Նրանք ոչ միայն վաճառում էին շիլայ[57], մահուդուարի[58], Իրանի ղադաք[59], փոնձայ, շալ, շաքար, նալ ու մեխ, սաղսի[60], նաւթ, սաղրի քօշ[61] և այլ այսպիսի ապրանքներ, որ քարաւաններով ստանում էին Թաւրիզից, Շուշուց (ռուսական մանուֆակտուրան՝ Պրոխորովի, Կրատնիկովի, Վիտովի, Ցինդելի և ուրիշ ֆիրմաների մեծաքանակ պահեստները Անդրկովկասի հարաւի և Հիւսիսային Իրանի համար կենտրոնացուած էին Շուշի շահաստան քաղաքում), – ստանում էին Բաքուից և մինչև անգամ Տրապիզոնից էին ստանում, – նրանք ոչ միայն վաճառում էին, այլև իւրաքանչիւր առևտրական տուն իր մահալում մենաշնորհ իրաւունքով գնում էր բուրդ, ցորեն, անասուն, իւղ, պանիր, հաւաքում էր գորգեր՝ թիրմահի, էան, խորասան, մարդաշէնք, պատնոց, – կարպետներ՝ դարախլու, շղթայ-շղթայ և առանց զարդի, – նրանք հաւաքում էին պղնձէ ամաններ՝ կուժ, կուլայ, ջամ, մարթար, սինի, բադիայ, կաթսայ, – ինչ որ ձեռք ընկնէր և հալելով՝ իբրև կարմիր պղինձ, ուղտերի նոյն քարաւանով ուղարկում էին Թաւրիզ, Խորասան և Եզդան շահար:

Այդ առևտրական տները նաև իւրատեսակ բանկեր էին: Նրանց ձեռքում էր դրամը. նրանք վաշխ[62] էին առնում՝ մանէթին երեսուն, քառասուն և աւելի: Միրումով Կիւքին, որին անուանում էին Կոյր գայլ, իր որդիներին սիրում էր ասել պապից լսած խօսքը.

– Որտեղից լացի ձայն լսես, ներս մտիր. կամ մարդ է մեռել,

---

[57] շիլայ – կարմիր կտաւ

[58] մահուդուարի – բրդեայ հաստ գործուածք

[59] ղադաք – բամբակի գործուածք

[60] սաղսի – ամանեղէն

[61] սաղրի քօշ – ոչ խորը ոտնաման

[62] վաշխ – շահ, տոկոս

կամ սոված են, կամ տան տիրոջ ձեռքը նեղ տեղն է: Տու՛ր, պարտք տուր, չարմեխի՛ր[63], էնպէս մեխիր, որ հուր յաւիտեան դռանդ կլանչի:

Եւ մեխում էին, շղթայում էին ծանր շղթաներով, և որոնք սարերում ազատ վրնջացել էին, նրանք դառնում էին բեռան ձի: Հետզհետէ ուռչում էին սանադի դաւթարները[64] և ղարզի միջրիները, այն փոքրիկ սնդուկները, որոնց մէջ հազար մուրհակ և հազար անուն կար:

Պատմում են, որ Ֆրանգուլով Բադալ ապերը մի անգամ նստած, բաց ու խուփ էր անում աջ բուռը:

– Ապեր, էդ ի՞նչ ես անում, – հարցնում է որդին:

– Ա՛յ որդի, նայում եմ բռիս և փառք եմ տալիս աստծուն, թէ էս ահագին մահալը ո՞նց եմ պահում բռիս մէջ...

Ջամբայ Ծատուրը՝ հռչակաւոր վաշխառուն, երբ բաց էր անում միջրին, մուրհակների դարսը զսպանակի նման վեր էր թռչում:

– Կարդա՛, – ասում էր որդուն: Եւ որդին առնում էր առաջին մուրհակը.

– Վեր առիմ և պարտ եմ քառասունուեց մանէթ... Էյլազ Խդըր օղլի...

– Էդ չի, – ընդհատում էր հայրը:

– Վեր առիմ... Յիսունմին մանէթ... Գիչունց Տանիել...

– Է՛դ չի...

– Վեր առիմ... Մեհտի Ղուլի Իմամուերդի:

– Թիւը քանի՞ է, – հարցնում էր Ջամբայ Ծատուրը:

– Յուլիսի 25-ը:

– Էսօր 16-ը չի՞:

– 15-ն է:

---

[63] չարմեխել – այստեղ՝ կախման մէջ գցել, ապա՝ կեղեքել, հարստահարել

[64] սանադի դաւթար – մուրհակների մատեան

– Էդ մէկը հանի... ասում են Մեհտի Ղուլի Իմամուերդին երկու լաւ մատակ ունի, – և այդ մուրհակը հանում էին:

– Կարդա՛, – և շարունակում էր ընթերցումն ինչպէս միալար ժամերգութիւն:

Կային այնպիսի առևտրականներ, որոնք իրենց մահալում միահեծան տէր էին, բառիս լրիւ իմաստով: Նրանք դատ էին անում, եղբայրը եղբօրից բաժանում էին, խառնւում էին ամուսնութեան գործերի, կալանաւորում էին, ծեծում և արեան գին էին որոշում, մի խօսքով մահալում խան ու սուլթան էին: Նրանց ձեռքի տակ էին գիւղական գրագիրները, տանուտէրերը, և մինչև անգամ պրիստաւը լսում էր նրանց, որովհետև նրանք բոլորը կերակրւում էին խօջայի հարուստ սեղանից:

Առևտրականների չափ, գուցէ և աւելի, Գորիսն ունէր բէյեր և պաշտօնեաներ: Կային երեք Ներսէս բէյ՝ Հաստ Ներսէս բէյ, Խուրդայ կամ Կարճիկ Ներսէս բէյ և Պրիստաւի Ներսէս բէյ: Կային Կ'ևէր բէյ՝ Ճաղար, այսինքն կապուտաչեայ և Բալասան Կ'ևէր բէյ: Կային երկու Ջիլֆուղար բէյ հայ և թուրք, որոնց միջև կար միայն մի տարբերութիւն. տարին երկու անգամ հայ Ջիլֆուղար բէյի տունն օրհնում էր տէր Զաւէն քահանան (Տէր զի բազումը՝ ինչպէս նրան անուանում էին), իսկ թուրք Ջիլֆուղար բէյի տունն օրհնում էր մօլլայ Մուսին: Ուրիշ և ոչ մի տարբերութիւն չկար երկու Ջիլֆուղար բէյերի միջև: Վերջապէս կային բէյեր, որոնք մի հատ էին, ինչպէս Գորիսում մի հատ էր տիկին Օլինկան, Փոշտի Անտոնը, Եփրատ Երեմը, նաւթավաճառ Գէորգին և ուրիշները... Կար մի Ասատուր բէյ, որ ասունաս չէր խաղում, այլ սիրում էր որձ այծի միս, կար Պաւլի բէյ, որ «Մշակ» թերթի անխափան բաժանորդն էր. կար Վաղարշակ բէյ՝ զար գցող, կար Խանլար բէյ՝ շուն պահող, կար... և այլ ինչպիսի բէյեր չկային երանելի Գորիս քաղաքում:

Այդ բէյերից ոմանք շառաւիղն էին ազնուական հին տոհմերի և ունէին կալուածքներ, որոնց հասոյթով անկարօտ ապրում էին: Այդպիսին էր, օրինակ, Պաւլի բէյ Օրբելեանը, «Մշակ» թերթի հաւատարիմ բաժանորդը, որ առանձնացած ապրում էր իր տանը, ինչպէս իշխանը դղեակում, հագնւում էր հին տարազով, և ասում էին, թէ իբր գաւառապետը նրան չի սիրում, որովհետև Պաւլի բէյը իր այգում վէճի էր բռնուել ռուս քահանայի հետ և հաստատել էր, թէ հայոց կրօնն աւելի հին և աւելի ճշմարիտ է: Այդպիսին էր նաև Համբարձում բէյը, որ երբեմն գիւղ էր գնում՝ տաքացրած թան ուտելու իր ազգի տանը: Այդ ժամանակ նրա շուրջն էին հաւաքւում ազգական ծերունիները, և մունդիրը հանելով Համբարձում բէյը ննջում էր բարձերի վրայ, իսկ ծերունիները շարունակում էին պատմել վաղի ժամանակներից:

Կային այդպիսի բէյեր՝ հին տոհմերից, բայց բէյերի մեծ մասը կեղծ ազնուականներ էին, որոնց հայրերը 1851 թուի բեկական յանձնաժողովին (бекская комиссия) ներկայացրել էին ինչ-որ թղթեր իրենց ծագման մասին՝ Տաթևի վանքից, խանի ժամանակներից, և նոյնիսկ գնդապետ Սարոկինի ձիապան Խուդին յաջողացրել էր բէյի կոչում ստանալ և վերադարձել էր իբրև Խուդաբախշի բէյ: Բէյերի մի մասն այդպէս էր ձեռք բերել կոչումը, իսկ միւսները նախկին տանուտէրերի, գրագիրների և հարուստ հողատէրերի որդիներ էին, որոնք պետական ծառայութեան մտնելով, կոչուել էին բէյ. մի սովորութիւն, որ մնացել էր պարսկական տիրապետութեան ժամանակից:

Առևտրականների նման բէյերը ևս ունէին իրենց ազդեցութեան մահալները և գիւղերը: Ոմանք այդ ազդեցութիւնն ունէին ի ծնէ, որովհետև այդ գիւղերի ջրարբի հողերը նրանց հայրական սեփականութիւնն էր: Ոմանք այդ

ազդեցութիւնը ձեռք էին բերել «քրտինքով», և մի անգամ ձեռք բերածն արդէն անքակտելի էր:

Բէյերի բոյլը[65] բոռերի նման վխտում էր գաւառային վարչութեան դիւանում (դաւթարխանայ), զինուորական և հաշտարար ատեաններում (սուդարան), հարկային տեսչութեան մէջ, վխտում էին՝ աղմկելով սապոգների պղնձէ խթաններով, ոմանք թրերով, ոմանք ճռռացնելով սապոգները: Ընդարձակ սենեակներում գործավար, սեղանապետ և քարտուղար բէյերի խմբերը մինչև ճաշ հնչեցնում էին իրենց ձայները՝ թաւ, երբ Համզայ բէյ Մահմուդբեկովը պատմում էր մի «անառակ» անեկդոտ, խոպոտ, երբ Հաստ Ներսէս բէյը վերջացնում էր ռապորտի[66] պատճէնը և մէջքը յենելով աթոռին, ասում էր. «Դա՜-աս... երեկ լաւ ժամանակ անցկացրինք... и не скучала душа моя...» Իսկ մի հեռու սենեակից լսւում էր աղուէսահաչ արագ-արագ և սուր ձայնով, ինչպէս հաչում է տնային շնիկը կատուի վրայ, որ նայում է պատի գլխից և բեղը չի շարժում: Եւ բոլորն էլ ճանաչում էին աւագ գրագիր Նազար բէյի ձայնը և առանց տեսնելու գիտէին, որ նա բարկացել է շինականի վրայ...

4

Գորիսը կենտրոնն էր Զանգեզուրի ընդարձակ գաւառի, որտեղ ապրում էին այլացեղ և այլադաւան բազմաթիւ ժողովուրդներ: Բայց այդ կենտրոնն ունէր իր կենտրոնը, այսպէս ասած քաղաքի միջուկը և այդ՝ Գորիսի շուկան էր:

Գորիսի շուկան...

Ո՞ր ծայրից սկսել և ո՞ր ճանապարհով մտնել շուկայ,

---

[65] բոյլ – խումբ

[66] ռապորտ – (ռուս.) զեկոյց, զեկուցագիր

որովհետև եօթ ճանապարհ էր մտնում շուկան՝ եօթ միանման ու լայն փողոցներ, որոնցով մտնում և դուրս էին գնում ահագին քարաւաններ, բեռնէր, մալականի ֆուրգոններ, Խաչենի սայլեր և մարդիկ՝ հազար, տասը հազար մարդ, մանաւանդ ամառը, երբ Սալեանից, Մուղանից, Լէնքորանից հազար-հազար քոչուոր բարձրանում էր Զանգեզուրի ամառային արօտները, և ամբողջ ամառը նրանք առնում և ծախում էին Գորիսի շուկայում:

Ո՞ր ճանապարհով մտնել շուկայ և ո՞ր ծայրից սկսել... Մտնել լեռա՞ն ճանապարհով, որտեղ բերում էին պանրի և իւղի բեռնէր, բուրդ, հազարաւոր ձիեր, ոչխարներ, – և այդ ամէնն այնպիսի աղմուկով, որ մինչև անգամ շներն իրար էին խառնւում, և հէնց քաղաքային ինքնավարութեան առաջ բարձր գոռոցով թեմիր-միսկեանլու[67] մի չօբան ժխորի մէջ կանչում էր իր շանը՝ «Ալաբաշ հէյ, Ալաբաշ, Ալաբաշ...», կանչում էր այնքան բարձր, որ քաղաքագլուխ Մաթևոս բէյը դուրս էր գալիս քաղաքային դումայի պատշգամբը, որպէսզի յանցաւորին պատժի, բայց յանցաւոր չէր գտնում, այլ գտնում էր անասունների հեղեղ, որ սարերից տրաքուած մտնում էր քաղաք:

Արդեօք սկսե՞լ հարաւից, որտեղից շուկայ էին բերում ձմերուկի և սեխի սարեր, Բարկուշատի բրինձ, Օրդուբադի չիր, թուզ և ուրիշ ինչ մրգեր չէին բերում, ուղտերի մէջքին, զրընգ-հա-զրընգ՝ զանգերով, բոժոժներով և փնջերով զարդարուած ուղտերի մէջքին: Բայց առաջին քարաւաններն արդէն վայր են դրել բեռները, ուղտերը նստել են և փակել են ճանապարհը: Ուղտերը տոնգում[68] են, և մի ուղտապան կեռգլուխ մահակով խփում է նստած ուղտին, կատաղած

[67] թեմիր-միսկեանլի – թաթարական քոչուոր ցեղ

[68] տոնգել – ձայն հանել (տոնգոց-ուղտի հանած ձայնը)

խփում է, և ուղտը կեռ ու մեռ ոլորում է վիզը և, հեռուից այնպէս է երևում, թէ մի վիթխարի օձ գալարւում է բեռների արանքում... Արդէն այնտեղ է քաղաքային ոստիկան գարադաբուլդի[69] մուխանը՝ որին հրամայուած է կարգ պահել հրապարակի այդ մասում և բաց պահել ճանապարհը: Բայց Մուխանը տեսել է Օրդուբադի չիրի և թուզի բեռները, լցնում է գրպանները և նոյնիսկ գլխարկի մէջ է լցնում:

Ո՞ր ճանապարհով մտնել այդ հարուստ շուկան...

Լաւ է շուկայ մտնենք ոչ լեռներից իջնող ճանապարհով, ոչ հարաւի և ոչ թագաւորական ճանապարհով, որով Շուշի քաղաքից բերում էին շաքար, մանուֆակտուրա և երկաթեղէն: Մենք շուկայ մտնենք Կեօրեսի ճանապարհով, – այն հին ճանապարհով, որով Գորիս էին մտնում ձորերի մէջ կորած գիւղերից՝ ցաքուտեցիք, մեզարցիները, նորուեցիք, ձորկեցիները և ուրիշները:

Գետից այն կողմը ճանապարհը բարձրանում է ջրաղաց-ների կողքով: Այստեղ դեռևս հին Կեօրեսի հետքերն են... Ահա կանաչ ընկուզենու տակ ննջում է ալրոտ ջրաղացպանը: Ծառից կապած երկու էշ գլուխ գլխի կանգնել են, կարծես խոր մտքի են և այնքան են խորասուզուած, որ չեն զգում ճանճերի խայթոցը: Այստեղ դեռևս հին Կեօրեսն է... Ճանապարհին ընկած է մի կոտրած նալ, այստեղ-այնտեղ թափուած են խուրձերից վայր ընկած հասկեր: Շէնից մի աղքատ կին ջրաղացի առաջ փռել է վերջին պարկ ցորենը, այն ցորենը, որին ջրաղացպանն անուանում է հաւի կուտ...

Արդէն հետ մնաց վերջին ջրաղացը՝ այն իմաստուն ջրաղացպանով, որ հազար հեքիաթ գիտէր: Նա իր կեանքը անց էր կացրել այդ ձորում և ձորի ջրաղացում: Գիշեր մինչև լոյս ջրաղացը բանում էր, իսկ ջրաղացպանը եթէ

[69] գարադաբուլդի – քաղաքապահ ոստիկան բառի աղաւաղուած ձևն է

չէր ննջում, ջրաղացի դռանը նստած կամ օջախի մոտ՝ պատմում էր իր հեքիաթներից մէկը, պատմում էր հայերէն և թուրքերէն, որովհետև նրա ջրաղացն աղուն էին բերում և՛ հայերը, և՛ թուրքերը: Նա հնագոյն կեօրեսեցի էր և նրա ասելով Ղաթրինի Աղալոյի մահից յետոյ Կեօրեսում ապրելը հարամ էր: Նրա կարծիքով առհասարակ մարդ-օլանը քանի գնում ժէռանում էր, այսինքն փոքրանում և վայրենանում էր... Մարդ՝ առաջուայ մարդն էր, ոսկորը հաստ և զօրեղ: Մարդ էր Ղաթրինի Աղալոն, մարդ էր Ցուլ Օհանը, որի ձայնից Դրնգանի ձորում գազանները թաքնւում էին: Եւ նա պատմում էր Ցուլաքարի և Ցուլ Օհանի մասին, որ և մենք կը պատմենք, լսած լինելով ջրաղացպանից, որովհետև՝ այդ վերջին ջրաղացից մինչև քաղաք ուրիշ նշանաւոր բան չկայ և երկրորդ՝ մի անգամ լսած լինելով այդ պատմութիւնը, չի կարելի չվերյիշել, երբ դէպք է լինում անցնել Կեօրեսի վերջին ջրաղացի կողքով:

Վաղ ժամանակ Շէնում՝ հին Կեօրեսում ապրել է մի մարդ, անունն Օհան: Այն ժամանակ Շէնն այժմեան ձորերում չէր, այլ աւելի հիւսիս, այնտեղ, ուր ձորի մէջ երևում է մի կոտրած վանք, որի ճակատաքարին դեռևս կարդացւում է. «Թիւ ՌԺԴ ...Ես Մելիք Էգան կառու[ցի]...»: Այդ ձորի գիւղում ապրել է Օհանը, որ կոչուել է Ցուլ, նախ որ նրա ձայնից Դրնգանի ձորում գազանները թաքնւում էին և ապա նոյնիսկ երեցկինը նրանից հանգիստ չունէր: Եւ մի պատարագի երէցին յայտնում են, որ Ցուլ Օհանը քշել է վերի թաղի կողմը: Քահանան շուրջառն ուսին, ինչպէս պատարագում էր, թռչում է դէպի տուն և ձեռքն առնելով բահի կոթը՝ վազում է: Նրա ետևից վազում են վերի թաղի մարդիկ, որոնց կանանց նոյնպէս չարչարել էր Ցուլ Օհանը: Քահանայի տնից նրանց դէմ է դուրս գալիս Ցուլ Օհանը, գրկի մէջ երեցկինը, որի կիսամերկ մէջքը

դէպի քահանան էր: Այդ տեսնելով, երէցը բացականչում է. «Ցուլ Օհանի բահի կոթն իմից զօրեղ է, ժողովուրդ, և քանի այդպէս լինի, աշխարհում շատ մարդու կին իմ կնոջ նման կը նստի՛...»: Երէցը շուրջառը գետնին է գցում, հեռանում է գիւղից: Այլևս նրան չեն տեսնում: Իսկ Ցուլ Օհանն ապրում է շատ տարիներ, և այդ տարիներում, երբ դղրդար նրա ձայնը, կանայք անհանգստանում էին՝ նոյնիսկ իրենց ամուսինների գրկում:

Նրան միայն ծերութիւնը յաղթեց: Բայց նոյնիսկ օր ծերութեան, երբ աչքերը պարզ չէին տեսնում և քայլելու ուժ չունէր, Ցուլ Օհանը չէր մոռանում կանանց: Իրենց տան առաջ նա ցցել էր մի քար, աղբիւրի ճիշտ դէմը: Երբ կանայք աղբիւրն էին գալիս կամ աղբիւրի ջրում լուանում էին ցորեն, բուրդ, Ցուլ Օհանը պառաւ գայլի նման քարանձաւից դուրս էր գալիս և քարի գլխից նայում էր աղբիւրի կանանց, որոնք բարձրացնում էին կուժը և օրօրուելով գնում, ոտքերը մերկ մտնում էին ջուրը և թևերը քաշած ցորեն էին լուանում: Ասում են քարի գլխից Ցուլ Օհանը տեսնելով աղբիւրի կանանց, յիշում էր նրանց մայրերին և ոմանց անունը շշնջում էր*[70]:

Ահա յետ մնաց և վերջին ջրաղացը, նրա հետ և այն ամէնը, ինչ մնացել է Ղաթրինի Աղալոյի և աւելի վաղ ժամանակներից: Այստեղից սկսւում է քաղաքը: Առաջինը՝ հէնց քարափի գլխին, նաւթի պահեստն է: Չորս-հինգ գիւղացի երեխաներ, շշերը մատներից կախած կանգնել են: Նրանք մի քանի անգամ համրել են իրենց սև փողը, ստուգել են խցանը՝ կարտոֆիլից կամ մասուրի փայտից, բայց դարձեալ սպասում են, որովհետև

*70 Ղաթրինի ձորից հիւսիս, երրորդ ձորում, որտեղ մնում են անյայտ գիւղի քարայրները, դեռ մնում է Ցուլ Օհանի ցից քարը, որն անուանում են Ցուլաքար: Մի ժամանակ չբեր կանայք ուխտ էին գնում, և ինչպէս ոմանք վկայել են, Ցուլաքարը դեռ զօրաւոր էր, ինչպէս ինքը՝ առասպելական Ցուլ Օհանը:

նաւթավաճառ Գէորգին նարդի է խաղում Բալասան– Կ'ևէր բէյի հետ.

– Սէ–բիր Սիբիրստա՛ն, Գէորգի Մինայիչ... Ջա՛ռ, դուբարայ, քարերը թուփ արա:

Իսկ նաւթավաճառը միայն կրկնում է.

– Ջառ, քեզ տեսնեմ, զառ, – և զառերը «դուշեշ» չեն բերում: Երեխաներն սպասում են և դեռ կը սպասեն այնքան, մինչև խաղից կշտանայ Բալասան Կ'ևէր բէյը, և կամ երևայ մի յաճախորդ, որ նաւթ է գնելու բեդոնով[71] ...

Նաւթի պահեստից մինչև Նազար բէյի տունը հին շուկան է, շուկայի այն մասը, որ վաղ ժամանակ միակ շուկան էր, բայց արդէն դարձել էր իսկական շուկայի արհամարհուած ծայրը, որտեղ առևտուր անելը հաւասար էր կոտր ընկնելուն: Հին շուկայում մեծ մասամբ բնիկ կեօրեսեցիներ էին, որոնց Գորիս քաղաքի իսկական շուկան քշում էր դէպի Շէնը և վաղ թէ ուշ նրանք պէտք է կամ օտարութիւն գնային, կամ ետ վերադառնային հայրենի տունը ձորերի մէջ: Ներկարարներ, համետ կարողներ, սաղրի չմուշկի վարպետներ, հնակարկատներ, դարբիններ, (որոնք զօդում էին խոփը, բայց անիւ չէին կապում, որովհետև շինականները՝ ցաքուտեցիք, մեզարցիները, նորուեցիք և ձորկեցիները սայլ չունէին), փափախ կարողներ, որոնք փափախ էին կարում ոչ թէ բուխարայի, այլ գառան հասարակ մորթուց («մոթալ փափախ»), եզան, էշի, ձիու և ջորու պայտարներ, որոնք գիտէին ձիու մաշուած նալը յարմարեցնել էշի մանր ոտքին, երկու վարսավիր՝ Դալլաք Բոզին և Քթևան Ասրին, որոնք մանգաղի նման ածելիներով թրաշում էին շինականներին, տզրուկ էին պահում և աշնանը՝ կալի ժամանակ իբրև մուրացկաններ շրջում էին տնէտուն, հաւաքելով ամբողջ

[71] բեդոն – հեղուկի տարայ

տարուայ վարձը, և այլ այսպիսի վարպետներ զարդարում էին հին շուկան: Միակ ձոթավաճառը Մանգասար դային էր... Նրա խանութի նման երկրորդը չկար ամբողջ Գորիսում, և կարծես Մանգասար դային խանութն այդպէս պահել էր, որպէսզի ցոյց տայ, թէ ինչպէս էին ձոթի խանութները աղայ Մամմադ խանի ժամանակ: Կամարակապ թաղբանդի[72] յատակը ծածկուած էր գորգերով: Գունագեղ կտորները դարսուած էին իրար վրայ՝ մինչև առաստաղը: Ինքը՝ Մանգասար դային, նստում էր գորգի վրայ՝ մի ծունկը ցցած... Գալիս էր մի մուշտարի, նստում էր նրա կողքին, և նրանք զրուցում էին: Ապա մուշ-տարին հարցնում էր դանաւուզ[73] արխալուղացուի գինը: Մանգասար դային չէր շտապում.

– Կու տամ է՛, կու տամ տանես... Վերջին թօփն է, տար հագի: Մանգասար դային որ մեռնի, էլ պրծաւ դանաւուզը, թռա՛ւ թիրմահին[74] , – և զրոյցը շարունակում էին:

Այդ հին շուկայում կային և մի քանի խանութներ, որոնք ցուցանակ ունէին, ինչպէս իսկական շուկայի խանութները, բայց ներսը դարակները դատարկ էին, եթէ չհաշուենք ճրագի եօթանոց ապակիները ծղօտների մէջ, դազանի սապոն, մի երկու կապ պարան և այդ ամէնը թանձր փոշու մէջ, որ նշան էր, թէ այդ ապրանքներին վաղուց ձեռք չէին տուել: Բայց խանութները ցուցանակ ունէին, նրանցից մէկի վրայ ռուսերէն գրուած էր՝ «Մանրուքի խանութ թէյ շաքար Ակոբ Ապինցև» և ինքը՝ Ափունց Ակու ամին առաւօտ կանուխ խանութը բաց էր անում, ինչպէս միւսները, բարի լոյս էր տալիս հարևաններին և անցնում դախլի[75] գլուխը, ինչպէս միւս խանութպանները:

---

[72] թաղբանդ – կոր առաստաղով սրահ

[73] դանաւուզ – մետաքս

[74] թիրմահի – ձոթ, կտոր, գործուածք

[75] դախլ – վաճառասեղան

Ափունց Ակու ամին վաղուց էր մոռացել ղազանի սապոնի ու ձրագի եօթանոց ապակիների առքի գինը: Նա ապրում էր այն նամակներով և ծանրոցներով, որ օտարութեան տեղից հայրենիք էին ուղարկում ձորկեցիները: Իւրաքանչիւր փոստի Ակու ամին իր դրացուն խնդրում էր «աչքը խանութի վրայ պահել», ինչպէս առաջ, երբ Ակու ամին գնում էր խօջայ Բաղիրի մաղազայում մազանդա[76] իմանալու... Ակու ամին գնում էր փոստը և ստանում նամակների և դրամական ծանուցագրերի մի կապ, ապա վերադառնում էր խանութը և աչքի էր անցկացնում հասցէները. «Գորիս քաղաք մանրուքի խանութ Ակոբ Ապինցևին» ռուսերէն և տակը՝ ծրարի վրայ, հայերէն՝ «Ակու դայի նամակս շուտ հասցնես մեր գիւղը իմ հայր Առաքել Գիչունցին» («Երևի խեղճի ականջով դիպել է Առաքելի մեռնելը», – ասում էր Ակու ամին, վերցնելով մի ուրիշ ծրար): «Նամակս հասնի ի ձեռն Վարդազարի Տէրակուփին ի գիւղն Ձորեկ» («Երեկ հէնց Վարդազարն էստեղ էր...»): «Շատ բարևս կը յիշեմ քեզ Ակու ամի» և ուրիշ ոչինչ, բայց Ակու ամին ձեռագրից ճանաչում էր, որ գրողը որբևայրի Հերիքնազի փոքր տղան է:

Ակու ամին ստանում էր նամակները, դրամը, ծանրոցները: Ձորկեցիները գալիս էին և առնում իրենց նամակները, դրամը և ծանրոցները: Ակու ամին գիտէր, թէ որ ձորկեցին է գրագէտ: Եւ նամակների մեծ մասն հէնց այդտեղ էլ կարդում էր Ակու ամին՝ միալար ձայնով և միայն, երբ դժբախտ լուր էր, նա ցամաք հազում էր և ակնոցի վրայից նայելով նամակատիրոջ գունաթափ երեսին, կարդում էր. «որ իմանաս, ապէր, մեր Անդրէասի աջ կուռը մնաց չարխի տակ, և նա լազարեթում պառկած է...»:

– Էս լաւ է, որ լազարեթում պառկած է,– ընդհատում էր

[76] մազանդայ – ապրանքի շուկայական գին

Ակու ամին, – ուրեմն փորձանքն անցել է, որ լազարեթում պառկած է, – և շարունակում էր ընթերցել. «Շատ բարև մեծ քեռակնոջ, Աւանին և երեխաներին և շատ բարևս նմանապէս Աւետիսին, Ոսկանին և Ասար բիբուն ասա Կաքաւ աղբիւրը դեռ միտս է և նաև բարի կամեցողաց...»:

– Ձմ՛ն որդի, – ասում էր նամակատէրը, անյայտ է նրա համար, որ տղան դեռևս կարօտում է գիւղի Կաքաւ աղբիւրը, թէ՞ նրա՝ որ «մեր Անդրէասի աջ կուռը մնաց չարխի տակ...»:

Ափունց Ակու ամին ստանում էր ձորկեցիների նամակները, հարևանը՝ ցաքուտեցիների, նրա հարևանը՝ Բադամ Բախշին, ստանում էր նորուեցիների նամակները... Այդ խանութներում նամակները կարդում էին, ուրախանում էին, եթէ լուրը բարի էր, դժբախտութեան դէպքում մխիթարում էին, և բոլոր դէպքերում նամակների պատասխանն ինքը՝ Ակու ամին գրում էր ձորկեցիների համար, հարևանը՝ ցաքուտեցիների և Բադամ Բախշին՝ նորուեցիների համար:

Ի՞նչ վարձ էին ստանում նրանք, յայտնի չէր: Միայն յայտնի էր, որ Ակու ամին, նրա հարևանը և Բադամ Բախշին երբեմն տասը-տասնհինգ օր, նոյնիսկ մի ամիս ժամանակով ինչ-որ գումարնէր շահով տալիս էին միւս մանրավաճառներին, և նրանք ճիշտ ժամանակին վերադարձնում էին ձեռաց փոխ առած գումարը: Երբեմն էլ, երբ գիւղից Բաքու կամ Անդրկասպեան երկիր ուղարկում էին մի ծանրոց, մէջը չորաթան, ձաւար, փոխինձ, բրդէ գուլպայ, ուղարկողը մի թաշկինակ ձաւար կամ մի տասնեակ ձու բերում էր Ակու Ամուն, ասելով.

– Էս էլ քո բաժինը, Ակու ամի... Քոյրդ խնդրեց երեխայի հասցէն լաւ գրես...

Այսպէս էր այն հին շուկան՝ նաւթի ամբարներից մինչև Նազար բէյի տունը, որ արդէն դարձել էր Գորիսի իսկական

շուկայի արհամարհուած ծայրը, որտեղ դեռ բուրում էր հին Կեօրեսը և Շէնը՝ նրա մեռնող միջնաբերդը...

5

Այլ էր իսկական շուկան՝ Գորիսի սիրտը:

Նազար բէյի տնից մինչև դաւթարխանան, այնտեղից ուղիղ գծով մինչև Մաթևոս բէյի տունը, ապա մինչև դրուժինայի զօրանոցը և հայոց եկեղեցին, մի կատարեալ քաղաք էր, փոքր Մոսկուա, ինչպէս ասել էր քաղաքագլուխը մի խնջոյքի, Այսրկովկասի Հայդելբերգը, ըստ բժիշկ Տիկրան Պետոիչի («բժիշկ Տիկուշ»), որը նոյնպէս քաղաքի զարդն էր, ինչպէս «Սասուն» տպարանը, լիմոնադի գործարանը, ինչպէս Սպիտակ բանտը և ռուսաց եկեղեցին:

Այդպէս էին քաղաքի հռչակաւոր վաճառատները, ինչպէս, օրինակ՝ Կիզիրինի մագազինը («Նադեժդա»), ֆրանսիական ապրանքների մագազինը, «Դրուժբայ» ընկերութիւնը, Աւագիմովների վաճառատունը և Պասաժը՝ նորագոյն շուկան, ակնեղէնի և գոհարեղէնի խանութներով: Իրար ետևից ձգւում էին հարիւրաւոր խանութներ միայն ռուսական մանուֆակտուրայի, ապա գալիս էին մանրուքի խանութներ, այնպէս ճոխ զարդարուած, որ մինչև անգամ խանութի դռներից կախուած էին ժանեակներ, մետաքս թել, գոյնզգոյն երիզներ և ուլունքներ՝ այնքան առատ, որ խանութի դուռը չէր երևում: Շատ խանութների առաջ, հէնց հրապարակում դարսուած էին ապրանքի հակերը, որովհետև խանութները լիքն էին, և լիքն էին պահեստները... Շուկայի բազմութիւնը խռնւում էր հարուստ խանութների առաջ, մոլորւում էին անցքերի լաբիրինթի մէջ, գնում էին հակերի կամարների տակով և յանկարծ դէմ էին առնում աւելի շքեղ խանութի:

Մի խանութի առաջ ռուսական ալիւրի բուրգեր են՝ այնքան

բարձր, որ խանութից երևում է միայն գաւառապետի դիւանի վերին յարկը: Բուրգերի շուրջը խռնուած մարդիկ մրջիւնի մեծութեան և մրջիւնի պէս կրում են ալիւրը, որ թէև մի քիչ կծուած է, բայց Ամբարի կատու Սողոմոնը՝ Աւագիմովների աւագ եղբայրը, երդւում է, որ ֆուրգոնները ջուրն են ընկել, և ալիւրը մի քիչ խոնաւացել է, «թէ չէ ալիւրն իսկական Կուբան է և սա մեռնի, եթէ վնասով չեմ ծախում»... Ամբարի կատուն ասում է «սա մեռնի» և ձեռքը խփում է մսոտ այտին: Նա երդւում է, ըստ սովորութեան, ինչպէս բոլոր վաճառականները, թէև կարող է չերդուել, որովհետև գիտի, որ Սիսիանի, Տաթևի և Գորիսի մահալներում արտերը խանձուել են, և հաց չկայ: Ամբարի կատուն այդ շատ լաւ գիտէ, ինչպէս և լաւ գիտէ, որ իւրաքանչիւր փութի մէջ ունի երեսուն կոպեկ մաքուր շահ: Նրա գործակատարները կշռում են, վաճառում են, իսկ ինքը դախլի գլխին՝ առաւօտից մինչև երեկոյ մատները խաղացնում է փողի մէջ:

– Քեզ թաղեմ, խնամի, եթէ մի քոռ կոպեկ օգուտ ունեմ էս գործում... իմ օգուտս այ էն առաջին տեսակ ալիւրի մէջ է, որ չեն առնում, – խօսք է ասում մի մարդու, որն ուզում է խնամի Սողոմոնին առանձին տեսնել և ալիւրը ապառիկ խնդրել: Ամբարի կատուն վաղուց է նկատել այդ, բայց ուշացնում է առանձին խօսելը և խօսում է նրանց հետ, որոնք դմակով[77] են: Նա ե՛ւ դրամ է ընդունում, ե՛ւ հաշւում է, ե՛ւ խօսում է յաճախորդի հետ:

– Չե՞ս երևում, դայօղլի[78] ... վեց աբասի, վե՛ց աբասի երկու մանէթ, վեց աբասի, էս էլ մի վեց աբասի: Կնունքն էլ մենակ կերար... վեց աբասի... Ա՜յ բարով, հազար բարի... – և Ամբարի կատուն ձեռքը մեկնում է զեյուեցի Իսաջանին, – որ սա էլ է եկել՝

[77] դմակով – փխբ.՝ հարուստ

[78] դայօղլի – քեռու տղայ

ուրեմն Ղափանի մահալում էլ հաց չկայ, – և գործակատարին կարգադրում է, տաբուրետ[79] տուր Իսաջանին... Ո՞նց ես, քէֆ, հալ... Վեց աբասի, վեց աբասի...

Իսաջանը դեռ անտարբեր նայում է դախլի առաջ հաւաքուած մարդկանց, որոնք վճարում են ով երկու փութի, ով երեք, ով նոյնիսկ մի փութի գին:

– Դու ես պահում էս հացապակաս ժողովրդին... Օրհնեալ լինես, Սողոմոն... – Ամբարի կատուն ժպտում է:

– Կարո՞ղ եմ չպահեմ, Իսաջան... Շան չարչարանք եմ քաշել, մինչի Արմաւիրից ալիւրը բերել եմ... Տալի՞ս են որ: Չեն տալիս, ասում են չկայ: Էնտեղ էլ պինդ սով է: Բայց ի՞նչ արած. որին խնդրելով, որին տեսնելով, մի կերպ հասցրել եմ էստեղ, թէ ինչ է բարեկամներս կուշտ մնան: Էն կանաչ մեռոնը վկայ, որ վնասով եմ ծախում:

Աւագ գործակատարը քթի տակ ժպտում է: Միայն նա գիտէ, որ Աւագիմովները ալիւրը Կուբանից չեն բերել, այլ Շուշի քաղաքից և ջրի գնով գնել են կայազօրի համբարակից[80], որը զօրքի համար ստացել է նոր ալիւր... Միայն գործակատարը գիտէ և քթի տակ ժպտում է:

Մանուֆակտուրայի խանութներից ելնում է լաստիկի, սատինի և գունաւոր չիթերի բոյր: Ներսում յատակը, դիմացի պատը և երկար զաստոյկան պատած են հաստ գորգերով: Դրանից է, որ այդ խանութներում ձայները խլանում են և նոյնիսկ լեռնցի մարդիկ շշնջում են, ինչպէս մեռելատանը: Գորգերի վրայ փափուկ աղմուկով փռում են կտորների հակերը, ապա մի թոփի ծայրից բռնելով ծաղկաւոր շալը ծալ–ծալ նստում է, և գոյները ծփում են: Լսւում է մկրատի զնգոց. «Շնորհաւոր լինի, բարով մաշես...», և ուրիշ անկիւնից

[79] տաբուրետ – աթոռ՝ առանց թիկնակի

[80] համբարակ – համբար, ամբար–պահեստ, շտեմարան

է լաւում խուլ աղմուկը, չթի կտորի ծաղիկները մարմանդ փայլում են, և նորից է ծփում գոյների ծովը:

Ներսը կիսամութ է: Արևի լոյսը մինչև խորքը չի հասնում. խորքում կապոյտ ցոլքով վառւում է մի ճրագ, որից աւելի խորունկ է թւում ճոթի մաղազան: Այնտեղ ինչ-որ դռնակ բացւում ու փակւում է: Ձայներն իջնում են գետնի տակ, ձայները կորչում են և ապա նորից բարձրանում են խորքից: Մաղազաների տակ խորունկ պահեստներ են, որտեղ գիշեր-ցերեկ մութ է: Ի՞նչ գանձեր կան այնտեղ... Ահա հեռու անկիւնից, որտեղ կապոյտ ցոլքով վառւում է ճրագը, դէպի դուռն է գալիս գործակատարը, ուսին կտորների հակեր: Ցաճախորդներին այնպէս է թւում, թէ գետնի տակ մաղազայի չափ տասը մաղազայ կայ՝ խորունկ, շատ խորունկ, որտեղ զառ-ատլասները մթնում լոյս են տալիս, ինչպէս ոսկու շեղջեր: Ջրընգ-զրընգ ոսկին և արծաթը և պղինձը կաթկթում են դրամարկղի մէջ, թղթադրամը խշխշում է, ինչպէս ծաղկաւոր չիթը:

– Դրէի չորս չարէք... իսկական Ցինդելի՝ արջանշան: Սրանից լաւ վերմակի երես կը լինի: Ուզու՞մ ես բութայ-մախմուր տամ, – և բաց է անում թաւիշը՝ կանաչ-ոսկեգոյն, նշաձև պուտերով: Մի այլ գործակատար ձեռքին խաղացնում է պարսկական թաշկինակների փունջը: Ինչպէ՞ս են խշխշում, ի՞նչ նախշ, ի՞նչ բոյր: Մի յաճախորդ, որ հարսանիք ունի, գնել է, ինչ որ տանը պատուիրել են և դեռևս նայում է դարակներին՝ չի՞ մոռացել ոչինչ, իր պառաւ մօր համար արդեօք չգնի՞ այն սև շալը, թէ՞ մայրը հին շալը մինչև մահ հագիւ մաշի...

Գործակատարի աչքից վրիպում է նրա տարակուսանքը: Եւ ահա փափուկ քայլերով մօտենում է ինքը՝ մաղազայի տէրը, անուանի խօջայ Մակիչը: Նա բրդի նախշուն գուլպաներով է, ինչպէս տանը, քայլում է՝ ասես ման է գալիս իր պարտէզում:

– Անխիղճ, էսքան ապրանք որ ծախել ես, ինչու՞ մի վարդ թաշկինակ չես նուիրել, – գործակատարին յանդիմանում է խօջան: Ցաճախորդները հետ են քաշւում: Խօջայ Մակիչը գործակատարի ձեռքից խլում է թաշկինակների փունջը:

– Էս էլ իմ խալաթը[81] ... Ուրախ ժամի լինի, – և նա, որ հարսանիքի համար ամէն ինչ գնել էր, ընդունում է նուէրը, խօջայ Մակիչին և նրա ձեռոտի[82] մարդկանց հրաւիրում է հարսանիքի, – պառաւ մօր համար գնում է սև շալը, նաև ուրիշ ապրանք՝ խօջայ Մակիչի նիսիայի դաւթարում իր անուան դիմաց թողնելով մի թեթև պարտք:

– Հազար անգամ ասել եմ, մի թողնէք մուշտարին դատարկ ձեռքով խանութից գնայ, – խօջայ Մակիչն ինքն է անցնում զաստոյկայի ետևը, իսկ մուշտարին, որ արդէն մօտեցել էր դռանը, ետ է վերադառնում:

– Առքի գնից էլ պակաս տուր, միայն դատարկ ձեռքով մի թողնի գնայ... Մեզ համար է ամօթ: Գինը քանի՞ ես ասել...

– Գեազը[83] վեց շայի, – վախեցած պատասխանում է գործակատարը:

– Բա սրա գինը վեց շայի է՞, որ ասել ես, – խօջայ Մակիչը զայրանում է, որ գործակատարը գեազն ութ շահանոց մահուդուարի ռեբենակը[84] առաջարկել է վեց շայի:

– Սխալմունք է, կը պատահի, Մակիչ ապեր, – այն կողմից միջնորդում է աւագ գործակատարը:

Իսկ նա, որ այդ գնից դժգոհ գնում էր ուրիշ խանութ, արդէն տնտղում է կտորը:

---

[81] խալաթ – այստեղ՝ նուէր

[82] ձեռոտի – ձեռը, ոտքը տեղը, աշխատանքի ընդունակ, այստեղ՝ աշխատող

[83] գեազ, գազ – երկարութեան պարսկական չափ = 112 սմ

[84] ռեբենակ – կտորի տեսակ

– Սա խալիս[85] մահուդուարի է, քո իմացած թանձիֆը չի: Դէ, որ բերանից դուրս է թռել վեց շայի, թող վեց շայի լինի: Էդ էլ քո բախտը: Ես կը համարեմ, թէ ջէբիցս փող եմ կորցրել. քանի՞ գեազ կտրեմ:

– Կտրի ինը գեազ...

Խօջայ Մակիչը գեազը շուլալում է կտորի մէջ, ծալ-ծալ թափւում է կարմիր հալաւացուն: Ապա խօջան վերադառնում է մաղազայի խորքը, որտեղ մարմանդ ցոլք է տալիս կապոյտ ճրագը:

Իսկ ի՞նչ է կատարւում արհեստաւորների խանութների առաջ և խանութների մէջ... Կարծես լեռներից մի ամբողջ զօրաբանակ է իջել՝ բոբիկ, մերկ և առանց գլխարկի, և մի օրում հարկաւոր է այդ բանակը հագցնել:

Ահա թափուել են դերձակների խանութների վրայ: Քսան-երեսուն կարած արխալուղ է դուրս հանել Դարզի Հանեսը. «Պա՜հ-պա՜հ-պա՜հ... Եղար խանի տղայ», – կանչում է դերձակը՝ արխալուղը հագցնելով մի լեռնցու: Իսկ նա զմայլուած կանգնել է, և շողում են նրա առողջ ատամները: «Իսկը քեզ վրայ է կարած...»: Լեռնցին թևերը չի շարժում ու թէև թևերի տակ սեղմում է, բայց արխալուղն այլևս ուսերից չի հանում, այլ ուզում է այդպէս՝ իբրև խանի որդի երևալ հայրենի լեռներում:

Մի ուրիշ տեղ Չաքմաչի[86] վեսկանը նստեցրել է մի թուրք սարուորի, և երկու հոգով նրա ոտքին են քաշում սապոգը. «Հը՛...», – և երկուսով տնքում են, տնքալով քաշում են: «Մնաւ հա՛, մնաւ... Մատներդ մէջը խաղացրու՛, խաղացրու՛...», և նորից են քաշում, զօռով հագցնում են, և ահա սարուորը զարմացած նայում է, թէ ու՞ր կորան ոտները:

---

[85] խալիս – զուտ

[86] չաքմաչի – երկարաճիտ կօշիկ կարող

«Մի քիչ ման գաս կը բացուի», – քրտինքը սրբելով ասում է Չաքմաչի Վէսկանը, մի ուրիշին նստեցնելով:

– Վէսկան քիրուայ, ա՜յ Վէսկան քիրուայ, – ներս է մտնում մի վիթխարի հովիւ, ետևից շունը, – կօշիկ կը կարե՞ս...

– Կարեմ, կարեմ... Մատներդ մէջը խաղացրո՛ւ, խաղացրո՛ւ, – և Չաքմաչի Վէսկանը քաշում է ութերորդ զոյգը, – կարեմ, կարեմ...

– Համա մի քիչ ճըռճըռ կը դնես տակը:

Ճռճռան կօշիկն առանձնապէս յարգի էր սարուորների մօտ: Նրանք սիրում էին, երբ կօշիկը ձայն էր հանում, և հովիւը, որ շունն ետևից մտել է խանութ, այդ է խնդրում:

– Էդ մի քիչ դժուար է:

– Ինչի՞ է դժուար, չաքմաչի քիրուայ:

– Դրա համար հարկաւոր է քսան ձու, մի գրուանքայ իւղ... – և հովիւը բերում է քսան ձու և մի գրուանքայ իւղ:

– Հիմա կը լինի՞:

– Հիմա որ կը լինի... Երեք օրից կօշիկներդ պատրաստ են: Էնպէս ճըռճըռ դնեմ մէջը, որ մինչի Ղարաբաղ ձայնը լսուի, – և հովիւը, ոտքի չափը թողած, գնում է: Իսկ Չաքմաչի Վէսկանը աշակերտներից մէկին պատուիրում է «մի լաւ ձուածեղ քսան ձուից»: Հովուի բերած ձուերը և իւղն ուտում են, ապա կօշկակար վարպետը դանակով կտրատում է մի բարակ կաշի, թաթախում կեղտոտ նաւթի մէջ և շպրտում աշակերտին.

– Էս կը դնես էն հայուանի կօշիկի տակ: Էնպէս ճռճռայ որ...

Մայր հրապարակում ուրիշ առևտուր է: Սարերից և գիւղերից քշած բերել են հազարաւոր ոչխար, կով, ձի, եզ: Չոդառները[87] գործի են: Նրանք մօտենում են ոչխարի հօտին, ձեռքով տրորում են ոչխարի մէջքը և կողքը, մի ակնթարթում

[87] չոդառ – անասուն առնող ծախող

հաշւում են հոտը և հարցնում են. «Յիսուն ոչխարին ինչ տամ»... Միջնորդները, որոնց ձեռքով են առնում և վաճառում անասունները, իսկոյն մօտենում են:

– Աստուած բարի տա, – և իրար են միացնում չոդառի և ոչխարատիրոջ ձեռքը:

– Հատին չորս մանէթ, որը հաւանեմ:

– Հատին հինգ մանէթ:

– Լաւ գին է, ես իմ աստուած: Առաւօտեան Հաջի Բաղիրը ծախեց չորս մանէթով:

– Չորս մանէթ մի աբասի:

– Աստուած բարի տայ, – և միջնորդը համարեայ զօռով իրար է միացնում նրանց ձեռքերը և բղաւում է.

– Չորս մանէթ երկու աբասով յիսունը ջոկիր:

Կանչ, աղմուկ, շների կլանչոց: Հովուական շները, որոնք ոչխարի հետ սարից իջել են, անհանգիստ են, երբ օտար մարդիկ քշում են ոչխարը, և տէրը նրանց չի կանչում՝ «Չամբար քու՛ս, Ալաբաշ, հասի», – այլ բարկանում է շների վրայ և նոյնիսկ նրանց վրայ մահակ է բարձրացնում: Շները լռում են և գլուխը կախ միտք են անում, թէ ինչ կատարուեց, որ տէրը իրենց վրայ մահակ բարձրացրեց, այնինչ ուրիշները ոչխարը քշեցին:

Մի այլ անկիւնում ձիերը վրնջում են, և նրանց հետ զիլ և արծաթահնչիւն վրնջում են քուռակները... Շո՞գ է, ծարա՞ւ են, նրանց ճնշում է բազմութեան աղմո՞ւկը, անհանգի՞ստ են այն խորթ ձեռքերից, որ ահա քանի անգամ բաց արին ձիու բերանը, թէ՞ նրանք կարօտել են լեռնային արօտները, որտեղ փռփռում է խոտը, և ոչ սանձ կար, ոչ այսքան մարդ:

Հրապարակում կլանչում է մի շուն, կով է բառաչում, մարդիկ բարձրագոչ աղաղակում են հայերէն, թուրքերէն, ժխորը հետզհետէ սաստկանում է, ժխորը հասնում է մինչև

Մեղրաքերծ, և ժխորին խառնւում է զինուորական փողը, որ հնչում է զօրանոցի կողմից... Երբեմն յանկարծ լռում են, ինչպէս ճնճղուկների երամը, երբ գետնի երեսով անցնում է անգղի ստուերը: Ձիաւոր ոստիկանների գլուխն անցած, հրապարակը ճեղքելով սլանում է գաւառային պահակախմբի պետ Աւթանդիլ Խուրշուդ բէյը... Աւազակները սարից նախիր են քշել, մարդ են սպանել, յարձակուել են փոստի վրայ, թէ՞ ուրիշ դէպք է եղել՝ դեռ ոչ ոք չգիտէ, և ժողովուրդը ճանապարհ է տալիս. «Խուրշուդ բէյը Բարկուշատ գնաց», ասում են իրար և բոլորը հասկանում են, որ այն կողմերում «բան կայ»...

Երբեմն շուկայի հրապարակով անցնում էր Պենզայի 686-րդ դրուժինայի ջոկատը՝ թմբուկի սուր կտկտոցով, բահերի ու զէնքերի զրնգոցով... Առջևից գնում էր երիտասարդ սպան, որ դիտմամբ ծռել էր ճանապարհը, որովհետև ձանձրալի էր անցնել Գորիս քաղաքի խուլ փողոցներով:

Ջոկատը վերադառնում էր զինուորական վարժութիւնից կամ երևում էր բանտարկեալների խումբը գորշ խալաթներով՝ ոտներին շղթայ (նրանց տանում էին հող փորելու) կամ սլանում էր Աւթանդիլ Խուրշուդ բէյը՝ ետևից ձիաւորները, հրապարակում աղմուկը դադարում էր, ինչպէս ճնճղուկների ծվծվոցը, երբ գետնի երեսով անցնում է անգղի ահարկու ստուերը:

Այդ ժխորից՝ մարդկանց և անասունների կանչերից ազատ էր Պասաժը[88]: Այնտեղ ազնիւ լռութիւն էր: Այնտեղ ամէն ինչ ազնուացեղ էր և առաջին պրոբի: Ակնեղէնի և գոհարեղէնի խանութների կողքին կային խմիչքի և նպարեղէնի մեծ խանութներ, որտեղ չէին վաճառում ոչ տեղական գինի և ոչ

[88] պասաժ – երկու կողմերից վաճառասեղաններ ունեցող ծածկուած շինութիւն

տեղական ձուկ, այլ վաճառում էին ֆրանսիական լիկեօրներ, Հաւանայի սիգար, Հռենոսի գինի և այսպիսի կոլոնիալ ապրանքներ, որոնց գնորդները բէյերն էին և չինովնիկ մեծամեծերը, նաև ռուս քահանան, որի մասին ժամիար Պարսեղը լուր էր տարածել, թէ նա եփած խխունջ է ուտում:

Երբեմն մի լեռնցի կամ քոչուոր մի թուրք մոլորուած մտնում էր այդ խանութներից մէկնումէկը, օրինակ, Կուրդը բեժայ, որ Պասաժի հարուստ խանութներից էր. «Բաշլըղ[89]ունի՞ս, քիրուայ», և հովիւը շշմած նայում էր շողշողուն դարակներին: «Ա՜յ, էնտեղ կայ...», Կուր դը բեժայից ցոյց էին տալիս ժամագործ Սանդրոյի խանութը: «Էնտեղ լաւ բաշլըղ կայ, լաւ ծամոն կայ, էշի փալան էլ կայ...»:

Պասաժի վաճառականները բուխարայ փափախ չէին ծածկում, ինչպէս բուն շուկայի առևտրականները, որոնց ժողովուրդը վաղեմի սովորութեամբ անուանում էր խօջայ: Պասաժում մահուդ չուխայ չէին հագնում, այլ կոստիւմ և ծածկում էին շլեապա, իսկ Եփրատ Երեմը խանութ էր մտնում սպիտակ ձեռնոցներով և այնպէս անթերի հագնուած, որ Լիւդմիլա Լովնան՝ գաւառային նոտարի կինը, ամուսնուն յանդիմանում էր, օրինակ բերելով Եփրատ Երեմին: Պասաժում ամէն ինչ ազնիւ էր և ազնուացեղ. այնտեղ ռուսերէն էին խօսում, և նոյնիսկ Հայոց կոնսիստորիայի[90] քարտուղարը, որ ռուսերէն չգիտէր, Պասաժի կողքով անցնելիս խօսում էր այդ լեզուով:

Երբեմն խօջաներից մէկն այցելում էր Պասաժի խանութը, որի տէրը նրա որդին էր՝ նոր վաճառականը, հին վաճառատան ոսկէ ձիւղը: Խօջան նստում էր... վենսկի աթոռի վրայ, որ նրան

---

[89] բաշլըղ – հաստ կտորից բրդի ծածկոց

[90] կոնսիստորիայ – թեմական հոգևոր մարմին՝ վարչական և դատական ֆունկցիաներով

մատուցում էր որդին. – «Ապեր, լիկեօր բաց անեմ...»: Ապերը լուռ նայում էր դարակներին՝ անյայտ, անծանօթ իրերին:

– Ա՛յ տղայ, էն զիզի-բիզի բաներն ի՞նչ են, – և խօջան մահակը մեկնում էր դէպի Ժորժ Բորմանի շոկոլադները:

– Ապեր, շոկոլադ են... Էս էլ Դէզի կանֆետ է, էս էլ Դուարժօղլու հալուայ է Ադեսից, – և որդին արծաթէ պատառաքաղով մեկնում էր մի կտոր Դուարժօղլու հալուայ:

– Հալուան ի՞նչ է, նրա տուած օգուտն ի՞նչ լինի, – ապերը վերադարձնում էր հալուայի կտորը. – ղանաւուզ կտոր լինէր, Իրանի զադաք լինէր հա՜... Կանփետ ծախելով մարդ չես դառնայ, ա՛յ որդի...

Բայց այդ խօսքին ներս էին մտնում Լիւդմիլա Լովնան և բժիշկ Տիկրան Պետոիչի կինը՝ Սառա Կասպարովնան, նաև մի փոքրիկ շնիկ՝ կապոյտ ժապաւէնով: Ապերը զարմացած նայում էր շնիկին:

– Փառքդ շատ, աստուած... Սա էլ կ՚ասի, որ շուն է և շան ազգից է... – Շնիկն սկսում էր հոտոտել կոնֆետի թղթերը՝ վազվզելով խանութում, ապա հաչում էր մի տղայի վրայ, որ դրսից պատուհանով ո՞վ գիտի ինչու նայում էր խանութին:

– Պուշոկ, նէ սմե՛յ Պուշոկ... Երեմ Նիկիտիչ, խաւիարը հիանալի էր...

Խօջան զարմացած նայում էր տիկիններին, նրանք բուրում էին ինչպէս խանութը, և նրանցից իւրաքանչիւրը մի ոսկեզառ կոնֆետ էր: – «Երեմ Նիկիտիչ...», և խօջան ինքն իրեն մի քանի անգամ կրկնում էր. «Ուրեմն խօջայ Մակիչը, Մուգումին Մկրտիչը դառաւ Նիկիտ... Քեզ փա՛ռք աստուած...»: Եւ աթոռի վրայ խօջան նստում էր, ու նրան օրօրում էին կանանց և իւր որդու կչկչան ձայները:

Այդպէս էր Պասաժը, Գորիսի բուն շուկայի ոսկէ զարդը:

Բայց և այնպէս նա բուն շուկայի ճիւղն էր, ինչպէս հին

շուկան՝ ներկարարների, համետ կարողների և պայտարների գետնայարկ խանութներով հին շուկան արմատն էր, արդէն զառամեալ արմատը, որ այնուամենայնիւ կապուած էր բունի հետ: Եւ այսպիսով, նաւթի պահեստներից մինչև Մաթևոս բէյի տունը, այնտեղից դրուժինայի զօրանոցը և հայոց եկեղեցին՝ մի ամբողջութիւն էր, մի ամբողջական շուկայ, որ կենտրոնն էր Գորիս քաղաքի և կենտրոնն էր Զանգեզուր ընդարձակ գաւառի՝ Սևանայ լճից հարաւ, մինչև Արաքս:

6

Բացւում է առաւօտը:

Զորերի մթնում հազիւ է նշմարւում Շէնը: Բարակ ծուխը խառնուել է գիշերուայ մշուշին, և չեն երևում ոչ քարափոր տները, ոչ Կեօրեսի հին եկեղեցին, այլ միայն նշմարւում են ժայռերի կատարները մշուշի մէջ: Իսկ քաղաքում արև է... Տների թիթեղեայ կտուրները ցոլցլում են, գոյացնելով կաթնագոյն լոյսի ծով, որի մէջ, ինչպէս դեղին իւղագունդ, լողում է ռուսաց եկեղեցու ոսկէ գմբէթը:

Հետզհետէ զարթնում է Գորիսը:

Մնավաճառներն առաջինն են բացում խանութները: Ահագին կեռերից գլխիվայր կախուած են եզներ և ոչխարներ, որոնք դեռ երեկ մայում էին: Արևն ընկնում է նրանց կարմիր մսերին, և ահագին դմակները, ինչպէս պղնձէ վահաններ, արևից ցոլքը նետում են դեռ քնած տների վրայ: Խանութի յատակին ընկած են եզների գլուխներ՝ վիթխարի եղջիւրներով: Մէկի շնչափողից կաթկթել է արիւնը: Մի ոչխարի գլուխ՝ սառած աչքերով զարմացած նայում է արևին: Եզան կաղակի մէջ դեռ կանաչ է խնձորախոտի տերևը:

Ահա գալիս են առաջին գնորդները, որոնք միս չեն առնում, այլ փորոտիք, աղիքներ, ոտքեր և գլուխ: Շուկայի

պահակ Կէտանը խսիրի մէջ փաթաթում է մի գլուխ և ութ ոտք: Մնավաճառ Պետրուսը նրանից դրամ չի վերցնում, այլ միայն Կէտանին պատուիրում է ցերեկով իրենց այգին ջրել: Գալիս է խարչևնի[91] պահող Թևաթորոսը, որի ճաշարանում երկու կոպեկի «կէս պորցի» բոզբաշ են ուտում Ամիր Աստանը, սալդաթ Երանոսը, Ճոլուն Կևին, Քեաթառան, քարահունջեցի Ճաղար Պետին և այս կարգի մարդիկ, որոնք գիշերում էին կիսաւերակ քարանձաւներում, խոտի դէզերի մէջ և բուլուարի ցանկապատի տակ: Գալիս է Թևաթորոսը և իւր ճաշարանի համար շալակած տանում է ճարպի կտորներ, աղիք և եզան գլուխ:

Մնավաճառների խանութների առաջ գլխահակ շրջում են շները, որոնք դեռ գիշերն են զգացել թարմ մսի հոտ և անհանգիստ խլրտացել են մսի խանութների շուրջը: Շները գլուխը կախ ման են գալիս, կարծես նրանք ինչ-որ լուրջ բանի են, ինչպէս Սպիտակ բանտի պահապանները, որոնք գիշեր-ցերեկ պարիսպների վրայ գնում գալիս են: Շներից ոչ մէկը չի յանդգնում մօտենալ մսի խանութներին: Շները հին են, ինչպէս Գորիսում հին է «դաւթարխանան»: Նրանք սեփական կողերի վրայ փորձել են, որ եթէ մօտենան մսավաճառների խանութներին, ղասաբ Պետրուսը կարող է նրանց գլխով զարկել տասը գրուանքանոց կշռաքարը, քիթը մեծ Իւանը կը շպրտի մեծ դանակը, իսկ Դանգայ-Բուռուն Ասրին իր երկար ոտքով շանն այնպէս կը խփի, որ շունը երեք անգամ օդի մէջ կպտտուի և այլևս երբեք չի պտտուի: Շներն այդ լաւ գիտեն և դրա համար հեռու են շրջում և կամ չեն շրջում, այլ սովից լիզում են իրենց ոտքը կամ կլափելով բերանը՝ ճանճ են որսում, այն ուռած ճանճերը, որ մինչև անգամ դաւթարխանայից առաւօտները հաւաքում են մսի խանութների վրայ... Միայն

[91] խարչևնի – ճաշարան

երկու շուն հեռուից հեռու, ինչպէս յուղարկաւոր, հետևում են խարչևնի Թևաթորոսին, որ տանում է եզան մորթած գլուխը:

Արևը հետզհետէ բարձրանում է, և արդէն երևում են առաջին միս առնողները: – Պետրուս ամի, մի լաւ կոլոլակացու կտրի, – ասում է բախկալ Այազը: Ահա եկաւ Փոշտի Անտոնը, որից յետոյ մէկ-մէկ երևում են մանր աստիճանաւորները: Շուկայում խանութներն իրար հետևից բացւում են: Առաւօտի ջինջ օդում լսւում են մետաղի սուր և անդուրեկան ձայներ: Այստեղ մի դուռ ծալեցին և կպցրին պատին, այնտեղ աղմուկով յետ քաշեցին երկաթէ կապը (և բոլորը գիտեն, որ խանութն աղմուկով բացողը մելոչնի Բախշին է), մի այլ տեղ զնգաց ցուցանակի թիթեղը, վերջապէս ահա Պասաժի խանութների դռներն էլ բացուեցին, բայց ոչ կողքի, այլ դէպի վեր, որովհետև նրանք հնարով են շինած և հնարով էլ զնգում են:

Արդէն միս, հաց և կանաչի է առել ռուս քահանայի աղախինը՝ քօծ Մառուսեան, որի և ռուս քահանայի մասին անառակ լուրեր էր տարածում տիրացու Պարսեղը՝ Տէր զի բազումի հաւատարիմ օգնականը, մոլեռանդ հաւատացեալ և խիստ ռուսատեաց: Արդէն միս, հաց և կանաչի են առել Մառուսեան, ստրաժնիկ[92] Վասիլի կինը, Պաչիստի Աւանեսը, կոնսիստորիայի ղալամդանը[93], Վաղարշակ բէյի ծառան, ֆայտօնչի Իրիշը, Չաքմաչի Վէսկանը կէս ոչխար է տարել, որովհետև երեկոյեան նշանդրէք կայ: Ահա հայոց ուսումնարանի վարժապետ պարուն Արշակը ևս երկու գրուանքայ միս առաւ և ոսկորից բռնած տուն է տանում՝ հետևից մի պառաւ շուն, որը ճանաչում է մսավաճառ Պետրուսի բոլոր յաճախորդներին, որոնց մէջ ամենաբարին պարուն Արշակն է:

---

[92] ստրաժնիկ – պահնորդ

[93] ղալամդան – գրագիր

Հայոց ուսումնարանի վարժապետ Արշակն էլ միս առաւ, և յանկարծ մսավաճառի խանութի առաջ ծանր-ծանր քայլերով երևաց ինքը՝ Ներսէս բէյը, ոչ այն Ներսէս բէյը, որ կոչւում է Խուրդայ կամ Կարճիկ Ներսէս բէյ և ծառայում է դատարանում և ոչ էլ այն Պրիստաւի կոչուած Ներսէս բէյը, այլ Հաստ Ներսէս բէյը՝ գաւառային վարչութեան սիւնը:

– Պետրուսը՞, – կանչում է Ներսէս բէյը և կէս բոպէ այլևս ոչինչ չի ասում:

Եւ կարիք չկար, որ ասէր: Նրա փոխարէն ասում էին նրա ուռած և արիւնով լցուած աչքերը, հաստ շրթունքը, որ կարծես չորրորդ կզակն էր, ձիւնափայլ բրիւկը և նոյնպէս ձիւնափայլ տիւժուրկան[94]՝ խնամքով արդուկած և կոճկած մինչև վերջին կոճակը: Հանդարտ ծփում էր նրա մարմինը, ինչպէս ահագին ժայռ, որ ցցուել է ծովի մէջ և շողշողում է արևից: Ներսէս բէյը ոչինչ չէր ասում և չէր նկատում այն մանր չինովնիկներին, որոնք նրա կողքից ահով են անցնում: Գարադաբուլդի Մուխանը, նա, որ գրպանները սիրում էր լցնել Օրդուբադի չիրով, արձանացել է և այդպէս մի շաբաթ արձանացած կը մնայ, եթէ Ներսէս բէյը հրամայի: Բայց Ներսէս բէյը ոչ մանր չինովնիկներին է նկատում, ոչ տեսնում է Մուխանի արձանը, այլ խոր հազում է՝ խռռալով և շատ խոր, Ներսէս բէյը դեռ հազում է «հարուստի հազով», իսկ մսավաճառ Պետրուսը բարձրացրել է սպիտակ քաթանը, որի ետև, միւս գնորդների աչքից հեռու, կախուած էին երկու ոչխար՝ ոսկեգոյն դմակներով:

– Դօլմացու ուղարկի, – և Ներսէս բէյը երեսը շրջում է դէպի դաւթարխանայի շէնքը՝ շուկայի դիմաց: Ներսէս բէյը գնաց, և գաւառային վարչութեան առաջ խռնուած ժողովուրդը պատկառանքով դեռ նոր է նրան ճանապարհ տուել, այնինչ

[94] տիւժուրկայ – տնային կամ տարազային բաճկոն

դօլմացուն արդէն նրա տանն է և գարադաբուլդի Մուխանը՝ քրտինքը սրբելով, խանումի՝ տիկին Վարսենիկի առաջ գովում է միսը:

Մնավաճառ Պետրուսը Հաստ Ներսէս բէյից ևս դրամ չէր առնում, ինչպէս շուկայի պահակ Կէտանից, որը ոչխարի մի գլխի և ութ ոտքի դիմաց ցերեկը պիտի ջրէր Պետրուսի այգին: Իսկ դօլմայի, կոլոլակի, բոզբաշի, յախնիի մսացուի դիմաց Հաստ Ներսէս բէյը տարուայ սկզբին, երբ բոլոր առևտրականները պատենտ էին առնում, հարկային տեսչին ի միջի այլոց ասում էր.

– Ինչ առևտրական է այդ Պետրուսը որ... խեղճ աղքատի մէկն է, սիրելի Նիկիֆոր Վասիլիչ, և դուք ինքներդ էք իմանում...

Ահա երևաց ինքը՝ քաղաքի հայրը, քաղաքագլուխ Մաթևոս բէյը, նրա ետևից կիսահամր–կիսախուլ Կիրին, որ քաղաքային այգու պահակն է, քաղաքային ինքնավարութեան (դումա) ծառան և միաժամանակ տիկին Օլինկայի սպասաւորը՝ ծանրութիւններ տեղափոխելու, գորգերը լուալու, Շոր աղբիւրից կժերով ջուր բերելու շաբաթ օրերը, երբ տիկին Օլինկան իբրև երեք լուացարարուհու կարգադրիչ, սկսում էր լուացքը... Այն ինչ էր կատարւում քեզ հետ, իմ հայրենի քաղաք: Այդ օրերին չէր կարելի անցնել ոչ միայն նրանց տան առաջով, այլ նոյնիսկ հարևան փողոցով չէր կարելի անցնել... Անհամար բարձերից միլիոն բմբուլ թռչում էր քաղաքի և տների վրայ, ինչպէս ուռենու սերմերը մայիսին: Բմբուլը թռչելով հասնում էր մինչև դատարանի շէնքը և նստում էր խեղճ գրագրի ունքերի վրայ: Եւ ամբողջ քաղաքը գիտէր, որ նրանց տանը լուացք կայ: Իսկ երբ բմբուլի ամպերն անցնում էին՝ բակը, ցանկապատը, նոյնիսկ փողոցի պատերը սպիտակում էին փռած լուացքից:

Մինչդեռ մենք զբաղուեցինք տիկին Օլինկայի լուացքով, արդէն շուկայ մտաւ քաղաքագլուխը և նրա անբաժան թիկնապահ Կիրին: Մաթևոս բէյը, մօտենալով մսավաճառների խանութին, միայն վերահասու է նրանց մաքրութեան: Նա գերադասում է մրգավաճառների խանութները, որոնց տէրերը, նրա անձնական թոյլտուութեամբ, գրաւել են նաև հրապարակի և մայթի մասը՝ ձմերուկի և սեխի դէզերով և խաղողի կողովներով: Խանութի ճակատից մինչև հրապարակը, որտեղ ձմերուկներն են, փռուած է հաստ կտաւ, մրգերն արևից պաշտպանելու համար: Այդ անուշահոտ բուրգերի և մրգավաճառի խանութների միջև ընկնում է մի նեղ անցք, այնքան նեղ, որ երկու մարդ կողք-կողքի դժուար են անցնում: Բայց հէնց այդ նեղ անցքն էլ քաղաքագլխի սիրած վայրն է ամբողջ քաղաքում:

Մաթևոս բէյը, նրա հետևից Կիրին շտապում էին ոչ թէ մսավաճառների մօտ, այլ անմահութեան այդ դրախտը: Առանց զմայլանքի չի կարելի նկարագրել այն տեսարանը, երբ Բիժօ Ակեալը՝ նշանաւոր մրգավաճառը, Մաթևոս բէյի քթին էր մօտեցնում դեղին կանաչ սեխը, որի վրայ դեռ մնում էր ցօղի մի քանի կաթիլ: Եւ Մաթևոս բէյը, որ ալեհեր էր, երեխայի նման հիանում էր, Բիժօ Ակեալի ձեռքից սեխն առնում և հոտոտում էր: Ապա այդ սեխը խանութպանն առանձնացնում ու բերում էր ձմերուկ, ինչ ձմերուկ... Իսկ Մաթևոս բէյն արդէն մտել է հարևան խանութը, որովհետև նրա աչքին են ընկել մուգ մանիշակագոյն սալորները: Եւ նա մանրամասն հարցնում է, թէ ու՞մ այգուցն է, արդեօք սառը մառանում կը դիմանա՞յ մինչև նոյեմբերի 4-ը (տիկին Օլինկայի ծննդեան օրը), կարելի՞ է մուրաբայ եփել այդ սալորից, այդ ֆենոմենալ շլորից, ինչպէս ասում էր Մաթևոս բէյը:

Օրուայ այն ժամն էր, որին ժողովուրդն կոչում էր դատաւորի

թէյի վախտ, այսինքն ժամը 11-ը անց էր, և դատաւորները դեռ նոր էին գնում դատարան, որի առաջ խոնուած սպասում էր հազար մարդ: Դատաւորի թէյի վախտն էր, բայց Մաթևոս բէյը դեռ չէր հասել մրգավաճառի վերջին խանութին: Հակառակի նման այդ խանութները շատ էին, բոլորը մի շարքի էին և կարծես դիտմամբ հաւաքուել էին հէնց դումայի շէնքի տակ, քաղաքագլխի ճանապարհի վրայ: Քաղաքում՝ դումայի մի քանի անդամներ, որոնք պրոգրեսիստ էին, բամբասում էին Մաթևոս բէյի այդ պակաս կողմը և պատրաստւում էին նոր ընտրութիւններին նրան սև քուէ տալ: Բայց այդ միայն բամբասանք էր, իսկ Գորիսում ու՞մ չէին բամբասում, մինչև անգամ նաւթավաճառ Գէորգուն էին բամբասում, թէ իբրև նաւթի պահեստը նա կառուցել է ջրաղացների առուի մօտ, որպէսզի... Ջարմանալի քաղաք էր Գորիսը:

7

Առաւօտից լսուող առանձին ձայները՝ մի անհանգիստ շան հաչոց, քաղաք մտնող նախիրի բառաչ, քարաւանների ղօղանջը, Ներսէս բէյի հազը, խանութների բացուող դռների աղմուկը, վերջապէս այն ձայները, որ հետզհետէ բարձրանում են դարբնոցներից և թիթեղագործների արհեստանոցներից, այդ ամէնը, դեռևս անախորժ աղմուկ են, նման այն աղմուկին, որ արձակում է նուագախումբը վարագոյրից առաջ: Բայց ահա դիրիժորը բարձրացնում է ձողիկը, և նուագախումբը ներդաշնակ հնչեցնում է բարդ սիմֆոնիան:

Այդպէս էլ ժամը 11-ից անց, երբ քաղաքագլուխն ստորագրում էր առաջին թուղթը, քաղաքի անկարգ ձայներն իրար յարմարելով սկսում էին ներդաշնակ հնչել, գոյացնելով մի քաղցրալուր նուագ: Պատահում էր, որ մի ձայն դուրս էր թռչում այդ աղմուկից, ինչպէս կեղծ հնչիւն նուագախմբում:

Պատահում էր, որ մի հովիւ սարերից իջնող մարդկանց և անասունների հեղեղի մէջ կորցնում էր իր շանը և հէնց փողոցում կանչում էր, «Ալաբաշ, հէյ, Ալաբաշ...»: Այդ ձայնին իսկոյն պատշգամբ էր դուրս գալիս քաղաքագլուխը, որպէսզի խլացնի այդ աններդաշնակ ձայնը և մինչև անգամ զայրանում էր, ինչպէս զգայուն դիրիժորը, բայց նոյն մարդկային ժխորն ինչպէս հեղեղ խլացնում էր այդ անպատեհ և անյարիր կանչը: Եւ նոյնիսկ եթէ այդ ժամանակ բոլորովին մօտիկ մի աքլոր շոգից կատաղած կանչէր, եթէ երկու չարաճճի գիմնազիստներ, անցնելով դալլաք Բոզու վարսաւիրանոցի կողքով, կանչէին՝ «դալլաք Բոզի, գլուխդ խոզի» և ինքը՝ հին շուկայի պատուելի վարսավիրն ընկնէր նրանց հետևից և բարձրաձայն ասէր. «Այ, ես ձեր խրատողի...», միևնոյնն է, ոչինչ այլևս չէր խանգարի այն ռիթմը, որով ընթանում էր քաղաքի աղմուկը:

Նա շուկայ էր մտել եօթ ճանապարհով, նա հոսում էր դաւթարխանայի, քաղաքային ինքնավարութեան, դատարանի, ոստիկանական վարչութեան, հարկային տեսչի, պետական գանձարանի և սուբահանոցի՝ նախնական կալանատան եօթ դարպասներից, որոնք բացւում էին շուկայի վրայ: Ինչպէս բարակ առու, այդ աղմուկը գալիս էր ճոթի մաղազաների խորունկ խորքերից, որտեղ լեռնցիների խրոխտ ձայները խլանում էին... Եւ ինչքան արևը բարձրանար, այնքան զօրեղանում էր նուագը և արևի թեքուելու հետ, երբ դէպի լեռներն էին վերադառնում գիւղացիները և քոչուորները, այդ սիմֆոնիան մօտենում էր իր վախճանին:

Այդ պահին քաղաքի ամենահետաքրքիր անկիւնները ոչ մանուֆակտուրայի խանութներն էին, ոչ պետական հիմնարկները և ոչ էլ նոյնիսկ Պասաժը: Դատարանում դատաւորներն առանձնացել էին խորհրդակցութեան, և մի ամբողջ

ժամ նրանք չէին կարողանում քրէական դատավարութեան Կոձղ Օրինացի մէջ գտնել այն յօդուածը, որով կարելի է հարևանի գոմշի պոչը թրով կտրող յանցագործին պատժել, և արդէն երդուեալ հաւատարմատար Ֆէոկտիստ Իւանիչն առաջարկում էր գործն ուղարկել նոր քննութեան, որովհետև շատ մութ էին յանցագործութեան հանգամանքները... Գաւառային ինքնավարութեան մէջ այն ժամն էր, երբ Համզայ բէյ Մահմուդբեկովը թաւ ձայնով «անառակ» անեկդոտներ էր պատմում, իսկ Նազար բէյը աղուէսահաչ էր տալիս... Այդպիսի ժամ էր քաղաքային ինքնավարութեան մէջ և հայոց վիճակային կոնսիստորիայում այդպիսի խաղաղ ժամ էր, որովհետև Տէր զի բազումը վաղուց էր կնքել ծննդեան երկու վկայականները:

Նոյնիսկ փողոցները խաղաղ էին: Ծառի շուաքում կարելի էր հանդիպել մի քանի գիւղացիների, որոնք կամ սեխ էին ուտում, կամ փռել էին գնած ապրանքը և նորից նոր հաշւում էին՝ անընդհատ կրկնելով. «Հոյ չխաբե՞ց մեզ էն շան որդին...»: Բայց հետաքրքիր չեն սեխ ուտող գիւղացիները և կամ նրանք, որոնք իրար երեսի նայելով դժուարանում են գտնել, թէ գեազը 27 կոպեկով մահուդուարին ինչքա՞ն կ'անի, եթէ իրենք գնել են 5 գեազ և մի չարէք:

Քաղաքում այդ պահին ամենահետաքրքիր տեսարանը խոհանոցներումն էր և ոչ թէ սենեակներում, որտեղ նոյնիսկ Հէրսելեան՝ «Թևը կոտրած հրեշտակը», շրջում էր տնային զգեստով և չունէր այն հմայքը, որ ունէր, երբ հագնում էր խշխշան շորերը և պահում էր երկնագոյն մետաքս հովանոցը:

Ամենահետաքրքիրը խոհանոցներում էր...

Ներս մտնենք Հաստ Ներսէս բէյի տան դարպասով: Արդէն դարպասի մօտ զգացւում է այն բոյրը, որով անսխալ կարելի է որոշել, թէ ի՞նչ վիճակումն է դօլման: Արդեօք ա՞յն,

երբ փակ կոկոնի նման հազիւ է երևում մի կտոր վարդագոյն միս, երբ հետզհետէ փքուելով իր մէջ է կլանում շոգին և չոր մրգերի հիւթը, և խաղողի տերևների արանքներում բրնձի հատիկները խաղում են... Կաթսան փրփրում է, շոգին երբեմն բարձրացնում է կափարիչը պուֆ անելով, և կափարիչը զնգալով նստում է: Կաթսայի այդ շնչառութիւնը յիշեցնում է Ներսէս բէյի յետկէսօրեայ քունը, երբ հաստ շրթունքները ուռցնելով քնի մէջ նա պուֆ էր անում, արձակելով հոտաւէտ շունչ:

Մեծ կաթսայի կողքին շար են ընկել բազմաթիւ ջամեր, բադեաներ, կոթաւորներ, պղնձէ պնակներ, որոնց պարունակութիւնը և կէտ նպատակը նոյն դօլման է: Մէկի մէջ տաքանում է սերկևիլի և նռան ջուր, որ պիտի եռայ միայն մի անգամ, ապա ծաղկաւոր կոթամանի մէջ աղախինը պիտի իջեցնի մառանը՝ սառեցնելու: Նա պիտի երևայ այն ռոպէին, երբ մեծ ափսէի մէջ խոհանոցից դուրս կը գայ դօլման, և Ներսէս բէյը նրա գոլորշին կհանգցնի նռան և սերկևիլի սառած ջրով: Նրա կողքին տաքանում է հիլի և դարչինի լուծոյթը, աւելի հեռու չորանում է այն կարմիր հացը, որ Ներսէս բէյը մատներով պիտի փշրի դօլմայի ջրալի հիւթի մէջ: Խոհանոցում այլ պնակների մէջ կանաչի է՝ քաղցր սոխ, կինձ, կոտեմ, առանձին դարսուած են սպիտակ բողկի պահունակները, ոչ այն բողկի, որ հասնում է մի ամսում, այլ այն, որ մի տարում հազիւ է հասնում, բայց երեք տարի համը պահում է:

Խոհանոցում Ներսէս բէյի կինը ձեռքի աղացով սուրճ է մանրում և գանգատւում է, որ ֆրանսիական ապրանքների մագազինից այլևս հարկաւոր չէ սուրճ առնել, այլ հարկաւոր է առնել Եփրատ Երեմից, որի սուրճը Լիւդմիլայ Լուովնան շատ է հաւանել: Նա գանգատւում է, բայց ականջը կաթսայի

կողմն է. իւրաքանչիւր քլթոց, կափարիչի իւրաքանչիւր զրնգոց նրա համար նշաններ են դոլմայի ձևաւորման: Տանտիկինը ձեռքի փոքրիկ շերեփով չափ է տալիս այդ բարդ շարժման: Ինչպէս նաւավար նա վարում է ճաշի նաւը մինչև վերջին նաւահանգիստը, մինչև...

Բայց այդպէս էր բախտը Գորիսի շատ առաքինի և անուանի տիկինների, նրանց այդ էր վիճակուած՝ բմբուլի բարձերը փքուած պահել, անկողինը փափուկ, ճաշն անթերի և առատ, տունը հարուստ, իմանալ սուրճ եփել և հիւրերին զբաղեցնել մինչև սուրճը և ապա լոտո կամ թուղթ խաղալ: Այդ էր նրանց վիճակը, և նրանցից շատերը նոյնիսկ ամուսնու պաշտօնը չգիտէին, այլ միայն գիտէին, որ նա դաւթարխանայի մեծերից է և նրանից բարձր միայն երկու բէյ կայ՝ այսինչը և այնինչը, իսկ մնացած բոլոր բէյերը նրանից քաշ են, նրանց կանայք իրենից քաշ են, նրանց երեխաներն ի՞նչ են, որ խաղան իր երեխաների հետ: Նրանք կարող են ունենալ գիլանառի[95] մուրաբայ, իսկ իրենք՝ սերկևիլի, նրանց սերուիզն արծաթից է, իրենցը՝ արծաթ ոսկեջրած, մի խօսքով, մի աստիճան պիտի բարձր լինէին այն բէյերից, որոնցից աստիճանով բարձր էր տան տէրը:

Այդպէս էին այդ կանայք՝ բազմաթիւ երեխաների մայր, խոհանոցի տնօրէն, հիւրընկալուհի և դեռևս ինչքան պարտականութիւններ ունէին նրանք... Ահա դիմաց-դիմաց պատուհանից խօսում են երկու այդպիսի տանտիրուհի.

– Վարսենիկ, էդ ինչո՞ւ ձեր լոյսերը ամբողջ գիշեր վառում էին... Հիւրերդ ուշ գնացին, հա՞...

– Ի՞նչ ուշ, սհաթի տասներկուսին չարէք էր պակաս, որ գնացին... Աղջի, տաք էր, տաք... Սիրտս ուզում էր ճաքի:

– Է, տաք ասում ես պրծնում... Գիշերը աչքերս չեմ փակել:

[95] գիլանառ, գիլանար – բալ

Դու դեռ լաւ ես: Ուզում եմ գնամ Շուշի. ասում են պրոֆէսոր Բահաթուրովը եկել է... Ժենսկիյ հիւանդութիւնից նա լաւ է...

– Բախտաւոր ես... Ես էլ կը գայի, եթէ երեխան չլինէր...

Պատուհանները փակում են, և երկու սիրելի հարևանուհի-ները իրար հասցէի շշնջում են.

– Հողեմ գլուխդ, թէ քո մարդը քեզ Շուշի կ'ուղարկի... Դու երեխան մահանայ բռնի:

– Էդ դեղնած կերպարանքիդ Բահաթուրովն էր պակաս...

Եւ միայն կարելի է զարմանալ, թէ որքան խելօք էին այդ կանայք և ինչ եռանդի տէր էին, որ այդքան զբաղմունքից յետոյ դեռևս ժամանակ էին գտնում կտրելու փողոցը, որպէսզի փորձեն հարևանի մուրաբայի համը, այն մուրաբայի, որի եփելու կերպը քաղաքներից բերել է Վառվառա Մինանանա, տիկին Վառինկան, Վառի-բաջին, ինչպէս նրան կանչում էր լուացարարուհի Մինան: Նրանք ժամանակ էին գտնում վերջին մոդայի պելերինայի ձևն ընդօրինակելու, նոյնիսկ մտնում էին կանացի դերձակ Մացակի տունը, իբրև թէ պատահմամբ, բայց նպատակ ունենալով տեսնել այն կ'ոֆտան, որ պատուիրել է տիկին Օլինկան և որի մասին այնքան շատ էին խօսում Լալազարանց տանը: Եւ ինչի՛ մասին կարծիք չէին յայտնում և ինչ կարծիքներ չէին յայտնում նրանք...

– Ստուդենտ Ռուբենը շատ կսխալուի, եթէ Հէրսելեային առնի: Նրա մէջն առողջ չի...

– Ամբրումովի տղան չի բարիշում խորթ մօր հետ: Ասում են տէր Զաւէնը գնացել է հաշտեցնի...

– Սահակ Սերգեյիչի մեծ աղջիկը լկստուած է... Երեկ գիշեր նրան բուլուարում տեսել են ռուս օֆիցերի հետ...

– ՀԷ, ժամանակս փոխուել է, զարգացել են, լուսաւորուել են... Մեզնից ծնուածն էլ մեզ չի հաւանում...

– Տեղն է, Սահակ Սերգեյիչի կնոջ տեղն է... Ասում էին

աղջկադ հեռու մի ուղարկի, կլկստուի, թէ թող ուսումը տեղ տայ, բժիշկ պիտի դառնայ: Դէ հիմա թող բժիշկ դառնայ... Կը դառնայ, ինչպէս չէ:

Այդպիսի կարծիքներ յայտնում էր նաև տիկին Վարսենիկը, ոչ միայն պատուհանից զրուցելով հարևանուհու հետ կամ այդ նպատակով հիւր գնալով մի տուն, որտեղ իրար էին փոխանակում լուրերը, լուր էին փոխ առնում, ինչպէս փոխ էին առնում մի ամաս նաւթ, որովհետև ցերեկով մոռացել էին գնել, առժամանակով առնում էին լուրը, ինչպէս մի անգամի համար հարևանից վերցնում էին փլաւ քամելու պղնձէ մաղը: Տիկին Վարսենիկն այդ բանով զբաղւում էր նոյնիսկ խոհանոցում, դօլմայի ձևաւորման ամենապատասխանատու րոպէին, երբ կրակի հզօրացումը կամ մի աւելորդ համտես կարող էր փչացնել ամէն ինչ, ինչպէս եթէ նաւավարը աչքը դէպի ծովային ճայերը, նաւը յանկարծ զարկեր ստորջրեայ քարի...

Բայց տիկին Վարսենիկի ձիրքն էլ հէնց այն էր, որ նա կարող էր ֆրանսիական ապրանքների մագազինի սուրճը վատաբանել և նոյն ժամին կրակից հանել մի փայտ, որի ջերմութիւնից նռան և սերկևիլի ջուրը կը սևանար: Տիկին Վարսենիկն իր աղախինին պատմում էր.

– Ասում են երեք օր առաջ Շէնում մի կին գնացել է բանջարի, հասել է մինչև Մատուռի ձորը... Քանի միտս է, գինու փարչը դիր առուի մէջ, մի քանի էլ դամբուլ քաղի էն ծայրի ծառից, իսկ ինքը բաց է անում կաթսայի կափարիչը և գոլորշուց, բոյրից, աւելի ճիշտ, եռացող ջրից հասկանում է, թէ ինչ է կատարւում կաթսայի խորքում:

– Գալիս է, պապան գալիս է, հետն էլ մի մարդ կայ, – ճչալով ներս է վազում տիկին Վարսենիկի փոքրիկ աղջիկը, որին մայրը պահակ է դրել փողոցի անկիւնում:

– Գալիս է, պապան գալիս է և հետն էլ Նազար դեադեան է, – ճչալով ներս է վազում տիկին Վարսենիկի փոքր տղան, որ աւելի հեռում էր դիրք պահել:

– Գալի՛ս են, – ճչում են երեխաները, ինչպէս նաւաստիները կը կանչեն.

– Ցամաքը երևաց, ցամաքը...

Այստեղ տիկին Վարսենիկի ձիրքը հասնում է կատարելութեան, մինչև տանտիկնութեան արուեստի բարձունքները:

– Կաթսան մի կողմ դիր, – և հիւրի համար աւելացնում է ճիշտ այնպիսի գաւաթ, ինչպիսին դրել է ամուսնու համար:

– Բողկը ջրից հանի, – և շտապում է հինգ րոպէում զգեստը փոխել, յարդարել իրեն, փոքր տղայի գօտին շտկել, աղջկանը յիշեցնել, որ Նազար դեադեային հարկաւոր է բարևել և այդ տագնապի մէջ մոռանում է բութ մատի մուրը, որ կը նկատի երեկոյեան, երբ շարունակի պատմել այն կնոջ մասին, որ երեք օր առաջ գնացել էր Մատուռի ձորը...

Ներսէս բէյի և նրա հիւրի՝ Նազար բէյի ներս մտնելուց յետոյ ճաշն իսկոյն չի սկսւում, թէև Ներսէս բէյը դեռևս ռապորտ գրելուց էր քաղց զգացել, աւելի ճիշտ նրա քթովն էր ընկել դօլմայի հոտը, ինչպէս տիկին Օլինկայի բարձերից մի բմբուլ հասել էր մինչև դատարան և նստել խեղճ գրագրի ունքին: Ներսէս բէյը քաղցած էր, բայց կային անխուսափելի ծէսեր, ինչպէս բողկը անխուսափելի էր դօլմայից: Այդ ծէսերից վեհագոյնը կատարւում էր այգում, երբ Ներսէս բէյն իր սեփական ձեռքով, վարունգի թփերի մէջ փնտրում էր երկու–երեք փոքր վարունգ, ծաղիկը դեռ պոչին, փոքրիկ փշիկներով, ինչպէս երեխայի աղուամազը, այն նուրբ վարունգը, որ բերանի մէջ հալւում է և որին Ներսէս բէյը մեծարում էր տասնեակ փաղաքշական բառերով՝ պիկուլիայ, կ'ուլուլիայ, պիծի–միծի Բաղդասար, Կլապիդոն Իւանիչ,

բիբուլի և այլ այսպիսի բառերով, որոնցից մի քանիսը իւր ժամանակ ուղղուած էին տիկին Վարսենիկին: Բայց ահա նա գտաւ այն վարունգները, որոնց, Ներսէս բէյի ասելով, աստուած Քարահունջի օղու հետ միաժամանակ աշխարհ է ուղարկել, որպէսզի մարդկային հոգին չձանձրանայ...

Եւ ճաշը սկսւում էր...

Սկսւում էր այն ճաշը, որից յետոյ տիկին Վարսենիկի աղախինը կանչում էր լուացարարուհի Մինային, և երկուսով միասին առուի ջրում մոխրով լուանում էին պնակները, կաթսաները, մեծ ու փոքր ափսէները... Եւ մինչև արևը մայր մտնէր, նրանք լուանում էին: Իսկ ներսը, հով սենեակում, դիւանների մէջ ընկղմած քնել էին Ներսէս բէյը և Նազար բէյը. տիկին Վարսենիկը գնացել էր իմանայ, թէ արդեօք չե՞ն այրուել տիկին Վառինկայի գաթաները, մեծ տղան պապայից ծածուկ ընկուզենու տակ ծխում էր, փոքրը փէտում էր թիթեռի թևերը, մեծ աղջիկը պատուհանից ո՞վ գիտի ինչու նայում էր դուրս, իսկ փոքրն սպառնում էր պապային ասել, որ Ժորժիկը ծխել է և մամային ասել, որ մեծ քոյրը դարձեալ պատուհանից չէր հեռանում:

Փողոցում լռութիւն էր: Լսւում էր միայն ամանների զնգզնգոցը և Ներսէս բէյի միալար պուֆերը, կարծես դեռևս կաթսայի մէջ դօլման եռում էր:

8

Ամբողջ քաղաքում բէյերը քնել են յետկէսօրեայ քնով, և քանի նրանք քնած են, հարկաւոր է պտոյտ անել քաղաքի փողոցներում, որովհետև շներն էլ քնած են: Իսկ Գորիս քաղաքի շները կատուի ձագեր չէին, ինչպէս Լիւդմիլլայ Լուովնայի շնիկը, որի մասին խօջայ Մակիչը մի անգամ ասել էր.

– Փառքդ շատ, աստուած... Սա էլ կ'ասի, որ շուն է և շան ազգից է:

Գորիսում յայտնի շներ կային, ինչպէս օրինակ՝ Սիմոն բէյի Թոբուշը, որից ամբողջ թաղը դողում էր, և նոյնիսկ մուրացկանները սիրտ չէին անում նրանց բակը մտնել: Նրանք շներ չէին, այլ շղթայած առիւծներ և վագրեր, ինչպէս Խանլար բէյի Ջինդառ շունը, որ տիրոջ հետևից գնում էր գիւղերը հաւ հաւաքելու, այսինքն աչքին ընկած հաւը կուլ էր տալիս և մնում էր անպատիժ, կարծես թագաւորական խարջ հաւաքող էր: Հապա պրիստաւ Աղալոյի Ջանգի– Ջրանգին. նրանց փողոցով անց ու դարձը դադարում էր, երբ լուր էր տարածւում, որ պրիստաւ Աղալոն էլի մեղք է եկել շներին և նրանց արձակել է: Վերջապէս փաստ է, որ 1913 թուի դեկտեմբերի 4–ին Գորիսի քաղաքային դումման քննութեան առաւ շների հարցը, որովհետև Սիմոն բէյի Թոբուշը կծել էր Փոշտի Անտօնի քիթը՝ պարտականութեան կատարման, այսինքն նամակատարութեան ժամին: Այդ առթիւ դումայում մեծ կռիւ ծագեց պրոգրեսիստների և յետադիմականների միջև, և միայն արհեստաւորութեան դեպուտատ Չաքմաչի Վէսկանը, որ ոչ առաջադիմական էր և ոչ յետադիմական, այլ պադուալական էր (նա այդպէս էր ասել Բարի աջողումի գինու նկուղում), և միայն Չաքմաչի Վէսկանի առաջարկով դումման որոշեց դեղամահ անել քաղաքի անտիրական շներին (պարոն Արշակի ասելով՝ այդ էլ ունէր իր բուն արմատը. շներից մէկը ցերեկով գողացել էր դուրսը տակառի մէջ թրջոց դրած պադոշը):

Այդպիսի անուանի շներ կային Գորիսում, որոնք որդոց որդի ապրելով միևնոյն տանը, վարժուել էին իրենց տէրերի բնաւորութեան, իսկ մի քանիսն այնքան էին երես առել, որ իրենց վարքն ու բնաւորութիւնը նմանեցնում էին տէրերին:

Օրինակ, Նազար բէյի շունը, երբ գիւղացին փափախով մտնէր նրանց բակը, աղուէսահաչ էր տալիս՝ արագ–արագ և սուր ձայնով, և ձայնը կտրում էր, երբ գիւղացին փափախը հանում էր: Տէր զի բազումի Զամբարը ոռնում էր, երբ լսում էր ռուսաց եկեղեցու զանգերի ձայնը: Ջիլֆուղար բէյը (հայ) մի շուն ունէր, որ երբեք չէր հաչի, եթէ նոյնիսկ կէս գիշերին գիւղացիները թափուէին նրանց բակը: Բայց եթէ նրանք գային առանց ոչխարի, առանց պանրի և իւղի, շունը քիչ էր մնում շղթան կտրէր, կարծես նա էր կաշառք հաւաքում:

Գորիսում այնպիսի շներ կային, որոնք լափում էին դօլմայի մնացորդը և տիրոջ նման յետկէսօրեայ քնով քնում էին և նոյնիսկ քնի մէջ պուֆ էին անում, ինչպէս Ներսէս բէյի շունը: Շները զարթնում էին, երբ հնչեր տիրոջ ձայնը: Այնուհետև նրանք արթուն պահակ էին մինչև լուսաբաց: Տէրը կարող էր կանաչ սեղանի շուրջը նստել մինչև վերջին ռուբլին, կարող էր բիլիարդ խաղալ, կարող էր հարբած տուն գալ, ամէն ինչ ապահով կարող էր անել, քանի շունը կար... Մի խօսքով, եթէ դատական հին գործերում ձեզ պատահի հանդիպել այսպիսի արտայայտութեան՝ «նա ինձ համար շուն չէր, այլ բերդ էր», իմացէք, որ այդպէս ասողը գորիսեցի էր:

Քանի շները քնած են, հարկաւոր է պտոյտ անել քաղաքի փողոցներում և մի քանի տուն մտնել: Բայց հարկաւոր չի մտնել Հաստ Ներսէս բէյի հարևան տունը, որտեղ ապրում է Խուրդայ կամ Կարճիկ Ներսէս բէյը, որովհետև այստեղ էլ ամէն ինչ նոյնն է՝ աննշան տարբերութեամբ: Կարճիկ Ներսէս բէյը դօլմա չի կերել, այլ կոլոլակ, նա մէջքի վրայ չի քնած, այլ կողքի, և նրա շան երկու աչքերը կապոյտ են, իսկ Հաստ Ներսէս բէյի շան մի աչքը երկնագոյն է, միւսը՝ կապոյտ: Մնացածը նոյնն է, նոյն այգին, նոյն չորս երեխան, որից մեծ աղջիկը պատուհանի առաջ սպասում է, թէ երբ

կ'անցնի հարևանի գիմնազիստ տղան. այն բակից էլ մի աղջիկ տեսնում է Ժորժիկի ծխախոտի ծուխը:

Հարկաւոր չի ներս մտնել այս տունը նաև այն պատճառով, որ երկու հարևաններ իրար թշնամի են, և դառն է պատմել նրանց թշնամութիւնը, որովհետև կարող են կարծել, թէ երկու Ներսէս բէյերը չնչին մարդիկ էին, եթէ նրանց երկարամեայ գժտութեան առիթը եղել էին նրանց շները, աւելի ճիշտ՝ Հաստ Ներսէս բէյի շունը, որ մի գիշեր կապը կտրել և թռել էր հարևանի այգին և այնտեղ հարևանի շան հետ շնութիւն էր արել և այդ ոչ թէ այգու մութ խորքում, այլ նոր մարգերի մէջ, այնտեղ, ուր Կարճիկ Ներսէս բէյի կինը ցանել էր Երուսաղէմի լոբի, ռեհան, կինձ և գլխաւորն է՝ կատաղած վարունգ, այն վարունգը, որի սերմերը Քութահիից ուղարկել էր հարկային տեսչութեան աւագ ռևիզօր իշխան Այլախիարին, երբ պաշտօնական գործով եկել էր Գորիս և եօթ օր հիւր էր եղել Կարճիկ Ներսէս բէյին: Իշխանը դեռևս Գորիսումն էր, երբ ամբողջ քաղաքը խօսում էր Քութահիի կատաղած վարունգի մասին, որը բերանում չի հալւում, ինչպէս Հաստ Ներսէս բէյի սիրած պիծի-միծի Բաղդասարը, այլ հասնելու մօտ պայթում է ահագին աղմուկով, ինչպէս նկարագրել էր իշխանը, պայթում է ինչպէս ռումբը, և ամբողջ քաղաքն անհամբեր սպասում էր այն օրուան, երբ ինչպէս ռումբ պիտի պայթէր առաջին կատաղած վարունգը, որի սերմից Կարճիկ Ներսէս բէյի կինը հինգ հատիկ էլ չէր տուել իր հարևանուհուն և մինչև անգամ Լալազարանց տանը այդ առթիւ ասել էր.

– Անցեալ տարի կոֆէն կրակի վրայ մի գցելու ցիկորիա[96] ուզեցի, թէ՝ ես էլ հիւր ունեմ, ինձ հերիք չի... Հապա ես էդ կը մոռանամ...

Բայց գժտութեան առիթն այդ չէր, այլ շների մոլութիւնը,

[96] ցիկորիայ – շաքար

որի ընթացքում կատաղած վարունգի ծիլերը արմատախիլ տրորուել էին: Կարձիկ Ներսէս բէյի կինն այդ համարել էր նախանձից տրաքուած հարևանուհու գործը, և եօթ օր երկու հարևան պարտէզներից լսւում էին մերթ հանդարտուող և մերթ բորբոքուող կռուի աղմուկ, անէծք և անվայել խօսքեր... Եօթ օր, եօթ գիշեր երկու տունը նման էին երկու բերդի, որտեղից լսւում էին ռմբակոծութեան ձայներ: Հաստ Ներսէս բէյը նիհարեց, որովհետև նրա կինն այդ օրերին ոչ դօլմա էր եփում, ոչ կոլոլակ, այլ եփում էր այնպիսի խառնափնթոր կերակուր, որ կը վայելէր խարչևնի պահող Թևատորոսին: Ներսէս բէյը միայն սովից խեղճացաւ և խեղճանալով յանձնառու եղաւ, որ Կարձիկ Ներսէս բէյը մի ոչինչ մարդ է, գնչու է և նոյնիսկ ասաց, որ հարկային տեսուչ Նիկիֆոր Վասիլիչը նրանից շատ է անգոհ...

Իսկ հարևան բերդում ռմբակոծութիւնը դադարեց միայն այն ժամանակ, երբ Կարձիկ Ներսէս բէյը խոստովանեց, թէ անցեալ տարի իշխան Այլախիարին գիշերուայ կէսին գնաց պարտէզ և որովհետև շատ ուշացաւ, ինքը ևս գնաց պարտէզ և ջրածակի մօտ, ասինքն այնտեղ, ուր առուն պատի միջով մտնում է հարևանի պարտէզը, այդտեղ ինքը տեսաւ իշխանին, և տիկին Վարսենիկը նմանապէս իրենց պարտէզումն էր: Կարձլիկ Ներսէս բէյն ուրիշ ոչինչ չխոստովանեց իր կնոջը, որովհետև նախ այդ նկատելուց յետոյ նա անմիջապէս տուն էր վերադարձել և ապա նա չկամեցաւ անառակ պատմութիւնով վարակել իր կնոջը: Նա միայն այդ խոստովանեց, որովհետև կինն իսկոյն դէմքը ձեռքերով ծածկեց, ինչպէս ամօթխած կին, որ այդ ձևով պաշտպանում է իր կուսական լսողութիւնը:

Դրանից յետոյ երկու բերդերի միջև սկսուեց խրամատային խուլ կռիւ, և երբ տիկին Վարսենիկը մի աղջիկ ծնեց, թուաց թէ նրա կողմը յաղթեց, և յոյս կար, որ կնունքի առթիւ կարող

էր վերջանալ նրանց կռիւը, բայց երկու շաբաթ յետոյ Կարձիկ Ներսէս բէյի կինը ևս մի աղջիկ ունեցաւ, և նրանք այդպէս էլ չհաշտուեցին:

Ի պատիւ երկու Ներսէս բէյերի պէտք է ասել, որ անձնատուր լինելով իրենց կանանց, նրանք այնքան հեռու չգնացին և իրար ոչ մի անվայել խօսք չասացին: Նրանք նոյնիսկ իրար հետ խօսում էին, երբ հարկային տեսչութեան տեղեկագրերը Կարձիկ Ներսէս բէյը ռապորտով ուղարկում էր իր հարևանին: Մինչև անգամ չինովնիկների կլուբում, երբ բակարայ էին խաղացել, Հաստ Ներսէս բէյը հարևանին շատ ազնիւ և քաղաքավարի ասել էր.

– Թուղթը ձերն է, հաւաքեցէք...

Ահա այդ չնչին թշնամութեան պատճառով հարկաւոր չի մտնել Կարձիկ Ներսէս բէյի տունը: Նաև կարող ենք խանգարել Լուսիկին՝ Կարձիկ Ներսէս բէյի մեծ աղջկան, որը օգտուելով յետկէսօրեայ խաղաղութիւնից, Ժորժիկի նամակի պատասխանն ահա տանում է դէպի պատը՝ ջրածակի գլխին: Իսկ Ժորժիկն ընկուզենու տակ անհամբեր ծխում է և սպասում է ազդանշանին:

Կարձիկ Ներսէս բէյի տնից վերև դարձեալ բէյի տուն է՝ Խուրշուդ բէյի տունն է: Այդպէս էր Գորիս քաղաքում. երբեմն մի շարքի ընկնում էին քսան-քսանհինգ բէյի տներ, ինչպէս ձոթի մաղազաները: Երբեմն այդ շարքն ընդհատւում էր վաճառականների տներով և նաև մի այնպիսի տնով, որի տէրը ոչ բէյ էր, ոչ վաճառական, այլ օրինակ՝ Ափունց Ակու ամին էր, ձորկեցիների նամակառուն:

Չորրորդ տունը, որ երկու միանման ճակատ ունէր, որովհետև նայում է երկու միանման փողոցների, նշանաւոր էր եւ տան տէրով, եւ տնկեցով, ինչպէս Գորիսում անուանում էին ուրիշի տանը վարձով ապրողին: Այդ տան ներքնայարկում,

ճիշտ այնպիսի զերզամբայում[97], որտեղ տիկին Վարսենիկը ձմեռուայ համար պահում էր կարտոֆիլ, թթու կաղամբ, սոխ, ձմռան բողկ, նաև այնպիսի իրեր, որ ամառ-ձմեռ այդ կիսամութ ներքնայարկում էին՝ հնաձև թամբ, կոտրած տակառ, թիթեղի կտորներ, որ մնացել են տան կտուրից, պարսկական լագան և այլն, ճիշտ այդպիսի զերզամբայում ապրում էր Հայաստանցի Աւետիսի ընտանիքը:

Ինչպէ՞ս էր նա ընկել այդտեղ և ո՞ր գաւառից էր, յայտնի չէր. միայն եթէ նրա մասին հարցնող էր լինում, պատասխանում էին, որ Աւետիսը փախստական է Հայրստունի կողմերից, և նրա խօսած լեզուն այն կողմի լեզուն է: Այդքան էին պատասխանում, որովհետև Գորիսում խեղճ մարդկանց մասին երկար չէին խօսում: Միայն պարուն Արշակը հայոց պատմութեան դասին պատմելով Մշոյ երկրից՝ ծխական դպրոցի սաներին հարցնում էր.

– Կարդացել էք չէ՞ Ահարոնեանի «Արցունքի հովիտը»...

– Կարդացել ենք, բոլորս միաբերան կարդացել ենք, – գոռում էր մի չարաճճի:

– Ահա Հայաստանցի Աւետիսն այդ երկրից է: Այդ արցունքի հովիտից, որ կոչւում է Հայաստան, իսկ հնում՝ Նաիրի երկիր,– և պարուն Արշակը շարունակում էր դասը:

Հայաստանցի Աւետիսը Մուշից էր, թէ Վանից, թէ Ալաշկերտից էր, ո՞վ գիտէր, որովհետև Գորիսում միայն պարուն Արշակը և Սասուն գրախանութի մարդիկ գիտէին Մուշը և Վանը և Ալաշկերտը, իսկ մնացածների համար այդ ամէնը եօթը սարից այն կողմ մի մութ երկիր էր, մի անյայտ Հայրստուն, որտեղից երբեմն գալիս էին մաղ ծախող գնչուներ, լարախաղներ, որոնք խաղից առաջ խաչակնքում էին յանուն Մշոյ Սուլթան սուրբ Կարապետի, գալիս էին

[97] զերզամբայ – գետնայարկ նկուղ, մառան

օտարոտի տեսքով մարդիկ, որոնք ոչ ռուս էին, ոչ զիլանի քուրդ, ոչ կլայեկ անող լեզգի, ոչ խոյեցի կլլան էին, այլ Հայըստունցի էին:

Ինքը՝ Հայաստանցի Աւետիսը, ոչինչ չէր պատմում: Նրանից այդ մասին չէին հարցնում: Նրան միայն ասում էին.

– Աւետիս, մի սաժեն քար է պէտք... Հի՞նչ ես ասում, – իսկ Աւետիսը ոչինչ չէր ասում, այլ տասը օր իր էշով գետից մի սաժեն քար էր կրում:

– Աւետիս, անտառապահին ես ասել եմ փայտի համար... Քանի եղանակները լաւ են... – և ասողն ուրիշ ոչինչ չէր ասում, որովհետև գիտէր, որ Խուրշուդ բէյի փայտը կրելուց յետոյ Աւետիսը պիտի կրի նրա փայտը, էշի և իւր սեփական մէջքով թագաւորական անտառից պիտի կրի նրա փայտը:

Իսկ մօտիկ հարևանները միայն այն գիտէին, որ Աւետիսի ապրած զերզամբան լիքն է գէշ, սև և պեպենոտ աղջիկներով, որոնք երբեմն արևի տակ նստում էին, և ով նրանց տեսնէր՝ միտք էր անում, թէ Հայաստանցին ինչպէս պիտի տեղաց անի այդքան աղջիկների, և նրանց ո՞վ կ'առնի:

Բայց առնում էին: Երկու տարին մի անգամ Աւետիսը տուն գալով, հետը բերում էր կօշկակարի մի աշկերտի, որ մանկուց քել[98] էր, մի կաղ երիտասարդի, որ բրուտի արհեստանոցում կաւ էր շաղախում, վերջապէս մի նախրապանի, որը, լսելով, ունէր իր սեփական կովը և նոյնիսկ Խուռոփի ձորում ունէր սեփական այգետեղ: Միայն մի անգամ կօշկակարի քել աշկերտը, բրուտի մշակը և նախրապանն աչքի տակով նայում էին Աւետիսի մարդու գնացող աղջկան, և մի շաբաթ յետոյ ներքնայարկում հարսանիք էր... Վերի յարկից մի գիշերով տալիս էին մեծ կարպետը, մի քանի ափսէ, պղինձը, հարևանները ով մի քիչ իւղ, ով բրինձ, ով մի հնամաշ զգեստ,

[98] քել – մազերը թափած, ճաղատ

որ եթէ հարսնացուին փոքր էր, Աւետիսի կինը պահում էր նրանից կրտսեր աղջկայ համար:

Ծախքի մեծ մասը հոգում էր տիկին Օլինկան, Հայ կանանց միութեան երկարամեայ նախագահուհին: Եթէ քրքրենք այդ Միութեան ժապաւինեալ հաշուեմատեանը, գրանցուած կը գտնենք հետևեալը. «Հայաստանցի Աւետիսի դստեր կնունքին, հինգ ռուբլի դրամով» և կամ «Հայաստանցի Աւետիսի դստեր ամուսնութեան տասը ռուբլի»: Անարդարացի կը լինէր կասկածել այդ գրանցումների ճշտութեան. նախ որ բոլորի դիմաց կայ Աւետիսի ահռելի բութի դրոշմը և ապա դեռ մինչև այժմ էլ ոմանք գորիսեցիներից յիշում են, թէ երբ Հայաստանցի Աւետիսին աղջիկ էր ծնւում, հարևաններն ասում էին.

– Աւետիսն էլի մի հինգանոց աշխատեց...

Եւ վերջապէս Կեօրեսից մինչև Նորու, այնտեղից Ձորեկ և Ցաքուտ այժմ ինչքան գէշ, սև և պեպենոտ աղջիկ ու կին կայ, ամէնքը սերել են Հայաստանցի Աւետիսից:

Կարելի է նաև այլ վկայութիւն բերել. այդ գիւղերում, ինչպէս և Կեօրեսում, կայ հայրստունցու հարսանիք արտայայտութիւնը, որ նշանակում է անաղմուկ հարսանիք առանց կերոնների, առանց մակարների, այսինքն հրաւիրուած հարսանքաւորների, որոնք ունէին իրենց նշանը՝ վառած մոմը, և ունէին մակարապետը, որի նպատակն էր խմել և խմեցնել մակարներին, ջարդել և փշրել գաւաթները, երբ հարկ լինէր, պարել տալ ամենաամօթխած աղջիկներին, հարսանիքը ձգձգել, եթէ հարսանքատանը գինին սպառելու վրայ էր, իսկ աղջկայ հայրը ժլատ էր, կռուեցնել երկու տոհմի և հաշտեցնել հին թշնամիներին, մի խօսքով՝ մակարները հրոսախումբ էին, որ տիրում էին հարսանքատանը և տնեցիներին այնքան, մինչև գինու զօրութիւնից պարտուէին: Եւ երբ պատահում էր,

որ գինին քիչ էր, մակարապետը կանչում էր.

– Մենք հո հայրստունցու հարսանիք չենք անում...

Եւ գինին գալիս էր, ով գիտէ, որտեղից և ինչպէս, աղջկայ հօր բարեկամնե՞րն էին օգնում, թէ՞ հէնց ինքը՝ մակարապետը, ուղարկում էր մի նշան, որով Շոր աղբիւրից էլ կարելի էր գինի հանել, բայց գինին գալիս էր, և հարսանիքը շարունակում էր բորբոքուել:

Այդպէս էր այն տունը ներքնայարկում, որի տէրը թէև Գորիսի բնակիչ չէր հաշուում և ոչ էլ կեօրեսեցի էր, այլ միայն Հայաստանցի, սակայն 1897 թուից ապրում էր միևնոյն զերզամբայում: Ու թէպէտ Աւետիսը մի էշով քսան տան քար էր կրել, բայց ինքը ոչ տուն ունէր, ոչ տնատեղ, այլ ունէր եօթ աղջիկ, միշտ եօթը, որովհետև մէկին մարդու տալուց յետոյ, դեռ տարին չբոլորած, ծնւում էր նրա նման մի աղջիկ, և նոյնիսկ պատահում էր, որ հարսնամայրն աղջկայ հարսանիքին պարում էր երկու հոգով:

– Հերիք է, մեղք ես, աղջի, – ասում էին հարևանուհիները Աւետիսի կնոջը, երբ Աւետիսը նորից մի հինգանոց էր աշխատում, իսկ կինն սկսում էր անիծել ամուսնուն: Կինն այնպէս դառն էր դժգոհում և այնպէս էր նկարագրում ամուսնու զօրութիւնը, որ հարևանուհիները՝ տիկին Վարսենիկը, Խուրշուդ բէյի կինը, Անիկա տեօտեան, երբ լսում էին քար կրող Աւետիսի ոտնաձայնը, բարձրանում էին պատշգամբը՝ լոտօ խաղալու:

Հայաստանցու բնակած զերզամբայի գլխին ապրում էր ինքը տանտէրը՝ Պաւլի բէյ Օրբելեանը: Ամէն կողմից նշանաւոր այդ բէյը ոչ միայն «Մշակի» անխափան ընթերցողն էր և չէր ծառայում պետական հիմնարկում, այլ առանձնացած ապրում էր տանը, ինչպէս իշխանը դղեակում: Պաւլի բէյը ոչ միայն յայտնի էր ռուս քահանայի հետ ունեցած ընդհարումով,

այլև ունէր իր անձնական նպատակը: Ինչպէս Հաստ Ներսէս բէյը, նա միայն ռապորտ չէր գրում, չէր ուտում և չէր քնում և քնելուց յետոյ բակարայ չէր խաղում, այլ ուտելուց և քնելուց յետոյ Պաւլի բէյն առանձնանում էր այգու խորքը և այնտեղ մտածում էր... Սիւնեաց նախարարութեան հին և գալիք ժամանակների մասին:

Գորիսի բէյերի մէջ նա միակն էր, որ պատրաստի ծխախոտ չէր ծխում, այլ Եփրատ Երեմի խանութից գնում էր դատարկ գլանակներ, որոնց Պաւլի բէյն իր ձեռքով լցնում էր մեղրաջրով թրջած ծխախոտ: Այդ գլանակների տուփի մէջ լինում էր մի անակնկալ՝ թղթի թիթեռ, գունաւոր դրօշակ և այլն... և ահա ամբողջ փողոցի երեխաները հաւաքւում էին Պաւլի բէյի բակը, երբ նրանք լսում էին, թէ Պաւլի բէյը բաց է անում նոր տուփ: Եւ այդ օրերին վայ էր Հայաստանցի Աւետիսի աղջիկներին, որովհետև մինչև անգամ վեց տարեկան տղան կը ծեծէր հարսնացու աղջկան, եթէ նրանք չմտնէին ներքնայարկը: Իսկ Պաւլի բէյը սպասում էր այնքան, մինչև բակը լեցուէր տղայ երեխաներով և տուփը բաց էր անում: Տուփի միջի գունաւոր դրօշակը կամ թղթի թիթեռը Պաւլի բէյը պատշգամբից գցում էր ներքև, երեխաներն իրար վրայ էին թափւում, իսկ տան տէրը զուարճանում էր: Ամէն կողմից նշանաւոր Պաւլի բէյը եթէ երեխաների մէջ նկատում էր 12–14 տարեկան տղաների, նրանց մէկ-մէկ կանչում էր պատշգամբ և նրանց ականջը թեթև ոլորելով, պատուիրում էր.

– Ականջդ կը կտրեմ, եթէ լսեմ, որ ուրիշ ազգից ես աղջիկ առել... Հայ աղջիկ կ'առնես, իմացա՞ր...

Իսկ տղաները՝ ականջները քորելով, իջնում էին և միտք էին անում, թէ ի՞նչ պիտի անեն Հայրստունցի Աւետիսի գէշ, սև և պեպենոտ աղջիկը:

9

Այն փողոցը, որտեղ մեծ մասամբ բէյերի տներն էին և նրանցից մէկի՝ Պաւլի բէյի ներքնայարկում ապրում էր Հայաստանցու ընտանիքը, այդ փողոցը կոչւում էր Մանուչար Բէյի փողոց: Որքան էլ քաղաքը փոքր էր և չունէր ոչ մի ծխնելոյզ և գործարանի շչակ չունէր, այլ ունէր հարուստ շուկայ, զօրք, բանտ, եկեղեցի և ներկայացուցչական վայրեր, այսինքն պետական հիմնարկներ, այնուամենայնիւ քաղաքը քաղաք էր, ունէր քաղաքագլուխ, քաղաքային դումա, փողոցներն անուններ ունէին հաստատուած քաղաքային դումայի և նորին գերազանցութեան՝ գեներալ նահանգապետի կողմից: Այսպէս՝ մի փողոցը կոչւում էր Մանուչար բէյի փողոց, միւսը՝ թագաւորական, երրորդը՝ նահանգապետ Կաւալեօւի անուան, չորրորդն այն առաջին գաւառապետի, որ ռազմայաչքաչափով նկարահանել էր գետահովիտը, ապա քանոնով բաժանել հաւասար վանդակների, իւրաքանչիւրը չորս հարիւր քառակուսի սաժեն: Բայց թէև գեներալ նահանգապետը հաստատել էր, և փողոցների անունները փակցրած էին պատերին, տները համարակալած էին (և դեռևս պրոգրեսիստները դժգոհ էին քաղաքագլուխ Մաթևոս բէյի պակաս կողմից), այնուամենայնիւ ժողովուրդը, այսինքն Կեօրեսը՝ Շէնը իր բոլոր թաղերով և հարևան գիւղերը ոչ փողոցի անուն էին տալիս և ոչ տան համար. նրանք ասում էին՝ Կալին պա, և բոլորը պատկերացնում էին հին կալերը քարափների գլխին, որ դարձել էր քաղաքի զբօսավայրը, աւելի ճիշտ, այն վայրը, որտեղ գիմնազիստները մէջքի վրայ պառկում էին և կամ նուագում էին կիթառ, ձանձրոյթից թքելով դէպի ձորը, դէպի ձորի հին մարագները:

Կեօրեսեցիք, եթէ ցոյց էին տալիս մէկի տան տեղը, ասում էին՝ Սիմոն բէյի տան գլուխը, և բոլորը գիտէին, որ խօսքը

այն Սիմոն բէյի տան մասին է, որի շան ահից մինչև անգամ մուրացկանները մուտք չունէին, Միրաքին թումբը, և նոյնիսկ նրանք, որոնք երբեք չէին տեսել այդ երբեմնի բլուրը, գտնում էին քաղաքի այն մասը, որտեղ Աւագիմովների տներն էին, ռուսաց դպրոցը և փոստը, Գոմշի փոսեր՝ շուկայի նոր մասն էր, Պասաժը՝ մինչև քաղաքային դումայի շէնքը: Այդ տեղն այդպէս էին կոչել շատ հնում, այն ժամանակ, երբ այնտեղ աղբիւրներ կային, որոնց ջրերում նստում էին Կեօրեսի գոմէշները: Այժմ ոչ գոմէշներ կային, ոչ նրանց աղբիւրները, բայց հին անունը մնացել էր և դեռ հնչում էր այդ անունը, ինչպէս Պասաժի հիմքերի տակ խոխոջալով գնում էին հին աղբիւրները...

Այն փողոցում, որ կոչւում էր Հին ճանապարհ, ապրում էին արհեստաւորներ, մեծ մասամբ բնիկ կ'եօրեսեցի: Նրանք ընտրել էին այդ գետափը գուցէ նրա համար, որ հեղեղման վտանգի պատճառով այդ փողոցի տնատեղերն էժան են եղել, գուցէ և այն պատճառով, որ գետից այն կողմ նրանց հայրական բոստաններն էին՝ բակլայի, կարտոֆիլի և դդումի անսպառ բերքով, որ այնուամենայնիւ գարնանամուտին սպառւում էր, որովհետև արհեստաւորների մէջ այնպիսի ուտողներ կային, ինչպէս, օրինակ, Չաքմաչի Վէսկանը, հիւսն Ասանը և թամբագործ Թևին, որոնք եթէ երեքով միասին մակար գնային, հարսանքատիրոջ շունը սոված կը մնար:

Այդ փողոցում ապրում էին հիւսներ, քարտաշներ, կօշկակարներ, թիթեղագործ, ներկարար, նաև մի քանի բէյեր, որոնք միւս բէյերի շրջանից դուրս էին, ինչպէս օրինակ՝ երրորդ Ներսէս բէյը, որ կոչւում էր Պրիստաւի Ներսէս բէյ, որովհետև մի ժամանակ նա եղել էր պրիստաւի գրագիրը: Բայց այժմ մնացել էր միայն անունը, և ոչ ոք նրան բանի տեղ չէր դնում՝ ոչ իրենք բէյերը, ոչ կինը և ոչ հարևանները:

Մի ռուբլուց աւելի նրան կաշառք չէին տալիս, աւելի յաճախ տալիս էին մի արծաթ աբասի և երբեմն ոչինչ չէին տալիս, այլ միայն ասում էին.

– Ներսէս բէյ, էս անգամ կը ներես...

Հին ճանապարհի տները մի յարկանի էին՝ առանց բացառութեան: Թէև այնտեղ էլ տնատեղերը գնել էին հաւասար մեծութեան՝ իւրաքանչիւրը չորս հարիւր քառակուսի սաժեն, բայց որովհետև եղբայրներն իրար մէջ բաժանել էին միասին գնած տնատեղը, ուստի տների թիւն աւելի էր: Եւ երբ ծայր էր առնում երեխաների մահլակռիւը՝ կռիւը տարբեր փողոցների երեխաների միջև, ձմեռը՝ ձիւնագնդերով, աշնան դէմ՝ արևածաղկի գլուխներով, եգիպտացորենի կոթերով, նետ-աղեղով, երբեմն քարերով և նոյնիսկ շներով՝ երբ իւրաքանչիւրն իր շան շղթան թևին փաթաթած գնում էր կռուի, Հին ճանապարհի տղաները միշտ յաղթում էին և պատահում էր, որ յաղթողները հակառակորդին քշում էին մինչև շուկայ, և մանկական մի նետ դիպչում էր գարադաբուլդի Մուխանին կամ դդումի կլեպը թռչում էր քաղաքային դումայի պատշգամբը:

Նրանք կռւում էին «ռուսների» դէմ, այսինքն բէյերի և վաճառականների տղաների դէմ, որոնք սովորում էին թագաւորական դպրոցներում՝ Գորիսում և այլ քաղաքներում, իսկ Հին ճանապարհի տղաները՝ Կ'եօրեսի հայոնց ուսումնարանում: Վերջիններս չունէին ոչ համազգեստ և ոչ էլ դպրոցի նշան՝ գլխարկի և գօտու վրայ: Հայոնց դպրոցի երեխաները տրեխներով էին, տարուայ մեծ մասը գլխաբաց: Դպրոցից յետոյ նրանք աշխատում էին տանը և բանջարանոցներում, օգնում էին ծնողներին՝ արհեստանոցներում, և պատահում էր, որ դպրոցից վերադառնալով, ներկարար Նեսու տղան հագնում էր հօր մեծ կօշիկները և ներկի դոյլերը ձեռքին հօր

հետ գնում էր աշխատանքի:

Եւ դէպք էր լինում, որ տուն գալուց Մանուչար բէյի փողոցում «ռուսները» կտրում էին Նեսու տղայի առաջը... Այն կողմից մէկը լուր էր բերում, և ահա Հին ճանապարհից թռչում էին նրա ընկերները՝ շներով, քարերով, նետ-աղեղով, մահակներով, և նոյնիսկ մեծերը դժուար էին դադարեցնում նրանց քարէ կարկուտը:

Ամառը կռուի վայրը գետն էր, Հին ճանապարհի տակով անցնող գետը: «Ռուսները», այսինքն գիմնազիստները, որոնք ամառային արձակուրդին տուն էին եկել, խմբերով գալիս էին լողանալու, որքան էլ շատ լինէին նրանք և նոյնիսկ իրենց հետ բերէին մեծահասակ մէկին, այնուամենայնիւ այդ էլ նրանց չէր փրկում կռուից, երբ նրանք մտնում էին Հին ճանապարհի տղաների կառուցած լողարանները:

– Մեր ջրերից դուրս եկէ՛ք, – գետի միւս ափից բղաւում էր այդ տղաներից մէկը, երբ վաճառականների և բէյերի տղաներն արդէն հանւում էին, աւազի վրայ շարելով իրենց փայլուն գօտիները, սպիտակ գլխարկները, որոնց պղնձէ նշաններն արևից փայլփլում էին:

– Կորի, ռա՛դ իլ, – բղաւում էր մի գնդլիկ գիմնազիստ՝ ձիւնաթոյր մարմնով, ինչպէս ձիւնաթոյր էր նրա սպիտակեղէնը, որ տաժանելի աշխատանքով լուացել էր լուացարարուհի Մինան:

– Ասում եմ դուրս եկէք մեր գեօլից, – զայրացած բղաւում էր Հին ճանապարհի տղան, որ առաւօտ կանուխ տնից փախել էր, որովհետև գետափի ազատ պարտէզները նրան կանչել էին կեռաս ուտելու, փրցնելու մի քանի պատիճ բակլայ, մի բանջարանոցից գողանալու կարտոֆիլ և գետափին՝ քարակոյտերի հետևը խորովելու բակլան և կարտոֆիլը, որ նրա և՛ ճաշն էր, և՛ ընթրիքը:

– Չէ՞ք գնում, – և զայրոյթից նրա դէմքը կարմրում էր, ինչպէս եթէ տղան երեսին քսէր գողացած բալը: Ապա առաջին քարն այն կողմից վզզալով ընկնում էր գետի մէջ, լողացողներից մէկ-երկուսը, որոնք սրտով էին, դուրս էին թռչում և նրան քշում էին դէպի պարտէզների խորքը: Եւ յաղթանակով վերադառնում էին...

Բայց նրանք դեռ նոր էին մտել ջուրը, երբ պարտէզներից Հին ճանապարհի տղաների խումբը, որ մինչ այդ, ո՛վ գիտի, որի պարտէզն էր ասպատակում (նրանց խումբը, ինչպէս վայրենիների ցեղ, շրթունքները բալի հիւթից կարմրած, բոբիկ և ցնցոտիների մէջ, իսկ ոմանք առանց ցնցոտիների, այլ մի շապիկով), և արևից սևացած մարմիններով այդ սևամորթները, ինչպէս վայրենիների ցեղ, դուրս էին թռչում պարտէզներից, մոշի թփերից, թրմփալով վայր էին ընկնում ծառերից և վազում էին դէպի գետը՝ ով ձեռքին արևածաղկի կոթ, ով բանջարանոցից պոկում էր մի ձող, որի վրայ փաթաթուել էր լոբին, ով կտրում էր ուռենու ճիւղը, ով վազում և գոգը լցնում էր մանր քարերով, և նրանք թռնում էին պատերի վրայով, շամբուտների միջով, բոբիկ ոտքերով կոխելով եւ աւազ, եւ խոտ, եւ փուշ: «Ուռռա՛յ»... հնչում էր նրանցից մէկի ձայնը, և սևամորթները սլանում էին: Սպիտակներն ահաբեկուած իրենց գցում էին միւս ափը, ոմանք շորերն առած փախչում էին հեռու, ոմանք քարերի յետև դիրք մտած՝ փորձում էին ընդդիմանալ հեղեղին, որ գալիս էր աղմուկ-աղաղակով...

Նրանց բաժանում էր գետը, բայց յաճախ Հին ճանապարհի տղաները գետին չէին նայում, և շոր չէին հանում, այլ շորով իրենց գցում էին ջուրը և լողում էին՝ ջրի մէջ բարձր բռնած ուռենու ճիւղը և արևածաղկի ցօղունը, որով միւս ափին նրանք պիտի ծեծէին:

Երբեմն կռիւը բորբոքւում էր, անցնում էին ձեռնամարտի կամ խլում էին նրանցից մէկի գօտին, միւսի գլխարկը կամ գերի էին վերցնում մի սպիտակ գիմնազիստի, որ վախից թարս էր հագել շապիկը և չգիտէր ու՞ր է կօշիկի մէկը: Սպիտակը լալիս էր, կանչում էր մամա... Իսկ Հին ճանապարհի տղաները խօսում էին, թէ ինչո՞վ ծեծեն նրա բաց մսերը՝ եղինջի թփո՞վ, թէ՞ եգիպտացորենով: Սակայն պատահում էր, որ նրանցից մէկը մեղքանու՞մ էր, թէ՞ յիշում էր իր մօրը, որ այդ գիմնազիստի հօր տան լուացարարուհին էր կամ նրանց վաղեմի հացթուխն էր: Եւ նա երեսը շրջելով ասում էր.

– Թողէք կորչի գնայ... – և նրանք թողնում էին, որ գերին արցունքը սրբելով շորերը հագնի:

Նրանցից ոմանք զարմացած նայում էին նրա սպիտակ շապիկին՝ եզերքը կարմիր կար, նայում էին մաքուր կօշիկներին, գուլպաներին և նախանձում էին: Նրանց մէջ տղաներ կային, որոնք միայն մի շապիկ ունէին, քաթանէ հաստ շապիկ, որ հագնում էին միայն ձմեռը: Եւ այդ փոքրիկ վայրենիներն այնպէս էին նայում, ինչպէս նախամարդը կը նայէր Տէր զի բազում աւագ քահանային:

«Ռուսները» հեռանում էին, սպառնալով հեռուից, երբեմն ապահով հեռուից քար էին շպրտում, և այն ժամանակ Հին ճանապարհի տղաները նրանց քշում էին մինչև թագաւորական փողոցը, մինչև Մանուչար բէյի փողոցը և վերադառնում էին գետափ, որտեղ նրանք թագաւոր էին:

Հին ճանապարհը թէև խուլ փողոց էր, բայց նշանաւոր էր իր ալամ եսիր տղաներով: Նրանց հայրերը՝ արհեստաւորներ, ապա խարչենի Թևաթորոսը, որի ճաշարանում երկու կոպեկով «կէս պորցի» բոզբաշ էին ուտում Ամիր Աստանը, սալդատ Երանոսը, ճոլուն Կեին, Քեաթառան, նաև Բազարնիկ Խաչին, (որ սեփական տուն ունէր Հին ճանապարհի վրայ),

այդ մարդիկ կազմում էին մի առանձին խաւ, մի քարացած շերտ, որ գալիս էր հին Կեօրեսից, ինչպէս Հին ճանապարհը Կ'եօրեսի հին ճանապարհն էր դէպի Միջնահանդ, դէպի Սպիտակ քարերը՝ այն խոտհարքներն ու արտերը, որ վաղ ժամանակ եղել էին Կեօրեսի հողագործների կալուածքը:

Այդ փողոցը տանում էր դէպի Շէնը հին շուկայի հրապարակով, այնտեղ, ուր ներկարարի կարասներն էին, Մանգասար դայու հնաձև խանութը, համետ կարողներ և դարբիններ, և որտեղ Ափունց Ակու ամին աշխարհի չորս ծայրից ստանում էր ձորկեցիների տխուր նամակները...

Հին ճանապարհով էր անցնում Շէնի նախիրը, երբ տաւարածը նախիրը քշել էր Սանդ աղբիւրի ձորը: Կեօրեսեցիներից նրանք, որոնց կալերը ջրաղացների մօտ էին, այդ փողոցով էին խուրձ կրում, որովհետև քաղաքի միւս փողոցներում արգելուած էր երթևեկութիւնը խոտ և հունձ կրողների, նախրի և նախրապանի: Հին ճանապարհը Կեօրեսն էր Գորիս քաղաքի մէջ, Կեօրեսն էր երկարածոր լեզուով, դժուար անուններով և խրթին բարբառով, իր գերի երեխաներով, որոնք Շէնի տղաների հետ միացած կռուում էին բուլկի ուտողների դէմ, շարունակելով հին կռիւը, որ գալիս էր Ղաթրինի Աղալոյի առասպելական ժամանակներից:

Այդ հին փողոցում հին էին այն մի քանի տները, որոնց մասին դժուար է ասել, թէ ինչպէս էին ապրում, բայց խօսք պիտի ասել, որովհետև նրանք ըստ ամենայնի հետաքրքիր մարդիկ էին, նրանք հին կեօրեսեցիներ էին և իրենց գործերով անուն էին հանել, ինչպէս Ջիլֆուղար բէյը՝ կաշառակերութեամբ, Պաւլի բէյը՝ «Մշակ» կարդալով, Քյալլայ Ծատուրը՝ ձեռագիր շարադրութիւններով, լիմոնադի գործարանի տէրը՝ Շոր աղբիւրի ջրով և այլն:

Հին ճանապարհի այդ բնակիչները ո՛չ արհեստաւոր էին,

ոչ վաճառական և ոչ բէյ: Նրանք երբեք մաճ չէին բռնել և ոչ էլ գիտէին իրենց պապեկան կալի տեղը: Նրանք միայն լաւ գիտէին Բարի Աջողումի գինետունը, որի առաջ մեծ ընկուզենին նրանց համար միշտ ստուեր ունէր, ինչպէս Բարի Աջողումը՝ գինի: Նրանք լաւ գիտէին գետը և գետափի պարտէզները, Կեօրեսի բոլոր ձորերը՝ հեռու և ահաւոր, գիտէին անտառը, որ ինչպէս մութ ճանապարհ սկսւում էր քաղաքի կողքից և անընդմէջ գնում էր մի օր, երկու օր, տասն օր գնում էր և անցնում էր Արաքսը՝ ռուս-պարսկական սահմանը և այնտեղից էլ ով գիտէ ուր էր գնում անտառն իր գաղտնի ճանապարհներով:

Նրանք գինի խմողներ էին, նրանք անուանի մակարապետ էին, գլխաւորն այն հրոսախմբի, որը, երբ հարսանիքի գինին պակասում էր, բղաւում էր՝ «մենք հո հայրստունցու հարսանիք չենք անում...»:

Նրանց սննդատու մայրը գետն էր և անտառը: Գարնանամուտին, երբ գետը պղտոր գալիս էր, հունը մինչև ափերը լի և պատահում էր, որ ափերից դուրս գալով գետը հեղեղում էր եզերքը, քանդում էր թոյլ կամուրջները, արմատահան պոկում էր ծառերը և խորքում քարեր գլորում այնպիսի դղրդոցով, որ թւում էր, թէ փլւում են լեռները, այդ ահարկու ժամին, երբ Հին ճանապարհի բնակիչներն ահ ու դողով էին լսում գետի որոտը, նրանք՝ աղ ու հացի եղբայրները, ջրերի մէջ որսում էին այն ձուկը, որ հարաւից բարձրանում էր դէպի լեռնային աղբիւրները:

Գարնանամուտին Սալեանից, Ղարաբաղի տափաստաններից, մինչև անգամ շոգ Լէնքորանից հազար-հազար մարդ, ոչխար, ուղտ, ձի քոչով և քարաւաններով բարձրանում էին Զանգեզուրի լեռնային արօտները: Այդ ահագին բազմութիւնն անցնում էր Դոլուն Կ'արիի, Խանձատ

Խուդու և աղ ու հացի միւս եղբայրների կառուցած փայտէ հասարակ կամուրջով: Նրանք կամուրջի վարձ էին հաւաքում, բուրդ, ոչխար, դրամ, և այդ ամէնը գնում էր գինու և զուարճութեան:

Նրանք փորձուած ձիավարներ էին, և պատահում էր, որ Հաստ Ներսէս բէյը կամ մի ուրիշ բէյ Բարկուշատի խաներից ընծայ էր ստանում այնպիսի հրեղէն նժոյգ, որին բէյը վախենում էր մօտենալ: Եւ ահա կանչում էին Հին ճանապարհի վարժ ձիաւորներին, բազմութիւնը հաւաքւում էր հրապարակում և Դոլուն Կարին, մահն աչքի առաջ, խեղճացնում էր կատաղի նժոյգին: Վերջապէս նրանք որսորդներ էին խուլ ծմակներում և ձորերում, որտեղ ոչխարի մոռացուած աղաքարի վրայ գիշերով իջնում էին պախրաները:

Ձմեռը գետը սառչում էր, ձուկն իջնում էր հարաւ, որսը թաքնւում էր, ով գիտէ, ինչ որջերում, և պակասում էր նրանց գինեդրամը: Այն ժամանակ լուրեր էին պտտւում, թէ Ձորեկից կորել է մի երինջ, կորել է խօջայ Բաղիրենց կովը, գիշերով մարդ է մտել Տէր զի բազումի մեղուանոցը, և ձմեռն ինչպիսի՜ լուրեր չէին տարածում Գորիս քաղաքում: Եւ նաև շշնջում էին, թէ Խուռուփի ձորում գտել են կորած երինջի գլուխը, կովի հետքերը գնացել են մինչև գետափ և իբր թէ Տէր զի բազումի մեղուանոցից մի արկղ մեղու թափել են ջուրը և ջրի ափին թողել են դատարկ արկղը: Եւ ով շշնջում էր, աւելացնում էր նաև Դոլուն Կ'արիի, Խանձատ Խուդու և միւս եղբայրների անունը և լռում էր:

Ճի՞շտ էր այդ, թէ՞ չար բամբասանք էր, դժուար է ասել... Բայց ստոյգ է, որ ամառ-ձմեռ, ամէն երեկոյ Հին ճանապարհով հարբած տուն էին վերադառնում եղբայրներից երկուսը, երեքը, երբեմն մի ամբողջ խումբ: Նրանք քայլում էին, չուխաների փէշը կրծքով պատած մինչև ուսը, գդակները

ծուռ, դանդաղ օրօրւում էին, որոտալով երգում էին յանկարծ փողոցի մէջտեղը կանգնելով, անյայտ է ինչու, հայհոյում էին, ինչպէս մի ժամանակ Գիւրջի Օբին հրապարակում հայհոյում էր:

Երբ որոտում էին նրանց ձայները, Ներսէս բէյը, այն, որ կոչւում էր Պրիստաւի Ներսէս բէյ, նա էլ թաքնւում էր դարպասի անկիւնում կամ շտապում էր տուն մտնել: Նրանք բէյերին չէին սիրում, նաև չէին սիրում, երբ իրենց փողոցում հանդիպում էին մի վաճառականի, որին մի մութ քամի բերել էր այդ խուլ փողոցը:

– Թող կորչի գնա՛... – ասում էր ընկերն ընկերոջը, իսկ վաճառականն արագացնում էր քայլերը, ինչպէս սպիտակ գիմնազիստը, որ ահից կանչում էր մօրը...

10

Մենք սկսեցինք հին ջրաղացներից, որոնք գետի աջ ափին են, ընկուզենիների տակ, և որտեղ ծերունի ջրաղացպանը, երբ չէր ննջում, պատմում էր Ցուլ Օհանի ժամանակներից, երբ ցորենն իբր թէ հոնի կորիզների չափ էր, և չկար այն հաւի կուտը, որ շալակով ջաղաց էր բերել մի աղքատ կին: Ապա անցանք նաւթի պահեստի մօտով, որտեղից սկսւում էր քաղաքը և նկարագրեցինք հին շուկան՝ Գորիսի շուկայի արհամարհուած ծայրը, որտեղ առևտուր անելը հաւասար էր կոտր ընկնելուն:

Այնտեղ կային ներկարարներ, որոնք ներկում էին կարասի կապոյտ և թուխ մրուր և տորոնի կարմիր և ապա ներկած կտաւները զոլ-զոլ փռում էին քարափների վրայ և գոյների խաղով զուարթացնում էին հին շուկան: Այնտեղ կային կանացի չմուշկ կարող վարպետներ, որոնք կարմիր քօշ էին կարում նորահարսի համար, կանաչ՝ միջահասակ կնոջ և

նռան կլեպի գոյն՝ այն պառաւ այաների համար, որոնք գուցէ հագնում էին վերջին զոյգը: Այդ շուկայում էր այն ղանաւուզը և թիրմահին, որ ամբողջ քաղաքում այլևս չկար, և միայն Մանգասար դային ունէր:

Այնտեղ էին հին դարբինները, որոնք անիւ կապել չգիտէին, բայց խոփը զօդում էին ինչպէս պողպատէ թուր և այնպիսի շղթաներ էին կռում, որ եօթ զոյգ եզ քառասուն օր ծանր գութանը քաշում էին քար հողերում, և շղթան չէր կտրւում: Այդ շուկայում էին դալլաք Բոզին և նոյնպէս դալլաք Ասրին, որոնց երբեմն կանչում էին հիւանդից արիւն առնելու, նաև կանչում էին զարդարելու նորափեսայի մազերը:

Շատ հին մանրավաճառներ կային այդ հին շուկայում՝ ընտիր ծամոնի, մեղրամոմի, մախաթ ասեղների, ոսկրէ կոճակների, ծիլաւոր կոնֆետի և քթախոտի այնպիսի մանրավաճառներ, որոնք մի ծամելու ծամոնը փոխում էին երկու ձուի, կէս գրուանքայ մեղրամոմը՝ մի ծաղկաւոր գուլպայի հետ: Նրանք գիտէին, որ ձորկեցի Ադի դային քաշում է ղարայ բռնօթի, իսկ նորուեցի Բադի դային՝ կապովի բռնօթի:

Այստեղ նաև կային երբեմնի մանրավաճառներ Ափունց Ակու ամին և Բադամ Բախշին և նրա հարևանը, որոնք ոչ լամպի ապակի էին ծախում և ոչ Ղազանի սապոն, այլ նամակը հեռու բռնած կարդում էին խանգարուած ձայնով, կարծես ճռռում էր խանութի ժանգոտ դուռը.

«Եւ կը հարցնեմ ձեր որպէսութիւնը, նաև ինձ բարի յիշողաց...»:

Այդպէս էր Կեօրեսի հին շուկան՝ խեղճ և խարխուլ ու թէև այնտեղ շաքարի գրուանքան մի կոպեկ թանկ էր բուն շուկայից, այնուամենայնիւ, Ցաքուտ, Նորու, Մեզար և Ձորեկ գիւղերում, ինչպէս և Շէնում՝ Կեօրեսի մեռնող միջնաբերդում

գիւղացիներ կային, որոնց ասելով նոր շուկայի շաքարը երեխաների բերանում շուտ է հալւում, և նրանց ատամների տակ կապոյտ կայծ չի տալիս, ինչպէս հին շուկայի շաքարը: Իսկ ձորկեցի Ադի դային ասում էր.

– Կեօրեսի ղարայ բռնօթին որ չլինէր, հիմա Ադի դային չկա՛ր...

Այդ գիւղերովն էր ապրում Կեօրեսի հին շուկան: Նրան պահում էր Շէնը, որ ամէնից մօտիկն էր: Պատահում էր, որ երեկոյեան Շէնից մի երեխայ վազելով բարձրանում էր հին շուկան:

– Վարդան դայի, նանին ասաց մի չերթ շաքար տայ:

– Դու ու՞մ տղան ես:

– Ցամաք Աւանի տղան եմ:

– Հիւանդ ունէ՞ք...

– Չէ՛ , Վարդան դայի, տունը մարդ է գալու...

– Չլինի՞ մեծ քրոջդ ուզող կայ:

– Եսի՛մ... – և երեխան նիհար ուսերն իրար էր անում, և նրա տխուր աչքերի մէջ Վարդան դային տեսնում էր իր հարցի պատասխանը:

– Նանուդ ասա՝ թէ ձու կայ, ձու ուղարկի... Ուզող կայ: Հա, էն սապոնի պարտքն էլ թող ուղարկի:

– Էգուց նանին գնալու է Սիմոն բէյի տանը խմոր հունցի...

Այդպէս էր առուտուր անում հին շուկան, որի մանրավաճառները երբ ձանձրանում էին, բերանն էին գցում ծամոնի մի կտոր կամ սկսում էին լոյսի դէմ պահել ձուերը, որոնց անարատութիւնը նրանք ստուգել էին քսան անգամ... Եւ կամ վերցնում էին եզան պոչից ճանճաքշին, և ճանճերի հետ բարձրանում էր փոշու ամպը: Երբեմն Բադամ Բախշին քօշերը քստացնելով մօտենում էր պայտարին, որը ծառի ստուերում նստում էր.

– Հերիք քնես, հարևան...

– Ը... – և պայտարը ճմլթկալով յօրանջում էր, յօրանջում էր կոտրտելով մէջքի և բազուկների մկանները, և չէր վերջանում նրա յօրանջիւնը, ինչպէս արձագանքը, որ գալիս է բարձր սարից՝ նախրապանի կանչից և դեռ եօթ ձորում եօթ անգամ պիտի դրնգայ:

– Տաքը զօռում է, հա՜...

– Մի բադեա[99] նոր քաղած թութ լինէր, ի՞նչ կ'ուտէի...

Մօտենում էր երրորդ հարևանը՝ ասիական դերձակ Դարզի Վաները, որ շալէ շալուարի աղուէսիքի վրայ նեղուել էր քաղցր նինջից և ջրակալած աչքերով այլևս չէր ջոկում ասեղը:

– Վանէր, ասում եմ մի բադեայ թութ լինէր...

Իսկ Վաները դեռ ննջում էր: Եւ յանկարծ քնից զարթնելով, Դարզի Վաներն ասում էր.

– Ա՜յ թէ մի բադեայ նոր քաղած թութ էր եղել...

Բայց պատահում էր նաև, որ Բադամ Բախշին, Դարզի Վաները և այն պայտարը վճռում և գնում էին Մեղրաքերծի տակ թութ ուտելու և յետոյ, մի քանի ամառ, նրանք պատմում էին, թէ ինչպէս մի անգամ երեքով գնացին Մեղրաքերծի այգիները...

Մենք սկսեցինք գետափի ջրաղացներից և Կ'եօրեսի հին շուկայի միջով մտանք իսկական շուկան, որ Գորիսի թագն էր, նաև տեսանք այդ թագի գոհարը՝ Պասաժը, գոհարեղէնի և ակնեղէնի խանութներով, Եփրատ Երեմի կոլոնիալ մագազիններով՝ Կուր դը բեժայ, Դրուժբայ, Նադեժդա և նոյնիսկ Սասուն անունով, որ միւս անունների մէջ օտարոտի էր, ինչպէս Հայաստանցի Աւետիսը բէյերի և վաճառականների փողոցում: Որքան մեր ուժն էր,

[99] բադեայ – պղնձէ կամ արծաթէ խոր աման

աշխատեցինք ճշմարիտ նկարագրել Աւագիմովների աւագ եղբայր Սողոմոնին (որին մենք չենք անուանել Ամբարի կատու, այլ գործ ենք ածել ժողովրդական անունը): Ամբարի կատու Սողոմոնի ծանր զբաղմունքը և անկաշառ մտահոգութիւնը՝ սոված գիւղացիներին ապահովելու ալիւրով և այն վաճառել առքի գնից պակաս, ինչպէս երդւում էր նա, ձեռքը խփելով մեռոնաջրած երեսին: Ոչինչ չենք աւելացրել խօջայ Մակիչի բնածին բարութեան վրայ և նորից վկայում ենք, որ նրա սահմանած հաստատուն կանոնն էր յաճախորդին դատարկաձեռն ետ չվերադարձնել, որովհետև այդ նրա համար անպատուութիւն էր, ինչպէս եթէ հիւրը նրա սեղանից վեր կենար առանց մի կտոր հաց կտրելու: Իսկ ինչ վերաբերում է նորահարսին նուիրած վարդ թաշկինակին, այդ կարող է հաստատել հէնց, օրինակ, նորուեցի Սիմոն Նարինեանը («Նարինի թոռ Սիմին»), որն ի տրիտուր[100] երէք արշին պատանքի կտաւի, երեք տարի յետոյ խօջայ Մակիչին նուիրել էր իր միակ կովը, նաև ասել էր.

– Աստուած թող գլխիդ խռով չանի իմ կովը, խօջայ Մակիչ...

Նոյն արդարամտութեամբ նկարագրեցինք Եփրատ Երեմի առևտրական կշիռը Գորիս քաղաքում, նրա խօսակցութիւնը Լիւդմիլա Լուովնայի հետ, հօր՝ խօջայ Մակիչի ներկայութեամբ: Ասում ենք առևտրական կշիռը, որովհետև Եփրատ Երեմը քաղաքում այլ կշիռ ևս ունէր, աւելի ճիշտ՝ կշիռներ ունէր: Նա պարագլուխն էր երիտասարդ վաճառականների, քաղաքային դումայի դեպուտատն էր, և պրոգրեսիստները, որոնք դժգոհ էին քաղաքագլուխ Մաթևոս բէյից և սպառնում էին նոր ընտրութիւններին նրան սև քուէ տալ, իրար մէջ գաղտնի խօսում էին, որ նոր քաղաքագլուխ պիտի լինի Եփրատ Երեմը՝ Լիւդմիլայ Լուովնայի բարեկամը և գաւառապետի

[100] ի տրիտուր – որպէս փոխհատուցում

հետ բակարայ խաղացողը:

Նրա խանութը հաւաքատեղի և կենտրոն էր քաղաքի բարձր մտաւորականութեան՝ բժիշկ Տիկրան Պետոիչի, անտառապետ Արամ Արկադիչի, թագաւորական դպրոցի տեսուչ Սահակ Սերգեյիչի և հաշտարար միջնորդ Սուդակինի, որը լիբերալ էր, հիանալի գիտէր լատիներէն և իբրև թէ ոտանաւորներ էր գրում... Այդ ընտիր հասարակութեան ժամադրավայրն էր Եփրատ Երեմի խանութը: Իսկ ինչ վերաբերում է Լիւդմիլայ Լուովնային, նա այդտեղ միշտ գալիս էր իր շնիկի հետ, տիկին Սառա Կասպարովնայի ընկերակցութեամբ, և սուտ է, թէ իբր Եփրատ Երեմը այգիներում շօշափել է Լիւդմիլա Լուովնայի պատիւը:

Գաւառային պահակախմբի պետ Աւթանդիլ Խուրշուդ բէյի և Պենզայի 686-րդ դրուժինայի երիտասարդ սպայի մասին հարևանցի ակնարկեցինք, ինչպէս հարևանցի յիշեցինք այն հովուին, որ հրապարակի ժխորի մէջ կանչում էր իր կորած շանը՝ անհանգստացնելով քաղաքագլուխ Մաթևոս բէյին: Այդ այն պատճառով, որ նրանք՝ Աւթանդիլ Խուրշուդ բէյը, երիտասարդ սպան և շուն որոնող հովիւը, պատահական էին շուկայում, ինչպէս գետնի երեսով անցնող անգղի ստուերը: Այդ սակայն չի նշանակում, թէ Աւթանդիլ Խուրշուդ բէյը աննշմարելի անձնաւորութիւն էր Զանգեզուրում... Նա այնքա՛ն ահարկու էր, երբ, օրինակ, անտառից գութանի փայտ կտրած գիւղացիներին կանչում էր հարցաքննութեան: Նա ծառ շատ էր սիրում և մինչև անգամ ափսոսում էր դալար ճիւղին, ուստի և գիւղացիներին ծեծում էր եզան ջիլերից հիւսած մտրակով...

Գորիսում առաւօտն էլ այդպէս էր բացւում՝ մսագործների խանութների հետ միաժամանակ: Արևն ընկնում էր դեղին դմակների վրայ, և առաջինը մօտենում էր շուկայի պահակ

Կէտանը, ապա միւսները միևնոյն կարգով ու ծէսով, ինչպէս նոյն ծէսով ճաշում էր Հաստ Ներսէս բէյը: Գուցէ միայն կիրակի՛ օրերն այդ կարգը խանգարուէր, որովհետև երբեմն կիրակի օրերը միս էին առնում ներկարար Նեսին, լուացարարուհի Մինան, և պատահում էր, որ Հայաստանցի Աւետիսն էլ մի գրուանքայ միս էր առնում: Այդ ժամանակ խոջաներից մէկն ասում էր.

– Շէն քաղաք ես, Գորիս, որ մինչև անգամ ղարիբ Հայրստունցին էլ է միս առնում...

Գարադաբուլդի Մուխանի ձեռքով միսն ուղարկեցինք Հաստ Ներսէս բէյի տունը ոչ այն դիտումով, որ ցոյց տայինք, թէ ինչքան սերտ բարեկամութիւն կար Ներսէս բէյի՝ գաւառային վարչութեան դիւանապետի՝ Զանգեզուրի կէս-գաւառապետի և մի խեղճ պաշտօնեայի միջև, որը թէև ոստիկան էր և թուր ունէր նարնջէ ծոպերով, բայց լինելով բուն կ'եօրեսեցի, երբեմն տրեխ էր հագնում և գնում էր խոտհնձի: Մեր դիտումը չէր ցոյց տալ երանելի համերաշխութիւնը սանդուղքի երկու ծայրերի, որովհետև այդ նպատակով կարող էինք ասել, որ Ներսէս բէյը, յետկէսօրեայ քնից առաջ, երբ արձակում էր տուժուրկայի կոճակները, հարցնում էր կնոջը.

– Վարսեն, Մուխանին բան-ման տուի՞ր...

– Տուի, Ներսէս բէյ, մի հին շալուար ունէիր, տուի...

Միսը Մուխանի ձեռքով ուղարկելով՝ մեր բուն նպատակն էր խոհանոցի խորքից լոյս աշխարհ հանել տիկին Վարսենիկին, որը թէև Հաստ Ներսէս բէյի կինն էր և ունէր չորս երեխայ, բայց միևնոյն ժամանակ Գորիսի Հայ կանանց միութեան փոխնախագահուհին էր, և շնորհիւ նրա եռանդուն ջանքերի, Զանգեզուրի գաւառապետը մուծել էր տասը ռուբլի՝ յօգուտ որբերի և այրիների... Պատահում էր, որ տիկին Վարսենիկը ճաշից յետոյ շտապում էր իմանայ, թէ արդեօք չեն այրուել տիկին Վառինկայի գաթաները, բայց միաժամանակ տիկին

Վառինկայից նա տեղեկանում էր Միութեան առկայ գումարի մասին, որովհետև տիկին Վառինկան կանանց միութեան գանձապահուհին էր և դրամը պահում էր իր սեփական դրամների հետ, հնաձև սնդուկի մէջ, որի բանալին ոսկէ շղթայով կախուած էր տիկին Վառինկայի կրծքից, իսկ նրա կուրծքը ամենապահով վայրն էր Գորիս քաղաքում:

Ներկայացնելով Պաւլի բէյ Օրբէլեանին, նպատակ ունէինք ցրելու այն կարծիքը, թէ Գորիսի բէյերը միայն ուտում և քնում էին, որպէսզի երեկոյեան բակարայ խաղան, մի քիչ բամբասեն, ապա կուշտ ուտեն և քնեն խոր քնով: Այդ կարծիքը կարող էր ստուեր գցել Օրբելեանների տոհմի վերջին շառաւիղի՝ Պաւլի բէյի անուան և մոռացութեան տալ այն, ինչ նրա պատմական արժանիքն էր: Պաւլի բէյը «Մշակ» էր ընթերցում և ոչ «Ելիզաւէտպոլի նահանգային տեղեկատու» ռուսերէն լրագիրը. փողոցի տղաներին նա քարոզում էր հայ աղջիկ առնել և վերջապէս նա էր հայաստանցու ընտանիքին օթևանել, որովհետև այն ամեհի ժամանակ, երբ Զանգեզուրն ռուսանում էր, Պաւլի բէյ Օրբէլեանն օր ու գիշեր մտածում էր հայոց թագաւորութեան, աւելի ճիշտ, Սիւնեաց նախարարութեան վերականգնման մասին:

Նրա մահից յետոյ մնացած գրութիւնները և մանաւանդ անձնական օրագրերը վկայում են, որ երբ Հաստ Ներսէս բէյը փոխնահանգապետին ռապորտով զեկուցում էր, թէ Ծիծեռնավանքի ուխտագնացութեան օրն անայտ աւազակներ յարձակուել են ուխտաւորների մատաղացու անասունների վրայ, և երկու կողմից հրացանաձգութիւն է եղել, նոյն այդ դէպքի մասին Պաւլի բէյ Օրբելեանը, գուցէ հէնց նոյն օրը, այսպէս է գրել.

«Արիւնարբու և գազանաբարոյ աւազակներ, ազգով թուրք և ղարայ-մամադ ցեղից զինուած յարձակուեցան ուխտաւո-

րաց վերա, և քաջն Աւան Ղուրդանց ի գեղջեն Մխիթարայ սպարապետի, Թորոս Թելունց նոյն գեղջեն, Աբեթնակ Տաթևացի և երևելի Զոհրաբ, մականուանեալ Զինջիլ–Ղռան՝ Աղուանից գեղջ, միահամուռ արշաւելով դարբադաղ[101] արին աւազակներաց, հետ խլելով գերի վարեալ ոչխարն և ուխտն կատարեցին Սիւնեաց Սահակ իշխանի գերեզմանի վրայ: Նաև այս իմանալի է, որ Հաջի Սամլուի գաւառամասի պրիստաւն Վոսկրեսենսկի, ազգով ռուս, հովանաւոր է վերոգրեալ ղարայ–մամադ աւազակաբարոյ ցեղին և ինքն է մեծ կաշառու և հայատեաց: Ուրիշ փաստեր նմանապէս կը յիշատակենք ժամանակին»:

Այդպէս է գրել Պաւլի բէյն այդ սովորական դէպքի մասին, իսկ շատ բէյերի նա այնպէս է պախարակել, որ նրա գրածը, ինչպէս Գորիսում էին ասում, գազեթ գցելու բաներ են:

«Մելիք–Հիւսէինեանց Խանչալ բէյի պապն եղած է մատուռից մոմ գողացող և Մուհամմեդի կրօնն ընդունելով եկած է հայրենիքն մեծ անիրաւութեամբ: Ռուսաց տիրապետութեան օրօքն նա կրկին հաւատափոխ է լինում. բայց ժողովուրդն նրան միշտ անուանում է հաջի Հիւսէին... Խուրշուդ բէյի հայր Աթայ բէյը իւր կոչումն ձեռք է բերած իւր կնոջ ջանքերովն, որն եղած է գեղեցկադէմ և թեթևաբարոյ...»:

Պաւլի բէյի օրագրերից յայտնի է անում և այն, որ նա մասամբ ծանօթ էր հին Սիւնիքի պատմութեան: Վարարակնի կառուցումը նա մանրամասն է գրել, ըստ երևոյթին նիւթեր քաղելով տոհմական ինչ–որ ձեռագրերից: Պաւլի բէյը հետաքրքիր բացատրութիւններ է տալիս Զանգեզուրի հարաւում ապրող այրումների մասին, նրանց համարելով վաղեմի արևորդիների մնացորդներ: Տաթևի շարժական սիւնի մասին նա մի մեկնութիւն ունի, որ վերջանում է այսպէս.

[101] դարբադաղ անել – սարէսար գցել

«Փիլիպպէ Տէր Սիւնեաց, դու որ քո սուրն խրեցիր հայրենի հողն և քարէ սիւն դարձաւ քո սուրն, այժմ մինչի երբ պիտի ճօճես այն և երբ պիտի հասանի այն օրն, երբ Սիւնեաց ազատանին նորից տիրէ Գողթան երկրին, Երնջակին, Վայոց ձորին, Կապանին և Հաբանդին մինչև Փայտակարան...»:

11

Բայց մենք վերջին անգամ դարձեալ դառնանք Գորիս քաղաքի երկսեռ հասարակութեան:

Առաջին հարցը, որ ինչպէս ասում են ծառանում է մեր առաջ՝ այն է, թէ ի՞նչ մարդիկ էին Գորիսի բնակիչները, և այդ ոչ այն իմաստով, թէ ինչպէս էր նրանց արտաքինը, որովհետև աշխարհի բոլոր անկիւններում էլ կան հաստ ու նիհար մարդիկ, մարդիկ, որոնք յոգնում են քնելուց և որոնք իրենց կեանքում մի անգամ կուշտ քնելու կարօտ են:

Գորիսում էլ կային տեսակէտ ունեցող տիկիններ, ինչպէս, օրինակ, տիկին Օլինկան և տիկին Վառինկան, որից առաջինը գերադասում էր մաղաշար թթուն, իսկ երկրորդը՝ չոր թթուն: Եւ նոյնիսկ նրանք կարող էին վիճաբանել և մինչև անգամ կարող էին իրար ծանր խօսք ասել:

Սակայն մեզ ոչ այդ է հետաքրքրում և ոչ էլ այն, որ Հաստ Ներսէս բէյը մի քանի գաւաթ խմելուց յետոյ երբեմն իւր կնոջն անուանում էր բիբուլի և պիկուլիայ, անուանում էր նոյնիսկ հիւրի ներկայութեամբ, որից շառագունում էր տիկին Վարսենիկի երեսը: Մեզ հետաքրքրում է Գորիս քաղաքի բնակիչների հոգևոր շահերը և թէ յանուն ինչի նրանցից շատերը պուֆ անելով մրոտում էին այն փիրուզէ երկինքը, որ քաղաքի վրայ կախւում էր արծաթ և ոսկի աստղերով, և որին մի անգամ անարգել էր նոյն Հաստ Ներսէս բէյը, ճաղար Մուղրովի մեդալներով զարդարուած կուրծքը նմանեցնելով

Գորիսի երկնքին:

Ինչ՞ հոգևոր շահեր ունէին Գորիսի բնակիչները և ի՞նչ ազգի մարդիկ էին և ի՞նչ լեզուով էին խօսում... Ոչ մի հոգևոր շահ չունէին Գորիսի բնակիչները, ընթերցող, և նոյնիսկ քաղաքի աւագ քահանայ Տէր զի բազում տէր Զաւէնը՝ լուսաւորչական հաւատի գաւազանը, երկու Զիլֆուղար բէյերի տները կ՚օրհնէր, եթէ թուրք Զիլֆուղար բէյը նրան աջահամբոյր տար: Իսկ ինչ վերաբերում է բէյերի հոգևոր շահերին, ապա նրանք հոգի չունէին, որ հոգևոր շահ ունենային: Միայն Պաւլի բէյն էր, Օրբելեանների վերջին շառաւիղը, որ առանձնութեան մէջ ակնկալում էր Սիւնեաց նախարարութեան վերադարձը: Իսկ Հաստ Ներսէս բէյը և միւս բէյերը գիտէին, որ աշխարհում կայ պետ և ստորադրեալ, և արանքում հարկաւոր է թուղթ խաղալ, ուտել և ձանձրանալ. ձանձրոյթից յօրանջել, յօրանջելով բամբասել, աղջիկներին տեղաց անել, տղաներին դարձնել աւելի բարձր պաշտօնեայ, այսինքն դարձեալ տեղաց անել նահանգային դէպարտամենտներում:

Նոյնն էին նաև խօջաները, և միայն նրանց որդիները, որոնք պրոգրեսիստ էին և Պասաժում խանութ ունէին, պատահում էր, որ Եփրատ Երեմի խանութում զրուցում էին Պետական դումայի օրինագծերի մասին և հաշտարար միջնորդ Սուդակինը՝ սարսափելի լիբերալ (ինչպէս նրան անուանում էր Լիւդմիլա Լուովնան), կարծիք էր յայտնում, թէ Մարկով 2-րդի ճառից յետոյ զեմստուոյի իրաւունքները կը սահմանափակուեն, այնինչ Տիգրան Պետոիչը, որ ոչ պրոգրե-սիստ էր և ոչ լիբերալ, այլ անկախ մտածող էր, հակառակ կարծիքի էր:

Պատահում էր, որ Եփրատ Երեմի խանութում ծայր էր առնում այդպիսի վէճ համապետական խնդիրների և ոչ, օրինակ, մաղաշարի և չոր թթուի շուրջը, բայց այդ վէճն

էլ վերջանում էր յօրանջիւնով և եթէ նոյնիսկ յօրանջիւնով չվերջանար, այլ վերջանար մի շիշ խէրեսով, որ Եփրատ Երեմը բաց էր անում ի նշան հաշտութեան, դարձեալ հոգևոր շահից չէր այդ վէճը, այլ այն ահռելի ձանձրոյթից, որ քաղցր ծորում էր ամբողջ Գորիսում:

Նոյնիսկ եթէ ասենք, թէ տարին մի անգամ Հաստ Ներսէս բէյն ունենում էր հոգևոր շահ, երբ, օրինակ, պարոն Արշակը նրան մատուցում էր մի պատուաւոր տոմս, որի վրայ գեղեցիկ գրչագրով նոյն պարոն Արշակը գրել էր. «Մեծապատիւ պարոն Ներսէս բէյ, Գորիսի հայոց ծխական դպրոցի սիրող–սիրողուհիների խումբը խնդրում է Ձեզ Ձեր ներկայութեամբ պատուել թատերական հանդէսը յօգուտ...», երբ Ներսէս բէյը յետկէսօրեայ քնից յետոյ ընդունում էր պատուաւոր տոմսը, հարցնում էր, թէ ուրիշ ու՞մ են հրաւիրել, համեմատում էր իր աթոռը և կարգը միւս բէյերի աթոռների ու կարգերի հետ և ապա մի արծաթ ռուբլի էր տալիս (տարին մի անգամ հոգևորը ստուերի նման երևում էր, և այդ կարելի է մանրամասն պատմել, որովհետև այդ պատահում էր տարին մի անգամ), բայց դարձեալ չի կարելի ասել, թէ ի՞նչ ազգի էր Ներսէս բէյ Ջումշուդովը և ի՞նչ լեզուով էր խօսում, և առհասարակ ի՞նչ լեզուով էին խօսում Գորիսի բէյերը, որոնց տները տարին երկու անգամ օրհնում էր քաղաքի աւագ քահանան, և տնեցիները՝ մեծից մինչև փոքրը, կռանում և համբուրում էին հայ լուսաւորչական խաչը:

Այդ ամենադժուարն է ասել, թէ ի՞նչ ազգի էր Ջիլֆուղար բէյը, որ վարժ խօսում էր թուրքերէն և ռուսերէն, իսկ հայերէն թեմական յաջորդին ասում էր աճուրդ, հայ դպրոցի աշակերտին՝ մոնթ, հայ գիւղացուն՝ էշ հայուան, հայ ուսուցչին՝ վարժապետ, Գորիսի Հայ կանանց միութեանը՝ Տիկին Օլին–կայի կլուբ, հայերէն թերթին՝ վարժապետի գազեթ, որի տան

դահլիճի պատերը զարդարուած էին Էջմիածնի, Լոռիս-Մելիքովի, Մադաթովի և այլ գեներալների նկարներով, որոնցից մէկին՝ ֆլիգել-ադիւտանտ Բեժանբէգովին, զարմանալի նման էր Ջիլֆուղար բէյը. նոյն նեղ ճակատը, ունքերը՝ ոզնու փշերի նման ցից, քիթը բարձր, բայց ոչ մսոտ, այլ չոր և կաշին պիրկ, այնպէս որ, երբ Ջիլֆուղար բէյն ասում էր՝ «իմ հորս պապը Խաչենի Մելիք-Թունեանն էր», – ձայնը քթի մէջ դմբդմբում էր, ինչպէս կարասի մէջ:

Իսկ Ասատուր բէյը ոչ մի լեզուով չէր խօսում, այլ արձակում էր հնչիւններ և ձայներ՝ բը՛ռռ... որ նշանակում էր, թէ նա ճաշից դժգոհ է, որովհետև Ասատուր բէյը ոչ ասունաս էր խաղում և ոչ նարդի, այլ սիրում էր որձ այծի միս. դաա՜ս, որ նշան էր հաւանութեան, նաև վկայում էր աշխարհի ունայնութիւնը, որովհետև այդ ասելով Ասատուր բէյը հառաչում էր: Քառասուն տարի նա եղել էր գաւառային արխիւարիուս, և ոմանք դրանով էին բացատրում նրա լեզու չիմանալը, որովհետև քառասուն տարի նա մեռած թղթերի հետ էր խօսել, այսինքն ասել էր բըռռ, երբ գտել էր, որ ժամանակին նօտարը սխալ էր վաւերացրել հողի վկայագիրը. ասել էր դաա՜ս, երբ ձեռքն էր ընկել քսանհինգ տարի առաջ գաւառապետի ռապորտը Գորիս գետի վրայ կամուրջ կապելու անհրաժեշտութեան մասին և վերջապէս՝ հը՛մմ էր ասել, որ նշանակում էր, թէ կասկածում է հաշտարար միջնորդի հաշուետուութեան՝ աղէտեալներին յատկացրած նպաստի մասին:

Այդպիսի լեզուով էր խօսում Ասատուր բէյը, և ոմանք այդ բացատրում էին գաւառային արխիւի միջավայրով, բայց Ասատուր բէյի կնոջ ասելով նա հէնց սկզբից այդպէս էր: Այդ կարծիքը ճշմարտութեան մօտ է, որովհետև երբ վրայ հասաւ Ասատուր բէյի վախճանը, այսինքն երբ ուրիշ մարդիկ նրան կանչեցին հարցաքննութեան, Ասատուր բէյը ոչ մի բառ

չկարողացաւ արտասանել և միայն ասաց՝ հոլ-հոլ-աբի-հոլ: Այնքան ասաց, որ նրան ազատ թողեցին, և նա եօթ օր էլ իր տնեցիներին ասաց այդ մութ հնչիւնները և մեռաւ, իր հետևից յաւիտեան անմեկնելի թողնելով չորս հնչիւնը՝ հոլ-հոլ-աբի-հոլ:

Աւագ գրագիր Նազար բէյը ոչ մի լեզուով չէր խօսում, այլ աղուէսահաչ էր տալիս: Բալասան Կ'ևէր բէյն ասում էր՝ «Սէ-բիր-Սիբիրըստա՛ն... Ձառ, դու բարայ, քարերը թուփ արա...»: Եւ միայն Պաւլի բէյ Օրբէլեանն էր խօսում և գրում գրոց լեզուով, որից մի նմուշ արտագրեցինք: Բայց այդ լեզուն մեռած լեզու էր՝ ինչպէս Տէր զի բազումի լեզուն, երբ նա թագի և շուրջառի ծանրութիւնից քրտնած սկսում էր իր քարոզը.

– Ժողովուրդ հաւատացեալ, որպէս տէր մեր Յիսուս Քրիս-տոս ասացեալ է օղտն ոչ անցանի ասղի ծակովն, նմանապէս և...

Իսկ ինչ վերաբերում է վաճառականներին, ապա նրանց երիտասարդ սերունդը, որ պրոգրեսիստ էր, խօսում էր չալ հայերէն, այսինքն ռուսախառն հայերէն, ինչպէս, օրինակ, Եփրատ Երեմը, որ այսպէս էր խօսում, երբ ի նշան հաշտութե-ան բաց էր անում խէրեսի շիշը.

– Պա մոեմու դրուժբայ լուչշէ ղալմաղալ... Տիկրան Պետոյիչ, համարի թէ մի ոչինչ դարազումենենի էր էդ Մարկով վտարոյի ասածը... Խմենք, գասպադայ...

Մենք արդէն տեսանք, թէ ի՞նչ լեզուով էր խօսում Աւագիմովների աւագ եղբայրը՝ Ամբարի կատու Սողոմոնը. իւրաքանչիւր խօսքից յետոյ նա ասում էր՝ վեց աբասի, վեց աբասի, և ինչպէս պատմում էին, առաւօտեան, երբ բացում էր խանութը, նա հարևանին ասում էր.

– Բարի լոյս... վեց աբասի, վեց աբասի:

Իսկ Քյալլայ Ծատուրը՝ դեղագործ և փիլիսոփայ, խօսում էր մի հազուագիւտ լեզուով և միայն նա էր այսպէս խօսում.

– Բարոնայք, Ձանկազօրու կաւառի Կորիս քաղաքն լուսաւորեալ է...

Իսկ խօջաները՝ խօջայ Մակիչը, Միրումով Կիւքին, Ֆրանգուլով Բադալ ապերը, մինչև անգամ Ձամբայ Ծատուրը, որ խօջայ չէր, այլ վաշխառու էր, նրանք բոլորը խօսում էին թուրքայ և պարսկախառն մի լեզուով, որ պրոգրեսիստ վաճառականների լեզուից տարբերւում էր այնքան, որքան Իրանի և Մոսկովի կտաւը. մէկն ասում էր սանադ, միւսը՝ վեկսել, մէկը դրամը թումանով էր հաշւում, միւսը՝ ռուբլիներով, հայրը կտաւը չափում էր գեազով, որին ասում էր խան արշին, իսկ որդին ռուսական կտաւը չափում էր ռուսական արշինով: Այնքան էր զանազան նրանց լեզուները, որոնց Աթա ապերն անուանում էր շան լեզու:

Ուրիշ էր Կեօրեսի լեզուն, որով խօսում էին Հին ճանապարհի բնակիչները, հին շուկայի արհեստաւորները և խօսում էին կամուրջից այն կողմը՝ Շէնի բոլոր թաղերում, Ցաքուտ, Նորու և Ձորեկ գիւղերում, այն լեզուն, որին տիկին Օլինկան անուանում էր շէնավարի լեզու, ստորադասելով իրենց քաղաքավարի և բլաղարոդնի լեզուին:

Ինչ չքնաղ լեզու էր կեօրեսերէնը... Չուտէիր և չխմէիր, այլ միայն այդ լեզուով խօսէիր կամ լսէիր, թէ ինչպէս քաղցր և նուրբ հնչիւններով խօսում էր լուացարարուհի Մինան, ինչպէս էր ծոր տալիս, ասես ոչ թէ խօսում, այլ ճախարակի առաջ բարակ երգ էր ասում, և բառերը նստում էին, ինչպէս փափուկ մալանչները[102]: Հապա Դոլուն Կարին... Կռանում էր սառն աղբիւրի վրայ, կուշտ խմում և ջուրը բեղերից կաթկթելով, ասում էր խուուայ... և այնպէս էր ասում, այդ բառն այնպէս էր զրնգում, որ եթէ աղբիւրը նորահարս լինէր, ամօթից քօղը կը քաշէր երեսին... Իսկ Աթայ ապերը, երբ բարկանար, այնպէս

[102] մալանչ – գզած բրդի փունջ

մի ըմբոյ կ'ասէր, որ Մեղրաքերծը կը դրնգար:

Գորիսի ոչ մի փողոցում լեզուն այնքան վաճիտ չէր, ինչպէս Հին ճանապարհի վրայ: Այդ լեզու չէր, այլ կարօտ, տխրութիւն, զայրոյթ. այդպէս Ղաթրինի ձորում երգում էր կաքաւը և մթնում կարկաչում էր Ցուրտ աղբիւրը:

– Տիեզերի հացերը մրսել են, – կ'ասէր Աթայ ապերը, չուխայի փէշից պոկելով փուշը, որ կպել էր արտի մէջ, – բայց այնպէս կ'ասէր, կարծես խնդրում էր մի կարպետ, որ ծածկի արտերը:

– Հորա՛յ է, հորա՛յ, – և էլ ուրիշ ոչինչ չէր ասի Աթայ ապերը, բայց այդ մի բառը կ'ասէր դանդաղ, ծանր և արքայավայել, կ'ասէր ինչպէս հանդերի պատրիարք, և ով կ'եօրեսեցի էր, նա հասկանում էր, թէ ու՞ր կորան վաղեմի պարարտ հողերը և շարմաղ ալիւրը:

«Իրանի Թուրանում չկար քեզ բարաբար[103],

Դառն ես դառել, հէյ Զանգեզուր...»:

Աթայ ապերը կ'արտասանէր երկու տող «Գորիսի գով-քից», բայց այնպէս կ'ասէր, որ իբրև իջնում է խոր ձորերը և բարձրանում է բարձր լեռները, և լեռնային քամու նման լեզուն պտոյտք է անում դէպի երկինք:

Այդքան գեղեցիկ և հնչեղ էր Կեօրեսի լեզուն: Նա մի չքնաղ գորգ էր՝ նախշերով և վարդ ծաղիկներով մի հին գորգ, ինչպէս Մինայի աղջիկ ժամանակ գործած գորգը, որ փռուած էր Հաստ Ներսէս բէյի դահլիճում: Ինչքան հնանում և մաշւում էր, այնքան շքեղանում էին գորգի գոյները, և պատահում էր, որ Մինան, երբ այդ հին գորգը տանում էր գետը և լուանում էր, Մինան լաց էր լինում, և նրա հետ լաց էր լինում Կեօրեսի լեզուն...

[103] բարաբար – հաւասար, նման

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

ՆԱԽԱԲԱՆ 3
ԲԱԿՈՒՆՑ ԱԿՍԵԼ 5
ՄԹՆԱՁՈՐ 7
ԽՈՆԱՐՀ ԱՂՋԻԿԸ 15
ԱԼՊԻԱԿԱՆ ՄԱՆՈՒՇԱԿ 33
ԾԻՐԱՆԻ ՓՈՂԸ 46
ՆԱՄԱԿ ՌՈՒՍԱՑ ԹԱԳԱՒՈՐԻՆ 60
ՍՊԻՏԱԿ ՁԻՆ 76
ՄԻՐՀԱՒ 102
ԿԵՕՐԵՍ 115

ԳՐԱԴԱՐԱՆԸ

ԱԿՍԵԼ ԲԱԿՈՒՆՑ

Կազմեց և խմբագրեց Նուէր Վիրաբեանը
Սրբագրիչ՝ Գ. Յովհաննիսեան
Համակարգչային ձևաւորումը՝ Հ. Փիլոյեանի
Կազմի ձևաւորումը՝ Ա. Օհանջանեանի
Կազմի նկարը՝ Խ. Յակոբեանի